Таким образом, Баласакан—Базгун должен был занимать юго-восточную часть территории бывшего царства мазкутских (массагетских) Аршакидов и в начальный период должен был простираться до Дербендского прохода. Но уже в середине V в. его северная часть, Чора и Дербенд с оборонительными сооружениями, подверглась оккупации со стороны персидской армии, командующий которой, по Елишэ, звался Чора марзпан[43]. Под непосредственным руководством последнего находились не только район Чола, или Чора, но, по всей вероятности, также большинство расположенных на правобережье Куры владений армянских Аршакидов, где в 462 г. была построена новая резиденция албанских марзпанов—город Партав. Баласакан, как отдельный shahr,

---

[41] См. Կոբիւն. *Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի, Թիֆլիս, 1913*, с. 29։

[42] См. «*Գիրք Թղթոց*», *Թիֆլիս, 1901*, с. 81։ «*Վասն և ճշմարտից աստուածասիրաց, սիրելի եղբարց և աթոռակցաց մերոց, Աբասու Պարտաւայ եպիսկոպոսի, Մովսեսի Բ... զատու եպիսկոպոսի, Գրիգորի Կապաղականու եպիսկոպոսի, Հոռոմակայ Ամարասու եպիսկոպոսի, Տիմաւքէի Բաղասականեաւ եպիսկոպոսի, Ամբակումայ Շաքիայ եպիսկոպոսի, Յոհաննկայ Գարդմանայ եպիսկոպոսի, Ղևոնդի Մեծ կուանց եպիսկոպոսի. ի Յովանիսէ Հայոց կաթողիկոսէ. ...աւրհնութեամբ և հոգեւոր սիրով ողջոյն*»։

[43] См. Егишэ, с. 76.

входил в кустак Капкоh, но оставался в подчинении албанского марзпана.

Таким образом, в персидских владениях Закавказья в середине V в. уже фактически сформировались марзпанства Армн, Ран и Варджан. При этом, однако, несколько местных царств не прекратили своего существования и сохраняли свою внутреннюю самостоятельность. К числу таковых относились Грузинское, Албанское и Баласаканское царства.

Как в административном отношении сложилась судьба бдешхств Великой Армении—Алдзника или Арзнарзюна, Кордука и Нор-Ширакана? Автор «Ашхарhацуйца», описывая кустак Хорваран, упоминает страны Мардзин и Арзон. Первая может быть отождествлена с Нор-Шираканом, а вторая—с Алдзником. Известно, что в бдешхство Нор-Ширакан входил гавар Маhкерт-тун, который назывался также Мардзин. Нужно, следовательно, предположить, что бдешхство, как отдельный шаhр, существовало в составе кустака Хорваран под наименованием Мардзин. У Елишэ этот край известен под названием Даси, который согласно Фавсту Бузанду, входил в состав бдешхства Нор-Ширакан. Последний в административном отношении должен был подчиняться области Ниневия. Об этом сохранились сведения в послании католикоса Бабкена *«Թուղթ Հայոց ի Պարսս, սո ուղղափառս»*[44]. Что касается Алдзника, то это Арзон, который, как отдельный шаhр, входил в регистр Арвастана[45]. Труднее выяснить административную судьбу Кордука. Не входил ли он вместе с Цавдэком в Арзон? И нет ли отдаленного отклика на это в упомянутом Елишэ списке стран? В физико-географическом смысле эти страны составляли единое целое, так что возможно, что персидские власти, исходя из этих соображений, пытались объединить эти княжества административно, сохраняя их внутреннюю автономию. Так или иначе, исходя из сообщений Елишэ, нужно предположить, что в середине V в. Кордук и Цавдэк составляли отдельные административные единицы, входя, по-видимому, в регистр Арвастана. Оторванные персами от метрополии, включенные в различные административные районы и с течением времени, вследствие иноземного владычества, изменившие свой этнический облик, эти области оказались вне восстановленной в IX в. армянской государственности.

Обобщая изложенное, мы приходим к следующим выводам:

а) Отталкиваясь от данных Елишэ, можно составить административную карту персидских владений в Закавказье;

б) Уже в середине V в. в Закавказье сформировались марзпанства Армн, Варджан и Ран;

---

[44] См. *«Գիրք թղթոց»*, с. 41; *«Նոշիրականին ի նինուէ նահանգ»*.

[45] См. **Н. Адонц**, указ. соч., с. 221.

в) Марзпанство Армн охватывало большую часть территории царства Великой Армении за исключением бдешхств, страны Каспк, правобережного района Куры и гаваров Кларджк, Артаһан и Шавшет, а также, разумеется, той части территории, которая отошла к Византийской империи вследствие раздела 387 г.;

г) Марзпанство Варджан состояло из Грузинского царства, Гугаркского бдешхства и нескольких гаваров, находящихся под непосредственным управлением персидского марзпана;

д) Марзпанство Ран состояло из собственно Албании, Баласаканского царства и непосредственно управляемых персидским марзпаном районов Чора и правобережья Куры. В его номинальном подчинении должно было находиться и царство Лбинк;

е) Царство Баласакан находилось между Албанией, Каспийским морем, Чолой, или Чорой, и рекой Кура. Как отдельный шаһр, входило в регистр Рана;

ж) Царство Лбинк охватывало не только район, расположенный между рекой Алазани и Кавказскими горами, но и часть горных районов нынешнего Дагестана. Однако уточнить его границы, кроме южных и юго-восточных, по сочинению Елишэ невозможно;

з) Бдешхство Нор-Ширакан под наименованием Дасн входило в административный район Ниневия, или һЭдаяб, сохраняя некоторую автономию. Вероятно, это упомянутый «АшхарһацуйцемМардзин, который уже имел, по всей вероятности, статус шаһра;

и) Бдешхства Кордук и Алдзник также сохраняли некоторую автономию и, по-видимому, входили в регистр Арвастана. Однако впоследствии, вероятно, объединившись вместе с Цавдэком, составили шаһр Арзон, который, бесспорно, должен был оставаться в регистре Арвастана;

к) Цавдэк, как отдельное княжество, входил в регистр Арвастана.

# ԱՐՑԱԽԻ, ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Պատմ. գիտ. դոկտոր Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Այսօր, երբ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման հետ կապված պատմագիտական ժխտումնասիրությունները, մամուլը, հեռուստատեսությունը և ռադիոն հաճախակի ու բազմակողմանիորեն անդրադառնում են արցախյան խնդիրներին, Հայոց Արևելից կողմեր, Արցախ, Ղարաբաղ և Լեռնային Ղարաբաղ պատմա-աշխարհագրական տարածքաշրջանները տարածքային առումով միշտ չէ, որ ճիշտ մեկնաբանություն են ստանում։ Նվ եթե ի նկատի ունենանք, որ այն երբեմն որոշակի միտումնավորություն ու նպատակադրվածություն ունի (մասնավորապես ադրբեջանական ու քուրքական պատմագիտական շրջաններում), ապա հասկանալի կդառնա, որ հարցիս քննությունը ոչ միայն զուտ գիտական ու ճանաչողական, այլև շատ կարևոր քաղաքական նշանակություն ունի։*

*Հայացք նետելով պատմության վաղնջական ժամանակների խորքը, մենք գրավոր աղբյուրներում առաջինը հանդիպում ենք Արցախի հիշատակությանը։ Արարատյան թագավորության տիրակալ Սարդուր II-ը իր Սևանա լճի ավազանում թողած Ծովակի արձանագրությունում հայտնում է. «Այլդեն արշավեց, սեփական զենքին (?) ենթարկեց Արկունկե [լեռնի] երկիրը։ Սարդուրեն ասում է.— Արշավեցի, գրավեցի Արկունկե (լեռնի) երկիրը, կտրեցի մինչև Ուրտեխե (երկիրը)»[1]։ Արձանագրության հրատարակիչներից Գ. Մելիքիշվիլու կարծիքով, քանի որ Արկունկե երկիրը զբաղեցրել է Սևանա լճի հարավային ափը Ծովակ (նախկինում՝ Ջաղալու) գյուղի շրջակայքում, ապա Ուրտեխեն (հեղինակի ընթերցմամբ՝ Ուրտեխինի) պետք է փընտրել Սևանա լճից հարավ-արևելք[2]։ Հայ բանասիրության նշանավոր երախտավորներից մեկի՝ Գ. Ղափանցյանի կարծիքով այն համապատասխանել է Մեծ Հայքի Արցախ նահանգին՝ քե՛ անվամբ և քե՛ տարածքով[3]։ Չնայած ուսումնասիրողները միակարծիք չեն Արկունկե երկրի տեղադրման հարցում[4], այնուամենայնիվ Ուրտեխե երկրի անունը հիշատակող վերոնշված արձանագրության գտնվելու վայրը հուշում է, որ Սարդուր II թագավորը ռազմակալել է ներկայիս Վարդենիսի շրջանի տարածքը։ Ըստ որում, դատելով տափարակ տեղանքից, որով հիշյալ շրջանը էապես տարբերվում է Սևանա*

---

1 *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. հ. Ա, Երևան, 1981, էջ 72։ Տե՛ս նաև* Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи, М., 1960, № 161.

2 Г. А. Меликишвили. Указ. соч., с. 446. *Այս տեսակետը պաշտպանում է նաև Ն. Հարությունյանը* (Топонимика Урарту. Ереван, 1985, с. 211—212)։

3 Г. А. Капанцян. Chetto armeniaca. Ереван, 1931, с. *104։ Տե՛ս նաև Հ. Կ ա ր ա գ յ ո զ յ ա ն. Արևելյան Հայաստանի ուրարտական տեզանունները.—«Էջմիածին հասարակական գիտություններ», 1978, № 10, էջ 56։*

4 *Հ. Կարագյոզյանը Արկունկե երկիրը տեղադրում է Արգիճի գետի ավազանում։ Մանրամասն տե՛ս* О. О. Карагезян. Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам. *—«Էջմիածին հասարակական գիտությունների», 1988, № 7, էջ 66—67։*

լճի ավազանի մնացած հատվածներից, Սարդուր II թագավորը պետք է հասած լինի Դեղամա ծովակի ավազանը արևելքից եզերող Սյունյաց լեռներին կամ Զանգեզուրի լեռնաշղթային, որովհետև հարթ և պաշտպանական հնարավորություններից գրեթե զուրկ այս երկիրը չէր կարող կասեցնել լավ կազմակերպված ու ղինված Արարատյան թագավորության զորքերիս։ Նման հարցադրման դեպքում անտարակույս է, որ Ուրտեխեն գտնվելու էր Սոթքի լեռնանցքից ու Սյունյաց լեռների արևելք ընկած շրջանում։

Արարատյան թագավորների ռազմական ա՛ռաջխաղացումը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում առավել մեծ չափեր ընդունեց հաջորդ տիրակալի՝ Ռուսա I-ի օրոք (735—714)։ Պահպանվել է վերջինիս մի շատ հետաքրքիր ու պատմաաշխարհագրական տեսակետից արժեքավոր արձանագրությունը Ծովինար դյուղի մերձակայքում, փորագրված Սևանա լճի ափին, բարձր ժայռի ծովահայաց կողմում։ Արձանագրությունը, որի մոտ ներկայումս Արփա—Սևան չրատարը դուրս է գալիս լճից, ժամանակին անմատչելի էր մարդկանց համար քե՛ դիմացից, որովհետև արձանագրությունը կրող ժայռի ստորոտը քերում էին լճի ալիքները և քե՛ վերևից, քանի որ բևեռագրերին հասնելու համար անհրաժեշտ էր հատուկ հարմարանքներ ստեղծել։ Պատմելով Սևանա լճի ավազան և դրանից արևելք ընկած երկրներ իր կատարած արշավանքի մասին, Ռուսա I-ը հայտնում է. «Ես այս երկրները մեկ արշավանքում նվաճեցի, ծառա՛ դարձրի՝ Ադախու (երկիրը), Վելեքուխե (երկիրը), Լուերուխե (երկիրը), Արա՛ուկյան (երկիրը).— չորս արքայի այս կողմից ծովային գավառում. Դուրկումելե (երկիրը), Շանատուայան (երկիրը), Քերիվիշայան (երկիրը), Ռիշուայան (երկիրը), [...] դուայան (երկիրը), Արիայան (երկիրը), Չամանե (երկիրը), Օռկիմայան (երկիրը), Ելայան (երկիրը), Երելքուայան (երկիրը), Այդամանիու (երկիրը), Դուրիայան (երկիրը), Ալղերա (երկիրը), Պիրուայան (երկիրը), Շիլայան (երկիրը), Վիդուայան (երկիրը), Ատեզայան (երկիրը), Օրիայան (երկիրը), Ազամերունե (երկիրը),— տասնինն արքայի այն կողմից ծովային գավառում՝ լեռն[աշղթայի] ստորոտում։ Ընդամենը քսաներեք արքայի մեկ օրում (=արշավանքում) նվաճեցի։ Մարդ, կին դեպի Բիաինելե (երկիրը) քշեցի։ Հարկային տարում եկա, կառուցեցի այս ամրոցները հենց այս երկրում (?) [...], Քելշերահե ամրոցը հոյակապ կառուցեցի, դրեցի անունը «Քելշերայի քաղաք՝ Բիաինելե (երկրի) զորությունը Լուլույանների (=բարբարոսների) մեջ ամրապնդելու (համար)»[5]։

Այս արձանագրության պատմաաշխարհագրական քննությունը, ըստ էության, մի մեծ աշխատության նյութ է և խիստ աշխատատար, ուստի դրան իր ամբողջության մեջ անդրադառնալ չենք կարող։ Առավել ևս, որ խնդրիս շահագրգռության տեսակետից, դրա կարիքը բացարձակապես չկա։ Սակայն ելնելով նախնական հետազոտության արդյունքներից, կարելի է վստահորեն եզրակացնել, որ 19 երկրների[6] եթե ոչ մեծ, ապա նշանակալից մասը գտնվել է Արցախի, թերևս նաև Ուտիքի տարածքում։ Ուշադրության արժանի է մի կարևոր իրողություն ևս՝ ցանկում բացակայում է Ուրտեխե երկրի անունը։

Հիշյալ երկրների տեղագրական ուսումնասիրության ասպարեզում որոշակի հաջողությունների է հասել սեպագրագետ Հ. Կարագյոզյանը, որը հոդված է պատրաստել «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների սեպագիր տեղանունները» թեմայով։ Հեղինակի սիրալիր համա-

---

[5] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. հ. Ա, էջ 85։ Տե՛ս նաև Г. А. Меликишвили. Указ. соч., № 266.

[6] Շատ դալթակղիչ է բոլոր 19 քեղային երկրներն էլ տեսնել Արցախի և Ուտիքի տարածքում, որովհետև այդ թիվը կարծես թե համապատասխանում է Արցախի և Ուտիքի գավառների միացյալ քանակին, սակայն մի շարք երկրներ տեղադրվում են Սյունիքում։

ձայնությամբ, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը, տալիս ենք նրա տեղադրություններից մի քանիսը։ Այսպես, արձանագրության Šanaṭuaini երկրանունը, որի մեջ «-ini»-ն ուրարտական վերջավորություն է, ինչպես հիմնավոր ցույց է տալիս հեղինակը, սխալ ընթերցման արդյունք է։ Սեպագիրը փորագրած գրագրի սխալի հետևանքով բևեռագրերի մի խումբ միասին դրվելու փոխարեն քարին է հանձնվել երկու հատվածով և իրարից հեռու, իսկ այսպես կոչված «Ša» վանկի ստորին լայն պարանոցով սեպը սխալմամբ փորվել է ոչ հորիզոնական դիրքով, որի հետևանքով սեպագրագետները կարծել են, որ գործ ունեն «Շա» և «նա» վանկերի հետ։ Սակայն վերոհիշյալ թյուրիմացությունները վերացնելուց հետո սեպերի միասնական խումբը կարդացվում է «Տու», իսկ երկրի անվանումը՝ «Տուտուա»։ Զարգացնելով իր միտքը, հեղինակը հանդում է միակ ճիշտ եզրակացությանը, որ «Տուտուա»-ն հետագայի «Տրտու» անվանումն է՝ դրված սեռական հոլովով։ Ինչ վերաբերում է «Տրտու»-ի «ր»-ին, ապա այն աճական է, որը հանդես է եկել ուշ ժամանակներում։

Նույնպիսի սխալ ընթերցման արդյունք է Teriuišaini անվանումը, որի ճիշտ արտասանությունը եղել է Keriuša։ Հեղինակը, սրբագրելով տեղանունը, այն կապում է Քարուեճ անվան հետ, ցույց տալով, որ ցեղերի տեղաշարժի հետ կապված անունս տեղափոխվել է Արցախի հարավ-արևելյան շրջանները[7]։ Սեպագրագետների սխալ վերծանության պատճառով Gisua-ini երկրանունը կարդացվել է Kišuaini, իսկ իրականում այն աղերս ունի Գիշի գյուղի անվան հետ և տարածքային առումով համապատասխանել է հիշյալ բնակավայրի շրջակայքին։ Այս հարցադրումները սպառիչ պատասխան են ստացել Հ. Կարագյոզյանի աշխատության մեջ, ուստի նոր տեղադրություններին անցնելու կարիք չկա։ Սակայն բևեռագիր արձանագրության տեղանունների մեջ կա մի առանձնահատուկ իրողություն, որի կողքից անցնել չի կարելի։ Բերված տեղանունների գոնե նշանակալից մասը տրված է ոչ թե ուղիղ ձևով, այլ հայերենի սեռական հոլովաձևով, որի վրա, չգիտակցելով այդ հանգամանքը, բևեռագրի փորագրիչ-գրագիրը ավելացրել է բխյնական «-ini» վերջավորությունը։ Հետևաբար, կարելի է լիակատար վստահությամբ ասել, որ Արցախի և հարևան Ուտիքի տարածքը առնվազն մ. թ. ա. VIII դարից բնակեցված է եղել հայկական ցեղերով։ Հասկանալի է, որ ժամանակագրական այս շրջանը գծելով, մենք ի նկատի ունենք գրավոր աղբյուրի հիշատակությունը, քանի որ հիշյալ ցեղերը նըշված տարածքներում չհայտնվեցին աստվածային հրաշքով ու անակնկալ։ Վեր է ամեն կասկածից, որ նրանք այստեղ բնակվում էին անհիշելի ժամանակներից սկսած դեռ մինչև մ. թ. ա. VIII դարը։

Սովինարի արձանագրության մեջ լճից դեպի արևելք հիշված 19 երկրների մեջ զարմանալիորեն բացակայում է Ուրտեխե երկրի անունը։ Անունս բացակայում է նաև Սարդուր II-ի «Տարեգրության» մեջ։ Այնտեղ ասվում է. «Հենց այդ տարում երրորդ անգամ արշավեցի Արկուկե (ցեղի) երկրի վրա։ Ես արկեցի Արկուկե (ցեղի) երկիրը, Ազախու (ցեղի) երկիրը, Լուերու (ցեղի) երկիրը, Շումուա (ցեղի) երկիրը, Քամանիու (ցեղի) երկիրը, Կուլալբա (երկիրը), Ուխունե երկիրը, Տերիա երկիրը։ Քանի ամրոց (որ) ամրացված էր, կռվում գրավեցի։ Հարյուր քսան քաղաք մեկ օրում (—արշավանքում) նվաճեցի։ Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի, երկիրը

---

7 Լենայի Ղարաբաղի Հանրապետության հարավ-արևելյան շրջանում մինչև օրս էլ գոյություն ունի Քարահունջ անունով մի գյուղ, որը Քարուեճ անվան հնչյունափոխված տարբերակն է, որի հիշատակությունը պահպանել է Մովսես Կաղանկատվացին (Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ ա ր ա գ Ա ռ ա քե լ յ ա ն ի. Երևան, 1983, էջ 72. տե՛ս Քարուեճ՝ փոքրագոյն գիւղ մի, էջ 73. «Ծորժամ լուեալ ի Քարուճէ՝ կանայք յաւաղ ելանէին ի գիւղաքաղաքէն Ամարասայ»։

կերա (=յուրացրի)։ Մարդ, կին այնտեղից հանեցին։ Սարդուրեն ասում է.— Քանի մարդ իմ զենքի (?) առջևից ճողոպրում էր և բռնեց (=գրավեց) Ուշքիա (և) Բաշ (լեռները), վերապաշարեցի, սպանեցին։ Ովքեր ճողոպրում էին, Խելչերան (=կայծակը) այրեց»[8]։ Սեպագրագետ Հ. Կարագյոզյանը գտնում է, որ հիշյալ երկրներից մի քանիսը գտնվել են Արցախի տարածքում, ուստի ենթադրելի էր դրանց շարքում նաև Ուրտեխեի անունը։ Հետևվարար, ելնելով առկա արձանագրագիտական նյութի ընձեռած հնարավորություններից (չի բացառվում, որ նորահայտ նյութերը կարող են և կասկածի տակ առնել մեր ենթադրությունը), կարելի է ենթադրել, որ Ուրտեխե երկրի անվանումը դուռ աշխարհագրական բնույթ ունի և մի ինչ-որ ցեղային երկիր չի ներկայացնում։ Այնուամենայնիվ, համանականությամբ, Սևանա լճի ավազանի կամ Ուեդուրի—էքիունիի բնակիչները Սյունյաց լեռներից արևելք տարածվող երկրամասը բնաշխարհագրական ինչ-ինչ հատկանիշի պատճառով կոչել են Ուրտեխե—Արցախ, որը, սակայն, եղած նյութի շրջանակներում դժվար է պարզել։

Ուսա I-ի արշավանքներից հետո, Արարատյան թագավորության և Երվանդունիների պետության ժամանակաշրջանում, մեզ հետաքրքրող երկրամասը դուրս է մնացել սկզբնաղբյուրների ուշադրությունից և, փաստորեն, քաղաքական իրադարձությունների ոլորտում կրկին հայտնվում է Արտաշիսյան հարստության շրջանում։ Մովսես Խորենացին, անդրադառնալով Երվանդ թագավորի և Արտաշես I-ի պայքարին, Երվանդ Վահագունու գործունեության հիշատակում է Ուտիք գավառը (=աշխարհ), սակայն ոչինչ չի հայտնում Արցախի մասին[9]։ Իհարկե, այդ չի կարող վկայել Արցախ, որպես վարչական միավորի, բացակայության մասին, քանի որ ժամանակագրական առումով շատ չանցած, Սատրապների «Աշխարհագրության» մեջ Արցախը Օրթիստենե անունով հիշատակվում է որպես Հայաստանի մարզ. «Հայաստանի ներսում կան շատ լեռներ և շատ լեռնադաշտեր, որոնց մեջ խաղողի որևէ հնձոտության չի աճում, նաև շատ հովիտներ, ոմանք չափավոր, ոմանք էլ շատ բերրի, ինչպես Արաքսենեի դաշտը, որով Արաքս գետն է հոսում մինչև Աղվանքի ծայրը (=սահմանը) և թափվում է Կասպից ծովը, և սրա հետ Շակաշենը՝ սահմանակից Աղվանքին և Կուր գետին, հետո Գուգարքը, Ամբողջ այս երկիրը լիքն է հացահատիկներով, պտղատու և մշտադալար ծառերով. կա նաև ձիթենի։ Հայաստանի մարզերից են Փավլենեն և Կոմիսենեն և Օրթիստենեն, որը դուրս է բերում մեծաքանակ այրուձի։ Խորձեանը և Կամբյուսենեն՝ [Հայաստանի] ամենահյուսիսայինը [մարզերն] են և շատ ձյունառատ, որովհետև մոտ են Կովկասյան լեռներին և Վիրքին ու Կողքիսին»[10]։ Արցախ—Օրթիստենեի համարժեքությունը, որի մասին վերը նշվեց, պատմագիտության մեջ վաղուց արդեն պարզված իրողություն է[11], ուստի դրան այլևս չենք անդրադառնա։ Սակայն ամբողջության մեջ բերելով հույն աշխարհագրագետի վերոհիշյալ հաղորդումը, կփորձենք ընդհանուր ժեռով որոշակիացնել երկրամասի սահմանները, անհրաժեշտու-

---

8 Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. հ. Ա, էջ 80, Г. А. Меликишвили. Указ. соч., № 155 б.

9 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913, էջ 169 (ձևուր հասանէ առ Երուանդ յետդացւոց գաւառին, որք գումարեցաց արքայն Պարսից զօրս բազումս ի ձեռն Մմբատայ, զի ի վերայ քո խաղացեալ առցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւրն)։

10 The Geography of Strabo, with an english translation by Horace Leonard Jones, in eight volumes, V, London, 1969, XI, 14. 4; Տե՛ս նաև Страбон. География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. А. Стратановского. Л. 1964, XI, 14: 4։ Ս տ ր ա բ ո ն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան. Երևան, 1940, 55—57։

11 Հ. Կ ա ր ա գ յ ո զ յ ա ն. Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, էջ 56—57։

քյան դեպքում դիմելով այլևայլ սկզբնաղբյուրների օգնությանը։ Ստրաբոնը Կուրի աջափնյակի հյուսիս-արևմտյան մասում տեղադրում է Շակաշենը, որը Կուր գետով սահմանակցում էր Աղվանքին։ Դատելով «Աշխարհացոյցի» տվյալներից, ստրաբոնյան Շակաշենը ներառնելու էր Շակաշեն գավառն ու նրա շրջակա տարածքները, համապատասխանելով Մովսես Խորենացու հիշատակած Գարդմանացվոց ჩქխանությանը[12], որի մասին կխոսվի ստորև։ Այլ խոսքով, հիշյալ Շակաշենը զբաղեցրել է աշխարհացույցյան Ուտիք աշխարհի հյուսիս-արևմտյան մաս, տարածվելով մինչև Տրտու (ներկայումս՝ Թարթառ) գետի ստորին հոսանքի հյուսիսակողմը։ Ըստ Ստրաբոնի Շակաշենի հարևանությամբ հանդես եկող երկրամասը կոչվում է Արաքսենեի դաշտ, որի միջով հոսում է Արաքսը, սակայն դժվար չէ տեսնել, որ Կուրի աջափնյակը Կուր և Երասխ գետերի շրկիցից մինչև Տրտու գետի և Կուրի շրախառնուրդը ընկած շրջանում ոչ այլ ինչ է, քայց եթե պատմահոր հիշատակած Ուտիք գավառը կամ աշխարհը։ Շակաշենի և նշված Ուտիքի միացյալ տարածքը, որոշ տարբերություններով, համապատասխանել է աշխարհացույցյան Ուտիք աշխարհի տարածքին։ Այսինքն Արցախ—Օրքիստենեի արևելյան և հյուսիսային սահմանները մոտավորապես անցել են Արցախը աշխարհացույցյան Ուտիքից սահմանազատող գծով։

Իսկ որո՞նք են եղել Արցախ—Օրքիստենեի մնացյալ սահմանները։ Առաջին տպավորությունն այն է, որ այդ մասին ամասեցի աշխարհագրագետը տվյալներ չի պահպանել, սակայն ինչպես ցույց կտա քննությունը, Ստրաբոնի տեղեկությունները լույս են սփռում նաև այս խնդրի վրա։ Վերոբերյալ հաղորդման մեջ Օրքիստենեի հարևանությամբ հիշատակվում են ևս երկու մարզ՝ Փավենեն և Կոմիսենեն, որոնց տեղադրությունը լույս է սփռում մեզ հետաքրքրող խնդրի վրա։ Փավենեն Ստրաբոնի «Աշխարհագրության» ձեռագրերում հայտնի է ոչ միայն Φουηνη այլև Φαυηνη տարբերությամբ, իսկ մեկ այլ կապակցությամբ նաև Φαυνιτις-գրությամբ։ Աշխարհագրագետի երկը Փավենեն ամվերապահորեն համարում է Հայաստանի երկրամաս, իսկ Փավլիտիսը՝ մարերից գրավված երկիր. «Պատմությունը ասում է, որ Հայաստանը, նախապես փոքր, աճեց այնուհետև Արտաշեսի և Զարեհի ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի զորավարներն էին ... Երկուսն էլ մեծացան շրջակա ազգերից գրավելով զանազան գավառներ, Մարերից՝ Կասպիանեն, Փավլիտիսը և Բասորապեդան...»[13]։ Նշված երկրամասերից ցայսօր որոշակի հայտնի է Կասպիանե—Կասպից տեղադրությունը, որը համապատասխանում է Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի տարածքին։ Ինչ վերաբերում է մյուս երկուսին, ապա հավանական է ենթադրել, որ դրանք աշխարհագրական հերթականությամբ տարածվել են Կասպիանե—Կասպից արևմուտք ընկած շրջանում, Մեծ Հայքի հարավ-արևելյան սահմանագլխին։ Մեր կարծիքով, դրանց տեղադրությունը կարելի է որոշակիացնել՝ ելնելով Մեծ Հայքի քագավորության պետական սահմանագծից՝ մինչև Արտաշես I-ի տարածքային ձեռքբերումները։ Արծրունյաց պատմիչի մի շատ արժեքավոր տեղեկությունից, որ նա հավանաբար քաղել է մեզ անհայտ մի հին աղբյուրից, պարզվում է, որ Երվանդ Վերջին արքայի օրոք Մեծ Հայքի քագավորության սահմանը Պարսկահայքի շրջանում անցել է Անձախիձոր գավառի արևելակողմով[14], այսինքն Հեր և Զարեհանդ գավառները դեռևս հայոց պետության մեջ չէին

---

12 Մովսես Խորենացի, էջ 113։

13 Strabo, XI, 14, 5. „...εκ Μηδων μεν την τε Κασπιωνην και Φαυνιτιν και Βασορα-πεδαν...". Ստրաբոն, XI, 14, 5։

14 Եղիա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985, էջ 84։

մանում[15], նվ քանի որ կասպք—Փայտակարանի հյուսիսային սահմանը անցնում էր նրասխ և մասամբ Կուր գետերով, իսկ Նախճավանն էլ պատկանում էր Մեծ Հայքի Բագավորությանը, ապա Հեր և Ջարևանդ—կասպք հատվածում Հայոց պետության սահմանը, ամենայն հավանականությամբ, անցել է Կոտոր (Կարմիր), իսկ այնուհետև՝ Երասխ գետերով։ Եթե մեր ենթագրությունը ճիշտ է, իսկ աղբյուրագիտական նյութը վկայում է դրա օգտին, ապա ստրարոնյան Փավլիտիոն ու Բասորոպեդան պետք է տարածքային համրնկնին համապատասխանաբար Մարդպետականին (Արևելյան Վասպուրական) և Պարսկահայքին[16], Թե Փավլիտիս կամ Փավլենե կամ Փաննենե անունը ի՞նչ ծագում ունի և ինչո՞ւ է տրվել Մարդպետականի տարածքին, առանձին լուրջ պատմաբանասիրական քննության խնդիր է, որը դուրս է սույն աշխատության հետաքրքրությունների շրջանակից։ Այսուհանդերձ, հիմնվելով ձեռքի տակ եղած որոշ նյութերի վրա, կարելի է բացատրության մի փորձ կատարել։ Արևելյան Վասպուրականի տարածքում, այսինքն Մարդպետականում, «Աշխարհացոյցը» հիշատակում է Բաքնան գավառը, որը ձեռագրերում ունի նաև Բագան, Բաքան, Բաքոսեան և Բաղուսեան տարրնթերցումները[17]։ Առաջին ընկալումն այն է, որ այս գավառանունը ծագում է բագ=աստված-ից կամ էլ Բաքոս (=Դիոնիսոս) աստծու անունից։ Սակայն առավել հին և որակյալ ձեռագրերում Բադան կամ Բադեան րնթերցումը ընդհանրապես չի հանդիպում, ուստի առավել հավանական է Բաքոս աստծու անվան հետ կապելը։ Բնական է, որ Բաքոսի պաշտամունքին նվիրված գավառանվան մեջ հունական ը-os-ը չպիտի պահպանվեր և գավառը պիտի ստանար Բաքեան ձևը, որի աղավաղումն է բաղմաթիվ ձեռագրերի և «Ջորանամակի» «Բաքանց» տարրնթերցումը։ Միաժամանակ, գրքի կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ Բաքեանի որպես Բաքոս աստծու պաշտամունքին նվիրված գավառի փաստը ծանոթ է եղել գրիչներին, որոնցից մի քանիսը այն դարձրել են «Բաքոսեանց կամ «Բաքուսեանց՝ նպատակ ունենալով գավառանվան իմաստուր հասկանալի դարձնել րնթերցողներին։ Սակայն, միաժամանակ, ակընբախ է, որ Բաքոսը հայկական հեթանոսական աստվածների ծագկաբույլին չէր պատկանում, հետևաբար նրա մուտքը հայ իրականություն պետք է կապված լիներ հունականության կամ հելլենիզմի զարգացման հետ, երբ հայկական աստվածությունները նույնացվում էին հունական հեթանոսական համապատասխան աստվածությունների հետ, օգտագործվում սկզբում ղուգահեռ, իսկ այնուհետև երբեմն էլ առավելություն տալով եկամուտ աստվածության անվանմանը։ Համենայն դեպս այս դեպքում օտար անվանումը դուրս է մղել հայկական համարժեքը և ի վերջո իր անունը հաղորդել գավառին։ Միանգամայն հասկանալի է, որ նման բացատրության դեպքում պետք է հարց ծագի, թե հայկական հեթանոսական որ աստվածությունն է նղել Բաքոսի համարժեքը կամ ղուգահեռ և պահպանվե՞լ է արդյոք նրա անուններ վարչական նույն միավորի վրա։ Մեր կարծիքով, որը ստորև ցույց կտանք, Բաքոսի աստվածության համարժեք է համարվել Վա-

---

15 Նորայր Բյուզանդացին Թովմա Արծրունու երկում հանդիպող «ի հետևի զօրս անդ» (էջ 84) արտահայտությունը իրավամբ սրբագրել է «ի Հեր եւ Ջարևանդ», որով հատկանում է հայ-մարական սահմանագիծը (Հայկական բառացնություն. Կ. Պոլիս, 1880, էջ 86։ Տե՛ս նաև Թովմա Արծրունի եւ Անանուն, ծան. 67, էջ 513)։

16 Ր. Հ. Հարությունյան. Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհն ըստ «Աշխարհացոյցի»-ի.—«Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 2, էջ 26—28։

17 Ր. Հ. Հարությունյան. Մեծ Հայքի Վասպուրական աշխարհն ըստ «Աշխարհացոյցի»-ի.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1983, № 3, էջ 112։

նատուրը, որը հյուրընկալության աստվածն էր[18], Վանատուրը այլ անունով կոչվել է նաև «Արամազդ Օտարասէր» կամ «Հիւրընկալ»[19], Նրա մեհյանը գտնվում էր Դիցավանում կամ Բագավանում, իսկ նրան նվիրված տոնախմբությունը կատարվում էր Նավասարդի առաջին օրը, ինչպես հավաստում է «Հայսմաւուրքը»[20], Մովսես Խորենացին, օգտվելով Բարդածանի «Պատմութիւնից», հայտնում է, որ վերջինս «պատմէ ի մեհենից պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուել զգերեզման նորօրն իւրոյ Մաժանայ քրմապետի ի Բագնացն աւանի, որ և ի Բագրևանդ գաւառի, բագին ի վերայ գերեզմանին շինեալ, զի ի զոհից ամենայն անցաւորք վայելեսցեն, և ընդունիցին հիւրք երեկոքիւք ՅՈրում և զկնի վաղարշ տօն աշխարհախումբ կարգեաց ի սկզբան ամին նորայ, ի մուտն Նաւասարդի»[21], Ղ. Ինճիճյանը, առաջնորդվելով Պատմահոր այս վկայությամբ, գտնում է, որ կառուցված բագինը նվիրված էր Վանատուրին կամ հյուրընկալության աստծուն[22], Նրա տոնախմբությունը կատարվում էր նոր տարվա սկզբում, այսինքն ներկա հաշվարկով օգոստոս ամսին և ամենաբեր նոր պտղոց տոնին, երբ հասունացել են պտուղները, Բերևս այս պատճառով էլ որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ հիշյալ աստվածությունը հնում առնչվել է բնության փթթմանը և պտղաբերմանը, Տոնախմբությունը ընթացել է երգերով, պարերով, մրցություններով ու զանազան այլ հանդիսություններով[23],

Բերված նյութերի ծանոթությունից առաջին տպավորությունն այն է, որ Բաքոս-Դիոնիսոսի և Վանատուրի միջև ընդհանրություն գրեթե չկա։ Սակայն առավել խոր քննությունը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, բուսականության, խաղողագործության և գինեգործության հովանավոր Դիոնիսոս-Բաքոսը[24], որին նվիրված տոնախմբությունները կատարվում էին տարին չորս անգամ, որոշակի աղերս ունի Վանատուրի պաշտամունքի հետ, կապված խաղողի և այլ պտուղների բերքահավաքի և գինու պատրաստման հանդիսությունների հետ[25], որոնք մեծ ճոխությամբ անցկացվում էին նաև հին Հայաստանում և որոնց քրիստոնեականացված ձևերը պահպանվել են մինչև մեր օրերը։ Բերես այս հանգամանքն էլ հիմք է հանդիսացել, որ երկու աստվածությունները նույնացվեն կամ համադրվեն, որովհետև մյուս հատկանիշները նրանց միմյանցից հեռացնում են։ Ելնելով կատարված քննությունից, տեղին է մտածել, որ Ստրաբոնի հիշատակած Փավենե—Փանենե—Փավնիտիսը բնավ էլ առեղծվածային անուն չէ, ինչպես ընդունված է կարծել։ Եթե հյուրընկալության աստվածը կոչվում էր Վանատուր, ապա ենթադրելի է աստվածության «Վանենանե (=հյուրընկալության) անվանումը, իսկ դա հունական տառադարձման դեպքում կարող էր և հավանարար

---

18 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց. Տփղիս, 1909, § 836 (ուր ղիշատակ վկայիցն բերելոց ժամադրեաց ի տօն մեծ հռչակել, անուանեցն պաշտաման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, Հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յատաչագոյն խակ ի նմին տեղւոջ պաշտէին յուրախութիւնս նաւասարդ աւուր։ Զի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելւոյն Յովհաննու և սրբոյ վկային Աստուծոյ Աթաղինէի՝ յայնմ աւուր խմբեալ ի նմին յաւանին տօնեացենն)։

19 Ուսեալ Պատմիչեայ Կնստրացւոյ Ժամանակագրանք (Քրոնիկոն). Վենետիկ, 1818, Ո, էջ 240։

20 Ղուկաս Ինճիճեան. Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի. հ. Գ, Վենետիկ, 1835, էջ 180։

21 Մովսես Խորենացի, էջ 201—202։

22 Ղ. Ինճիճեան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց. Վենետիկ, 1822, էջ 409։

23 Ղ. Ալիշան. Հին հաւատք կամ հեթանոսական կրոնք Հայոց. Վենետիկ, 1895։

24 Мифологический словарь. сост. М. Н. Ботвинник. М. А. Коган, М. Б. Рабинович, Б. П. Селецкий. М., 1965, с. 89—91.

25 Նույն տեղում, էջ 91—92։

առացել է Վռոյոյ գրությունը, քանի որ հայերենի «վ»-ն արտահայտելու համար հունարենը չէր կարող օգտագործել «B»-ն, որ այն ժամանակներում որա էր արտասանվում։ Ուստի հույն աշխարհագրագետը կամ նրա օգտագործած աղբյուրի հեղինակը կամ պետք է օգտագործեր «υ» երկհնչյուն, որ ձայնավորից առաջ «վ» էր հնչում կամ էլ վերջինիս արտասանությամբ մոտ կանգնած «Ու» հնչյունը։ Տառադարձելով և միաժամանակ հունականացնելով «Վանեանա»-ի վերջավորությունը, հույն հեղինակը վերջինս վերածել է Վռոյոյ-ի նման հալեցակետի դեպքում պետք է ենթադրել, որ, հակառակ ընդունված տեսակետի, Փավենե և Փաննենե ընթերցումներից պետք է առաջնությունը տալ Փաննենին, եթե իհարկե առաջինի «ν»-ր «ν»-ի աղավաղում չէ։ Սակայն բացատրությունը բարդություններ առաջ է կանգնում այն տեսակետից, որ ունենք ոչ միայն Փաղոյոյ, այլև Վռոյոյ ընթերցումները, որոնց մեջ «ν»-ը առկա է երկուսում էլ։ Այս հանդամանքը պատճառ է դարձել, որ որոշ ուսումնասիրողներ իրենց իրավունք են վերագրել երկու տարընթերցումների հիման վրա անուն արբադրել Վռոյոյոյ-. որին համահնչուն է Փռոյոյ-ը։

Հայկական «Վանա»-ը ծագում է իրանական wahana «բնակություն» ձևից, որն էլ իր հերթին առաջացել է առավել նախնական vasana-ից (բնակություն), որը պահպանել է սանսկրիտերենը։ Քանի որ «հարևանը (=դրացի, դրկից), հարազատ, հարակաշ բառերի «հարբ-ը որպես առանձին ձև հայերենում գոյություն չունի, ապա Հ. Աճառյանը իրավացիորեն ենթադրել է, որ նշված բառերն ամբողջությամբ իրանական ծագում ունեն, հետևաբար «վանա-ը իրանյան բառ է։ Դրա մասին է վկայում նաև a մասնիկով կազմված հ. պրս. awahana բառը, որը հայերենում վերածվել է «աւանա-ի[27]։ Վանատուրի «վանա-ը պարզորոշ ցույց է տալիս, որ «wahana-ն հայերենում վերածվել է «վանա-ի, սակայն լեզվաբանական տեսակետից չի բացառվում, որ որոշ բարբառներում կամ Մարդպետականի իրանական խոսվածքներում «wahana»-ի «հա-ը վերածվեր «յա-ի և այնուհետև «վա-ի, որի հետևանքով այն կարող էր ձեռք բերել «waun» տեսքը, որը և կարող էր հույն աշխարհագետի կամ նրա աղբյուրի հեղինակի համար հիմք ծառայել այն Փաղոյոյ-ի վերածելու համար։ Սակայն չի բացառվում, որ Փաղոյոյ-ի ծագումը բոլորովին այլ բացատրություն ունի։ Հռոմեական Faunus աստվածը, որ անտառների ու դաշտերի, հովիվների ու անասունների հոտերի հովանավորն էր[28], իր էությամբ համընկնում էր Վանատուրի պաշտամունքին, ուստի հույն աշխարհագրագետը հայացված կամ դեռևս չհայացված «վանա-ը դուգադրել է լատինական աստվածությանը, որոնք համընկնում էին՝ բովանդակությամբ, և՛ անունով, ու երկրամասի անունը մատուցել Fauene գրությամբ։

Այս հարցի վերջնական լուսաբանումը թողնելով ապագային, կարող ենք այժմ որոշակիորեն նշել, որ Փավենե—Փաննենե—Փավենենե—Փավենիտիս զբաղեցրել է Մարդպետականի տարածքը, ուստի Ստրաբոնի վերոհիշյալ հաղորդման մեջ Փավենիի և Օրքիստենիի միջև գտնվող Կոմիսենեն (Κωμισηνή) աշխարհագրական տեսակետից կարող է նույնանալ Սյունիքի հետ։ Մենք լիովին գիտակցում ենք, որ շատերի համար ոչ միայն անսպասելի, այլև անընդունելի տեղադրություն ենք առաջարկում, սակայն մատուցվող տեղորոշումը բխում է հույն աշխարհագրագետի երկի տրամաբանությունից, երկրամասերի թվարկման հերթականությունից ու աշխարհագրական դասավորությունից, որովհետև ինչպես Արաքսենեի դաշտին հաջորդում են

---

26 Strabo, էջ 322, ծանոթ. 1։

27 Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1979, էջ 302—303։

28 Мифологический словарь, с. 256. Տե՛ս նաև Латинско-русский словарь, составил И. Х. Дворецкий. М., 1976, с. 418.

Շակաշենն ու Գուգարքը, կազմելով Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան սահմանային երկրամասերի անընդհատ շարք, այնպես էլ Փավնեննեն, Կոմիսենեն և Օրքիստենեն ներկայացնում են մեկ այլ շարք, որը ձգվում էր հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ։ Այլ խոսքով, կարելի է հաստատորեն պնդել, որ Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ու Ստրաբոնի Կոմիսենեն տարածքային առումով լիովին համընկնում են։ Բնական է, որ այդ պարզելուց հետո անհրաժեշտություն է ծագում պատասխանել այն հարցին, թե ինչ հարաբերության մեջ են գտնվում հիշյալ տեղանունները։

Ստրաբոնը Կոմիսենե անունով երկու երկրամաս է հիշատակում, որոնցից մեկը, ինչպես նշեցինք, Սյունիքն է, իսկ մյուսը գտնվել է Պարսկաստանում[29] և համապատասխանել է «Աշխարհացոյցում» հիշատակված Կոշմ կամ Կոմշ աշխարհին, որը մտնում էր Երանշահրի Խորասանի կամ Արևելյան քուստակի մեջ[30]։ Մենք հակված ենք կարծելու, որ պարսկական Կոմշ—Կոմիսենեի գրությունն ազդել է հայկական Կոմիսենեի ուղղագրության վրա, ուստի գտնում ենք, որ վերջինս մեզ է հասել ոչ անաղարտ վիճակում։ Ամենից առաջ ենթադրելի է, որ կարող էին շփոթվել հունարեն «Κ» և «Σ» տառերը, իսկ պարսկական Կոմիսենեի ազդեցությամբ «μ»-ի կարող էր վերածվել «ν»-ն, հետևաբար, հայկական Կոմիսենեի նախնական տեսքը պետք է լիներ Σωισηνη։ Եվ քանի որ հունական «ω»-ն արտահայտում է հայերենի «ովշ» կապակցությունը, ապա Ստրաբոնի Կոմիսենեն ոչ այլ ինչ է, բայց եթե Սովնիսենեն կամ Սունիսենեն, որը փաստորեն անունով ևս անմիջականորեն կապվում է Սյունիքի հետ։ Սեպագրագետ Հ. Կարագյոզյանի կարծիքով, չի բացառվում, որ «Κ»-ի և «Σ»-ի ոչ մի շփոթ էլ տեղի չի ունեցել։ Կոմիսենեի «Κ»-ն, ըստ նրա, կարող է և նախնական լինել և միայն ավելի ուշ հնդեվրոպական լեզուներին հատուկ հնչյունափոխական օրինաչափություններով վերածվել է «Σ»-ի։ Այլ խոսքով, Սյունիքի անվանումը սկզբնապես հնչել է Կյունիք (Կիւնիք)։ Այսպես թե այնպես, երկու հնարավոր տարբերակների դեպքում էլ լեզվական քննությունը, մեր խորին համոզմամբ, գալիս է ամրապնդելու այն տեսակետը, որ Կոմիսենեն տարածքային առումով համապատասխանել է Սյունիքին, որով և ճշտվում են Արցախ—Օրքիստենեի արևմտյան սահմանները, որոնք, բոլոր հիմքերը կան ենթադրելու, անցել են նույն սահմանագծով, որով միմյանցից բաժանվում էին Մեծ Հայքի Արցախ և Սյունիք աշխարհները[31]։ Օրքիստենե—Արցախ հարավային սահմաններն անցել են Երասխ գետով, որի մասին Ստրաբոնը, ցավոք, ուղղակի տեղեկություն չի պահպանել։ Սակայն ելնելով այն իրողությունից, որ կասպը տարածվում էր մինչև Փավնիտիս—Մարդպետական և որ այն համապատասխանում էր Փայտակարանին, որի հյուսիսային սահմաններն անընում էին Երասխով[32], կարելի է անվարան Երասխը ճանաչել Արցախ—Օրքիստենեի հարավային սահմանագլուխ[33]։ Ստրաբոնի հիշատակած Արաքսենեի դաշտը տարածվել է բնականաբար ոչ միայն Երասխի կամ Արաքսի ձախ, այլև աջ ափին, հետևաբար աջափնյա

---

[29] Strabo, XI. 9. 1. ...ἐπὶ τῆς Παρσυήνης ἡ μὲν Κωμισηνη καὶ ἡ Χωρηνη...»

[30] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք, նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 40։

[31] Նույն տեղում, էջ 33։ К. П. Патканов. Армянская географія VII века. СПб., 1877, с. 19. Ա. Գ. Աբրահամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը. Երևան, 1944, էջ 350։

[32] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ, էջ 33։ К. П. Патканов. Указ. соч., с. 19—20. Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 350։

[33] Արցախ աշխարհի սահմաններին մանրամասնությամբ կանգրադառնանք Մեծ Հայքի վարչական բաժանման հետ կապված։

Արաքսեննեն, որ հուլն աշխարհագրագետի մոտ վարչական հատուկ անվանում չունի, իրականում Կասպիանե—Կասպքի մի մասն է։

Ի մի բերելով կատարված քննության արդյունքները, գալիս ենք միակ ընդունելի եզրակացության, որ չնայած Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանումը դեռևս բացակայում էր, բայց Արցախը որպես բնաշխարհագրական և վարչական միավոր արդեն ձևավորված էր։ Ըստ որում, ինչպես կրացահայտի հետագա շարադրանքը, տարածքային առումով այն դրեթե համընկնում է Մեծ Հայքի աշխարհաղուլյան Արցախ աշխարհին։

Հարցի քննությունն ամբողջական չէր լինի, եթե չանդրադառնայինք մի խնդրի ևս։ Սեպագիր արձանագրություններում լեզուն չի տարբերակում «ու» և «ո» հնչյուններըր, այսինքն թե՛ մեկը և թե՛ մյուսը տրվում են «ու» գրությամբ։ Սակայն Օրթհոտենե անվանաձևը վկայում է, որ Ուրտեխեն հնչել է Օրտեխե։ Ավելի ուշ հայկական աղբյուրների Արգախ անունը պարզորոշ ցույց է տալիս, որ կատարվել է o>ա հնչյունափոխություն, որը հատուկ է հնդեվրոպական լեզուներին։ Այլ խոսքով, այդ կարող էր կատարվել այն դեպքում, եթե Կուրի և Երասխի միջադետքը բնակեցված լիներ հնդեվրոպական հայկական բնակչությամբ։ Բոլոր «պատմագիտական» մարզանքները՝ նշված շրջանում աղվանական կամ կովկասյան ցեղերին ազդակից բնակչություն տեսնելու վերաբերյալ, անիմաստ են ու անպտուղ։

Արցախի հայորդ հիշատակությունը[34] վերաբերում է հուլն աշխարհագրագետ Կղավդիոս Պտղոմեոսին, սակայն ինչ-ինչ պատճառներով երկրամասը մատուցվում է մեկ այլ անունով։ Նկարագրելով Մեծ Հայքի քաղաքությունը, հուլն հեղինակը առանձնացնում է Եփրատի, Կուրի և Երասխի միջև ընկած շրջանը, տեղեկացնելով հետևյալը. «Χώραι δὲ εἰσιν ἐν τῇ Ἀρμενία ἐν τῷ ἀπολαμβανομένῳ μεταξὺ Εὐφράτου καὶ Κύρου καὶ Ἀράξου ποταμῶν τμήματι παρὰ μὲν τὰ Μοσχικὰ ὄρη ἡ Καταρζηνὴ ὑπὲρ τοὺς καλουμένους Βόγας; παρὰ δὲ τὸν Κύρον ποταμὸν ἡ τε Ὠβαρηνὴ καὶ ἡ Ὠτηνή, παρὰ δὲ τὸν Ἀράξην ποταμὸν ἥ τε Κολθηνὴ καὶ ἡ ὑπ' αὐτὴν Σοδουκηνή, παρὰ δὲ τὸν Παρυάδρην τὸ ὄρος ἥ τε Σιρακηνὴ καὶ ἡ Σακασηνή» (Հայաստանում՝ Եփրատ և Արաքս գետերի միջև և Մոսքական լեռներով շրջափակված հատվածում կան [հետևյալ] մարզերը. Կատարզենե, Բոքեր կոչվողներից վեր, Կյուրոս գետի մոտ՝ Օբարենե և Օտենե, Արաքս գետի մոտ Կոլթենե և նրանից ներքև՝ Սոդուկենե, Պարյադրես լեռան մոտ՝ Սիրաքենե և Սակասենե»)[35]։ Հարկ է նշել, որ Մեծ Հայքի պտղոմեոսյան նկարագրությունը ցայսօր չի ստացել իր գիտական արժեքավորումը։ Ուսումնասիրողներին այն պատկերանում է որպես Մեծ Հայքի առանձին հատվածների նկարագրություն, որտեղ տեղ են գտել 20-ի չափ երկրամասեր, սակայն ինչպես ստորև կտեսնենք, այն տալիս է հայոց պետության լիակատար վարչական բաժանումը, որը պատմական իրողություն էր մ. թ. II դարում։ Καταρζηνή-ն, որ հայտնի է Կոտարզանի, Կորաշնի, Կոտարշնի, իսկ լատինական թարգմանությունների մեջ նաև Cotazene Cothzene տարբերակումներով, ֆիքերը սրբագրում է Κολαρζηνή և նույնացնում Մեծ Հայքի Կայարջք կամ Կղարջք գավառանվան հետ[36]։ Ս. Երեմյանը ուղղագույն է համարում Κοταρζαχη-ն և վերջինս համարում է Գողեթական

---

34 Մեծ Հայքի քաղաքությանի մանրամասն նկարագրություն ունի նաև Պլինիոս Ավագը, սակայն այն առավելապես վերաբերում է պետության ամբողջ տարածքին ու սահմաններին, իսկ աշխարհներն ու գավառները որպես վարչական միավորներ չեն հիշատակվում։

35 Claudii Ptolemaei Geographia, e codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Müllerus, voluminis primi, pars secunda, Paris, iis, 1901, v, 12, 4 (Թարգմանությունը Գ. Մուրադյանի)։

36 Նույն տեղում, էջ 937, ծան. 4։

անվան հունական տառադարձում, որը համապատասխանում է Ստրաբոնի երկի Μοσχική Մոսքիկեին[37], Սակայն հետագա շարադրանքը մեզ է մատուցում մի շարք հակասություններ։ Ըստ հեղինակի Գոդերձական կուսակալությունը իր մեջ էր առնում մեսխ կամ մոսխ ցեղով բնակված Աճարա և Սամցխե գավառների տարածքը, որոնք մ. թ. 37 թ. պայմանագրով ընդմիշտ դուրս են մնում Մեծ Հայքի սահմաններից։ Բնական է, որ այս հարցադրումից հետո անհասկանալի է մնում ԿոταϷηνη-ի հիշատակությունը Մեծ Հայքի մեջ II դարում։ Թե այս եզրակացությանն հիմքում ինչ շարժառիթներ կան, դժվար է ասել, որովհետև հեղինակը սովորություն չունի իր աշխատանքային խոհանոցը բացահայտելու, սակայն կարելի է որոշակիորեն նշել, որ Ս. Երեմյանը դրանից առաջ կիսում էր գերմանացի աշխարհագրագետի կարծիքը։ «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» աշխատության մեջ նա գրել է. «Կղզորջք—Բ4—վրաց. კლარჯეთი Կլարջեթի, հուն. Καταρζηνη, Calarzene (Ptol., V. 12. 4)»[38], Սանոթանալով Գ. Մելիքիշվիլու «Հին Վրաստանի պատմության շուրջ» աշխատության, կարելի է ենթադրել, որ Ս. Երեմյանի տեսակետների փոփոխությունը կատարվել է վերջինիս ազդեցությամբ։ Վրաց պատմաբանը, ինչպես դրանից առաջ ենթադրել էր Պ. Ուշակովը[39], գտնում է, որ Պտղոմեոսի հիշատակած Կատարզենեն համապատասխանում է բևեռագիր արձանագրությունների Կատարզա երկրին և պահպանվել է վրացական Գոդերձի անվան (Սամցխե և Աճարա գավառները կազմող լեռնանցքը կոչվում է Գոդերձի) մեջ[40]։ Նրա ենթադրությամբ Կատարզենեն նույնական է Ստրաբոնի հիշատակած Χορζηνη-ին[41], սակայն, միաժամանակ, չի բացառում, որ չնայած ուսումնասիրողների կասկածներին, Կատարզենե անունը հավանաբար պահպանվել է Կղարջք ցեղի և Կլարջեթի երկրամասի անունների մեջ[42]։ Մեր կարծիքով ևս, Καταρζηνη-ն նույնական է Կաղարջք-Կղարջքին, ոչ միայն այն պատճառով, որ հնարավոր է t>l հնչյունափոխությունը[43], այլև այն տեսակետից, որ մ. թ. I դարի 30-ական ԹԹ. Գոդերձի լեռնանցքի շրջակա տարածքը, այսպես կոչված Գոդերձականը, անցել է Վիրքի թագավորությանը, ուստի և չէր կարող արտացոլվել Մեծ Հայքի նկարագրության մեջ։ Մյուս կողմից, Կատարզա, Կաղարջք և Կլարջեթի անվանումները բնավ էլ չեն վկայում, որ կատարվել է k>g հնչյունափոխություն, առավել ևս որ վրացերենում բաղաձայնները կայուն են և հնչյունափոխություններ չեն ենթարկվում։ Καταρζηνη- Կաղարջքը II դարում անհամեմատ մեծ տարածք էր ընդգրկում, քան V դարում, ուստի և իր բնաշխարհագրական ու տնտեսական ամբողջությամբ կազմել է առանձին աշխարհ, ներառնելով նաև Արտահանի գավառը[44]։

(Շարունակելի)

---

37 Հայ ժողովրդի պատմություն. հ. Ա, Երևան, 1971, էջ 720, 725, Strabo, XI, 2, 18։

38 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 59։

39 П. Н. Ушаков. К походам урартийцев в Закавказье в IX и VIII вв. до н. э.—«Вестник древней истории», 1946, № 2, с. 37.

40 Г. А. Меликишвили. К истории древней Грузии. Тбилиси, 1959, с. 104, 114, 115 և հմ. նույնի՝ Урартские клинообразные надписи, № 20, 21, 22, 23, 127, 128:

41 Նույն տեղում, էջ 137։

42 Նույն տեղում, էջ 114։

43 t>l հնչյունափոխության վրա մեր ուշադրությունը դեռևս 1970-ական ԹԹ. հրավիրեց ուրարտագետ Հ. Կարագյոզյանը։ Այն առաջին անգամ ցույց է տվել Ի. Դյակոնովը, տպագրելով Tugdammi-ի (АВИИУ № 7ա) և Λύγδαμις-ի (Strabo, I, 3, 21) համարժեքությունը (տե՛ս АВИИУ, № 78, էջ. 3 և 5, История Мидии, М.—Л. 1956, էջ 240)։

44 Բ. Հարությունյան. Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի.—տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 2, էջ 177—178։

# ԱՐՑԱԽԻ, ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ*

Պատմ. գիտ. դոկտոր Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Սեն-Մարտենը, Լանգլուան և Քիպերքը, քննության առնելով Մեծ Հայքի պտղոմեոսյան նկարագրությունը, հանգել են տրամաբանական այն եզրակացությանը, որ Օքարեենե[45] պետք է սրբագրել Գոգարեենե: Չնայած Կվաղրատոսը և Ստեփանոս Բյուզանդացին Կուրի աջափնյակում Օտենե-Ուտիքից զատ հիշատակում են Օքարենեն, իսկ վերջինս դրանցից բացի նաև Գոգարենե[46], հիշյալ ուղղումը միանգամայն օրինաչափ է: Մենք հակված ենք կարծելու, որ Պտղոմեոսի երկում սկզբնապես եղել է Ի[illegible] անունը, սակայն դեռևս վաղնջական ժամանակներում այն գրիչների կողմից աղավաղվել և վերածվել է Հոգոյոյ-ի, քանի որ Պտղոմեոսին հաջորդած հեղինակները իրենց աշխատություններում պահպանել են վերջին գրությունը: Ստեփանոս Բյուզանդացու կողմից Օքարենե և Գոգարենե ձևերի միաժամանակյա օգտագործումը արգասիք է մի կողմից Գոգարենեի, այսինքն Գուգարքի փաստական գոյության, մյուս կողմից Պտղոմեոսի երկի ազդեցության: Պտղոմեոսի «Աշխարհագրության» ձեռագրերը ունեն նաև Գօգարոյոյ կամ Գաշգոյոյ ընթերցումները, որոնք հավաստում են, որ տեղի է ունեցել «Գ» և «Ք» տառերի շփոթմունք, այսինքն երկրամասի անվանումը սկզբնապես եղել է Գոսարենե կամ Գովսարենե: Սա էլ իր հերթին կարող էր ծագել Գոդարեենից, եթե իհարկե Գովսարենե Գաշգոյոյ-ն չի աղերսվում անմիջականորեն Գուշար անվանման հետ և չի նշանակել Գուշարի երկիր: Համաձայն Պատմահոր, Գուշարը «որ յորդւոցն Շարայի, ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, և զկէս մասին Ջաւախաց, զԿողր, զՇոր, զՋոր, մինչև ցամուրն Հնարակերտ: Բայց զտէրութիւնն Աշոցայ, և զսահականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ[47]»: Նշված հաղորդման պատմաաշխարհագրական քննությունը ցույց է տալիս, որ Գուշարի տիրույթը, չնայած Մովսես Խորենացին Գուգարաց բդեշխի մասին տեղեկությունը զատում է Գուշարի պատմությունից[48], համապատասխանում է Գոգարենե աշխարհի և Գուգարաց բդեշխության տարածքին: Նվ Պատմահոր[49] և Ստրաբոնի[50] հաղորդմամբ Գուշարի տիրույթը կամ Գոգարենե—Գուգարքը արևմուտքում տարածվում էր

---

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1—2:

45 Հանդիպում են Օքարեենե և Օքարեոյոյ տարբերընթերցումներ նաև

46 В. В. Латышев. Известия древних писателей о Скифии и Кавказе.—«Вестник древней истории», 1948, № 3, с. 330; Հ. Հյուրշման. Հին Հայոց տեղւո անունները. Վիեննա, 1907, էջ 113:

47. Մովսես Խորենացի, էջ 113:

48 Նույն տեղում, էջ 114:

49 Պատմահայրը հայտնում է, որ Գուշարի տիրույթներին մեջ էր Ջավախքը, որի արևմտյան սահմանը քաշ «Աշխարհացոյցի» անցնում էր Կուր գետով (Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, էջ 28):

50 Strabo, XI, 14, 5 «...Խորչենեն և Գոգարենեն, որ Կուրի մյուս կողմն է»:

մինչև Կուր գետը, որը և սահմանաբաժան էր Կատարզա—Կաղարշքի և Գոգարենե—Գուգարքի միջև։

Պտղոմեոսյան Մեծ Հայքի նկարագրությամբ Գոգարենե—Օբարենեին արևելքից սահմանակցել է Ἀτηνή աշխարհը[51] և արտաքնապես պարզվում է, որ պտղոմեոսյան Ովտենեն և աշխարհացուցչյան Ուտիք աշխարհը տարածքապես համընկնում են, քանի որ հիշյալ Ովտենեն տարածվել է մինչև Երասխ գետը[52], Սակայն հիշյալ հաղորդման շարունակությունը ցույց է տալիս, որ այնուամենայնիվ Գոգարենե—Օբարենեի և Ովտենեի միջև գտնվել է Սակասենեն, որը, ինչպես ցույց տվեց Ստրաբոնի երկի քննությունը, պետք է տարածվեր մինչև Տրտու (ներկայումս՝ Քարքառ) գետի ստորին հոսանքի հյուսիսակողմը։

Պտղոմեոսի «Աշխարհագրությունը» Արաքս գետի մոտ տեղադրում է Κολβηνη մարզը, որն իհարկե անվան առումով նույնանում է կամ Արցախ աշխարհի Կողբ կամ էլ Վասպուրականի Գողթն գավառին։ Սակայն աշխարհագրական հերթականությունը նման զուգադրումները բացառում է, որովհետև պտղոմեոսյան Կոլբենեն տեղորոշվում է Ուտիք—Օտենեի հարևանությամբ, Երասխից հարավ ընկած շրջանում։ Կոլբենեն ձեռագրերում հայտնի է նաև Κονδηνη ընթերցմամբ, որը խոսում է նահանգանվան աղավաղված լինելու մասին։ Անշուշտ, մեզ համար դժվար է պատշաճ բացատրություն գտնել, սակայն պարզ է, որ այս աղավաղված անունը ծագում է Κασπηνη - կասպ անունից և աշխարհագրական տեսակետից էլ լիովին համընկնում է նրան։

Ըստ պտղոմեոսյան նկարագրության վերոհիշյալ Կոլբենե=կասպենեից ներքև գտնվել է Σοδοκηνη-ն, որը նույնանում է Արցախի հետ։ Այս նոր անվանումը, որ հայտնվում է Մեծ Հայքի վարչական բաժանման մեջ, պահպանվել է Պատմահոր երկում Սավդեք կամ Սավդեից իշխանություն անունով։ Մովսես Խորենացին գրում է. «Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարևելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր։ Բայց զայս գիտեա՛, զի զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն եղև մեզ յառաջնումն մատենին յիշատակել, զգունդն որ ի Սիսական, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ, և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին գնաւ Օւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն վաղարշակայ ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանեացւոց և Սասնէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնն»[53]։ Այս հաղորդման մեջ, որի պատմական արժեքը դժվար է գերագնահատել, կա այն շատ կարևոր իրողությունը, որ քվարկված իշխանությունները ստեղծվել են ավանդական Վաղարշակ թագավորի կողմից։ Մեր խորին համոզմամբ, այս վկայության մեջ Վաղարշակը նույնանում է հայոց Տրդատ I թագավորի հետ, որի ժամանակ էլ ամենայն հավանականությամբ իրագործվել

---

51 Պտղոմեոսի «Աշխարհագրությանն» ձեռագրերում այս երկրամասը հանդիպում է նաև Ἀχτηνη, Ματηνή, Μστηνή, Τωμηνή, Τστηνη և Τωτηνη տարբերակներով (Claudii Ptolemaei Geographia, p. 938, not. 1):

52 Plinii Secundi C., Naturalis historiae, Vol. 1—10, Cambridge, Mass.—London, 1950—1962 (Loeb Clasical Library), VI, 16, 41, „Atropatene ab Armeniae Otene regione discreta Araxe (Ատրպատենեն, որը Հայաստանի Օտենե (=Ուտիք) նահանգից բաժանվում է Արաքս գետով). Աշխարհացույց Մովսես Խորենացւոյ, էջ 33, К. П. Патканов. Армянская география VII века, с. 19—20.

53 Մովսես Խորենացի, էջ 113։

էր Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման համակարգի ըստեղծումը։ Ուշագրավ է, որ Խորենացու հիշատակած չորս իշխանություններից և ոչ մեկն անվանապես չի համընկնում հիշյալ տարածքում Մտրատոսր երկում հանդիպող երկրամասերի հետ և միայն երկուսն են այդ առումով համապատասխանում Պտղոմեոսի հիշատակած նահանգներին՝ Ուտեացվոց և Սավդեացվոց իշխանություններըւ Հասկանալի է, որ Պատմահոր և Պտղոմեոսի երկի տեղեկությունների համադրումը հնարավորություն է տալիս Սակասենե—Շակաշենը նույնացնելու Գարդմանացվոց իշխանության հետ, որին դեռ կանդրադառնանք, սակայն միաժամանակ պարզ է դառնում, որ մեզ հետաքրքրող տարածքում տեղ չի մնում այսպես կոչված Գարդմանացվոց իշխանության համար, քանի որ Կուրի աջափնյա տափարակը զբաղեցնում են Օտենե—Ուտիքը և Սակասենե—Գարդմանացիքը, իսկ նախալեռնային և լեռնային շրջանները՝ Սոդուկենե—Սավդեացիքը։ Այս հետաքրքիր պատմաաշխարհագրական իրողությունը բացահայտում է մի շատ կարևոր պատմական գաղտնիք, ինչը մեզ իրավունք է տալիս հայտարարելու, որ Պատմահոր երկը բերված հատվածում մեզ անաղարտ վիճակում չի հասել։

Իհարկե բնական և տեղին հարց է ծագում, թե ինչպե՞ս է Մովսես Խորենացու «Պատմություն»-ում հայտնվել Գարգարացվոց իշխանության անունը, երբ տարածքային առումով Կուրի և Երասխի միջագետքում ազատ տարածքներ չեն մնում։ Եվ արդյո՞ք այս կողմերում եղել է գարդարացիների բնակչությո՞ւն ու իշխանություն, որ այնքան փողհարվում է մեր հարևան հանրապետության պատմագիտական շրջանների կողմից։ Համենայնդեպս սա պատկանում է Հայոց Արևելից կողմերը աղվանական երկիր հռչակող պատմաբանների առավել կարևոր «փաստարկներից» մեկին։

Պատմահոր հռչակավոր երկասիրությունը, որ հայ ժողովրդի ամբողջական պատմության ստեղծման մեզ հասած առաջին փորձն էր, հետագա դարերում դարձավ դասական երկ և հայ հեղինակները համընդհանուր պատմություն գրելիս հաճախ դիմում էին նրա հաղորդումներին ու հիշատակած փաստերին։ Խորենացու գործը, ինչպես ցույց են տվել բանասիրական ուսումնասիրությունները, մեզ է հասել զգալի խմբագրումներով և փոփոխություններով, որոնք և կասկածի տակ են դրել Խորենացու V դարի հեղինակ լինելը։ Բնական է, որ զարգացած միջնադարի հայ գործիչները օգտվում էին «Պատմութիւն Հայոցց»-ի անհամեմատ ավելի անաղարտ ձեռագրերից։ Ուստի այն բոլոր տարբերությունները, որ նկատվում են Խորենացու և նրան հետևող հեղինակների երկերում հանդիպող միևնույն իրադարձությունների նկարագրություններում, մեծ կարևորություն են ներկայացնում անտիկ շրջանի և վաղ միջնադարի մի շարք իրողությունների բացահայտման և լուսաբանման համար։

Խորենացուց բերված հատվածի քննության համար մեծ կարևորություն են ներկայացնում Ասողիկի, Մովսես Կաղանկատվացու և Վարդան Արևելցու երկասիրությունները, որոնց մի զգալի մասը շարադրված է Պատմահոր «Պատմութիւն Հայոցց»-ի հիման վրա։ Այսպես, Ասողիկը, անդրադառնալով Մեծ Հայքի արևելյան կողմնակալությանը, գրել է. «Եւ արեւելեան կողմնակալս բիւրաւորս՝ զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսականն և որ ի տանէն Կադմեայ։ Եւ յարեւելեան ի հիւսիսոյ կողմանէն կարգէ կողմնակալ զԱռան առ Կուր գետով, որ հատանէ զդաշտն մեծ։ Զի ի Սիսակայ ցեղէն էր գունդն, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Հունարակերտ. և աշխարհն յանուն նահապետին նոցա անուանեցան Աղուանք. զի աղու ձայնէին գնա վասն քաղցրութեան բարուցն։ Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ՝ կարգեցաւ բիւրաւոր կողմնակալ ի վաղարշակայ։ Ի սորա ծննդոց [illegible]

ազգք Ուտէացւոց և Գարդմանացւոց և Սովդէացւոց և Գարգարացւոց»[54]։ Մեծ Հայքի արևելյան կուսակալության խնդիրը հետաքրքրել է Մովսես Կաղանկատվացուն (Մովսես Դասխուրանցուն) իր քաղաքական հարցադրումների տեսակետից, իսկ Պատմահոր նշված հաղորդումը ստացել է ներքոբերյալ տեսքը. «Ապա կարգեաց նոցա առաջնորդ և վերակացու, յորոց գլխաւոր ոմն ի Սիսական տոհմէ Յաբեթեական ծննդոցն կարգի հրամանաւ Վաղարշակայ, Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս և զլերինս Աղուանից՝ ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ։ Եւ աշխարհն յազագս քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա վասն քաղցրութեան բարուցն։ Ի սորա՝ Առանայ ծննդոց, ասեն արք անուանիք և քաջք կարգեցան կողմնակալք բիւրաւորք ի Պարթևէն Վաղարշակայ։ Եւ ի սորա զաւակէ, ասեն, սերեալ զազգս Ուտէացւոց, Գարդմանացւոց և Սաւդիացւոց և Գարգարացւոց իշխանութեանց»[55], Հիշյալ հարցին անդրադարձել է նաև Վարդան Արևելցին. «...և Աղուանիս ի քոռանցն Հայկայ զԱռան ոմն կողմնապետ արևելից հիւսիսոյ կացուցանէ, յորմէ սերեցան ազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Սոհացւոց»[56]։ Տոհմերի ցուցակում, ինչպես տեսնում ենք, բացակայում է Գարգարացվոց իշխանությունը, սակայն հեղինակի վենետիկյան հրատարակությունը և մի շարք ձեռագրեր ունեն հետևյալ պատկերը. «...ազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Գարգարացւոց և Սօդացւոց»[57],

Այն հանգամանքը, որ Վարդան Արևելցու երկում, համաձայն որոշ ձեռագրերի, Գարգարացվոց իշխանությունը բացակայում է, իսկ ըստ մյուսների՝ հայտնվում է ոչ Պատմահոր տված հերթականությամբ, ուսումնասիրողի առաջ բարձրացնում է խնդիրներ, որոնք ոչ միայն մեծ կարևորություն ունեն Մեծ Հայքի վարչական բաժանումների պատմության, այլև Աղվանից թագավորության քաղաքական պատմության ուսումնասիրության համար։

Մովսեսից առաջ Գարգարացվոց իշխանության հայտնվելը կասկածի տակ է առնում սկզբնական բնագրին նրա վերաբերելը։ Բանասիրական հրապանիկ քննությունն անգամ ցույց է տալիս, որ Վարդան Արևելցու երկը իր հիշյալ փաստի մատուցմամբ պարտական է Պատմահորը, ուստի ոչ մի հիմնավոր շարժառիթ չկար, որպեսզի Վարդան Արևելցին փոխեր նշված չորս իշխանությունների քվարկման հաջորդականությունը։ Հետևաբար, միակ տրամաբանական եզրակացությունն այն է, որ խախտումն արդյունք է ընդմիջարկման, ինչը կատարվել է բավական վաղ ժամանակներում։ Հավանաբար գրիչներից մեկը լուսանցքում նշել է, որ Պատմահոր երկի համեմատությամբ պակասում է Գարգարացվոց իշխանությունը, իսկ հաջորդ գրիչը, որն ըստ երևույթին մեծ պատրաստություն չի ունեցել, այն կամայականորեն մուծել է բնագիր։ Ելնելով այս եզրահանգումներից, կարծում ենք, որ նախապատվությունը պետք է տալ Վարդան Արևելցու երկի այն ձեռագրերին, որտեղ Գարգարացվոց իշխանությունը պարզապես բացակայում է։ Սակայն այս մոտեցումն էլ իր հերթին ծնում է նոր հարցադրում, քե ինչո՞ւ հեղինակը հարկ չի համարել հիշատակելու Գարգարացվոց իշխանությունը։ Արդյո՞ք դա պայմանավորված չի եղել մի իրողությամբ, ըստ որի վերջինս մեզ անհայտ պատճառով առանձնանում էր մնացած երեքից։ Արդյո՞ք Վարդան Արևելցին՝ իր տրամադրության տակ ունենալով Պատմա-

54 Մեծփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 34—35։

55 Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի. Երևան, 1983, I, Դ։

56 Մեծին Վարգանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական. Մոսկվա, 1861, էջ 45։

57 Հաւաքումն Պատմութեան Վարգանայ վարդապետի լուսաբանեալ. Վենետիկ, 1862, էջ 30։ Տե՛ս նաև Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռ. № 1487, 1770 և 3074։

հոր երկասիրությեան առավել անաղարտ ձեռագիր, չի հանգել այն մտքին, որ Գարգարացվոց իշխանությունը չի սերվում Առանից, չի կապվում Հայաստանի հետ, հետևաբար և հարկ չի համարել այն հիշատակելու։ Այս բոլորովին նոր հայեցակետը, որ առաջին հայացքից կարծես հիմքեր չունի, ավելի է ամրապնդվում, երբ փորձում ենք համադրել վերը տրված մեջբերումները։

Պատմահոր «Պատմութեանն» նշված հատվածի սկզբնական ընկալումն այնպիսին է, որ կարծես Ուտեացիները ցեղ են, իսկ Գարդմանացիները, Սավդեացիները և Գարգարացիները իշխանություններ, այլ խոսքով, «ազգն Ուտէացւոց» արտահայտությունը խոսում է, ի տարբերություն մյուսների, Ուտեացիների էթնիկական առանձնահատկության մասին։ Սակայն այսօրինակ տեսակետը, որ տարիներ առաջ մեզ նույնիսկ առավել քան հավանական էր թվում, հիմնաղուրկ է, որովհետև V դարում հիշատակված գործարները, որոնք, ի դեպ, բնակվում էին Կուրի ձախափնյակում և մեծորոշ Մաշտոցի շնորհիվ գիր ստացան, առավել հիմքեր ունեին այդպիսի ցեղային առանձնահատկության կրող հանդիսանալու համար, քան Ուտեացիները, սակայն Պատմահայրը նրանց ներկայացնում է «իշխանութիւնն արտահայտությամբ։ Ասողիկի՝ Պատմահոր երկի գրեթե նույնական ազատ շարադրանքը մեզ է մատուցում մի հետաքրքիր անակնկալ։ Պարզվում է, որ ոչ միայն Ուտեացիները, այլև մյուսները «ազգ»-եր (ազգք) են, իսկ «իշխանութիւն» բառը հեղինակը ընդհանրապես չի հիշում։ Այս հանգամանքը իր հաստատումն է գտնում Մովսես Կաղանկատվացու աշխատության մեջ։ Համեմատենք Պատմահոր և նրա երկերի համապատասխան հատվածները։

| Մովսես Խորենացի | Մովսես Կաղանկատվացի |
|---|---|
| «Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Սաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնն։ | «Եւ ի սորա զաւակէ, ասեն, սերեալ զազգս Ուտէացւոց, Գարդմանացւոց և Սաւդիացւոց և Գարգարացւոց իշխանութեանցն։ |

Թուրքիկ համեմատությունն անգամ ցույց է տալիս, որ Մովսես Կաղանկատվացին պարզապես արտագրել է Պատմահոր երկից՝ կան որոշ տարբերություններ։ Այսպես, Խորենացու «Ի սորա զաւակացն»-ի դիմաց Հայոց Արևելից կողմերի պատմիչն ունի «Եւ ի սորա զաւակէն» արտահայտությունը, սակայն Պատմահոր երկի S և Խ խմբի ձեռագրերը պահպանել են «Ի սորա զաւակէն» տարբերքերցումը, որը և վկայում է այն մասին, որ Կաղանկատվացին օգտվել է հիշյալ խմբի մի որևէ ձեռագրից[58]. հետևաբար, այս հատվածում տարբերություն չկա։ Հեղինակի ինքնուրույնության դրսևորումը «Եւ շաղկապն է, որը իմաստային ոչ մի նրբերանգ չի հաղորդում հիշյալ տեղեկությանը։ Հետևաբար, Խորենացու «ազազգն»-ի դիմաց «ազազդեա»-ի և «իշխանութիւնն»-ի դիմաց «իշխանութեանցն»-ի առկայությունը, ինչպես նաև «Գարդմանացւոց»-ից առաջ «Եւ շաղկապի բացակայությունը խորհելու տեղիք են տալիս, թե ամբողջապես Պատմահորը հետևող հեղինակը ինչո՞ւ է հեռանում իր աղբյուրից։ Մեր կարծիքով, որքան էլ տարօրինակ հնչի, այս տարբերությունները պատահական չեն և պայմանավորված են սկզբնաղբյուրին հարազատ մնալու միտումով, որը, սակայն, հետագայում ենթարկվել է փոփոխությունների։ Նախ և առաջ, դատելով Ասողիկի և Կաղանկատվացու տվյալներից, պետք է ենթադրել, որ Պատմահոր մոտ սկզբնապես եղել է ոչ թե «ազազգն», այլ «ազազգա», այլապես երկու հեղինակներն էլ «ազգ»-ը չէին օգտագործի հոգնակի թվով։ Կաղանկատվացու երկի «Եւ Գարգարացւոց իշխանութեանցն արտահայտության մեջ «իշխանութիւնն

58 Մովսես Խորենացի, էջ 113. «14 Sh գաւակէ [pqrs գաւակէն]»։

բառի հոգնակի թվով հոլովածևը անուղղակիորեն վկայում է այն մասին, որ բնագրում ինչ-որ բան պակասում էր։ Մեր բանասիրական պրպտումները բերել են այն համոզման, որ Խորենացու նախնական անաղարտ բնագրում եղել է մի կողմանէ Գարգարացւոց իշխանութեանն արտահայտությունը, որի ակողմանէ բառը դեռևս շատ վաղ ժամանակներում ինչ-ինչ պատճառով արտագրության ժամանակ դուրս է մնացել շարադրանքից։ Դրանից հետո որոշակիորեն քերականական տեսակետից կաղացող մի սորա զաւակէ, ասեն, սերեալ զազգս Ուտէացւոց, Գարդմանացւոց և Սաւդէացւոց ի Գարգարացւոց իշխանութեանն արտահայտությունը պետք է ենթարկվեր սրբագրման, որովհետև ստացվում էր, որ առաջին երեքը մտել են վերջինի մեջ։ Հետագա արտագրողները, որ գիտակցել են սրանց անհամարժեքությունը «Գարգարացւոց»-ից առաջ դրված մի» նախդիրը դարձրել են ևս, ու քանի որ այդ դեպքում «իշխանութեանն» բառը չէր շաղկապվում շարադրանքին, որովհետև «զազգս»-ը դրված է հոգնակի թվով, այն դարձրել են «իշխանութեանցս։ Ահա այս վիճակումն է եղել Պատմահոր երկի հիշյալ հատվածը, երբ նրանից օգտվել է Մովսես Կաղանկատվացին։ Սակայն նշված տողերում կա մի աննշանակ տարբերություն Ղ. «Գարդմանացւոց» բառից առաջ բացակայում է «և» շաղկապը։ Իհարկե, դրա բացակայությունը կարելի է բացատրել Կաղանկատվացու անփութությամբ կամ էլ արտագրողների թույլ տված սխալով, սակայն, մեր կարծիքով, այն ևս բացակայել է Պատմահոր նախասկզբնական բնագրում։ Երբ Ուտեացվոց, Գարդմանացւոց և Սուդեացվոց «ազգերը» հակադրվում էին Գարգարացվոց իշխանությանը, ապա բնական է, որ «և» շաղկապը դրվեր միայն «Գարդմանացւոց»-ի և «Սաւդէացւոց»-ի միջև, սակայն «կողմանէ» բառի կորստից հետո, երբ «ի» նախդիրը ևս «և»-ի վերածվեց, միանգամայն աններդաշնակ էր «և» շաղկապի բացակայությունը «Գարդմանացւոց»-ից առաջ, որը և պատճառ է դարձել, որ Պատմահոր երկի արտագրողներն այդտեղ մուծեն «և» շաղկապը։ Սակայն Մովսես Կաղանկատվացին օգտվել է մի այնպիսի ձեռագրից, որտեղ այդ փոփոխությունը դեռևս չէր կատարվել և այդ պատճառով էլ չի արձանագրել «և» շաղկապի գոյությունը։

Դատելով բոլոր տվյալներից, ավելի ուշ «ս»-ի և «ն»-ի շփոթի պատճառով Խորենացու մոտ «զազգս»-ը վերածվում է «զազդն»-ի, որը հիշյալ հատվածը քերականական տեսակետից դարձնում է անհարթ. «ի սորա զաւակէ, ասեն, սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Սաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութեանցս։ Արդեն այս կապակցության մեջ «զազդն»-ը փաստորեն վերաբերում էր «Ուտէացւոց»-ին, քանի որ դրված էր եզակի թվով, ուստի ստացվում էր, որ վերջին երեքը իշխանություններ են։ Սակայն այդ դեպքում էլ «իշխանութեանցս» բառը քերականորեն չէր կապակցվում մնացած շարադրանքին։ Արտագրողները նկատել են այդ իրողությունը և «իշխանութեանցս»-ը դարձրել են «իշխանութիւնսն», այն դնելով հայցական հոլովով, սակայն չեն գիտակցել, որ այդ դեպքում և՛ Գարդմանացվոցը, և՛ Սաւդեացվոցը, և՛ Գարգարացվոցը պետք է ստանային զգ նախդիր։ Որ «իշխանութիւն» բառը ենթարկվել է այսպիսի փոփոխությունների, պարզ վկայում են «իշխանութիւնքս» և «իշխանութիւն տարընթերցումները[59]։ Ավելին, «իշխանութիւն» տարընթերցումը հավաստում է, որ սկզբնապես Խորենացու երկում այդ բառը դրված է եղել եզակի թվի սեռական հոլովով, այսինքն իրոք վերաբերել է միայն Գարգարացիներին։

Ընթերցողը թերևս հարց կտա, թե ի՞նչ հիմունքով ենք մենք փորձում բնագրի մեջ մուծել «կողմանէ» բառը։ Կարծում ենք, որ դրա բանալին տալիս է Ագաթանգեղոսի երկը, որն անդրադառնալով Մեծ Հայքի բդեշխություններին, հաղորդում է. «Եւ ի գինուորական կողմանէն՝ զշրեսին գահերեցան իւրոյ տաճարին, որ բդեշխքն կոչին. զառաջին սահմանա-

59 Նույն տեղում, էջ 434. «15 և իշխանութիւնքն/Իշխանութիւնս։

կալն ի Նոր Շիրական կողմանէն, և զերկրորդ սահմանակալն յԱտրեսասանեայց կողմանէն, և զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքեաց կողմանէն...»[60], Ինչպես տեսնում ենք, զինվորական կուսակալությունները հիշվում են որ պետության կամ երկրամասի դիմաց ստեղծված լինելու սկզբունքով։ Վերջինը, որի անունը հեղինակը բաց է թողել, ակնհայտ Գուգարաց բդեշխությունն է, որը Մեծ Հայքի սահմանները պետք է պաշտպաներ Այսրկովկաս ներխուժած մասքութներից։ Հենց այս պատճառով էլ կոչվել է բդեշխն ի Մասքեաց կողմանէնն։ Ամենայն հավանականությամբ, Ուտեացվոց, Գարդմանացվոց և Սավդեացվոց իշխանությունների ստեղծումը նույնպես պատահական քաղաքականություն չէր և կապվում է Գարզարացիների Այսրկովկաս ներխուժելու և հաստատվելու հետ։ Ստեղծվելով որպես զինվորական հակակշիռ Գարդարացիների նոր ձևավորված իշխանությանը, նրանք վերը նշած սկզբունքով պետք է որ հիշվեին որպես ի կողմանէ Գարգարացւոց իշխանութեանն կուսակալություններ։ Թերևս նրանք այդպես չկոչվեին, սակայն Այսրկովկաս ներխուժած գարդարացիների ռազմական մեծ վտանգը Մեծ Հայքի քագավորության համար այնքան առաջնային էր, որ ծնել է նման մոտեցումը։

Ստրաբոնի տեղեկությունների համաձայն մ. թ. I դարի սկզբներին գարգարացիները բնակվում էին Կովկասյան լեռների հյուսիսային նախալեռներում, որոնք կոչվում էին Կերավնյան[61], Պլինիոս Ավագի վկայությամբ այդ նույն ժամանակներում Կասպից ծովի ողջ ափագիծը՝ աղվաններից հյուսիս մինչև Հյուսիսային օվկիանոսի հետ կապող նեղուցը[62] զբաղեցնում էին ուդիները (Udini)[63], իսկ սրանցից էլ վեր գտնվում էին ուտիդորսները (Udidorsi)[64]։ Վերջին ցեղանունը ուսումնասիրողները միանգամայն պատճառաբանված բաժանում են երկու բաղկացուցիչ մասի՝ «ուտի» և «տորս», ուտիդորոսների մեջ տեսնելով սարմատական տոհմերի կողմից սարմատականացած ուդիններին[65]։ Վերոհիշյալ ուդիններ, ամենայն հավանականությամբ, նույնանում են Ստրաբոնի ուտիտներ (Οὐτίτοι)[66] և Պլուտղոսի ուդեր (Οὔδαι)[67] ցեղի հետ։ Սակայն ամասեցի աշխարհագրագետն ուտիտներին հիշատակում է երկու տարբեր տարածքաշրջաններում՝ Աղվանքից ու նրա մաս կազմող Կասպքից[68] հյուսիս, որտեղ նրանք իրոք կարող են նույնանալ ուդինների հետ, և գելերի, կադուսիների (կատիշների), ամարդների ու անարիակների հարևանությամբ, մասնավորապես տմարդների ու անարյակների միջև, որոնք բնակվում էին Կասպից ծովի հարավ-արևմտյան և հարավային ափերին։ Դժբախտաբար, որոշ ուսումնասիրողներ քյուրիմացաբար, իսկ մյուսները, ընդհակառակը, գիտակցաբար և նպատակադիր փորձում են այս հարավային ուտիտներին անպայմանորեն կապել Ուտիքի և ուտեացիների հետ, որոնք գտնվում էին Մեծ Հայքում։ Ղ. Ին-

---

60 Ագաթանգեղոս, § 873։

61 Strabo, XI, 5, 1։

62 Անտիկ աշխարհի մի շարք հեղինակների մոտ այն կարծիքը կար, որ Կասպից ծովը համաշխարհային օվկիանոսի հետ կապվում է նեղուցով։

63 Plin., Nat. Hist., VI, 38.

64 Նույն տեղում, VI, 39։

65 К. В. Тревер. Очерки по истории и культуре Кавказской Албании. М.—Л., 1959, с. 174—175.

66 Strabo, XI, 7, 1, XI, 8, 8, XI, 14, 14։

67 Claudii Ptolemaei Geographia. V. 8. 13.

68 Կասպք անունով երկրամասեր ունեին և՛ Մեծ Հայքի քագավորությունը, որ այն գրավել էր մարերից, և՛ Աղվանից քագավորությունը։ Առաջինը գտնվում էր Կասպից ծովի ափին՝ Կուրից և Երասխից հարավ, իսկ երկրորդը՝ Կուրից հյուսիս՝ Կասպից ծովի մերձափնյա շրջանում։

ճիճյանը, որ չի պատկանում այսպես կոչված պատմաբանների «քննական վերլուծությանը» դպրոցին, չի էլ մտածել ուխտիներին ուտեացիների ու Մեծ Հայքի Ուտիք աշխարհի հետ նույնացնելու մասին[69], սակայն արդեն մեծավստակ Ն. Ադոնցը գտնում էր, որ Ստրաբոնի ուխտիները ազգակցական կապի մեջ են հայկական ուտեացիների հետ։ Նրա կարծիքով, ուխտիները սկզբնապես ապրել են Երասխից հարավ և այնուհետև, անշուշտ տեղափոխվելու հետևանքով, Երասխից հյուսիս, Կուրի երկայնքով, ըստ որում Օտենների և Ատրպատականի սահմանը հանդիսացել է Երասխ—Արաքս գետը։ Բնական է, որ այս մոտեցման դեպքում ուխտիները հայտարարվում են ուտեացիների նախնիներ և Մեծ Հայքի եկեսմուտ բնակիչներ[70]։ Հ. Մանանդյանը և Ս. Երեմյանը Ուտիք աշխարհի ուղղակի հիշատակություն են համարում հույն աշխարհագրագետի երկի Ուխտիա երկիրը. «Պատմում են նաև, թե էնիհանների (այնիանների) մի մասը հաստատվել է Ուխտիայում և մյուսները՝ հայերից վերև՝ Արոս և Նիբարոս լեռներից այն կողմ»[71]։ Նույն հեղինակի մեկ այլ հաղորդումից հայտնի է, որ պարրասինների արկադական ցեղի մի մասը հաստատվել էր անարիակների երկրում, որոնց Ստրաբոնի օրերում պարսիներ էին կոչում, իսկ այնիանների (էնիաններ) քեսալական ցեղը ուխտիների երկրում կառուցել էր Այնիանա (Αἰνιανα) ամրացված քաղաքը[72]։ Ա. Հակոբյանը, անդրադառնալով բերված տեղեկություններին, նշել է, որ հազիվ թե հույն գաղթականները քաղաք հիմնած լինեին Մեծ Հայքի հյուսիս-արևելյան շրջաններում, երբ Ալեքսանդր Մակեդոնացուն չէր էլ հաջողվել Հայաստանը նվաճել[73]։ Հեղինակը հիմնավոր ցույց է տալիս, որ էնիանների մասին հատվածում Ուխտիան չի կարող նույնանալ Ուտիքի հետ, քանի որ ըստ ամասեցի աշխարհագրագետի Ուխտիան և Հայաստանն այս վկայության մեջ որպես աշխարհագրական միավորներ իրար են հակադրվում, որոնցից առաջինը երկրորդի մասը չէ։ Ուխտիան ոչ այլ ինչ է, բայց եթե կասպից ծովի հարավ-արևմտյան կամ հարավային ափերին գտնվող ուխտիների երկիրը[74]։

Ք. Ալիևը, լավ հասկանալով, որ Ստրաբոնի հիշատակած ուխտիները, որոնք բնակվում էին անարիակների և ամարդների հարևանությամբ, կապ չունեն ո՛չ Մեծ Հայքի և ո՛չ էլ Աղվանքի հետ, առաջ է քաշում այն տեսակետը, որ Պլինիոս Ավագի հիշատակած Օտենան, որը, անշուշտ, Մեծ Հայքի Ուտիք աշխարհն է, բնակեցված է եղել ուխիններով, որոնց տարածման շրջանը, իբրև, ժամանակի ընթացքում կրճատվել է և ի վերջո ամփոփվել Արցախի և Կուր ու Երասխ գետերի միջև ընկած հողերում[75]։ Սակայն հեղինակը զարմանալիորեն իրեն հարց չի տալիս, թե ինչո՞ւ Աղվանքից հյուսիս հիշատակված ցեղը հիշվում է Udini, իսկ Ատրպատականին սահմանակից հայկական Ուտիքը՝ Otene գրությամբ, հանգամանք, որ չի խոսում նրանց նույնացման օգտին։ Այն, ինչ որոշ քեսականությամբ է ընդունվում

69 Ղ. Ինճիճյան. Ստորագրություն հին Հայաստանեայց, էջ 334—337։

70 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, с. 420.

71 Я. А. Манандян. О некоторых проблемах древней Армении и Закавказья. Ереван, 1944, с. 13; С. Т. Еремян. Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт,—«Вестник древней истории», 1967, № 4, с. 51—52; Strabo. XI. 14, 14:

72 Նույն տեղում, XI, 7, 1։

73 А. А. Акопян. Албания—Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 78—79. Հ. Հյուրշմանը բացառում է Ուխտիայի և Ուտիքի նույնացումը (Հին Հայոց տեղվո անունները, էջ 106—108)։

74 А. А. Акопян. Указ. соч., с. 79.

75 Кемал Алиев. Кавказская Албания (I в. до н. э—I в. н. э). Баку,1974, с. 128—130. Տե՛ս նաև К. В. Тревер. Очерки по истории и культуре Кавказской Албании, с. 45—46.

հիշյալ պատմաբանի կողմից, վերջնական ճշմարտությյան է վերածվում Ֆ. Մամեդովայի կողմից, ըստ որի Ուտի—Ուտիքում գտնվել են անտիկ Այնիանա, Հանի և Անարիակե քաղաքները, այնտեղ ապրել են ուտիներ, գարգարներ, ծավդեացիներ, որոնք իբրև քե եղել են աղվանական միության հիմնական ցեղերից, և վերջապես, արաբ պատմիչների ու աշխարհագետների տվյալներով, Ուտիի բնակիչների լեզուն IX դարում եղել է առաններենը[76]։ Հեղինակի մակերեսային քննությունը ոչ միայն այդպիսի հեռուն գնացող եզրակացություններ հիմք չի տալիս, այլև բացահայտ վկայում է փաստերր ծուռ հայելու մեջ ներկայացնելու նրա ցանկության մասին։ Կ. Տրևերը փորձել է Անարիակե քաղաքը տեսնել ուտիների երկրում և ենթադրել է, որ անարիակների ցեղային անվանումը, որ նշանակում է «ոչ իրանցիներ», հավաքական իմաստ է ունեցել, ցույց տալով ոչ իրանական լեզուներով խոսող ցեղերին։ Շարունակելով իր միտքը, նա գտնում է, որ «անարիակներրն աղվանական մի ինչ-որ ցեղի անվանման աղավաղումն է, առաջացած քերևս «առանիակներ» անունից, որն իբր աղերսվում է Առան նահապետի անվանը[77]։ Սակայն, նախ Ստրաբոնի երկից բնավ չի բխում, որ Անարիակե քաղաքը գտնվել է Ուտիայում, առավել ևս շատ զարմանալի կլիներ, որ անարիակների քաղաքը տեղադրվեր ոչ քե այդ ցեղի, այլ հարևան ուտիների երկրում։ Եվ վերջապես, Անարիակե քաղաքի և Ուտիայում Այնիանա ամրացված քաղաքի համատեղ հիշատակությունը մեզ կըրկին վերադարձնում է հուլն աշխարհագետի այն տեղեկությանը, որ ուտիները բնակվել են տմարդների ու անարիակների միջև, հետևաբար, Ուտիան հիշյալ ուտիների երկիրն է և ոչ մի առնչություն չունի հայկական Ուտիքի հետ։ Ինչպես տեսնում ենք, այն, ինչ Կ. Տրևերը մեզ մատուցում է եռաստիճան հավանականությունների ու ենթադրությունների հայեցակետից, Ֆ. Մամեդովայի քեքև գրչով վերածվել է պատմական «անառարկելի ճշմարտությյան»։

Այս առնչությամբ անհրաժեշտ է անդրադառնալ Ֆ. Անգրեասի՝ Ուտիքի և Այնիանայի մասին արտահայտած տեսակետներին։ Վերջինիս կարծիքով, Ստրաբոնի տեղեկատուները Քեսալիայի Ὀλτία երկրամասի և տեղական երկրի անունների համահնչյունությունից ելնելով, երկրորդը բխեցրել են առաջինից և դրա վրա հիմնվելով ուտիներին համարել են հուլն գաղթականներ։ Ինչ վերաբերում է այնիաններին (էնիաններին), ապա Անդրեասը գտնում է, որ այդ Փայտակարանի «Հանիե» գավառանվան փոփոխված տարբերակն է, որը, «Աշխարհացոյցի» որոշ ձեռագրերում ունի «Հանհանիե» տարբերակությամբ։ Ուստի, եզրակացնում է նա, Αἰνιάνες քեսալական ցեղային անունը կարող էր ծագել կամ հայկական «Հանհանիե»-ից, կամ էլ իրանական «Հանեհանե»-ից, իսկ Հանիի տարածքն էլ հնում հավանաբար մըտել է Ուտիա—Ուտիքի մեջ, որն ավելի ընդարձակ է եղել քան VII դարում[78]։ Դժբախտաբար, չնայած Կ. Տրևերի հիացմունքին[79], Ֆ. Անդրեասի տեսակետներն այնքան էլ անխոցելի չեն, որովհետև Ստրաբոնի երկը նման մտահանգումների համար բավարար հիմքեր չի տալիս։ Համենայն դեպս, եթե «Հանիե» կամ «Հանհանիե» անունը կապվում է այնիանների գաղթականության հետ, ապա չի արձանագրված գրավոր աղբյուրներում և դրա մասին լոկ կարելի է կռահել։

---

[76] Фарида Мамедова. Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.—VIII в. н. э.). Баку, 1986, с. 100—102.

[77] К. В. Тревер. Указ. соч., с. 143—144.

[78] F. K. Andreas, Ainiana (տե՛ս Pwk) Անդրեասի կարծիքով «Աշխարհացոյցը» VII դարի առնչագործություն է, ուստի Ուտիքի աշխարհացուցքյան սահմանները վերագրում է VII դարին։

[79] К. В. Тревер. Указ. соч., с. 143, «как это блестяще показал Андреас,...».

Ի մի բերելով վերն ասվածը, գանում ենք, որ Մտրաբոնի հիշատակած ուիտինները Աղվանքից հյուսիս կամ Կասպից ծովի հարավ-արևմտյան ու հարավային ափերին ապրող տարբեր ցեղեր են և չեն առնչվում Մեծ Հայքի Ուտիք աշխարհի հետ։ Աղվանքից հյուսիս տեղորոշվող ուիտինները նույնական են ուդիններին կամ ուդերին, որոնք դարգարացիների հետ մեկտեղ, մեծապես նեղվելով հյուսիսային Կովկաս ներխուժած ալաններից[80], ներխուժում են Ալբկովկաս և արմատապաս փոխում Աղվանքի ցեղային կազմը։ Դարգարացիները հակառակ քաղաքացիությունն ստացած տեսակետի, երբևէ չեն մտել Մտրաբոնի հիշատակած աղվանական 26 ցեղերի մեջ և ընդհակառակը, ներխուժելով և տիրելով Աղվանքի տարածքին, դարձել են տիրապետող տարր, որի համար V դարում գրեր է ստեղծում Մեսրոպ Մաշտոցը[81]։ Դարգարացիների և ուդինների մուտքը Ալբկովկաս կատարվեց մ. թ. I դարի երկրորդ կեսին, որը համապատասխանում է Մեծ Հայքում Տրդատ I-ի գահակալության շրջանին։ Հովսեպոս Փլավիոսի վկայությամբ, ալանաց ազգը ավերում է Մեդիան, որի Պակորա (Բակուր) թագավորը առանց դիմադրելու փախչում է երկրի դժվարամատույց վայրերը, իր կնոջն ու հարճերին 100 տաղանդ փրկագնով մի կերպ ազատելով ալանական գերությունից։ «Շատ հեշտությամբ և առանց մարտի կողոպուտի ենթարկեցին երկիրը մինչև Հայաստան ու վերադարձան ամեն ինչ թալանելով։ Իսկ (Հայաստանում) թագավորում էր Տիրիդատեսը, որը ռազմերթի ելնելով նրանց դեմ, ճակատամարտ տվեց, բայց քիչ էր մնացել, որ կռվի ընթացքում նրբանց ձեռքը գերի ընկներ կենդանի։ Որովհետև (ալաններից) մեկը հեռվից պարան ձգեց նրա վրա և նրան արդեն կրոներ, եթե (Տիրիդատեսին) չհաջողվեր իր սրով իսկույն կտրել պարանը և անհապաղ ճողոպրել։ Մինչդեռ ալանները այդ կռվի (ելքից) ավելի ևս ղազազած, երկիրը թալանեցին և երկու թագավորություններից էլ մարդկանց մեծ բազմություն և ուրիշ շատ ավար տանելով, նորից վերադարձան իրենց երկիրը»[82]։ Այս իրադարձությանը ծանոթ է նաև Պատմահայրը, որը, սակայն, այն վերագրում է Տրդատ III-ի ժամանակներին. «Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանեօք իջեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի. և ի խառնել երկոցունց կողմանցն՝ յերկուս ճեղք զամբոխ թշնամեացն, սակայթար շահատակելովն Ոչ կարեմ ասել զերագութիւն ձեռինն, որպէս անբաւք ի նմանէ յերկիր անկեալ թաւալգլոր խաղային, օրինակ իմն ի գեղեցիկ ցանցորդէ լի ձկամբք յերկիր թոթափեալ դանցոյն, նտյոտէին յերեսս երկրին։ Զոր տեսեալ թագաւորին Բասլաց՝ մօտ հասանէ յարքայն. և հանեալ յասպազինէն զներդեալ քեմխտապատ պարանն, և Ի որովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ՝ ճահ դիպեցուցանէ յուս ձախակողմանն և յանութ աջակողմանն. զի էր վերացուցեալ զձեռնն ածել ումեք սուսերաւ. և ինքն վառեալ վերտ պահպանակօք, ուր ոչ գծէին նետք, Ե քանզի ոչ կարաց շարժել ձեռամբ զհակայն՝ զյանջօք առ երիվարին. և ոյ այնչափ ինչ շուրթափեաց մտրակել զերիվարն, քան թէ ահեակ ձեռամբն ի ներդեալն աճապարեալ սկայի, և սաստկութեամբ ուժոյն զիւրեաւ ցանցեալ՝ ի ճահ դիպեցուցանէր զերկայրին, և ընդ մէջ կտրէր զայրն և զոյգ ընդ պարանոցին զգլուխ երիվարին։

Իսկ զօրացն ամենայնի տեսեալ զթագաւորն իւրեանց և զզօրաւորն միջակատուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ՝ ի փախուստ դառնային. զորոց զհետմտեալ Տրդատ, վարէ մինչև յաշխարհն Հոնաց։ Ե թէպէտ ոչ փոքր

---

80 История народов Северного Кавказа с древнейших времен до конца XVIII в. Отв. редактор книги академик Б. Б. Пиотровский. М., 1988, с. 85—86.

81 Մովսես Խորենացի, էջ 129. «(Մաշտոցը—Հ. Բ.) ստեղծ զնշանագիրս կոկորդախօս ազխազուր խժական խեցգեկագունին այնորիկ Գարգարացւոց լեզուինն։

82 Հովսեպոս Փլավիոս, Թարգմանություն քնագրից, առաջաբան և ծանոթություններ Ս. Մ. Կրկյաշարյանի. Օրևան, 1976, տե՛ս Հին հունական աղբյուրներ, Ա, էջ 52—53։

հարուած եհաս զօրացն իւրոց, և բազմաց անկումն մեծամեծաց, յորում մեռաւ և սպարապետն ամենայն Հայոց Արտաւազդ Մանդակունի, սակայն Տրդատ անտի ըստ հայրենի օրինին պատանդս առեալ դառնայ»[83]։

Որ այս հիշատակութիւնը նուիրական է Հովսեպոս Փլաւիոսի հաղորդմանը[84], վեր է ամեն կասկածից։ Ալաններուն ներխուժումը Այսրկովկաս կատարվել էր, ամենայն հավանականությամբ, ուրիշ ցեղերի զինակցությամբ, որի արտահայտությունն է բասիլների քագավորի հիշատակությունը Խորենացու կողմից։ Բասիլները, ինչպես ճիշտ ցույց է տվել Ք. Պատկանյանը, սարմատական ցեղ էին, որոնց Պտղոմեոսը հիշում է Βασιλικοι Σαρμαται անունով, որի հայերեն թարգմանությունն է «Թագաւորական Սարմատք»[85], իրականում այդ անունը թարգմանելու կարիք չկա, քանի որ այն պետք է հասկանալ պարզապես «Բասիլիկ Սարմատներ» կամ «Բասիլներ»[86]։ Պատմահոր մոտ ալանների անվան բացակայությունը պայմանավորված է թերևս ուշ ժամանակների ազդեցությամբ, երբ Հյուսիսային Կովկասից ամեն մի արշավանք ընկալվում էր որպես «հիւսիսականացք» հարձակում[87]։ Այս հաղորդման մեջ բասիլների արքան, անշուշտ, ալանաց թագավորը չէ, այլ ալաններին ենթակա «Թագավորական սարմատներից» արքայիկը, որը և զոհվում է ճակատամարտում։

Խորենացու հաղորդմամբ, Տրդատը, հյուսիսականներին հաղթելուց հետո, նրանցից օգնական ուժ ստանալով, արշավում է Պարսից արքա Արտաշիրի որդու՝ Շապուհ թագավորի դեմ[88], բայց սա արդեն III դարի իրողություն է, հանգամանք, որ ցույց է տալիս, թե ինչպես Պատմահոր մոտ միահյուսվել են Տրդատ I, Տրդատ II և Տրդատ III թագավորներին վերաբերող պատմական իրադարձությունները։ Սակայն սույն տեղեկության մեջ կա ուշադրության արժանի մի փաստ ևս, որ հաշվի չի առնվել ուսումնասիրողների կողմից։ Հովսեպոս Փլավիոսի տեղեկություններից պարզվում է, որ ալանները Հայաստանի խորքերը չէին մտել և ասպատակել էին մինչև Հայաստան ընկած երկրները։ Ըստ այդմ էլ, հասկանալի պատճառներով, Տրդատը ալան-հյուսիսականներին պետք է ճակատամարտ տված լիներ Մեծ Հայքի սահմաններից դուրս, Աղվանքի տարածքում։ Միանգամայն տեղին է կարծել, որ Գարգարացվոց դաշտը, որի մասին հիշում է Խորենացին, գտնվում էր Աղվանքի տարածքում։ Բնաշխարհագրական այս անվանումը կարող էր ի հայտ գալ Կուրի ձախափնյակում, գարդարացիների Աղվանքում հաստատվելուց հետո, սակայն մինչև ալանական ներխուժումը, որովհետև հայերի աչքում Կուրի ձախափնյակի ընդարձակ դաշտը արդեն ընկալվում էր որպես գարդարացիների դաշտ[89]։ Միակ հավանական եզրակացությունն այն

---

83 Մովսես Խորենացի, էջ 230—231։

84 Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի. Երևան, 1968, էջ 357—358, ծան. 152։

85 К. П. Патканов. Армянская география VII века, с. 37, прим. 134.

86 Նույն տեղում։

87 Մովսես Խորենացի, էջ 230։

88 Նույն տեղում, էջ 231։

89 Անշուշտ, կարելի է ենթադրել, որ գարդարացիների դաշտի հիշատակությունը Պատմահոր կողմից ուշ ժամանակների աշխարհագրական հասկացություններ ազդեցության արդյունք է, սակայն բասիլների միաժամանակյա արձանագրումը, մեր կարծիքով, վկայում է այդ անվան առավել հին ծագման մասին։ Թովմա Արծրունին Գարգարացվոց դաշտի մասին Պատմահոր տեղեկությունը, որոշակիացրել է, տեղագրելով այն Պարտավ քաղաքի շրջակայքում (Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 276)։ Սակայն պատմիչը Պարտավի շրջակայքը մեկ այլ կապակցությամբ կոչում է «աշխարհն Գարգարացւոց» (էջ 336)։ Պատմիչի կատարումը սխալ է, որովհետև Ուտիք Առանձնակ գավառը, որի մեջ էր Պարտավը, ոչ մի ձևով չէր կարող վերաբերել Գարգարացվոց աշխարհին։

է, որ արդեն I դարի կեսերին գարգարացիները, ուդիները և մի շարք ցեղեր ալանների ռազմական ճնշմանը տեղի տալով ուժով մտել էին Այսրկովկաս, հաստատվել ու գերիշխանություն հաստատել Աղվանքի քագավորության տարածքում։ Վերջինս ավանդույթի ուժով շարունակում էր կրել Աղվանից անունը, չնայած արդեն վերածվել էր գարգարացիների քագավորության, որի դեմ էլ Տրդատ I-ը դեռ մինչև ալանական ներխուժումը ստեղծել էր Ուտեացվոց, Գարդմանացվոց և Սավդեացվոց ռազմական կուսակալությունները։ Ուդիների Այսրկովկաս I դարում մուտք գործելու օգտին չէ Պտղոմեոսի երկում ուղերի հիշատակությունը, որով ստացվում է, որ նրբանք դեռևս II դարում գտնվում էին Աղվանքից հյուսիս ընկած շրջանում։ Սակայն Ասիական Սարմատիայի նկարագրությունը իրականում ավելի հին է, քան Պտղոմեոսի «Աշխարհագրությունը», այսինքն ուղերի հիշատակությունը չի վերաբերում II դարին, որովհետև հունա-հռոմեական աշխարհը մինչև II դարը վերջին անգամ հարուստ տեղեկություններ էր քաղել Գնեոս Պոմպեոսի արշավանքների շրջանում։ Այլ խոսքով, ուղերի մասին տեղեկությունը ժամանակագրական առումով պետք է որ համընկնի Ստրաբոնի և Պլինիոս Ավագի հիշատակություններին։

Մենք բավական հանգամանալից կանգ առանք դարգարացիների ու ուդիների կնճռոտ հարցի վրա, սակայն այն ամփոփելու համար հարկ է քննության առնել ևս երկու խնդիր. կա՞ արդյոք կապ ծավդեացիների և Պլինիոսի հիշատակած Sodi ցեղի միջև և ինչ ծագում ունի հայկական Ուտիք աշխարհի անունը։ Հարցն այն է, որ որոշ ուսումնասիրողներ հակված են կարծելու, որ Արցախի Սավդեք անունը աղերս ունի Sodi ցեղանվան հետ, որ ծավդեացիները աղվանական ցեղ են և այլն։ Ս. Երեմյանի կարծիքով ծավդեք-սոդերը բնակվել են Իորա դեսի միջին հոսանքի շրջանում[90], սակայն այն ոչնչով փաստարկված չէ, ուստի պատահական չէ, որ Կ. Տրևերը գտնում է, թե սոգերի բնակության տարածքի վերաբերյալ տեղեկություններ չկան[91]։ Մենք հակված ենք կարծելու, որ Պլինիոսի «Բնապատմության» մեջ հանդիպող Sodi անունը մեզ անաղարտ չի հասել և ամենայն հավանականությամբ, սկզբնապես եղել է Sondi, որն անմիջականորեն համընկնում է Պտղոմեոսի «Աշխարհագրության» Σοανδοι ցեղանվան հետ[92]։ Անշուշտ սրբագրելի է նաև «Խոնդախ» անունը, որտեղ հետագայում «Դ»-ն վերածվել է «Լ»-ի, այսինքն ցեղանունը սկզբնապես հնչել է Τοανδαι-ծոնդախ։ Աշխարհագրական դասավորության տեսակետից նույնպես Խոնդախ—Սոնդախն տեղադրվում է Դիգուլքի հարևանությամբ, որն իրոք իրավունք է տալիս Sodi>Sondi սրբագրումը համարել արդարացված։ Հասկանալի է, որ այս հայեցակետի առկայությամբ Սավդեքի և Sodi-ի ազգակցության հանգամանքը, որն առանց այն էլ խարսխված էր ավազի վրա, ի չիք է դառնում։ Ի հավելումն ասվածի, հարկ է նշել, որ Սավդեք անունը Արցախում հայտնվել է հարավից, ծագելով Սավդեք-Զաբդե երկրանունից։ Պատմահոր մի արժեքավոր տեղեկությամբ հայոց ավանդական Վաղարշակ քագավորը «յարևելից կողմանէ զեզերբ ճոյկական խօսիգս, կողմնակալս բիւրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսականդ և որ ի կադմեայ տանէն, զորոց զանուանան ի միում ի յառաջագունից ասացեալ ճառիցն կարգեցաք»[93]։ Ստացվում է, որ Վաղարշակ քագավորը հայոց լեզվի տարածման եզերքում՝ արևելից կողմնակալ բյուրավորներ է նշանակում Սիսակյաններին և կադմոսի տնից ինչ-որ մեկին։ Սակայն, երբ դիմում ենք հորենացու նախորդ տեղեկությանը, ապա տեսնում ենք, որ երկու հաղորդումների միջև տարբերություն կա։ Այսպես,

[90] К. В. Тревер. Указ. соч., с. 202, прим. 3.

[91] Նույն տեղում, էջ 48։

[92] Plin. Nat. Hist. VI, 10, Claudii Ptolemaei Geographia, V, 8, 13.

[93] *Մովսես Խորենացի, էջ 112—113։*

անդրադառնալով Արամի գործունեությանն արևմուտքում և Կեսարիայի գրավմանը, նա նշում է. «Եւ քանզի զարևելեանն և զհարաւային նուաճեալ, յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոցիկ, Սիսակեանցն զարևելս և որք ի Կադմեայ տանէն՝ զԱսորեստանին՝ ոչ ինչ այնուհետև կասկած շփոթից ուստեք ունէրը[94]։ Այս տեղեկությամբ Կադմյանները կողմնակալ են նշանակվում ոչ թե արևելքում, այլ հարավում, ուստի նշված հակասությունը վերացնելու համար Խորենացին նախորդ հիշատակություններից հետո, մասնավորեցնելով Սիսակյանների կուսակալության հաստատման խնդիրը, գրում է. «Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարևելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայն անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաչին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուրը[95]։ Պատկերը միանգամայն այլ է։ Առանը ոչ թե արևելքի, այլ հյուսիս-արևելքի կողմնակալ է նշանակվում, որով կարծես թե պատմիչը փորձում է տեղ թողնել Կադմյան տոհմի ներկայացուցչի համար։ Հասկանալի է, որ եթե Առանը հյուսիս-արևելքի կողմնակալն է, ապա Կադմյան տոհմի ներկայացուցիչը կարող է դիտվել հարավ-արևելքի կողմնակալ։ Սակայն, մեր կարծիքով, Խորենացու նշված տեղեկությունները կարող են այլ լուսաբանություն ստանալ։

Պարզելով, որ հայկական Տավդեքը չի աղերսվում Պինիոսի Sodi–Sondi-ին, հարց է ծագում, թե այնուամենայնիվ ինչո՞ւ Արցախ երկրամասի կողմնակալությունը փոխանակ Արցախացիքի կոչվում է Տավդեացիք։ Անունս, որքան էլ որ Պատմահայրը Տավդեքի իշխանական տոհմը Առանի սերունդ համարի, կարծես թե ենսամուտ է և ոչ տեղական, որը ստիպում է վերհիշել Խորենացու տեղեկությունն այն մասին, թե արևելքից կողմնակալ բյուրավոր են նշանաբվել ոչ միայն Սիսակյանները, այլև ինչ-որ մեկը Կադմյան տոհմից։ Հայտնի է, որ Կադմյան տոհմ ասելով հայկական աղբյուրներր հասկանում են Կորդուքը հարևան Տավդեքի հետ միասին, ուստի կարելի և շատ հավանական է ենթադրել, որ Արցախի Տավդեք անունը սերում է Կադմյան Տավդեքից, որի իշխողների ներկայացուցիչներից մեկը Տրդատ I-ին ինչ-ինչ ծառայություններ մատուցելու համար ստացել է Արցախի կուսակալությունը։ Այլ խոսքով, եթե Սյունիները, Գարդմանացիները և Ուտեացիները կարող են համարվել Սիսակյաններ, ապա Տավդեացիների ազգը սերում է Կադմյան Տավդեքից։ Որը հետագայում հայող արքունիքը վերացրեց Տավդեացիների կուսակալությունը և Արցախը որպես վարչական անուն կրկին մտավ իր իրավունքի մեջ, աստիճանաբար ծավդեացիների ծագումը մոռացության տրվեց, որոնք ևս վերագրվեցին Առանի սերնդին։ Ագաթանգեղոսի հաղորդմամբ, ծավդեացիների իշխանությունը գոյություն ուներ դեռևս Գրիգոր Լուսավորչի քահանայապետ օծվելու ժամանակներում[96]։ Սյունյաց և Ուտեացվոց իշխանների միշև հիշատակված Տավդեից աշխարհի իշխանը կարող է նույնանալ միայն ու միայն Արցախի հետ[97], Արշակ II թագավորի դեմ ապստամբած երկրների մեջ, համաձայն Փավստոս Բուզանդի, Տավդեքն այլևս չի հիշատակվում։ Կրկին պատմական ասպարեզ է գալիս Արցախը[98], ինչը վկայում է Տավդեից իշ-

94 Նույն տեղում, էջ 46։

95 Նույն տեղում, էջ 113։

96 Ագաթանգեղոս, § 795. «Մեհեսասաններորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին, երկոտասաներորդ՝ իշխանն Տաւղէից աշխարհին, երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին»։

97 Н. Адонц. Указ. соч., с. 294. «Цоден или Завден=Арцаха».

98 Փավստոս Բուզանդ, էջ 159. «Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ...», էջ 210. «(Մուշեղ Մամիկոնյան սպարապետը—Հ. Բ.) Հարկանէր զերկիրն Արձախայ մեծաւ պատերազմաւ, գերեր զբազումս ի նոցանէն, և զմնացորդն առնոյր պանդանդս, և զմնացեալսն ի հարկի կացուցանէր»։

խանության ոչնչացման մասին։ Արցախը, որտեղ ծավդեացիների տոհմի իշխանությունը մարել էր, ամենայն հավանականությամբ, Խոսրով Կոտակ եամ Տիրան թագավորների իշխանության տարիներին, երբ հայոց արքունիքը քաոսավորական իշխանությունը ամրապնդելու համար բազմաթիվ իշխանական ընտանիքներ բնաջնջեց, աննկատ վեր է ածվում արքունի տերության, որ կառավարվում էր արքունի գործակալի կամ վերակացուի կողմից։ Այդ մասին է վկայում այն իրողությունը, որ ի տարբերություն բաոսավորների այլ դեպքերի, երբ ապստամբներ են հոչակվում այս եամ այն աշխարհի կամ գավառի իշխողները, Փավստոս Բուզանդը հայտնում է ամուր գաւառն Արձախայ-ի ապստամբության և զբերկիրն Արձախայ-ի հնազանդեցման մասին[99]։ Ամենայն հավանականությամբ, «Արձախի» ապստամբությունը պայմանավորված էր երևոսմասի վերանացուի ժառանգաւոր իշխան դառնալու ջանկությամբ, որը հաշողությամբ օգտագործվում էր պարսից դիվանագիտության կողմից։

Ծավդեք անվան Սոդունեննե հունական տառադարձումը ցույց է տալիս, որ գաւ- եոկհնչյունը արդեն ձօ- էր արտասանվում, որը և արտացոլվել է Պտղոմեոսի երկում։ Լեզվական այդ դործընթացի վկայությունն է նաև Սոթք կամ Սոդք գավառանունը, որն անշուշտ սերտ աղերս ունի Ծավդեքի հետ։

Ծավդեք անունով երկիր է հիշում նաև Անդրադառնալով պարսից Հազկերտ II թագավորի հավատափոխության հրովարտակին, նա գրում է, որ ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի վրաց և յԱղուանից և ի լինաց, ի Ծաւդէից և ի Կորդուաց, յԱղձնեաց և բազում այլ տեղեաց հեռաւորաց, որոց ոչ էին օրէնք երթալ զայն ճանապարհ յառաջ ժամանակաւ[100]։ Մեկ այլ կապակցությամբ պատմիչը նշում է, որ «Զի առհասարակ հրաման ետեալ էր յառջունուստ. որպէս Հայոց աշխարհին, նոյնպէս և Վրաց և Աղուանից և լինաց, Աղձնեաց և Կորդուաց և Ծաւդից և դասն և որ այլ ևս ունէք ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունէին զօրիստոնէութիւնն[101]։ Ջննությունը ցույց է տալիս, որ Տոհմի Ծավոեքը Մեծ Հայքի հարավային երևոսմաս Ծավդեքն է կամ Ջաբդիկնեննն, ուստի ոևէ ձևով այն Աոցախ—Ծավոեքին[102] առնչել չի կարելի։ Առավել ևս, որ Արցախը պատմիչին հայտնի է որպես ամրակուռ աշխարհ[103], անառառապատ երկիր[104]։

Այժմ մեզ մնաո բացատրելու Ուտիք անվանումը։ Մենք անդրադարձանք Ուտիի և Ուդին ցեղանուններին հետ կապելու փորձերին և ցույց տվեոենք, որ այդ նույնացումը հնարավոր չէ։ Ուսումնասիրողների փոոձել են Ուտեք անունը բխեցնել բևեռագիր արձանագրություններում «Էքեունեի» կամ «Էքեունեե» երկրից[105], որը, սակայն, նույնպես անընդունելի է, քանի որ «Էքեունեի» «Ք»-ն չէր կարող «Ուտիք»-ի մեջ վերածվել «տ»-ի։ Նույն չա-

99 Նույն տեղում, էջ 159, 210։

100 Ղազէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 10։

101 Նույն տեղում, էջ 51։

102 Կ. Տրևերը, չնայած որոշակի չի գրում, Ղազէնի այս հաղորդումը մեչրերելով պահում է միայն Ծավդեքի անունը, թերևս կապելով Արցախի հետ։ Նշվ. աշխ., էջ 202։

103 Ղ ա զ է ն, էջ 94. «Ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ...»։

104 Նույն տեղում, էջ 125. «ի քանձրախիտ մայրիսն Արձախոյ», էջ 127. «նա և որ յԱրձախոյ մայրիսն անկեալքն էին փախստականքն»։

105 М. В. Никольский. Клинообразные надписи Закавказья (МАК. V. с. 92); Н. Я. Марр. Термин «Скиф»—Избранные работы. т. V. М.—Л., 1935. с. 15—18; М. А. Катвалян. Процесс образования первого единого государства на Армянском нагорье и слияния аборигенных племен в IX—VI вв. до н. э. (Автореферат диссертации). Ереван, 1980. с. 10.

փով անհասկանալի է, թե ինչպես է «էջ»-ն դարձել «ուս»։ Մեր հետազոտությունները մեզ բերել են այն եզրակացության, որ Ուտիք անվանումը զուտ հայկական է և ոչ մի առնչություն չունի ո՛չ «Ութիփիդ», ո՛չ «ուդինի» և ո՛չ էլ որևէ այլ կովկասյան կամ աղվանական ցեղի հետ։ Սկզբնապես Ուտիքը, ամենայն հավանականությամբ, կոչվել է «Ութիք» և այդ իմաստով Ստրաբոնի Ἀρτσηνών κώμην-ը, որի միջով Երասխը հոսում էր մինչև Աղվանքի սահմանը, բովանդակությամբ համապատասխանում է նրան։ Մեր կարծիքով, κώμη-ը սոսկ «Ութիք» բառի թարգմանությունն է, որը որոշակիացնելու նպատակով, քանի որ վերջինս ընդհանրական բնույթ ունի, հույն աշխարհագրագիտը օգտագործում է Արաքս անունը։ Արցախի բարբառում «ուդ»-ը ժամանակի ընթացքում դարձել է «ուս», որը հատուկ է Հայաստանի հյուսիս-արևելյան խոսվածքների համար։ Դրա հետևանքով «Ութիք»-ը վերածվել է «Ութիք»-ի։ Սակայն վերջինիս արտասանական դժվարության հետևանքով կատարվել է «թ» և «ս» հնչյունների փոխատեղություն[106] և աշխարհագրական անվանումը վերածվել է Ուտիքի։ Մեր եզրակացության օգտին է վկայում Պտղոմեոսի երկում պահպանված Ἀτύηνη անունը, որը, ինչպես արդեն ասվել է, նույնական է Ուտիքին։ Հունարեն «Ω»-ն կարող էր օգտագործվել, եթե հայերենում դրան համապատասխանում էր «ուդ»-ը, հետևաբար Ἀτύηνη-ն Ութիքի հունական տառադարձումն էր։

Մենք երկար և հանգամանալից քննության առանք գարդարացիների առեղծվածի և Արցախ—Ծավդեքի ու Ուտիքի հետ կապված մի շարք հարցեր, որի հետևանքով կարծես թե ուշադրությունից դուրս թողեցինք Արցախն արևմուտքից և հյուսիսից եզերող վարչական միավորների պտղոմեոսյան նկարագրությունը։

Հույն աշխարհագրագետի նկարագրությամբ Պարյուադրես լեռան մոտ գտնվել են Սիրակեննեն և Սակասենե[107], թե՛ առաջին և թե՛ երկրորդ անվանումները սրբագրություններ են, քանի որ ձեռագրերում իրականում հանդիպում են Σιβακηνή և Σακαπηνή ընթերցումները[108]։ Անկասկած, շատ գայթակղիչ է Սիրակենեի մեջ Սիրակենե տեսնելը և այն «Սիրակներ» ցեղի և Շիրակ գավառի անվան հետ կապելը, սակայն ուսումնասիրողներն իրենց հարց չեն տվել, թե ինչպես են Շիրակն ու Սակասենե—Շակաշենը հայտնվել հարևանության մեջ, երբ աշխարհագրական տեսակետից տասնյակ կիլոմետրեր են նրանց միմյանցից բաժանում։ Կամ ինչպես է, որ աշխարհագրական հերթականությունը, որ խստորեն պահպանվում էր նկարագրության նախորդ մասում, էապես խախտվում է Սիրակենեի դեպքում։

Պտղոմեոսյան նկարագրության տրամաբանությունից բխում է, որ Σιβακηνή աշխարհը պետք է գտնվեր Σοδουκηνή-ի հարևանությամբ, հետևվարար, այն պետք է սրբագրել ոչ թե Σιρακηνή, այլ Σισακηνή ու նույնացնել Մեծ Հայքի Սյունիք աշխարհին, որի երկրորդ անվանումն էր Սիսական։ Այս սրբագրությունը, որի հավանականությունը վեր է ամեն կասկածից, անուղղակիորեն վկայում է Մեծ Հայքում հաստատված պարբև Արշակունիների վարչական գործունեության մասին, քանի որ Պատմահոր հաղորդմամբ «Սիսակ՝ լնու շինութեամբ զահմանս բնակութեան իւրոյ և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք. այլ Պարսք յըստակագոյնս ևս Սիսական կոչեն»[109]։ Հասկանալի է, որ աշխարհը Սիսական էին կոչել իրանախոս Ար-

---

106 Ձի բացառվում, որ սկզբում կատարվել էր «թ» և «ս» հնչյունների փոխատեղությունը և նոր ապա «ուդ»-ի վերածումը «ութ»-ի։

107 Claudii Ptolmaei Geographia, V, 12, 4.

108 Նույն տեղում, էջ 938, ծան. 4։

109 Մովսես Խորենացի, էջ 41։

շակունիները, որն ավելի ուշ Խորենացու ժամանակներում օգտագործում էին նաև պարսիկները։

Σιβακηνή-ի Σιτακηνή սրբագրությունը հասկանալի է դարձնում ուսումնասիրողների Σακασηνή-ի Σακασηνή ընթերցելը, որովհետև Սիսական—Սյունիքը հյուսիսում Սևանա լեռնաշղթայով, որը Պտղոմեոսը կոչում է Պարյուադրես, իրոք սահմանակցում էր Սակասենե—Շակաշենին, Պտղոմեոսյան Մեծ Հայքի նկարագրության մեջ այն բացը, որ նկատվում էր Գուգարքի և Ուտիքի միջև ընկած շրջանում, լրացվում է և պարզ է դառնում, որ աշխարհագրական ներդաշնակ և հաջորդական նկարագրության դեպքում Գուգարքից հետո պետք է հիշատակված լիներ Սակասենե—Շակաշենը։

Հետադարձ հայացք նետելով կատարված քննության արդյունքներին, մենք տեսնում ենք, որ Մեծ Հայքի հյուսիս—արևելյան տարածքաշրջանում, չնայած պետության ըստ աշխարհների վարչական բաժանման ձևավորմանը, վարչաքաղաքական փոփոխություններ ըստ էության չեն կատարվել։ Ինչպես Ստրաբոնի ժամանակներում, այնպես էլ Պտղոմեոսի օրոք Արցախը հյուսիսում սահմանակցում էր Սակասենե—Շակաշենին, արևելքում՝ Արաքսենեի դաշտ—Ուտիքին, հարավում՝ Կասպիանե—Կասպքին, որը II գրում հայտնի է Կոլբենե աղավաղված գրությամբ, և արևմուտքում՝ Կոմիսենե—Սիսական—Սյունիքին։ Հիշյալ աշխարհներից Սակասենեն, ինչպես տեսանք, Տրդատ I-ի վարչական վերակառուցումների ժամանակ ստանում է Գարդմանացիք անունը, սակայն Պտղոմեոսը ավանդույթի ուժով օգտագործում է առավել հին Շակաշեն կամ Սակասենե անունը։ Նույն ձևով անվանափոխվում է նաև Արցախը, որն ստանում է իշխող ընտանիքից Սավդեք անունը։

Արցախ—Սավդեք աշխարհի և նրան եզերող վարչական միավորների սահմանագիծը, չհաշված որոշ բացառությունները, անցել է նույն գծով, ինչ հավաստում է «Աշխարհացույցը»։ Համենայնդեպս, մենք բոլոր հիմքերն ունենք հայտարարելու, որ հյուսիսում Սավդեք—Արցախի սահմանը չի համընկել աշխարհացույցյան Արցախ աշխարհի սահմանագծին։ IV դարում, երբ Արշակ II թագավորի դեմ ապստամբեցին մի շարք նախարարություններ և երկրամասեր, Փավստոս Բուզանդի վկայությամբ կողք գավառը, որն ըստ «Աշխարհացույցի» Արցախ աշխարհի գավառներից էր, չի մտել Սավդեք—Արցախի մեջ։ Պատմիչը իրարից հստակ առանձնացնում է Արցախի հպատակեցումը և Աղվանից թագավորների կողմից ռազմակալված Ուտի, Շակաշեն, Գարդմանաձոր, Կողբ և շրջակա գավառների ազատագրումը[110]։ Ամենայն հավանականությամբ, Արցախի Մյուս Հաբանդ գավառը նույնպես չի մտել Սավդեք—Արցախի մեջ և վերաբերել է Սյունիք կամ Սիսական աշխարհին։ Հետագա վարչական փոփոխությունների արդյունք պիտի համարել Մյուս Հաբանդ գավառի հանդես գալը, որը պիտի ծնունդ առներ միասնական Հարանդ գավառի տրոհման հետևանքով։ Սակայն այս հարցերը արդեն առնչվում են աշխարհացույցյան Արցախ աշխարհի ձևավորման խնդիրներին, որոնք քննության կառնենք հոդվածի երկրորդ մասում։

---

110 Փավստոս Բուզանդ, էջ 210. «Հարկանէր զերկիրն Արձախայ մեծաւ պատերազմաւ։ Նոյն էջում. «Առնէր (Մուշեղ Մամիկոնյան սպարապետը—Հ. Ք.) պատերազմ ընդ երկիրն Աղուանից. հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս։ Եւ քաշէր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողբ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառաց։ Եւ զկուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն Իբերանց սահման արարեալ կացուցանէին...»։

## К ВОПРОСУ О ТЕРРИТОРИИ АРЦАХА, ВОСТОЧНЫХ КРАЕВ АРМЕНИИ И КАРАБАХА

*Доктор ист. наук Б. А. АРУТЮНЯН*

### Резюме

Арцах и Утик, которые в истории Армении часто выступают под общим наименованием Восточные Края Армении, а в последние века — под названием Карабах, сыграли важную роль в истории армянского народа. В статье рассматривается территориальное содержание вышеупомянутых административно-географических наименований с древнейших времен до середины III века н. э., и в связи с этим—многие историко-географические вопросы восточных и северо-восточных провинций Царства Великой Армении. На богатой источниковой основе доказывается, что армянские племена населяли названные области или ашхары еще до возникновения Ванского (Урарту) царства. В I в. армянский царь Тиридат I на территории Восточных Краев создал три ашхара: Гардманацик (=Гардман) или Сакасене (=Шакашен), Цавдеацик (=Цавдек) или Арцах и Утеацик (=Отене) или Утик, нашедших отражение в «Географии» Клавдия Птолемея и «Истории Армении» Мовсеса Хоренаци. В итоге сопоставительного анализа обосновывается, что в первоначальном тексте Мовсеса Хоренаци говорилось о трех стратегиях или ашхарах (Гардманацик, Цавдеацик и Утеацик), которые были учреждены против гаргарейцев, вторгшихся в Закавказье и утвердившихся в Кавказской Албании под натиском аланских племен. Аргументированно показывается, что наименование области Утик происходит от армянского слова «овит» (=долина, поле), и ничего общего не имеет ни с удинами, и ни с уннями. Доказывается, что Фасинтида «Географии» Страбона есть Мардпетакан или Бакеан (=Бахосеан), Комисене (=Ковнисене) или Совнисене (=Сюник), Сибакене «География» Птолемея—Сисакан (=Сюник) и т. д. Изучение проблемы доводится до середины III в., отраженного в «Ашхарацуйце» («Армянской географии»), данные которого рассматриваются во второй части работы.

## ON THE QUESTION OF THE TERRITORY OF ARTSAKH, EASTERN REGIONS OF ARMENIA AND KARABAGH

*Dr. B. H. HAROUTUNIAN*

### Summary

Artsakh and Utik, historical provinces of Great Armenia generally known in history as the Eastern Regions of Armenia, and as Karabagh in the last centuries, have played an important role in the history of the Armenian people. The territorial contents of the above mentioned administrative-geographical denominations in the Eastern regions of Armenia have been discussed in the article from the ancient times till the middle of the III century A. D. In connection with territorial problems, many historic-geographical questions of the Eastern and North-Eastern provinces of the Kingdom of Great Armenia are treated by the author. Based on the rich historical materials, it is proved that dominion tribes long before the existence of the Kingdom of Van (Urartu) have inhabited these provinces or ashkars. In the I century A. D. the Armenian king Tiridates I established three provinces: Gardmanatsik (Gardman) or Sacasena (Shakashen), Tsardeatsik (Tsardek) or Artsakh and Uteatsik (Otena) or Utik in the Eastern regions of Armenia. These provinces are reflected in the „Geography" by Claudius Ptolemy and in the „History of Armenia" by Movses Khorenatsi. Comparative analyses proved that in the original text of Movses Khorenatsi are mentioned

the three provinces or ashkhars (Gardmanatsik, Tsavdra sik and Uteatsik). These provinces were formed to protect the country from the invasion of the tribes of Gargars which had penetrated into Transcaucasia under the pressure of the Alan tribes. It is argued that the name „Utik" originates from the Armenian word „հովիտ—hovit" or „ովիտ—ovit (=valley, field), and this name has nothing in common with the names of the tribes of („Udins" or „Ouitis"). It is proved that the strategy of Phaunitida in the „Geography" by Strabo is the region of Mardpetakan (=Eastern Vaspurakan) or Bakean (=Bakosean), and the strategy of Komisena (=Kovmisena or Sovnisena) is the province of Siounik, the strategy Sibacena in the „Geography" by Ptolemy is the province of Sisakan (Siounik), etc. The investigation of the problem is carried out till the middle of the III century, reflected in „Ashkharhatsouits" (Armenian Geography). The data of this work are studied in the second part of the present article.

ԹԱՔԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ և ԵՊՀ

## ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՑՑ»-Ի

Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումը, որ ուսումնասիրության է ենթարկվել մի շարք ուսումնասիրողների կողմից[1], ցայսօր պատկանում է Հայաստանի պատմական աշխարհագրության վիճելի խնդիրների շարքին: Եվ եթե հաշվի առնենք, թե ադրբեջանական պատմագրությունն ինչպիսի ջանքեր է գործադրում Հայոց Արևելից կողմերի պատմության նենգափոխման և Արցախն ու Ուտիքն ադրբեջանական հռչակելու ուղղությամբ, ապա այս վիճահարույց խնդիրը ոչ միայն զուտ գիտական, այլև կարևոր արդիական նշանակություն է ձեռք բերում: Սույն հոդվածում մենք մեր առջև խնդիր ենք դրել ի մի բերել մեր հիմնական արդյունքները Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանման վերաբերյալ:

Ի տարբերություն Հայաստանի շատ երկրամասերի՝ մեր տեղեկությունները Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանման վերաբերյալ գործնականում սահմանափակվում են Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ի և Մովսես Կաղանկատվացու երկի հաղորդումներով: Անտարակույս, առավել ամբողջական են Պատմահոր «Աշխարհացոյց»-ի տվյալները: «Աշխարհացոյց»-ը մեզ է հասել ընդարձակ և համառոտ խմբագրություններով: Հայոց Արևելից կողմերը, որ ներառում են Մեծ Հայքի Արցախ ու Ուտիք երկրամասերը, արտացոլված են համառոտ խմբագրության մեջ ամբողջությամբ, սակայն ընդարձակ խմբագրությունը պահպանել է միայն Արցախի

[1] Չխորանալով մանրամասների մեջ՝ լոկ նշենք, որ այս խնդրին անդրադարձել են Ղ. Ինճիճյանը, Ղ. Ալիշանը, Ք. Պատկանյանը, Ն. Ադոնցը, Ս. Երեմյանը, Բ. Ուլուբաբյանը և շատ ուրիշներ:

վարչական նկարագրությունը: Ելնելով հարցի շահեկանությունից, մեջբերենք երկու խմբագրությունների տեղեկությունները: Այսպես, ընդարձակ խմբագրության մեջ Արցախի մասին ասված է. «Ժ. Արցախ յերի կալավ Սիւնեաց. ունի գաւառս երկոտասան. զՄիւսն Հաբանդ, զՎակունիս, զԲերձոր, զՄեծիրանս, զՄեծ Կուանս, զՀարճղաւնս, զՄուխանս, զՊիանս, զՊածկանս, զՍիսականիս, զԿոտակ, զՔուստիփառէնս, զԿողթ, յորում լինի քարախունկ. զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց»[2]:

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ Ուտիքի և Արցախի վարչական նկարագրության մասին ասված է հետևյալը. «Ուտի է մտից կայ Երասխայ ի մէջ Արցախայ եւ Կուր գետոյ: Եւ ունի գաւառս, զոր Աղուանք ունին, եւթն. Արանռովտ, Տռի, Ռոտպտակ, Աղուէ, Տուչկատակ, Գարդման, Շակաշէն, Ուտի Առանձնակ, յորում Պարտաւ քաղաք: Եւ լինի ի նմա ձիթենի, Վարանգենի եւ յասմիկ եւ (ի) հաւոց կատակ»[3]:

«Արցախ յերից կայ Սիւնեաց. գաւառք են ի նմա երկոտասան, զորս Աղուանք ունին. Միւս Հաբանդ, Վակունիք, Բերդաձոր (իմա՝ Բերձոր - Հ. Բ.), Մեծկուանք, Մեծիրանք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պանծկանք, Սիսական Ոստանն, Քուստիփառնէս, Կողթ՝ յորում լինի քարախունկ»[4]:

Օգտագործելով Երևանի Մատենադարանի թիվ 582, 696, 1267, 1459, 1482, 1486, 1717, 1770, 1864, 1883, 1898, 2019, 2191, 2291, 2370, 2748, 3160, 3502, 3941, 3391, 4284, 5120, 5613, 7993 և 9702 ձեռագրերում պահպանված «Աշխարհացոյց»-ի տեքստերը, ինչպես նաև Ղ. Ինճիճյանի «Ստո-

---

[2] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 33:

[3] *Ա. Աբրահամյան*, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ե., 1944, էջ 350:

[4] *К. Патканов*. Армянская география VII века по р. Х. СПб., 1877, էջ. 19. «Աշխարհացոյց»-ում Աղվանից կոչված մարզպանության նկարագրության մեջ տրված Արցախի և Ուտիքի գավառանունների տարընթերցումները տրված են ընդգծված.

րագրութիւն հին Հայաստանեայց» երկի տվյալները, մենք ստանում ենք տարընթերցումների հետևյալ պատկերը, որից ընտրել ենք հավանական ճիշտ ձևերը:

| Տարընթերցումներ | Ճիշտ ձևը |
|---|---|
| 1. Միւս Հաբանդ, Խաբանդ, Հաբանք, Համբանդ, Հաբանքդ, Հիւբանդ, Մուս Հաբանդ, Հաբանց, Հիւբանտ, Հիւբանդն, Համանդ, Խաբանդն, Հաբանդք, Փոքը Հաբանդ, Համբաք, Համանդ, Հաբունքդ, Հաբանք[5] | Միւս Հաբանդ (Համբանդ) Փոքր Հաբանդ (Համբանդ) |
| 2. Վակունիք, Վայկունիք, Վակունակ, Վկունիք, Վակունիք, Վայկունիք | Վակունիք (Վայկունիք) |
| 3. Բերծոր, Բերդածոր, Բերդծորք, Բերդծոր, Բերթածոր, Բերդարծոր, Բերծորը, Բերծորս | Բերծոր (Բերդածոր ?) |
| 4. Մեծ Կուանք, Մեծ Ռունք, Մեծ Կուան, Մեծ Կուանքն, Մեծ Կուենք, Մեծկուվանք, Մեծ Կուանք, Մեծ Կապանք, Մեծ Կանք | Մեծ Կուանք (Մեծ Կուենք) |
| 5. Մեծ Իրանք, Մեծիրան, Մեծիրանքն, Մեծ Իրանք | Մեծ Իրանք |
| 6. Հարճլանք, Հարջլանք, Հառջլանք, Հարջըլանքն, Հարճլեանք, Հարջլանքն, Հարճղաւնս, Հաճլանք, Հարջլանք, Հաջլեանք | Հարճլանք (Հարջլանք) |
| 7. Մուխանք, Մոխանք, Սոխանք, Ոսխանք, Մուխանք, Մոխաք, Մախանք | Մուխանք (Մոխանք) |

[5] Հաջորդ տարընթերցումներում «Միւս»-ը , որ տարընթերցումներ չունի, բաց ենք թողնում: Ընդգծվում են Աղվանից մարզի նկարագրության մեջ տրված Արցախի և ուտիքի գավառների անունները:

| | |
|---|---|
| 8. Պիանք, Ոպիանք, Ապիանք, Պիտանք, Պիանք | Պիանք |
| 9. Պանձկանք, Պածկանք, Պայծկանք, Գայծկանք, Պանծկանք, Պաձանք, Պանծկանկը, Պարծկանք, Պածկանք, Պարծանք | Պածկանք, (Պանծկանք, Պարծկանք) |
| 10. Սիսական(ք) Ոստանն, Սիսական(ք) Քուստակ, Սիսականք Քուստակ, Սիսականք Քստակ, Սիսական Կուտայք, Սիսայկանք Քուակք, Սիսականք Կոտայք, Սիսական Քռտակ Սիսականս Տանն, Սիսական Քուակք, Սիրականք Ոստանն, Սիսական Ռոտաստակ, Սիսական Ռստաստակ, Ըստիսականն Ռաո տաս տա, (Ռոտստակ Ռոյտաստակ, Ռայոտաստպ, Ռատաստակ) | Սիսական Ոստանն, Սիսական (ի) Կոտակ Սիսական Ռոտաստակ |
| 11. Քուստի Փառնէս(ն), Քվետի Փառնէս, Քաստիմ Փառնէս, Քառ Փառնէս, Քուտի Փառնեայ, Քուստի Փառնէս, Քուստի Փառանէս, Քոսարի Փառնէզ, Քուստիսի Առնայ, Քուտի Փառնենսն, Քուստի Փառենս | Քուստի Փառէնք (Քուստի Փառնէս) |
| 12. Կողք, Կողդ, Կոխք, Կոխդ, Կոխք, Կոխդն, Կողք, Կախք, Կողք, Կողխքէ, Կոխք,Կալք | Կողք |
| 1. Արան-ռոտ, Առան-ռովտ, Երանոսդ, Տանըռոտ, Առաստոդ, Աքան-ռոտ, Առաստդոտ, Ստաս-ռոտ, Ստաստռուս, Արաս-ռոտ, Ոտաստ-ռոտ, Ստաստ-ռոտ, Ստաստասա, Աստ-ռոտ | Առան-ռոտ (Արան-ռոդ) |
| 2. Տռի, Տրի, Սռի, Տոռի, Առի, Առի Ուի, Ռոի, | Տոի (Տոռի, |

| Տրի | Տրի) |
|---|---|
| 3. Ռոտպացեան, Ռոտպայեակ, Ռոտպտակ, Տոպացեան, Ռովտապայեակ, Ռստպակ, Ռոտպատեան, Ռոտպայեակ, Ռաստփա-յեկ, Աւտպայեակ, Իոտ պաի, Ռոտ պայէակ, Ի ոտ պաի, Հոտպակ, Ռոտպայիակ, Ռօտպայիակ, Ռաստփաեկ | Ռոտ-Պացեան (Ռոտ-Պատեան, Ռոտ-Պայեակ) |
| 4. Աղուէ, Աղաւէ, Աաէ, Աղաէս, Աղասէր, Ազուէ, Ազւոէ, Զաւէ, Արզուէ, Աղուոէ | Աղուէ |
| 5. Տուչքատակ, Տուչկատակ, Տուչկտակ, Տոկատակ, Աղանատակ, Տոչքատակ, Տուչ Կադ~կ, Թուչքատակ, Թուճքատակ, Թուկկատակ, Թուչքատակն, Քուկքատակ | Տուչքատակ (Տուչկատակ, Թուճքատակ, Թուջկատակ) |
| 6. Գարդման, Գարդմանք, Գարդաման, Գարթման, Գարտման, Գպրտամպն, Գարդմանք, Գարգամման, Գորթման | Գարդման |
| 7. Շիկաշէն, Շակայշէն, Շակաշէն, Շագաշէն, Զակաշէն, Զագաշէն, Շակաշէն, Շիկաշէն, Շէկաշէն, Շակայշէնն | Շակաշէն (Շիկաշէն) |
| 8. Ուտի Առանձնակ, Ուսի Առանձնակ, Ուստ Առանձնակ, Ուստի Առանձնակ, Ուտի Առանձնական, Ուստի Առանձնական, Ուտ-ռոստակ, Ստատստապսակ, Ուդ-ուստակ, ուտ-ոտուտապսակ, ոտ-ո-ոսստակ, ոտ-ոպստակ, ուտ-ո-ոստակ, ոտոտուտապակ | Ուտի Առանձնակ, Ուտի-Ռոստակ, Ուտի-Ռոտատակ |

Արցախ և Ուտիք աշխարհներին անդրադարձել է Մխիթարյան միաբան Ղուկաս Ինճիճյանն իր մեծարժեք «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատության մեջ: Նա միանգամայն իրավացիորեն ցույց է տալիս, որ ճիշտ է Արցախի երրորդ գավառի Բերձոր գրությունը, իսկ Բերդաձորն ընդա-

մենը վրիպակ է[6]: Հեղինակի կարծիքով Թովմա Կիլիկեցու մոտ հանդիպող Մեծ Սիսականք գրությունը պարզապես վրիպակ է[7]: Իր բոլոր դրական մոտեցումներով Ղ. Ինճիճյանը, ցավոք, որոշ խնդիրներ չի ընկալել: Նախ, նա, հակառակ «Աշխարհացոյց»-ի հստակ տեղեկության, Արցախին վերագրում է 14 գավառ, առանձին գավառներ համարելով *Քոտակը, Քուստին*, երբ առաջինը *Սիսիական*-ի - *Կոտակի* բաղկացուցիչ մասն է, իսկ երկրորդը՝ *Քուստի - Փառնէսի*[8]: Քննության առնելով Ուտիքի գավառները, Ղ. Ինճիճյանը նշում է, որ վենետիկյան երկու ձեռագրերի մեջ և տպագրում *Արան-ռոտը* հանդիպում է Աթան-ռոտ գրությամբ, սակայն փորձ չի անում բացատրել նման գրության հանդես գալը[9]: Կարծում ենք, որ հեղինակը ճիշտ չէ, երբ գավառանվան ճիշտ ձևը համարում է *Տոսին* և ոչ թե *Տոին*[10]: *Ռոտ-Պայեակ* գավառի անվան տարընթերցումից նա առավելություն է տալիս *Ռովտապայակին* և գտնում, որ *Ռոտ-Պայեակ* տարընթերցումը ընդամենը վրիպակ է: Շատ տարօրինակ ձևով նա առավելություն է տալիս *Ուշանատակ* ընթերցմանը[11], երբ անտարակույս ճիշտ ձևը ձեռագրերում գերակշռաբար հանդիպող *Տուչքատակն* է կամ *Տուշկատակը*: Սպասելի էր, որ նա կանդրադառնա *Ուտի Առանձնակ* գավառի խնդրին, սակայն այդ շատ կարևոր հարցը չի արժանացել նրա ուշադրությանը:

Հայոց Արևելից կողմերի երկու աշխարհների գավառների քննությունը ամբողջական դարձնելու համար կարևոր են հատկապես Մովսես Կաղանկատվացու երկի տվյալները, որոնք գործնականում եզակի են ու գերարժեքավոր հիշյալ տարածաշրջանի համար: Անդրադառնալով Խուրամյան

[6] *Ղ. Ինճիճյան*, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 305:
[7] Անդ:
[8] Անդ, էջ 306:
[9] Անդ, էջ 337:
[10] Անդ:
[11] Անդ:

շարժման առաջնորդ Բաբեկի (Կաղանկատվացու մոտ՝ Բաբան-Հ.Բ.) արշավանքին դեպի Հայոց Արևելից կողմեր, հեղինակը նշում է, որ թշնամին կոտորել է Բերձոր գավառի բնակչությունը՝ նշանավոր *Ուռյաց՝ Կառնակաշ, Հակարի* և *Տափար* ավաններով, սակայն «...ապստամբքն ի Բաբանայ դիմադարձ պատերազմաւ ամրացան ի բերդն Գարոզու և կալեալ զգաւառսն զամս ԺԲ, որք այսոքիկ՝ *Վերին Վայկանիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Միանք* և *Տրի* գավառ» և միայն դրանից հետո հետևում է Բաբեկի նոր արշավանքը[12]: Մեկ այլ կապակցությամբ հեղինակը հիշում է երեք գավառներ՝ *Սիսանը, Տրին* և *Ամարասը*[13]: Մովսես Կաղանկատվացին հիշատակում է նաև *Շակաշենը* թե՛ այդ գրությամբ և թե՛ *Արշակաշեն* ձևով[14] Գարդմանը, *Մեծ Կուենքը*՝ նաև *Մեծ Կւանք* և *Մեծ Կողմանք* գրությամբ, *Հաբանդը, Մեծիրանքը, Մուխանքը* (հեղինակի մոտ՝ Մխանք – Հ. Բ.), *Ռոստակը*, որին դեռ կանդրադառնանք, գավառները և որոշ մանրամասներ նրանց տեղադրության կապակցությամբ:

Նախքան գավառների տեղադրությանն անցնելը փորձենք վերհանել Արցախ և Ուտիք աշխարհների աշխարհացույցյան նկարագրության մի քանի առանձնահատկությունները, որոնք, բարեբախտաբար, մեզ համար պահպանել է հանճարեղ *Պատմահայրը*: Ուշադրություն է գրավում այն իրողությունը, որ Ուտիքի գավառների հիշատակությունը ոչ թե կատարվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կամ հակառակ ուղղությամբ, այլ կենտրոնից, ինչը միանգամայն համահունչ է Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» այն տեղեկությանը, թե աշխարհացույցյան Ուտիքի տարածքում նախկինում գոյություն են ունեցել երկու աշխարհներ կամ զո-

[12] *Մովսես Կաղանկատուացի*, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Ե., 1983, էջ 327:

[13] Անդ, էջ 331: «...թշնամիները «..արարին վնաս Սիսան, Տրյո և Ամարաս գաւառաց»:

[14] Անդ, էջ 212:

րավարություններ՝ *Շակաշեն-Սակասենեն* և *Ուտիք-Օտենեն*[15]: Եվ քանի որ դրանց միացումից հետո նոր վարչական միավորը պահպանել է Ուտիք անունը, ապա «Աշխարհացոյց»-ի հեղինակն սկզբում տվել է *Ուտիքի* գավառները, իսկ այնուհետև *Շակաշենիները*, որը որպես աշխարհ՝ դատելով որոշ անուղղակի տվյալներից, հայերի շրջանում ավելի շատ հայտնի է եղել *Գարդմանացիք* անունով[16]: Ուտիքի գավառների նկարագրության երկրորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ խոստացված 7 գավառի փոխարեն հիշատակվում են 8-ը, ինչը ցույց է տալիս, որ մեկ գավառանուն ավելացվել է ավելի ուշ, երբ Պարտավ քաղաքը վերածվել է մարզպանական աթոռանիստի, և վերջինս իր շրջակայքի հետ անջատվել է *Առան-ռոտ* գավառից, վերածվել ինքնուրույն գավառի՝ ստանալով *Ուտի Առանձնակ* կամ *Ուտի-Ռոտաստակ* անունը:

Չեռքի տակ ունենալով վերոնշյալ տեղեկությունները, մենք կարող ենք բավական մեծ ճշտությամբ տեղադրել Ուտիքի գավառները: Ասում ենք մեծ ճշտությամբ, քանի որ Կոտի հովտի հարթավայրային աջափնյակը բոլորովին էլ աչքի չի ընկնում վառ արտահայտված բնագծերով: Աշխարհի ամենամեծ գավառն սկզբում պետք է լիներ *Առան-ռոտը*, որը պետք է ընդգրկեր ներկայիս *Թարթառ* (հնում՝ *Տրտա* - Հ. Բ.), *Խաչենագետ* և Կուրակ գետերի ստորին ավազանների շրջանը՝ տարածվելով մինչև *Կուր* գետը[17]: Վերջինիս և Արցախի գավառ-

---

[15] *Claudii Ptolemaei*, Geographia, vol. I, Pars. Sccunda, Parisiis, 1901, XII, 4, էջ. 937–938 (...'Ωτηνη ...Σακασηνη'):

[16] *Մովսես Խորենացի*, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, գիրք Բ, գլ. Ը: *Մովսես Կաղանկատվացի*, էջ 8 և այլք:

[17] Ս. Երեմյանը գավառը տեղադրում է *Գերան-չայ* գետի հովտում առանց բացատրությունների: Կարելի է մտածել, որ ներկայիս *Գերան-չայ* անվան մեջ նա փորձում է տեսնել *Առան-ռոտ* անունը, որը, սակայն, ինչպես ցույց կտա հետագա քննությունը, բոլորովին քննություն չի բռնում: (*Ս. Երեմյան*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 37): Բ. Ուլուբաբյանը, որ Հայոց Արևելից կողմերի գավառների տեղադրության ավելի քաջածանոթ է, գտնում էր, որ ներկայումս անհնար է հիշյալ գավառների սահմանները գծել և կարելի է լոկ մոտավորապես տեղադրել (*Բ. Ուլուբաբյան*, Դրվագներ Հա-

ների միջև սահմանաբաժան գիծ պետք է հանդիսանային նախալեռները (տե՛ս կից քարտեզը): *Առան-ռոտ* գավառանվան հետ կապված պետք է քննել մի հարց ևս: Խնդիրն այն է, որ գավառը հանդիպում է, ինչպես վերը ցույց տվեցինք, որոշ ձեռագրերում *Աթան-ռոտ* անունով, ինչը, կարծում ենք, սովորական վրիպակ չէ և լեզվական մի հին իրողության արտահայտություն է: Փավստոս Բուզանդի պատմության մեջ ասվում է, թե Աղվանից Ուսնայի թագավորը կարգադրում է, որ հունաց զորքերին ձերբակալեն և կենդանի թողնեն, որ նրանց տանեն «...*յԱղթանս* ի գործ կաւագործութեան»[18]: Կարծում ենք, որ Փավստոսի «*յԱղթանս*»-ը անմիջական աղերս ունի «Աշխարհացոյց»-ի որոշ ձեռագրերի «*Աթան-ռոտ*»-ին: Պետք է ենթադրել, որ «*յԱղթանս*»-ի մեջ «ղ»-ն սկզբնապես եղել է ածական «*ր*», որը «*թ*»-ի ազդեցությամբ և հայերենի օրինաչափություններով վերածվել է «ղ»-ի: Ըստ էության, մենք գործ ունենք՝ ի դեմս *Աթան-ռոտի*, Առան անվան մեկ այլ արտասանության հետ:

*Առան-ռոտի* նման տեղադրությունից հետո, որն առավել քան ճշմարտամոտ է, *Տրի* գավառը կարելի է և պետք է

---

յոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 34): Այսուհանդերձ, նա Առան-ռոտի անվանումը կապում է *Մեծ Իրանք* կամ *Մեծ Առանք* գավառանվան հետ և գավառը տեղադրում է Մեծ Առանք գավառի հարևանությամբ՝ *Գերան* գետի ավազանն ընդգրկելով, լոկ անհամաձայնություն հայտնելով գավառին վերապահված մեծ տարածքի հարցում (նշվ. աշխ., էջ 37): Անկախ տեսակետի ճիշտ կամ սխալ լինելուց, հարկ է նշել, որ հեղինակն ուշադրություն չի դարձրել այն իրողության վրա, որ չնայած «Աշխարհացոյց»-ը Ուտիքի գավառների թիվը համարում է 7-ը, այդուհանդերձ նկարագրության մեջ տրված են 8 գավառներ (նշվ. աշխ., էջ 34): Դրա հետևանքով *Ուտիք Առանձնակը* համարվել է 7 գավառներից մեկը, ինչը վնասել է ճիշտ տեղադրության որոշմանը:

[18] *Փավստոս Բուզանդ*, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, դպր. Ե, գլ. 7: Ստ. Մալխասյանը՝ հաշվի առնելով, որ «*Յաղթանս*» անսովոր բառի փոխարեն ձեռագրերից մեկն ունի «*յԱղուանս*» տարընթերցումը, թարգմանության մեջ տվել է «*Աղվանք*» ձևով (*Փավստոս Բուզանդ*, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Ե., 1968, ծնթ.149, էջ 333):

տեղադրել *Կարկառ* գետի ստորին ավազանում: Կարծում ենք, որ վերջինս իր անունն ստացել է Տիր աստծու պաշտամունքին կենտրոն լինելուց, չնայած գավառանունը հանդիպում է նաև *Տռի* գրությամբ: Տրի գավառանվան սեռական հոլովածևը «Տրւոյ» է, հետևաբար որոշ ուսումնասիրողների կողմից Կաղանկատվացու մոտ հանդիպող «քահանայն Տրիոյ» արտահայտության մեջ[19] Տրի գավառի անունը տեսնելը պարզապես սխալ է: Չի բացառվում անգամ, որ քահանայի անունը ոչ միայն կարող է լինել *Տրիո*, այլև *Տրխո*, տարընթերցում, որը պահպանվել է մի քանի ձեռագրերում: *Տրի* գավառի սահմանը հյուսիս-արևելքում կազմում է Կուր գետը, հարավ-արևմուտքում՝ ներկայումս Գյավուր-արխ («Անհավատի առու», քանի որ կառուցել էին քրիստոնյաները – Հ. Բ.) հինավուրց ջրանցքը, հյուսիս-արևմուտքում և հարավ-արևելքում՝ *Կարկառ* գետի ջրբաժանը կազմող բլրաշարքերը[20]:

Մեր կարծիքով, հեշտությամբ է տեղադրվում Ուտիքի երրորդ *Ռոտ-Պայեակ* կամ *Ռոտ-Պացեան* գավառը, սակայն մեծ դժվարություն է առաջացնում գավառանվան բացատրությունը կամ մեկնաբանությունը: Անտարակույս, նշված գավառը պետք է տեղադրել Տրիից հարավ-արևելք՝ ներառելով *Կուր* և *Երասխ* գետերի միջագետքի ծայր արևելյան հատվածը՝ սահման ունենալով հյուսիս-արևելքում Կուրը, հարավ-արևելքում՝ Երասխը, հյուսիս-արևելքում սահմանակցելով Տրի գավառին Կարկառ գետի հարավային ջրբաժան բլրաշարքով, իսկ հարավ-արևմուտքում հասնելով մինչև Գյավուր-արխ ջրանցքը: Այս տեղադրությունը, թվում է, թե այլընտրանք չունի, սակայն Ս. Երեմյանը այն տեղադրել է՝ *Ռոտ-Պարսեան* գրութ-

[19] *Մովսես Կաղանկատվացի*, էջ 121:

[20] Ս. Երեմյանը գավառս տեղադրում է *Տրտու* (ներկայումս՝ *Թարթառ*-Հ.Բ.) գետի միջին հոսանքի շրջանում, ավելի ուշ շրջանում Ջրաբերդի գավառի տարածքում, որտեղ միջին դարերում հայտնի էին Հաթերք և Չարաբերդ կամ Ջրաբերդ նշանավոր ամրոցները (նշվ. աշխ., էջ 86): Ինչպես կտեսնենք Արցախի գավառների տեղադրությունից, նման տեղորոշումը պարզապես անհնարին է:

յամբ, *Խաչեն* և *Թարթառ* գետերի միջին հոսանքի շրջանում՝ նրանց միջև ընկած տարածքում[21]: Ինչպես ցույց է տալիս Բ. Ուլուբաբյանը, տեղադրությունն ակնհայտ սխալ է: Նա հետևում է Մ. Բարխուդարյանին[22] և տեղադրում է *Տրի* ու *Ռոտ-Պարսեան* գավառները Պարտավից արևելք Կուրի և Երասխի միջև ընկած շրջանում[23]: Ավելորդ է ասել, որ *Ռոտ-Պարսեան* գավառանվան բացատրությունը ոչ մի քննություն չի բռնում[24]:

*Ռոտ-Պացեան, Ռոտ-Պատյան* կան *Ռոտ-Պայեակ* գավառի տեղադրությունը մեզ մոտ կասկածներ չի հարուցում, սակայն անվան բացատրությունը մտորումների տեղիք է տալիս: Այսպես, «*Ռոտ = գետ*» բառի օգտագործումը պետք է անշուշտ կապել իրանական սկյութական ցեղերի Հայաստան ներխուժելու հետ, երբ *Իլդարունի* (իմա՝ *Օրդառուն* – Հ. Բ.) գետանունը վերածվեց *Հրազդանի* կամ, որ ավելի ճիշտ է, *Հուրասդանի*: Այնպես որ, *ռուտը*՝ չնայած իր իրանական ծագմանը, փոխառվել էր հայերի կողմից և հայկականացվել, ինչպես ցույց է տալիս «Աշխարհացոյց»-ը: Ուստի մնում է բացատրություն տալ Պատեան, Պացեան, Պայեակ տարընթերցումներին: Թերևս պետք է առավելություն տալ Պատեան ընթերցմանը, քանի որ Ռուդ-Պատեան կնշանակեր «*գետով շրջապատված*»[25], ինչը համապատասխանում է աշխարհագրական դիրքին: Ինչ վերաբերում է *Պացեանին*, ապա կարող էր ծագել «*տ >ծ >ց*» հնչյունափոխության հետևանքով: «*Տ–Ծ*» անցմանը մենք դեռ կանդրադառնանք, սակայն այժմ մենք նշենք, որ շատ ավելի բարդ է *Պայեակ* ընթերցմանը բացատրություն տալը: Չի բացառվում, որ կարող էր նշանակել «գետով պահպանված» և *Պայեակը* ոչ այլ ինչ է, բայց եթե *Պահակի* շատ ավելի հնա-

[21] *Մ. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 79:

[22] *Մ. Բարխուտարեանց*, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Ե., 1999, էջ 171:

[23] *Բ. Ուլուբաբյան*, նշվ. աշխ., էջ 37–38:

[24] Անդ, էջ 38:

[25] *Հր. Աճառյան*, Հայերեն արմատական բառարան, հատ. IV, Ե., 1979, էջ 33: Պատեան ընդհանրապես նշանակում է պտղի *կեղև, մորթի, պատյան*:

գույն ձևը, երբ *Պասակը* վերածվել էր սկզբում *Պայակի* կամ *Պայեակի* և պահածոյացվել գավառանվան մեջ՝ առանց վերածվելու *Պահակի*: Սակայն սա լոկ ենթադրություն է:

Սրանով ավարտվում է նախաաշխարհացույցյան շրջանի կամ հունա-հռոմեական հեղինակների *Օտենե-Ուտիք* աշխարհի գավառների նկարագրությունը: *Սակասենե-Շակաշեն* կամ *Գարդմանացիք* աշխարհի, որն ավելի ուշ միացվեց Ուտիքին, գավառների նկարագրությունն սկսվում է հյուսիս-արևմուտքից և շարունակվում հարավ-արևելքի ուղղությամբ:

*Սակասենե-Շակաշեն-Գարդմանայիք* աշխարհի առաջին գավառը *Աղուենն* է: Բոլորովին ընդունելի չէ *Աղուեի* երեմյանական տեղադրությունը, որի համաձայն այն պետք է գտնվեր հետագա *Գյուլիստան* ամրոցի շրջակայքում, իսկ Գյուլիստան ամրոցն էլ պետք է համապատասխաներ *Աղուե* ամրոցին[26]: Մյուս ուսումնասիրողների տեսակետներին անդրադառնալ անգամ չարժե, քանի որ դրանք ոչնչով չեն օգնում գավառիս տեղադրությանը: Երբ ի նկատի ունենանք, որ Շակաշեն գավառի տեղը հայտնի է, *Գարդմանը* տեղադրվում է մեծ ճշտությամբ, *Տուչքատակը* կամ *Տուչկատակը* համապատասխանում է *Տավուշին*, ապա որևէ կասկած չի մնում, որ *Աղուենն* պետք է տեղադրել *Տուչքատակից* արևմուտք, *Աղստև* գետի ավազանում: Այդ ապացուցվում է նաև գավառների թվարկման աշխարհագրական հերթականությամբ, քանի որ դժվար չէ տեսնել, որ գավառները թվարկված են արևմուտքից արևելք ուղղությամբ: *Աղստևի* ավազանից սակայն դուրս պետք է թողնել վերին հոսանքի շրջանը, որ մտնում էր Այրարատի մեջ, և Աղստևի վտակ *Ջողասի* ավազանը, որ աշխարհագրական տրամաբանությամբ պետք է կազմեր *Գուգարքի Ջորոփոր* գավառը: *Աղուեում* պետք է գտնվեր *Խաղխաղ* ձմեռանաց-արքունի քաղաքը և նրա վրայով անցնում էր Մեծ Հայքի կենտրոնական շրջանները Վերքի և Աղվանքի հետ կապող մայրուղին:

---

[26] *Ս. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 34:

*Աղսեից* անմիջապես արևելք տեղադրվում է *Տուչքատակ* կամ *Տուչկատակ* գավառը, որը Աղվանից մարզպանության մեջ հիշատակվում է *Թուչքատակ* գրությամբ: Թե ինչո՞ւ է Տուչը վերածվել *Տուսի*, մենք բացատրել չենք կարող, սակայն գավառանվան երկրորդ մասը պայմանավորված է այնտեղ տարածված *քատակ* կամ *կատակ* թռչունի տարածմամբ, որի իսկությունը մնում է անորոշ[27]: Ս. Երեմյանը հակված է կարծելու, որ գավառանվան իսկական ձևը *Տուս-Քուստակ* է և գավառը տեղադրում է *Տավուշ* գետի ավազանում և այն էլ ենթադրաբար[28]: Իրողությունն այն է, որ *Տուչքատակի* տեղադրությունը *Տավուշի* տարածքում՝ վերջինիս մեջ ներառելով մինչև Կուր ձգվող հողերը, կասկած չի հարուցում: Ավելի ճիշտ ասած, պարզապես այլընտրանք չկա, քանի որ *Գարդմանի* տեղը հայտնի է և այն տարածվում է Տավուշից դեպի արևելք:

Ուտիքի հաջորդ՝ *Գարդման* գավառի տեղադրությունը շատ հարավ է, և ուսումնասիրողները որպես կանոն տեղադրել են նույն տարածքում: Ղ. Ինճիճյանը, հիանալի օգտագործելով հայ պատմիչների հաղորդումները, տեղադրում է գավառը *Շամքոր* (հնում՝ *Գարտման* – Հ. Բ.) և *Ջակամ* գետերի ավազանում, որտեղ՝ Շամքոր գետի վերին ավազանի շրջանում, պահպանվել են *Գարդման* ամրոցի ավերակները *Քրթմանիկ* աղավաղված արտասանությամբ, Գետաբակս բնակավայրը և այլն[29]: Զարմանալիորեն սխալ է ճանաչված մասնագետ Ս. Երեմյանի կողմից *Գատրմանից* գավառը *Ղազախի* շրջանում տեղադրելը[30]: Տեղադրության առումով միանգամայն իրավացի է Բ. Ուլուբաբյանը, որ տեղադրում է գավառը Շամքորի շրջակայքում և նրանից արևմուտք[31]:

*Սակասենե-Շակաշեն* աշխարհի վերջին գավառը *Շակա-*

---

[27] *Ս. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 94:
[28] Անդ, էջ 86:
[29] *Ղ. Ինճիճյան*, նշվ. աշխ., էջ 338–340:
[30] *Ս. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 46–47:
[31] *Բ. Ուլուբաբյան*, նշվ. աշխ., էջ 35:

# ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅՑ ԿՈՂՄԵՐՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

Քարտեզի հեղինակ Ռ. Հարությունյան
Քարտեզագիր Վ. Սիմոնարյան

*Երևան 2007*

*շենն* է, որը, ինչ խոսք, տեղադրվում է *Գանձակ* քաղաքի շրջակա տարածքներում: Սրա տեղադրության հարցում ուսումնասիրողների մեջ հակասություններ չկան, ուստի ձեռնպահ ենք մնում նրանց տեսակետները հիշատակելուց և անցնում ենք անմիջապես *Ուտի Առանձնակի* տեղադրությանը:

Ուտի Առանձնակի տեղադրությունը՝ ի տարբերություն Ուտիքի մյուս գավառների, շատ հստակ արձանագրված է «Աշխարհացոյց»-ում, որի համաձայն նրա մեջ է գտնվել *Պարտավ* քաղաքը: Այլ խոսքով, գավառը պետք է տեղադրել Շակաշենից հարավ-արևելք ընկած շրջանում, որտեղ արդեն տեղադրել ենք *Արան-ռոտ* կամ *Առան-ռոտ* գավառը: Խնդիրն այն է, որ *Ուտի Առանձնակ* գավառն սկզբում գոյություն ունենալ չէր կարող, ինչպես ցույց է տալիս Ուտիքի աշխարհացույցյան նկարագրության հերթականության տրամաբանությունը: Եթե այն հենց սկզբից գոյություն ունենար, ապա ենթադրելի էր նրա հիշատակությունը *Ռոտ-Պատեան* գավառից հետո, սակայն այդ հնարավոր չէ, քանի որ տեղադրությունը շատ հստակ է Թարթառի գետի ավազանում և նրանից հյուսիս ընկած շրջանում: Այն չէր կարող գտնվել *Սակասենե-Շակաշեն* աշխարհի տարածքում, քանի որ այնուամենայնիվ պետք է գտնվեր Ուտիքում (մինչ աշխարհացույցյան), այլապես չէր կոչվի *Ուտի Առանձնակ*: Այն իրողությունը, որ «Աշխարհացոյց»-ը Ուտիքին հատկացնում է 7 գավառ, սակայն ներկայացնում է 8-ը, լրիվ ապացուցում է, որ այն հանդես է եկել «Աշխարհացոյց»-ի ստեղծումից հետո, երբ, կապված Աղվանից մարզպետության կենտրոնի՝ *Չողից Պարտավ* տեղափոխվելու հետ, *Պարտավ* քաղաքն իր շրջակա տարածքներով անջատվեց *Առան-ռոտից* և վերածվեց առանձին գավառի: Ըստ այդմ էլ հասկանալի է նրա անվան հայտնվելը գավառացանկի վերջում և *Ուտի Առանձնակ* անուն ստանալը: Անկասկած այդ տեղի ունեցավ պարսկական տիրապետության շրջանում և գավառն էլ Պարսից արքունիքի կողմից ստացավ *Ուտի-Ռոստակ* կամ *Ուտի-Ռոտաստակ* անունը, որը հայերի կողմից

թարգմանվեց Ուտի Առանձնակ: Հետևաբար *Ռոստակը* կամ *Ռոտաստակը* ոչ թե առանձին գավառ է, այլ նույն *Ուտի-Ռոստակը* կամ *Ուտի-Ռոտաստակը*: Գավառիս մեջ մտնող *Պարտավ քաղաքը* դարձավ մարզպանանիստ, իսկ գավառը դրվեց իր տնտեսական բոլոր հնարավորություններով նրա ենթակայության ներքո:

Պարտավի ավերակները պահպանվել են ներկայիս Բարդա քաղաքի մերձակայքում, որը կրում է Պարտավ անվան արաբականացված ձևը: Քաղաքի և գավառի մյուս մանրամասներին չենք անդրադառնում, քանի որ մեր հարցի քննության առումով հատուկ հետաքրքրություն չեն ներկայացնում:

Այժմ անդրադառնանք Արցախի գավառների տեղադրությանը և ցանկի աշխարհագրական հերթականության խնդրին: Առաջին գավառը *Մյուս Հաբանդն* է կամ *Փոքր Հաբանդը*, որը հիշատակվում է նաև *Համբանդ* գրությամբ: Տեղադրությունը դժվարություն չի ներկայացնում, քանի որ Փավստոս Բուզանդի հաղորդումներից մեկի համաձայն այս գավառում է գտնվել Ամարասը, որտեղ եկեղեցի էր հիմնադրել Գրիգոր Լուսավորիչը և ուր բերեցին և հողին հանձնեցին մագքթաց *Սանեսան* թագավորի կողմից սպանված Գրիգոր Լուսավորչի թոռ *Գրիգորիս* եպիսկոպոսին[32]: *Ամարասը* մինչև օրս էլ գոյություն ունի, հետևաբար գավառիս տեղադրությունը ընդհանուր առմամբ վիճաբանություններ չի հարուցում: Թերևս բացառություն է կազմում Ս. Երեմյանը, որը փորձում է այն նույնացնել *Միսական-ի–Ոստան* կամ *Միսական-ի–Կոտակ* գավառին[33]: Թերևս նրա տեսակետի հիմքում ընկած է Պատմահոր տեղեկությունն այն մասին, թե *Ամարասը* գտնվել է *Փոքր Սյունիքում*[34]: Ավելին, հեղինակն այն կարծիքին է, որ 571 թվից Արցախն ամբողջությամբ միացվել է *Սյունիքին*, և *Մյուս Հա-*

[32] *Փավստոս Բուզանդ*, դպր. Գ, գլ. Ձ:
[33] *Ս. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 70:
[34] *Մովսես Խորենացի*, գիրք Գ, գլ. Գ:

*բանդը* դարձել է Սյունյաց նախարարության կենտրոն, որն իբր կոչվել է նաև *Սիսական-ի–Ոստան* կամ *Սիսական-ի–Կոտակ*, որն էլ *Փոքր Սյունիքի* համարժեքն է[35]: Սկսենք այն բանից, որ Արցախի միացումը Սյունիքին առավել քան կասկածելի ենթադրություն է և այն էլ 571 թվից հետո: Համենայն դեպս ոչ մի սկզբնաղբյուր չի հավաստում դրա հնարավորությունը: Իրականությունն այն է, որ *Փոքր Սյունիքի* գոյությունը հայտնի էր V դարի հեղինակ Մովսես Խորենացուն, հետևաբար այդ անվանումը որևէ կերպ կապել 571 թ. իրադարձությունների հետ հնարավոր չէ: Ավելի շուտ *Փոքր Սյունիքի* գաղափարի հանդես գալը պետք է աղերսել IV դարի իրադարձությունների հետ, երբ Պապ թագավորը խստորեն պատժել տվեց Արշակ Բ թագավորի դեմ ապստամբած Արցախ աշխարհը և, ամեն ինչից դատելով, երկրամասը հանձնեց Սյունյաց իշխանական ընտանիքի անդամներից մեկին, որի հետագա ժառանգներից մեկը՝ Վարազվաղանը, իրավունք ունեցավ՝ 7 պորտ անց ամուսնանալ Սյունիքի իշխան Վասակի դստեր հետ: Հետևաբար IV դարի 60-ական թվականներից հետո Արցախը վեր էր ածվել Սյունյաց իշխանական ընտանիքի կրտսեր ճյուղի տիրույթի, որը հիշատակվում է *«Գահնամակ»*-ում՝ որպես *«Սյունեաց երկրորդ»*, իսկ Վարազվաղանն էլ, որ Սյունիքի տոհմի նկատմամբ կրտսեր ներկայացուցիչ էր, հիշատակվում է որպես «սեպուհ»[36]: Ելնելով վերոհիշյալից, դժվար չէ տեսնել, որ Փոքր Սյունիքը ոչ թե նույնանում է *Սիսական-ի–Ոստան* կամ *Սիսական-ի–Կոտակ* գավառին, այլ Արցախին: Հետաքրքրություն է ներկայացնում այն իրողությունը, թե ինչու գավառը հանդես է գալիս *Սյուս Հաբանդ* կամ *Փոքր Հաբանդ* անունով: Իհարկե, առաջին ենթադրությունն այն է, որ այդպես է կոչվել ի տարբերություն Սյունիքի *Հաբանդ*

---

[35] *Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 70:*

[36] *Փավստոս Բուզանդ*, դպր. Ե, գլ. ԺԲ: *Ղազար Փարպեցի*, դրվագ Բ, էջ 39–42, *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ. 250:

գավառի[37]: Հնարավոր և հավանական բացատրությունն այն է, և միանգամայն իրատեսական, որ միասնական *Հաբանդ* գավառը Մեծ Հայքի աշխարհաբաժանման շրջանում կիսվել է Սյունիքի և Արցախի միջև, որի արդյունքում Սյունիքի կազմում հայտնված հիմնական հատվածը պահպանել է *Հաբանդ* անվանումը, իսկ Արցախի մեջ մտած ավելի փոքր հատվածն ստացել է *Մյուս Հաբանդ* կամ *Փոքր Հաբանդ* անվանումը:

Ելնելով վերը կատարված դիտարկումներից, մենք *Մյուս Հաբանդը* տեղադրում ենք Սյունիքի *Հաբանդ* գավառի հարևանությամբ՝ տարածելով այն մինչև *Ամարասի* կողմերը:

Գավառացանկում Արցախի երկրորդ գավառը *Վակաճիքն* է կամ *Վայկանիքը*, որը սովորաբար տեղադրում են *Տրտա* կամ *Թարթառ* գետի վերին հոսանքում[38], սակայն փորձ է արվում որոշ ուսումնասիրողների կողմից այն տեղորոշել Հագարու գետի ավազանի վերին շրջանում:

Արցախի հաջորդ *Բերձոր* գավառը տեղադրում են կամ *Վայկանիքից* արևելք՝ Թարթառ գետի վտակ *Թութղուի* ավազանում[39]: Տեղադրելով հանդերձ Թարթառի հովտում՝ Ս. Երեմյանը կարծում է, որ գավառը կոչվել է ո՛չ միայն *Բերձոր*, այլև *Բերդաձոր*: Սակայն «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում հանդիպող *Բերդաձոր* տարընթերցումը որոշ ուսումնասիրողների մոտ այն կարծիքն է ստեղծել, թե *Բերդաձորը* պետք է տեղադրել *Կալաձորասի* գյուղի շրջակայքում[40]: Իրականում, ինչպես դեռևս ժամանակին նկատել է Ղ. Ինճիճյանը, *Բերդաձոր* տարընթերցումն ընդամենը վրիպակ է, գրիչներից ինչ-որ մեկի ժողովրդական ստուգաբանության փորձ: Եթե *Բերդաձոր* նշանակում է *Բերդի* ձոր, ապա Բերձոր նշանակում է բովան-

---

[37] տե՛ս «Աշխարհացոյց»-ը:

[38] *Ս. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 82: Ս. Երեմյանը իրավացիորեն տեղադրում է «Բողանիք Արքունականք»-ի շրջակայքում:

[39] Անդ, էջ 44:

[40] *Բ. Ուլուբաբյան*, նշվ. աշխ., տե՛ս քարտեզը, որը տեղադրությունը մի փոքր աղավաղել է:

ցքների ծոր: *Բերծորի* երեմյանական տեղադրությունը միանգամայն տրամաբանական է, քանի որ նրան ցուցակում հաջորդող գավառը՝ *Մեծ Կուենքը*, գտնվել է *Բերծորից* արևելք և հյուսիս և իր մեջ ընդգրկել է Թարթառ գետի միջին հոսանքի նշանակալից մասը և Գյուլիստանի մելիքության մեծ մասը, ինչն ապացուցվում է Մովսես Կաղանկատվացու հաղորդումներով: Հետաքրքիր է, որ Հայոց Արևելից կողմերի պատմիչի համար երբեմն *Մեծ Կուենից* գավառը պարզապես *Մեծ Կողմանք* է, ինչը տարակուսներ է ծնում: Սակայն այն իրողությունը, որ Կաղանկատվացին գիտի *Մեծ Կուենքը*, մտածել է տալիս, որ այնուամենայնիվ դրանց մեջ պետք է տարբերություն տեսնել: Արդյո՞ք *Մեծ Կողմանք* ասելով հեղինակը ի նկատի չունի *Մեծ Կողենք* և *Մեծիրանք* գավառները միասին: Այլ խոսքով, ինչ-ինչ հանգամանքներում երկու գավառները միավորվել են մեկ եպիսկոպոսի ենթակայության կամ տեսչության ներքո[41]: Միայն մի դեպքում կարելի է կարծել, որ *Մեծ Կողմանքը* և *Մեծ Կուենքը* նույնանում են[42]: Իհարկե, կարելի է կարծել, որ *Մեծ Կողմանք* ասելով հեղինակն ի նկատի ունի *Ուտիք* և *Արցախ* սահմանային աշխարհները, քանի որ *Մեծ Կողմանց* մեջ է մտնում *Ռոստակ* գավառը, որն անտարակույս պետք է նույնանա *Ուտի Առանցնակիի*[43]: Սակայն մյուս հաղորդումները նման եզրակացության հիմք չեն տալիս: Միայն մի առնչությամբ օգտագործված «*Մեծ Կողմն աշխարհիհ*» արտահայտությունը պարզապես նշանակում է երկրամասի մեծ մասը[44]:

«Աշխարհացոյց»-ի աշխարհագրական նկարագրության և Մովսես Կաղանկատվացու հաղորդումների լույսով միանգամայն տարօրինակ է Ս. Երեմյանի կողմից Մեծ Կուենից գա-

[41] *Մովսես Կաղանկատվացի*, էջ 17, 98, 99, 203, 205, 212, 218, 233, 234, 235, 238, 262, 266, 267, 294, 334, 345, 346:
[42] Անդ, էջ 234, 235:
[43] Անդ, էջ 205:
[44] Անդ, էջ 17::

վառի տեղադրությունը Իջևանի տարածաշրջանում[45]: Հեղինակն իրավացի է, որ արաբական աղբյուրների «*Մեսկվան*»-ը և վրացական աղբյուրների «*Մեծկևելնին*» համապատասխանում են *Մեծ Կաենքին*, սակայն ո՛չ *Կամնեն* գյուղի և ո՛չ էլ *Դեղձնուտ* (հեղինակը փորձում է նույնացնել Կաղանկատվացու հիշատակած *Տաղծանս* վանքին)[46] վանքի առկայությունը[47]: Իջևանի կողմերում իրավունք չի տալիս Բերձորի և Մեծիրանքի հարևանությամբ հիշատակված *Մեծ Կուենքը* տեղադրել նշված տարածքում:

Հաջորդ *Մեծիրանից* գավառը, ինչպես ճիշտ գտնում են ուսումնասիրողները, տեղադրվում է *Խաչենագետի* վերին ավազանում և տարածվել է մինչև *Տրտու* կամ *Թարթառ* գետը: Սրա մեջ էր գտնվում Տրտուի ափին գտնվող ասպարիսածև *Չղախական* հովիտը, *Շիկաքար* բնակավայրը, *Դաստակերտը* և այլն[48]: Ս. Երեմյանն իրավացի է, երբ գտնում է, որ *Մեծիրանքը* արաբական աղբյուրների «*Մեսրան*»-ն է, և նրա տարածքն ավելի ուշ շրջանում հայտնի էր *Խաչեն* անունով[49]:

Արցախի *Հարճլանք* կամ *Հարջլանք* գավառի մասին տեղեկություններ գործնականում չեն պահպանվել: Նման անորոշությունն էլ տարբեր տեղադրությունների պատճառ է դարձել: Փորձեր են արվել տեղադրելու այն Հաջիլար գյուղի տեղում[50]: Ս. Երեմյանն այն նույնացնում է արաբական աղբյուրների «*Խերխիլյան*»-ին և տեղադրում ներկայումս *Քյոնդալան-չայ կոչված* գետակի հարավային եզրին[51]: Մենք հակված ենք տեղադրելու գավառս ուշ շրջանի *Խոջաչայի* շրջակայքում, չնայած չենք կարող պնդել մեր տեսակետի վերջնական լինելու մասին: Այսուհանդերձ նման ենթադրության հավանականութ-

[45] *Ս.Տ. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 66:
[46] *Մովսես Կաղանկատվացի*, էջ 235:
[47] *Ս.Տ. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 66:
[48] *Մովսես Կաղանկատվացի*, նշվ. աշխ., էջ 119, 203, 205, 326, 333, 343:
[49] *Ս.Տ.Երեմյան, նշվ. աշխ.*, էջ 66:
[50] *Մակար արք. Բարխուդարյանցի*, նշվ. աշխ., էջ 172:
[51] *Ս.Տ. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 62:

յունը մեծ է, քանի որ նշված տարածքը սահման ուներ *Մեծիրանքի* հետ:

Լիովին կիսում ենք Ս. Երեմյանի տեղադրությունը Մականք գավառի հարցում: Նա այն տեղադրում է Մուխուրօվասի վայրի շրջակայքում[52]:

Հաջորդ Պիանք գավառը Մ. Բարխուդարյանցը տեղադրում է *Քյոնդալան* գետի եզերքներում[53], թերևս ավելի հավանական է Ս. Երեմյանի կողմից գավառիս տեղադրությունը Բայան գյուղի շրջակայքում[54], չնայած չի բացառվում նրա տեղադրությունը *Մուխանքի* հարավակողմում: Նման եզրակացությունը կարելի է հիմնավորել այն փաստով, որ գավառացանկում *Պիանքին* հաջորդում է *Պածկանքը*:

Ս. Երեմյանը «Աշխարհացոյց»-ի բոլոր ձեռագրերում հանդիպող Պածկանքը կամ նրա տարընթերցումները փորձում է սրբագրել *Պարականք* և տեղադրել *Վարանդայի* գավառում[55]: Մենք հակված ենք գավառս տեղադրել *Մուխանքից* հարավ-արևելք ընկած շրջանում, որը հարավից եզերվում էր Երասխ գետով, որի հակառակ ափին պետք է գտնվեր Վարդանակերտ քաղաքը:

Մեզ մնաց քննության առնելու *Սիսական-ի–Ոստան, Քոստի-ի–Փառենս* կամ *Քաստ-ի–Փառնես* և *Կողբ* գավառների տեղադրությունը: Թերևս այս գավառների տեղադրությունը մյուսների նկատմամբ ավելի հեշտ է, սակայն թվագրման հաջորդականությունն առավել քան ենթադրությունների լայն դաշտ է բացում: Այսպես, կարծես թե *Պածկանքով* գավառացանկը պետք է ավարտվեր, սակայն դրան հաջորդում է *Սիսական-ի–Կոտակի* կամ *Սիսական-ի–Ոստանի* կամ *Սիսական Ռո-*

---

[52] Անդ, էջ 71: Մ. Բարխուդարյանցի կողմից Մուկանքի տեղադրությունն Օրեն-կալայի տեղում (նշվ.աշխ., էջ 173) ոչ մի հավանականություն չունի, քանի որ այդ տարածքը պետք է մտնի Ուտիքի մեջ:

[53] *Մակար արք. Բարխուդարյանցի*, նշվ. աշխ., էջ 173:

[54] *Ս.Տ. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 77:

[55] Անդ:

*տաստակի* հիշատակությունը: Եթե մի պահ ընդունենք, որ հիշյալ գավառը պետք է տեղադրել *Պածկանքից* արևմուտք, ապա անհասկանալի է մնում *Մյուս Հաբանդի* առաջացումը: Ուստի, ոչ թե պետք է կարծել, որ *Մյուս Հաբանդը* և *Միսական-ի–Ոստանը* նույնանում են, ինչպես ենթադրել է Ս. Երեմյանը, այլ, որ այն սկզբում ընդհանրապես գոյություն չի ունեցել և մտել է *Մյուս Հաբանդի* տարածքի մեջ, որն անտիկ ժամանակներում վարչականորեն կապված է եղել Սյունիքի հետ:

Ելնելով այն իրողությունից, որ *Վականիք-Վայկունիքից* սկսած գավառները տեղադրված են աշխարհագրական հերթականությամբ՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ և հանկարծ գավառացանկում հայտնված *Մյուս Հաբանդ* գավառը բոլորովին չի գտնվում *Վայկունիքի* հարևանությամբ, պետք է ենթադրել, որ Արցախը Սյունի ընտանիքի կրտսեր ճյուղին հանձնելու ժամանակ Արցախին է միացվել *Հաբանդ* գավառի մի մասը, որը դարձել է երկրամասի կենտրոնական իշխանանիստ գավառը և այդ պատճառով դրվել է գավառացանկի սկզբում: Ժամանակի ընթացքում *Մյուս Հաբանդ* գավառը բաժանվել է երկու մասի, որից մեկը պահպանել է *Մյուս Հաբանդ* անունը, իսկ երկրորդը ստացել է *Միսական-ի–Ոստան* կամ *Միսական-ի–Կոտակ* կամ *Միսական Ոտաստակ* անունը: Ուստի, եթե *Մյուս Հաբանդը* բաժանումից հետո զբաղեցրել է *Ամարասի վանքի շրջակայքը*, ապա *Միսական-ի–Ոստանը* տարածվել է մինչև Երասխ գետը՝ հյուսիսում սահմանակցելով *Մյուս Հաբանդին*: Միայն այս կերպ կարելի է բացատրել նշված գավառի հայտնվելը Պածկանքից հետո:

Արցախի վերջին գավառները՝ *Քուստի-Փառենը* կամ *Քուստի-Փառենսը* և *Կողբը*, գտնվում են Սևանի և Մռավի լեռնաշղթաներից հյուսիս: Նրանք գործնականում կապված չեն Արցախի հիմնական գավառների հետ քիչ թե շատ հարմարավետ ճանապարհներով, ինչը կասկածի տակ է առնում նրանց սկզբնապես Արցախի մաս կազմելը: Պետք է ենթադրել, որ սկզբնապես նրանք առանձին գավառներ չեն էլ եղել և մաս են

կազմել համապատասխանաբար *Գարդման* և *Շակաշեն* գավառների: Ս. Երեմյանը, նույնացնելով *Մյուս Հաբանդը Միսական-ի–Ոստանի* հետ, նկատում է, որ Արցախի գավառների թիվը մեկով պակասում է, ուստի փորձել է *Քուստ-ի–Փառնեսի* մեջ տեսնել երկու գավառ՝ *Քուստի* և *Փանես*[56], ինչը բնականաբար ճիշտ չէ, քանի որ *Քուստին* չի կարող օգտագործվել առանց *Փառնեսի* կամ այլ անվան: Նա *Քուստին* տեղադրել է *Շամշադին-Տավուշի* շրջանում, իսկ *Փառնեսը՝ Փառիսոս* (ներկայումս՝ Դալաքենդի - Հ. Բ.) քաղաքի շրջակա տարածքներում: Իրականում *Քուստի-Փառնեսը* պետք է տեղադրվեր *Գարդմանի* հարավակողմում, Շամքոր գետակի վերին հոսանքի շրջանում, որտեղ իրոք գտնվել է *Փասիաս* քաղաքը, որն այժմ ավերակ է: Դատելով գավառի *Քուստ-ի–Փառենս* տարընթերցումից, թերևս կարելի է ենթադրել, որ նշված տարածքը հանձնվել է հայոց Փառեն կաթողիկոսին և այնուհետև վերածվել է առանձին ինքնուրույն գավառի:

Այս գավառից էլ արևելք գտնվել է Կողթ գավառը, որտեղ նշանավոր է եղել *քարախունկի* կամ *պաղլեղի* հանքը ուշ ժամանակների *Փիփ* կամ *Ջագլիկ* գյուղի մոտ:

Մեզ անհայտ պատճառներով՝ ավելի շուտ քաղաքական, քան տնտեսական, քանի որ դրանց միացումը Արցախին տնտեսապես ոչ մի կերպ չի արդարացվում, հիշյալ երկու գավառները IV դարից ոչ շուտ միացվում են Արցախին, որով ամբողջանում են վերջինիս 12 գավառները: Վերջին երկու գավառների տարածքն սկզբում պետք է գտնվեր *Շակաշեն-Գարդմանացիքի* մեջ և այնուհետև պետք է անջատվեր նրանցից ու միացվեր *Արցախին*:

Մեզ մնաց քննարկելու մեկ հարց ևս: Արդյո՞ք Աղվանից մարզպանության կազմում սկզբնապես տրված են եղել *Արցախի* և *Ուտիքի* 20 (Ուտի Առանձնակի հետ միասին) գավառները: Որոշ տեղեկություններ կարծես թե հավաստում

[56] *Ս.Տ. Երեմյան*, նշվ. աշխ., էջ 88, 90:

են դրա բացակայությունը և ավելի ուշ շրջանի խմբագիրների կողմից ընդմիջարկություն լինելը: Այսպես՝ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերից մեկում, որը հրատարակել է Ք. Պատկանյանը, ասվում է, որ Աղբանիա-Աղվանքը ունի «...և այլ գաւառս, զորս ի Հայոց հանեալ է. *Շակաշէն, Գարդման, Կողբ, Ջաւէ և այլ քսան գաւառ* մինչև ցիառնամն Երասխայ ի Կուր գետ»[57]: Ստացվում է անհեթեթություն: Այլ խոսքով Աղվանից մարզպանության մեջ մտել են ոչ թե 20, այլ 24 գավառ, ինչը պարզապես սխալ է, քանի որ նշված 4 գավառները մտնում են հենց այդ 20 գավառների մեջ: Երբ մենք դիմում ենք Փավստոս Բուզանդի երկին, ապա մի շատ հետաքրքիր իրողության ենք հանդիպում: Պարզվում է, որ Աղվանից կոչված թագավորությունը Արշակ Բ-ի կրած անհաջողությունների շրջանում մեծ Հայքի թագավորությունից գրավում է *Ուտի, Շակաշեն, Գարդմանածոր, Կողբ* և նրանց շուրջ գտնվող մի շարք գավառներ[58]: Եթե մի պահ մոռանանք Ուտի գավառի հիշատակությունը, ապա կտեսնենք, որ հիշյալ տեղեկությունները գործնականում նույնանում են: Այլ խոսքով, «Աշխարհացոյց»-ի վերոհիշյալ ձեռագիրը գրվել է Փավստոս Բուզանդի երկի որոշակի ազդեցության ներքո: Ավելին, կարելի է առանց սխալվելու ասել, որ «Աշխարհացոյց»-ում սկզբնապես եղել է ոչ թե «...*Շակաշէն, Գաղդման, Կողբ, Ջավէ*», այլ *«Շակաշէն, Գարդման, Կողբ, Ուտի»*, քանի որ եթե աշխարհագրական հերթականությունը միանգամայն օրինաչափ է Ուտի գավառի դեպքում, ապա հիշյալ հաղորդման մեջ *Տուսի* կամ *Տուչկատակի* բացակայությունը անհնարին է դարձնում *Կողբից* հետո *Ջավէի* հիշատակությունը: Թվում է, թե Փավստոսի նկարագրությունը կատարված է շրջանաձև: Սկզբում հիշատակվում է *Շակաշէնը*, այնուհետև նրանից արևմուտք գտնվող *Գարդմանը*, վերջինից

[57] *К. Патканов. Армянская география VII века по р.х. СПб., 1877, էջ 17.*
[58] *Փավստոս Բուզանդ*, դպր. Ե, գլ. ԺԳ:

հարավ-արևելք գտնվող *Կողբը* և դրանից հետո դեպի արևելք տարածվող *Ուտին*: Մենք չենք կարող բացատրել, թե ինչու «Աշխարհացոյց»-ի մեջ *Ուտին* փոխարինվել է *Արուեի* աղավաղված *Ջավէ* գրությամբ, սակայն ակնհայտ է, որ այդ հատվածը կրում է որոշակիորեն Փավստոսի երկի ազդեցությունը: Հետևաբար, կարելի է գալ միանշանակ այն եզրակացության, որ Աղբանիա-Աղվանքը «Աշխարհացոյց»-ում նկարագրվել է միայն Կուրի ձախափնյակի գավառներով: Ավելի ուշ Փավստոսի երկի ազդեցությամբ որոշ ձեռագրերի մեջ հայտնվել է Կուրի աջափնյակի 4 գավառների հիշատակությունը և նոր դրանից հետո 20 այլ գավառների հիշատակությունը՝ առանց գավառները կոնկրետ նշելու: Այն պահից, երբ «Աշխարհացոյց»-ի Աղվանից մարզպանության նկարագրության մեջ տրվեցին 20 գավառներն անվանապես, պարզ դարձավ, որ հիշյալ 4 գավառները պարզապես ավելորդ են: Այսուհանդերձ նմանատիպ ձեռագրերի պատճառով 24 գավառների հանգամանքն այնքան ամուր էր նստած որոշ ուսումնասիրողների ուղեղում, որ Մ. Բարխուդարյանցն Արցախ-ուտիքյան գավառների թիվը համարել է 24:

Ահա այսպես են մեզ ներկայանում Հայոց Արևելից կողմերի *Արցախ* և *Ուտիք* աշխարհների վարչական բաժանումների զարգացումն ու պատմությունը:

# ՓԱՅՏԱԿԱՐԱՆ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՆՐԱ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՐԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հայագիտության և ընդհանրապես պատմագիտության մեջ վաղուց ի վեր գրեթե արմատացած է այն տեսակետը, որ Մեծ Հայքի Թագավորության արքունի քաղաք Փայտակարանը գտնվել է Արաքսի ձախափնյակում՝ Միլի գաշտում։ Որքան մեզ հայտնի է, ուսումնասիրողներից առաջինը գերմանացի նշանավոր հայագետ Հ. Հյուբշմանն էր, որ փորձեց Փայտակարան քաղաքը նույնացնել Բայլականի հետ և ստուգաբանել նրա անունը. «Փայտակարան անունը հայկական կհնչի, բայց հայերենով չի մեկնվիր, վասնզի հայ. փայտ և կառան իմաստ չեն տար։ Տարակույս չկա, որ ծագումը հայկական չէ (կասպե՞ն է)։ Արաբացիք անունս աղավաղելով՝ Ballaqān ձևը տվին անորթ[1], Այս տեսակետը հետագայում պաշտպանել են Ն. Ադոնցը[2], Հ. Մանանդյանը[3], Ս. Պախոմովը[4], Ս. Երեմյանը[5], Մ. Պետրոսյանը[6] և ուրիշներ։ Փայտակարանի և Բայլականի համարժեքությունն ընդունել են նաև «Ազրբեջանի պատմություն» աշխատության հեղինակները, սակայն դա չեն հիմնավորել անհրաժեշտ փաստարկներով[7]։*

*Ս. Պախոմովի կարծիքով Փայտակարան և Բայլական քաղաքների անվանումների վերջավորությունների հնչյունաբանական համապատասխանությունը խոսում է դրանց նույնացման օգտին։ Ըստ նրա, Թալիշի տեղանվանացանկում, որի հետ պետք է աղերս ունենան Կուր և Արաքս գետերի ստորին հոսանքի տափաստանների տեղանունները, համախակի հանդիպում են «կարան», «կերան» վերջավորությունները, որոնք ունեն իրենց բարբառային «կառոն» տարատեսակը։ Վերջինս արաբները կարող էին ընկալել որպես «կան»։*

---

1 Հ. Հյուբշման, Հին Հայոց տեզուց անունները, Վիեննա, 1907, էջ 106։

2 Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1943, էջ 61։

3 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 311, հ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 149, 342։

4 Е. А. Пахомов, Пайтакаран—Байлакан—Орен-кала («Материалы и исследования по археологии СССР», № 67, М.-Л., 1959, с. 15—32).

5 С. Т. Еремян, Сюния и оборона сасанидами кавказских проходов («Известия Арм. ФАН СССР», 1941, № 7, с. 34), *Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 88։*

6 *Մ. Գ. Պետրոսյան, Բրակա-կիմերական էթնիկական տարրը Արաքսի ստորին հոսանքի շրջանում («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 1, էջ 194)։ Հեղինակն ասելով Վ. Մինորսկին իր «Հուդուդ ալ-Ալամ» աշխատության մեջ Փայտակարանը նույնացրել է Բայլականի հետ։ Իրականում նա գրում է. «Բայլականի ավերակները, որոնք կոչվում են Միլ-ի Բայլական (Միլլար), գտնվում են Շուշիից հարավ-արևելք»* (Ḥudūd al-'Ālam, The Regions of the World, a Persian Geography 372 A. H.—982 A. D.", translated and explained by V. Minorsky, with the Preface by V. V. Barthold, London, 1970, p. 398)։

7 «История Азербайджана», т. I, Баку, 1958, с. 78.

(երկար «աւ»-ով) և, քանի որ հայերեն «պ»-ն և «փ»-ն արաբները կարող էին արտահայտել միայն «բ»-ի միջոցով (հայ. Պարտավ=արաբ. Բերդաա), ապա Փայտակարանի բարբառային Փայտակաոն ձևը արաբների կողմից վերածվելու էր Բայդականի, որից էլ անմիջականորեն անցում էր կատարվելու Բայլականի ձևին[8]։

Փայտակարան և Բայլական տեղանունների համարժեքությունը մի փոքր այլ ձևով է փորձում բացատրել Ս. Պետրոսյանը։ Ըստ նրա Փայտակարանը արաբա-պարսկական աղբյուրներում بيلقان—Baylakān կոչված քաղաքի անվան հայկական տարբերակն է։ Հիմք ընդունելով t>l հնչյունափոխությունը (Արտաւէտ=Արդաբիլ, Կատարշղոն=Կաղարշք, Շատգոմ=Շադգոմ և այլն), նա գտնում է, որ Փայտակարան անունը տվել է *Phaylakārān տարբերակը, որը արաբները ph (փ) հնչյունի բացակայության պատճառով արտասանել են *Baylakāran (համմտ. Փայաս, Փարխու, Փասվե տեղանունների արաբական Բայլաս, Բարխու, Բասվա ձևերը), իսկ ավելի ուշ՝ կրճատ Baylakān ձևով[9]։

Սկզբնաղբյուրներում բազմիցս հիշատակվող Բայլական քաղաքը, որի համար առաջարկվել են մի շարք տեղագրություններ, ինչպես ցույց են տալիս պատմական ուսումնասիրությունները ու հնագիտական պեղումները, գտնվել է Օրեն-կալայում[10], հետևաբար վերոհիշյալ հեղինակների կարծիքով Փայտակարանն էլ պետք է տեղադրել Միլի դաշտում՝ Օրեն-կալա քաղաքատեղիում։

Առաջին հայացքից թվում է, թե Փայտակարանի և Բայլականի համարժեքությունն իրողություն է և նոր ապացույցների կարիք չի զգում, սակայն մի շարք ուսումնասիրողներ, հենվելով սկզբնաղբյուրների կցկտուր տեղեկու-

---

8 «Материалы и исследования по археологии СССР», № 67, с. 19.

9 «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 1, էջ 194։

10 Մ. Խորխոռյանի կարծիքով Բելուկան (Բայլական) ավերակ քաղաքատեղին դտնվել է Գարգար (Կարկառ) գետի ձախ կողմում և կոչվել է Բայաթ («Արցախ», Բագու, 1895, էջ 28)։ Հեղինակը ծանոթ է Օրեն-կալային (Էօրան զալա) և այն կոչում է նաև Միլին քաղաք, սակայն անտեղյակ է նրա պատմական անցյալին (էջ 27)։ Ն. Կարաուլովն իր կազմած քարտեզում Բայլականը տեղագրել է Կուր և Երասխ գետերի շրկիցից մի փոքր արևմուտք՝ Երասխի ափին (Н. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXXVIII, Тифлис, 1908, отд. 1; вып. XXIX, 1901, с. 67, пр. 59):

Բայլականի ավերակներն Օրեն-կալա քաղաքատեղիի հետ նույնացնելու ավանդույթն անցած XIX դ. սկզբներին պահպանվել էր Միլի դաշտի բոլվորների հիշողության մեջ։ Ա. Բակիխանովը Բայլականը (=Բիլյագան) կապում էր Օրեն-կալայից 2—3 կմ հեռավորության վրա գտնվող մինարեթների մնացորդների հետ և նշում, որ Բայլականն այդ պատճառով հասարակ ժողովրդի կողմից կոչվում է Միլլեր, այսինքն սյուներ («Гюлистан—Ирам», Баку, 1926, с. 66): Բայլականը Միլի մինարեթների կամ Գյավուր-արխի հետ են կապել Ա. Ումանեցը, Վ. Բեժմենովը, Ն. Տորոպովը, Ն. Խանիկովը, Մ. Գերասիմովը, Ն. Ջայդիցը, Ս. Վայսենհոֆը, Է. Ռեսլերը, Վ. Մինորսկին, Ի. Մեշչանինովը, Ե. Պախոմովը, Ա. Իսաևնը և ուրիշներ (համեմատե՛ս Е. А. Пахомов, Пайтакаран—Байлакан—Орен-кала; А. А. Иессен, Городище Орен-кала («Материалы и исследования по археологии СССР», № 67, с. 15—32, 33—50); А. А. Иессен, Из исторического прошлого Мильско-Карабахской степи («Материалы и исследования по археологии СССР», № 125, М.-Л., 1965, с. 32—35):

բյուններէ վրա, Փայտակարանը տեղադրել են այլ վայրերում։ Այսպես, Ղ. Ինճիճյանը գտնում էր, որ Փայտակարան քաղաքը դտնվել է Աղվանքի և Կասպից ծովի կողմերում[11]։ Ավելի որոշակի է Ղ. Ալիշանի տեղադրությունը։ Ելնելով «Մղոնաչափքի» տեղեկություններից, նա փորձում է Փայտակարանը տեղադրել Կասպից ծովից և Վարդանակերտից հավասար հեռավորության վրա, ներկայիս Սալիանի մերձակայքում, որտեղ հին քաղաքի ավերակներ կան[12]։ Մ. Զալալյանցը, դժվար է ասել, թե ինչի հիման վրա, Փայտակարանը տեղադրել է Լենքորան քաղաքի տեղում[13]։ Մ. Բարխուդարյանը հետևում է Ղ. Ալիշանին և Փայտակարանը տեղադրում Սալիանի տեղում[14]։ Դեռևս 1957 թ. Ա. Իեսսենը կասկած էր հայտնել Փայտակարանը Բալլականի հետ նույնացնելու ու Օրեն-կալայում տեղադրվելու մասին և փորձել էր խնդրո առարկա քաղաքը տեղադրել Ժդանովի շրջանի ներկայիս Քաղաքենդ գյուղի տեղում[15]։ 1959 թ. լույս տեսած «Օրեն-կալա քաղաքատեղին» հոդվածում նա ավելի որոշակիացրել է իր տեսակետը, նշելով, որ Օրեն-կալայում III—V դդ. հնագիտական նյութ չի հայտնաբերվել և նախնական դիտարկումներով Փայտակարանը պետք է գտնվեր Օրեն-կալայից 8 կմ հարավ-արևելք, ներկայիս Քաղաքենդի տեղում, որտեղ հայտնաբերվել են I—V (կամ VI) դդ. իրեր։ Սակայն նույն ժողովածուում, որտեղ լույս էր ընծայվել նրա վերոհիշյալ հոդվածը, Ա. Իեսսենը, անդրադառնալով Ե. Պախոմովի կողմից Փայտակարանը Բալլականի հետ նույնացվելուն, գրել է, որ այն նշանակալից հավանականություն ձեռք կբերի Օրեն-կալայում III—V դդ. շերտեր հայտնաբերելու դեպքում[16]։ Փայտակարանի տեղադրությանն Ա. Իեսսենն անդրադարձել է մեկ անգամ ևս՝ Օրեն-կալայի 1956—1960 թթ. պեղումներից հետո։ Բազմամյա պեղումներն այդպես էլ Օրեն-կալայում IV դ. կուլտուրական շերտ չհայտնաբերեցին՝ ամենաուշագիր և մշտական զննության պայմաններում։ Ողջ քվագրվող նյութը վերաբերում էր VI դ. ոչ վաղ ընկած ժամանակահատվածին, ուստի Ա. Իեսսենը գտնում էր, որ Բալլականն իրոք պետք է կառուցված լինի պարսից Կավատ I արքայի (488—531) օրոք և բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Փայտակարանը գտնվել է Քաղաքենդի քաղաքատեղիում[17]։ Ա. Իեսսենի այս տեղադրությունն ընդունելի է համարել Կ. Տրեվերը, որի կարծիքով հնագիտական պեղումները հաստատեցին գրավոր աղբյուրների այն վկայությունը, որ Բալլականը հիմնադրվել է պարսից Կավատ I արքայի կողմից՝ V դ. վերջին[18]։ Ք. Հակոբյանի կարծիքով Փայտակարանը պետք է տեղադրել Կասպից ծովից արևմուտք՝ Կուր և Երասխ գետերի

---

11 Ղ. Ինճիճեան, Տոպրագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 326։

12 Ղ. Ալիշան, Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, § 188, էջ 92։

13 Մ. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Բ, Թիֆլիս, 1858, էջ 266։

14 Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք (Մինչեւ Դազստան), Թիֆլիս, 1893, էջ 75, 104։

15 А. А. Иессен, Новые данные по работам оренкалинской экспедиции («Материалы по истории Азербайджана», т. II, Баку, 1957, с. 27—28).

16 «Материалы и исследования по археологии СССР», № 67, с. 47, 11.

17 «Материалы и исследования по археологии СССР», № 125, с. 32—34.

18 К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании (IV в. до н. э.—VII в. н. э.), М.—Л., 1959, с. 265—266.

գետաբերանների շրջանում[19], Փայտակարան քաղաքի ամեն մի տեղադրությունն երասխից հյուսիս՝ Օրեն-կալայում, կամ որևէ այլ վայրում, հիմք ընդունելով «Աշխարհացոյցի» տեղեկությունները, Բ. Ուլուբաբյանն անընդունելի է համարում[20]։

Հարցի պատմության քննությունից դժվար չէ համոզվել, որ Փայտակարան քաղաքի տեղադրությունն այսօր նույնքան անորոշ է, որքան XIX դ. սկզբներին։ Նրա ճիշտ տեղորոշումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն պատմա-աշխարհագրական մի շարք կնճռոտ հարցեր մեկնաբանելու, այլև IV—V դդ. քաղաքական պատմությունը ուսումնասիրելու համար։

Այժմ տեսնենք, թե ինչ են հաղորդում սկզբնաղբյուրները Փայտակարան քաղաքի մասին և փորձենք դրանց հիման վրա որոշել նրա տեղադրությունը։

Փայտակարան քաղաքի ամենահին հիշատակությունը պահպանվել է Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոցի» մեջ։ Անդրադառնալով քրիստոնեության ծավալմանն ու տարածմանը, նա գրում է. «Եւ այսպէս ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն. ի Սատաղացւոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքէցց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց. և յամդացւոց քաղաքէն մինչև առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորւոց առ Նոր Շիրական երկրաւն, և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն Մարաց, մինչև առ տամբն Մահքր-Տան իշխանին, մինչև յԱտրպատական ձգտէր տարածանէր զաւետարանութիւնն իւր»[21]։ Չնայած հիշատակության անորոշությանը, պարզ երևում է, որ Փայտակարանը գտնվել է Մեծ Հայքի թագավորության ծայր արևելքում և եղել է արքունի քաղաք։ Թե ընդունենք, որ «մինչև» նախդիրը վերաբերում է ոչ միայն Կասպքին, այլև Փայտակարանին, ապա կարելի է ենթադրել, որ վերջինս գտնվել է Կասպից աշխարհում, հանգամանք, որը հաստատվում է մյուս սկզբնաղբյուրներով։

Փայտակարան քաղաքի՝ հայոց թագավորության հեռավոր ծայրամասում գտնվելու մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Ջենոբ Գլակը։ Գրիգոր Լուսավորիչը, մկրտելով Կուառս ավանի բնակիչներին, փորձում է քրիստոնեացնել նաև քրմերին և նրանց զավակներին, սակայն «...նոքա ոչ առնուին յանձն, այլ ասեն ցիշխանսն. ղայս ի միտ առէք, որ թէ ապրիմք՝ ծխախարէն հատուցանեմք ձեզ, և թէ մեռանիմք, աստուածքն հատուցանեն զվրէժ մեր։ Եւ լուեալ զայս իշխանն Անկեղ տանն, ետ հրաման գերծել զգէս նոցա և խաղացուցանել զնոսա ի Փայտակարան քաղաք ի տուն բանտին արս Նէրջ»[22]։

---

19 Բ. Ա. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր). Երևան, 1968, էջ 252։

20 Ր. Ուլուբարյան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 177—178)։

21 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոցն», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ս. Կանայեանց, Տփղիս, 1909, էջ 439—440։ Ագաթանգեղոսի ձեռագրերից մեկում քաղաքի անունը հանդիպում է Փայտարական ախալ գրությամբ (այս և հետագա բնագրային ընդգծումները մերն են—Բ. Հ.)։

22 Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատութեամբ և առաջաբանով պատմական գիտությունների թեկնածու Ա. Ա. Բրուտյանի. Երևան, 1941, էջ 107։

Փայտակարանը, ինչպես հստակորեն երևում է այս երկու վկայություններից, Մեծ Հայքի քաղաքական ծայր արևելքում եղել է կարևոր հենակետ և արքունի բանա-

IV դ. 10—30-ական թվականներին Փայտակարան քաղաքը լայնորեն ներառնվում է քաղաքական իրադարձությունների ոլորտը։ Դեռևս Տրդատ III-ի օրոք, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց շատ չանցած, Փայտակարան քաղաքի վերակացուները հայոց թագավորության հյուսիս-արևելյան կողմերի գործակալների հետ մեկտեղ դիմում են հայոց թագավորին, խնդրելով քրիստոնեական վարդապետությունը քարոզելու և տարածելու համար Հայոց արևելից կողմերն ուղարկել Գրիգոր Լուսավորչի տոհմից որևէ մեկին. «...գործակալք կողմանցն արևելից հիւսիսոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան՝ ասեն ցարքայ. «Եթէ կամիցիս ուղղութեամբ վարել կողմանցն այնոցիկ ըստ այսմ հաւատոյ՝ առաքեա նոցա եպիսկոպոս ի զաւակէ սրբոյն Գրիգորի, զի յոյժ փափագելով խնդրեն. և գիտեմք հաւաստի, թէ ի հոչակել անուանէն Գրիգորի՝ ակնածեսցեն և ի նորին զաւակէ, առնել զամենայն ըստ հրամանի»[23]։ Մեծ կարևորություն տալով Մեծ Հայքի հյուսիս-արևելյան երկրամասերին, որպես կովկասյան լեռնականների հետ հարաբերությունների պաշտպանվելու առաջին բնագծի, Տրդատ III-ը արևելք է ուղարկում Գրիգոր Լուսավորչի թոռ, Վրթանեսի ավագ որդի, 15-ամյա եպիսկոպոս Գրիգորիսին՝ Սանատրուկ Արշակունու հետ միասին[24], որոնց առաքելության հետ հայոց արքունիքը որոշակի քաղաքական խնդիրներ էր հետապնդում։ Պատանի Գրիգորիսը, անշուշտ, նշանակվել էր ոչ միայն Հայոց հյուսիս-արևելյան կողմերի եպիսկոպոս, այլև ստացել Վրաց և Աղվանից (=Մազքթաց) աշխարհների կաթողիկոսությունը[25]։ Սակայն Կուրի ձախափնյակում նրա գործունեությունը Տրդատի մահից հետո ավարտվեց անհաջողությամբ, որը պայմանավորված էր նաև Սանատրուկ Արշակունու դավաճանական վարքագծով։ Պատանի կաթողիկոսը մազքթաց Սանեսան քագավորի հրամանով սպանվեց Կասպից ծովի ափին գտնվող Վատնյան դաշտում, իսկ Սանատրուկը, օգտվելով ստեղծված քաղաքական անկայուն վիճակից, տիրացավ իր կառավարչությանը հանձնված Փայտակարան քաղաքին և իրեն քագավոր հռչակեց, նպատակ ունենալով տիրել ողջ Մեծ Հայքին. «Իսկ Սանատրկոյ քագ կապեալ ինքեան՝ ունի զքաղաքն Փայտակարան. զօրութեամբ օտար ազգաց խորհէր տիրել բոլորումս Հայոց»[26], Տրդատ III-ին հաջորդած խոսրով Կոդակը կազմակերպեց պատժիչ արշավանք դեպի Փայտակարան, որին մասնակցում էին նաև հռոմեական զորքերը՝ Անտիոքոս

---

23 «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 259։ Ս. Գեորգյանը Պատմահոր այս վկայությունը համարում է ապացույց՝ Փայտակարան քաղաքի Ս՛րոքսի ձախափնյակում գտնվելու վերաբերյալ, քանի որ Մ. Խորենացին Փայտակարան քաղաքն վերակացուներին կոչում է հյուսիս-արևելյան կողմերի գործակալներ («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 1, էջ 194)։ Անտիկ աշխարհի աշխարհագիտների պատկերացմամբ Հայաստանի արևելքը իրականի հետ համեմատած դեպի հյուսիս էր գտնվում և Փայտակարանը Երասխի աջափնյակում ևս հյուսիս-արևելք էր ընկած։

24 Մովսես Խորենացի, էջ 259։

25 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 10, 13։

26 Մովսես Խորենացի, էջ 260։

զորավարի գլխավորությամբ։ Պատմահայրը, անդրադառնալով դրան, հայտնում է հետևյալը. «[Անտիոքոս զորավարը]... առեալ ընդ իւր զմիհրան և զԲագարատ, զօրօք իւրեանց, և միահամուռ ամենայն յունականօքն խաղալ ի վերայ Սանատրկոյ։ Իսկ նորա պարսկական զօրօք լցեալ զքաղաքն Փայտակարան՝ ինքն առ արքայն Շապուհ փութացեալ անկանի, հանդերձ Աղուանից նախարարօք։ Զոր տեսեալ Անտիոքայ, եթէ ոչ ի հնազանդութիւն խաղաղութեան նուաճեցան՝ հրաման տայ առիւ զիշխանութիւն պատակտելոցն նուազեցուցանել. և իւր ժողովեալ զհարկն՝ առ կայսր գնայ»[27]։ Ինչպես տեսնում ենք, Փայտակարանը հիշյալ իրադարձությունների ժամանակ հանդես է գալիս որպես հայոց թագավորության հեռավոր արևելքում կարևոր կենտրոն, կառավարվում էր մի քանի արքունի վերակացուների կողմից և մեծ դեր էր կատարում երկրի հյուսիս-արևելյան սահմանապահի պաշտպանության գործում։ Մաղքթաց Սանեսան թագավորի ավերիչ արշավանքի ժամանակ, որ տեղի ունեցավ հավանաբար 331/332 թ.[28], Փայտակարանը չի հիշատակվում։

Վերոհիշյալ անցքերին անդրադարձել են նաև Մ. Կաղանկատվացին և Կ. Գանձակեցին, սակայն նրանք տվյալներն ամբողջությամբ քաղել են կա՛մ Պատմահորից, կա՛մ Փավստոս Բուզանդից, դրանք ենթարկելով անճանաչելիության աստիճանի փոփոխություններ։ Ավելորդ բյուրմամացությունների տեղիք չտալու համար անհրաժեշտ ենք գտնում մեջ բերելու նաև նրանց հաղորդումները։ Մ. Կաղանկատվացին գրում է. «Իսկ ի վախճանին Տրդատայ՝ Սանատրուկ որդի թագաւորեաց Աղուանից ի Փայտակարան քաղաքի և եկաց դիմակաց Հայոց։ Եւ խոստովալ որդւոյ Տրդատայ ածեալ զԱնտիոքոս յունական զօրօքն և զԲագարատ արևմտեալ դնդիւն, և զմիհրան վրացդրեհաշխ, այսօրիւք ամենեքումբք միաբանեալ խաղալ ի վերայ Աղուանից։ Աճապարէ Սանատրուկ զօրօքն Աղուանից և գնայ առ Շապուհ արքայ Պարսից՝ թողլով զօր բաղում ի քաղաքին Փայտակարան։ Եւ Անտիոքոս առեալ զաւար բազում և զհարկն արքունի՝ դառնայ առ կայսրն։ Եւ գտանել ժամ պարապ Սանատրկայ՝ հրամանաւ Շապհոյ ժողովէ զզօրս Աղուանից Թուով իբրև երեսուն հազար և արշավէ ի միջոցս Հայոց։ Եւ զօրագլուխ ոմն անարի հսկայ ի տիգաւորացն վառեալ Թաղիւ կաճեայ՝ շահատակէր ի մէջ պատերազմին առ Օշական առաւարաւ. եթէ գինուք հարկանէին՝ ոչ գործէր, այլ ձախո առնոյր։ Յայնժամ քաջն Վահան Ամատունի՝ նայեցեալ ի կաթուղիկէն, ասաց՝ օգնեա ինձ և ուղղեալ զնիզակն՝ ընդ գաւակ ձիոյն յերկիր կործանէր զտէրն վիրաւն»[29]։ Հակադիր համեմատությունն անգամ ցույց է տալիս, որ Մ. Կաղանկատվացին, տուրք տալով Արցախի տիրակալների տեղայնական ձգտումներին և ուշ շրջանի վարչական հասկացություններին, Պատմահոր տեղեկություններն իր հայեցողությամբ «սրբագրել» է։ Այսպես, ամբողջությամբ Մ. Կաղանկատվացու ստեղծագործությունն է այն իրողությունը, որ Սանատրուկն իշխել է Աղվանքում, Փայտակարան քաղաքում, և «եկաց դիմակաց

---

27 Նույն տեղում, էջ 262—263։

28 Մանրամասն տե՛ս Բաբկեն Հարությունյան, Մաղքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան (2002 Գև «Էջմիածին» հասարակական գիտություններ», 1981, № 6, էջ 65—78)։

29 «Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 37—38։

Հայոց»։ Փայտակարանը երբեք Աղվանքի մաս չի կազմել, իսկ Սանատրուկն էլ ոչ միայն հայոց թագավորի դեմ դուրս եկավ, այլև փորձում էր տիրել հայոց թագավորությանը։ Մ. Խորենացին Անտիոքոսի հայ-հռոմեական բանակների նպատակակետը համարում է Փայտակարան քաղաքը, սակայն Մ. Կաղանկատվացին իր հայեցողությամբ այն դարձրել է Աղվանք («ի վերայ Աղուանից»), և Սանատրուկին է վերագրում հյուսիսականների արշավանքը։ Եվ այդ այն դեպքում, երբ Պատմահայրը պարզորոշ գրում է, որ կովկասյան լեռնականները հարձակվեցին Սանատրուկի հորդորանքով։ Եվ, վերջապես, կարծում ենք, որ չնայած Պատմահոր և Մ. Կաղանկատվացու երկերում Սանեսան անվան բացակայությանը, նրա անձը հիշվում է վերջիններիս կողմից՝ հանձին նիզակավորների զորագլուխ հսկայի, որին սպանեց քաջ Վահան Ամատունին։

Պատմահոր տեղեկություններր նոր «իմաստավորում» են ստացել Կ. Գանձակեցու երկում։ Նա գրում է. «Բայց Սանատրուկ, որ կողմանցն Աղուանից վերակացու կարգեալ էր ի Տրդատայ, իբրև լուաւ զմահ նորա, սպանանէ զսուրբն Գրիգորիս, զորդին Վրթանիսի, զեղբայր Յուսկանն՝ կապեալ զնա զագուոյ ամեհի ձիոյ ի դաշտին Վաղնեան, և ինքն երթայ առ Շապուհ արքա պարսից, և ընդունի զձև թագաւորութեան, հաւատուածէ դաշխարհն ի Խոսրովայ»[30]։ Ազդվելով ուշ շրջանի վարչական պատկերացումներից, նա Սանատրուկին համարում է Աղուանից կողմերի վերակացու, որը, իբրեն թագավոր հռչակելով, հաւատուածվել է Խոսրովի թագավորությունից։

Փ. Բուզանդի հաղորդման համաձայն հայ-պարսկական պատերազմների ժամանակ, երբ հայ ժողովուրդը կենաց և մահու պայքարի էր ելել պարսից զավթիչների դեմ, Արշակ II-ի դեմ ապստամբեց Կաղբից աշխարհը[31], որի կազմում էր գտնվում Փայտակարան քաղաքը։ Սակայն, շատ չանցած՝ Պապ թագավորի դահակալության շրջանում, հայկական բանակը Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ ճնշեց անջատողական շարժումը Կասպքում և երկրամասի կառավարումը հանձնեց արքունի գործակալներին ու վերակացուներին։ Փ. Բուզանդի վկայությամբ, «Ապա խնդրէր զվրէժն մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից և ի Փայտակարան քաղաքէ, փոխանակ դի և նորա նշկահեցին առեցին արքային Հայոց։ Հասեալ, զրազումս ի նոցանէ գլխով պատուհաս առնէր սպարապետն զօրավարն Մուշեղ. զրազումս ի նոցանէ դներէր, և զմնացորդսն ի հարկի կացուցանէր. և առնոյր պանդանդս ի նոցանէն, և անդ ոստիկանս վերակացուս թողոյր»[32]։

387 թ. Մեծ Հայքի թագավորությունը բաժանվեց Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև։ Դատելով «Դահնամակի» տվյալներից, Կասպքը շարունակում էր գտնվել արևելահայկական թագավորության մեջ, չնայած երկրի այլ մասերում Մեծ Հայքից խլվել էին մի շարք գավառներ։ 388 թ. Խոսրով IV-ի ջանքերով տեղի ունեցավ Մեծ Հայքի արևելյան և արևմտյան հատվածների միավորումը։ Ելնելով սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորություններից, կարելի է ենթադրել, որ Կասպքը շարունակում էր գտնվել հայոց թա-

30 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 16—17։

31 Փավստոս Բուզանդ, էջ 160։

32 Նույն տեղում, էջ 210—211։

դավորության մեջ[33]։ 408 թ. Հռոմը և Պարսկաստանը վերականգնեցին 387 թ. քաղաքական կացությունը, իսկ 428 թ. պարսից արքունիքի կողմից արևելահայկական թագավորության վերացումից հետո, երբ երկիրը վերածվեց մարզպանության, Կասպքը անջատվեց Հայքից և միացվեց Ատրպատականին։ Պարսիկները քաջ գիտակցում էին Փայտակարանի ռազմաստրատեգիական նշանակությունը և շուտով քաղաքը վերածվեց կարևոր ռազմական հենակետի՝ Սասանյան տերության հյուսիս-արևմտյան սահմանագլխին։ Ամրանալով Փայտակարանում, պարսիկները իրենց ռազմական ներկայությունն ապահովեցին այսրկովկասյան բոլոր երկրներում։ Հայտնի է, որ 450—451 թթ. ապստամբության ժամանակ պարսից դինված ուժերը, հենակետ ունենալով Փայտակարանը, մարտական գործողություններ էին ձեռնարկում հայերի և աղվանների դեմ։ Այդ մասին Ղազար Փարպեցին գրում է. «Հասեալ մերձ ի սահմանս Հայոց՝ մտանէր (Միհրներսեհը—Ր. Հ.) ի քաղաքն Փայտակարան, և զզօրսն ամենայն սփռէր տարածանէր շուրջ զքաղաքաւն առ ի զգուշութիւն պատրաստութեան իւրոյ չարահնար խորհրդոցն։ Եւ յամուր որջն մտեալ ինն վիշապն չարաբոյն, և բազում կնճռաւորութեամբ զինքն քաքուցանելով յաներկիւղութիւն, ննեաւորացն աճագին ձայնիւ սաստէր. և ի մեծավուրսն իբրև զօձ սողալով փչէր։ Սա էր իշխան և հրամանատար ամենայն տէրութեանն Պարսից, որում անունն էր Միհրներսեհ, և չէր որ ամենևին որ իշխէր ըստ ձեռն նորա լևանել»[34]։ Այս նույն դեպքերի կապակցությամբ Ղ. Փարպեցին գրում է, որ Փայտակարանից պարսիկները հարձակվել էին Աղվանքի, այնուհետև Հայաստանի վրա. «...Միհրներսեհ Արևաց հազարապետ եկեալ ի Փայտակարան քաղաք՝ գունդ կազմէ և ընդ Աղուանս առնակէ ի Հայս. զոր և Աղուանից զատքն, որ ուխտակիցք էին Հայոց՝ առեալ փութացուցանէին հասանել առ ինքեանս և անդէն յԱղուանս ի դիմի հարկանել նոցա պատերազմաւ»[35]։ Ղ. Փարպեցու այս տեղեկության մեջ արժեքավոր է այն հանգամանքը, որ Փայտակարանը V դ. կեսերին վարչականորեն չէր մտնում ո՛չ Աղվանքի, և ոչ էլ Հայկական մարզպանության մեջ. իրողություն, որ կարևոր նշանակություն ունի քաղաքի տեղադրման համար։

Փայտակարան աշխարհի և Փայտակարան քաղաքի վարչական կացության վերաբերյալ տեղեկություններ է պարունակում Սեբեոսի աշխատությունը։ Անդրադառնալով Սյունիքը 571 թ. Ատրպատականի շահրմարության մեջ մտցնելու խնդրին, նա գրում է. «Յայնժամ յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դրնայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի, զի մի ևս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա։ Եւ կա-

---

33 Ր. Հ. Հարությունյան, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 2, էջ 57—74)։

34 «Եվ զի չէ Վան Վարդանայ եւ Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բազդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 88։ Փայտակարան քաղաքի մեկ հիշատակություն ևս տե՛ս էջ 95։

35 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 63։

տարէր հրամանն»[36]։ Ինչպես տեսնում ենք, Փայտակարան քաղաքը, ուստի և Փայտակարան աշխարհը, մտնում էր Ատրպատականի մեջ և վարչականորեն ոչ մի կապ չուներ Աղվանքի հետ։ Ինչ վերաբերում է Սյունյաց Վահան իշխանի՝ Հայկական մարզպանությունից իր տիրույթները հանելու և Ատրպատականի մեջ մտցնելու քաղաքականությանը, ապա այն պարսից արքունիքի կողմից Սյունյաց իշխանությանը սիրաշահելու, Սյունյաց իշխանների դիրքը՝ Այրարովկատում ուժեղացնելու միջոցով պարսկական տիրապետությունն ամրապնդելու քաղաքական ծրագրի արտահայտություններից էր։ Այլ խոսքով, այն ոչ այնքան Վահան իշխանի նախաձեռնությունն էր, ինչպես սխալմամբ կարելի է եզրակացնել այս տեղեկությունից, այլ պարսից արքունիքի՝ հետևվող նպատակներ հետապնդող նպատակասլաց քաղաքականության կիրառումներից մեկը։ Խաղալով Սյունյաց ու Մամիկոնյան իշխանների քաղաքական հակամարտության վրա և խրախուսելով առաջինների տիրատենչ ձգտումները, պարսից արքունիքը կարողացավ Սյունյաց իշխանությանը ժամանակավորապես կտրել համահայկական դիմագրավական ճակատից և վերածել պարսից քաղաքականության գործիքի։ Իսկ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումն ու ավատատիրական հարաբերությունների խորացումը լոկ նպաստում էին դրան։ Ինչ վերաբերում է ազի մի ևս կոչնցի անուն Հայոց ի վերայ նոցաւ արտահայտությանը, ապա այն ոչ քե վկայում է սյունեցիների ոչ լրիվ հայանալու և հարավային աղվանների ցեղախմբերին մերձավոր լինելու մասին, ինչպես ձգտում է հասկանալ Ե. Պախոմովը[37], այլ Սյունիքը՝ որպես ուժեղ իշխանություն, Հայկական մարզպանությունից հանելու և առանձին վարչական շրջան ստեղծելու ձգտման մասին։

Նկարագրելով Հերակլ կայսեր 623 թ. արշավանքը, Սեբեոսը մեկ անգամ ևս հիշատակում է Փայտակարանի մասին, սակայն նրա շարադրանքից դժվար է կռահել, թե խոսքը Փայտակարան աշխարհի, թե՞ Փայտակարան քաղաքի մասին է։ Նա գրում է. «Իսկ զաւրն Պարսից փութանակի հասանէին ի Մրծուին։ Ազդ լինի Երակլի կայսեր, եթէ եկն խոռեամ ի Մրծուին. առնու զզաւրս իւր և գերութիւն, և դառնայ առ ամուր աշխարհսն Մարաց. գայ հասանէ ի Փայտակարան։ Ազդ եղև խոսրովու, եթէ դարձաւ Երակլոս և եհաս ի Փայտակարան, և կամի ընդ Աղուանս անցանել ի վիրս»[38]։ Նույն դեպքերի մասին հաղորդում է նաև Ասողիկը, որն ամենայն հավանականությամբ օգտվել է Սեբեոսից։ Դժվար է ասել, նա ձեռքի տակ ունեցե՞լ է այլ աղբյուրներ, թե՞ ոչ, սակայն Փայտակարանը նրա մոտ հանդես է գալիս որպես քաղաք. «Յաւարի առեալ (Հերակլ—Բ. Հ.) զաշխարհն Պարսից՝ դառնալ ընդ Մարս. գայ հասանէ ի Փայտակարան, յաշխարհն Կասպից, բանակի ի Տիգրանակերտ աւանին»[39]։ Հավանաբար, իրավացի է Ե. Պախոմովը, գտնելով, որ Փայտակարանը քաղաք համարելը և այն Կասպից երկրում դնելն ավելի շուտ Ասողիկի ան-

---

36 «Ս ե բ ե ո ս ի եպիսկոպոսի Պատմութիւն», բազդատութեամբ ձեռագրաց, հանգերձ ա ռ ա ջ ա բ ա ն ի և ծ ա ն օ թ ո ւ թ ե ա մ բ ք ի ձեռն Մ ա ր ի ա ն ի Մ ա ր ի ա ն ց, Երևան, 1939, էջ 27։

37 «Материалы и исследования по археологии СССР», № 67, с. 17.

38 Ս ե բ ե ո ս, էջ 93։

39 «Ս ա մ փ ո ն ո ի Տ ա ր ո ն ե ց ւ ո յ Ա ս ո ղ ի կ Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 115։

հիմն ենթադրության արդյունքն է[40]։ Սեբեոսի վկայությունը հետաքրքիր է նաև նրանով, որ Փայտակարանը վարչականորեն չի մտել Աղվանքի մարզպանության մեջ, հանգամանք, որը բացառում է Փայտակարանի նույնացումը Բայլականի հետ[41]։

Ասողիկի մեկ այլ հաղորդման համաձայն VII դ. սկզբին Աղուանից կաթողիկոսը, ի թիվս այլ եպիսկոպոսների, քաղաքների ավագների և իշխանների, որոնք «Հունաց կողմերից» եկել էին ծառայելու պարսից թագավորին, գտնվել է Փայտակարանում՝ արքունի դռանը. «Իսկ որք ընդ Քաղկեդոնին Իվերիոյ և Աղուանից կաթողիկոսն, որ էր ի Փայտակարան, ի դրան արքունի և այլք ոմանք եպիսկոպոսունք և երիցունք քաղաքաց, որ ի Յունաց կողմանէ, և իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն թագաւորին Պարսից, որոց զչափարն իսկ հրամայեաց տալ»[42]։ Ժամանելով կրոնադավանաբանական և քաղաքական խնդիրների քննության մեջ, նշենք, որ այս դեպքում ևս խոսքը Փայտակարան քաղաքի մասին է, սակայն սխալվում է Ե. Պախոմովը, երբ գրում է, թե VII դ. սկզբին Փայտակարանում էր արքունիքը և քաղկեդոնականության հարած աղվանից կաթողիկոսը գտնվում էր այնտեղ[43]։ Անգամ այս մեջբերման փորձիշատ ուսումնասիրությունը բացառում է այդ տեսակետը։ Նախ, պարսից թագավորին ծառայելու եկած իշխաններն ու քաղաքների երեցները, ինչպես նաև եպիսկոպոսները, բնավ կարիք չունեին գալու մի քաղաք, որն իրր գտնվում էր աղվանից թագավորի իշխանության ներքո։ Երկրորդ, Փայտակարանի արքունիքի ներքո պիտի հասկանալ Պարսից փոխարքայությունը, որի վրա, հավանաբար, դրված էր այսրկովկասյան երկրների հետ քաղաքական հարաբերություններ հաստատելու և նրանց պարսկական իշխանության տակ պահելու խնդիրը։ Համենայն դեպս, այս տեղեկությունն ամբողջությամբ բացառում է Փայտակարանն Աղվանքի մեջ գտնվելու վարկածը։

Փայտակարան քաղաքը հանդիպում է Միխայել Ասորու «Ժամանակագրության» մեջ՝ կապված խազարական խաքանի Այսրկովկաս կատարած արշավանքի հետ, որը տեղի է ունեցել 626—628 թթ. ընթացքում։ Պատմիչը խաքանին է վերագրում «...ես նույնպես պատճառներ ունեմ Փայտակարան գնալու, որպեսզի կործանեմ այդ քաղաքը»[44] խոսքերը, որոնք, մեր կարծիքով, անուղղակի արձագանքն են Փայտակարանի՝ անմիջապես պարսկական տիրույթների մեջ գտնվելու։ Այլ խոսքով՝ Հերակլ կայսեր դաշնակիցը, որը պարտավորվել էր մարտնչել ընդհանուր թշնամու՝ Սասանյան Պարսկաստանի դեմ, իր պարտքն էր համարում հարված հասցնել առաջին հերթին պարսից զորքերի կարևոր ռազմաքաղաքական հենակետ Փայտակարան քաղաքին։

Փայտակարանի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել «Աշխարհացոյցում» և «Մղոնաչափքում»։ Նախքան «Աշխարհացոյցի»

---

40 «Материалы и исследования по археологии СССР», № 67, с. 18.

41 Կ. Տրեվերը միանգամայն հիմնազուրկ, փորձում է արդարել Սեբեոսին, որ իրր վերջինս սխալվել է Փայտակարանը Առրպատականի մեջ ցույց տալով, քանի որ այն Աղվանքի մեջ էր (К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 233)։

42 Ասողիկ, էջ 96։

43 «Материалы и исследования по археологии СССР», № 67, с. 17.

44 „Journal Asiatique", 4-e série, t. XIII, Paris, 1849, p. 317.

տեղեկություններին անցնելը, որոնք, մեր կարծիքով, Փայտակարան քաղաքի տեղադրության բանալին են, մեջ բերենք «Մղոնաչափքի» տվյալները. «Ի Նախճևանէ յԱրտեւատ Մ. անտի ի Վարդանակերտ Հ. անտի ի Փայտակարան Կ. անտի ի ծովն Կասպից ԿԱ[45]։ Ինչպես տեսնում ենք, «Մղոնաչափքը» Փայտակարանը տեղադրում է մի վայրում, որը հավասարապես է հեռացված Վարդանակերտից և Կասպից ծովից՝ 60 մղոն։ Թեև, իրոք, Վարդանակերտը դտնվում էր ներկայիս Ալդան կոչվող վայրում[46], որը միանգամայն հավանական է, եթե ոչ ճիշտ, ապա, որպես նախնական եզրակացություն կարելի է ընդունել, որ Փայտակարան քաղաքը գտնվել է Կասպից ծովի և Վարդանակերտի միջև, բնականաբար, Կուրից և Երասխից հարավ, որը միանգամայն բացառում է Փայտակարանի նույնացումը Բայլականի հետ։

Այժմ տեսնենք, թե ինչ նոր նյութեր է տալիս «Աշխարհացոյցը»։ Մեծ Հայքի իրար սահմանակից Փայտակարան և Ուտիք աշխարհների մասին այնտեղ ասված է. «Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ. գաւառս ունի երկոտասան, զոր այժմ Աւորպատական ունի. Հրաքոտպերոժ, Վարդանակերտ, Եւթնփորակեան բագինք, Ռոտիքարաղ, Բաղանոտու, Առոսպիժան, Հանի, Աքլի, Բագաւան, Սպանդարանպերոժ, Որմզդպերոժ, Ալեւան։ Լինի ի նմա բամբակ անրաւ, և գարի ինքնաբոյս[47]։ «Ուտի առ մտից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ և Կուր գետոյ. ունի գաւառս զոր Աղուանք ունին՝ եւթն. Արանոտու, Տոի, Ռոտպաշեան, Աղուէ, Տուէքսատակ, Գարդման, Շիկաշէն, Ուտի առանձնակ՝ յորում Պարտաւ քաղաք։ Լինի ի նմա ձիթենի, վարընկենի և ի հաւուց կատակ[48]։ Թեև մենք ամենադուլգն իսկ չափով «Աշխարհացոյցին» վստահում ենք որպես սկզբնաղբյուրի, ապա, ելնելով բերված տեղեկություններից, պետք է ընդունենք, որ Ուտիքը տարածվել է մինչև Երասխ գետը, ուստի և վերջինս պետք է սահման հանդիսանար Ուտիքի և Փայտակարանի միջև, քանի որ այդ քաղաքը գտնվում էր Ուտիքից արևելք։ Թե սկզբնաղբյուրների նախորդ տեղեկությունն ըն անուղղակիորեն էին խոսում դրա օգտին,

---

[45] Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 350, տե՛ս նաև Հ. Մանանդյան, նշվ. աշխ., հ. Բ, Բ մասի նյութեր, էջ 347։

[46] „Vartān (called by the Arabs Warthān) lay on the bank of the Araxes, now ruins of Altan" („Hudūd al-'Ālam", p. 395).

[47] К. П. Патканов, Армянская География VII века, СПб., 1877, с. 19, տե՛ս նաև «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 350, «Աշխարհացոյց Մովսես Խորենացւոյ», Վենետիկ, 1881, էջ 33։ Ակագ. Ս. Տ. Երեմյանի ուսումնասիրությունից հետո սույն հատվածը ստացել է հետևյալ տեսքը. «Մնացասաններորդ [աշխարհ] Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ. գաւառս ունի երկոտասան, զոր այժմ Աւորպատական ունի. Հրաքոտ-պերոժ, Վարդանակերտ, Եւթնփորակեան բագինք, Ռոտ-ի-բաղա [որ է] Բաղան-ռոտ, Առոս-Պիճան, Հանի, Աքլի-Բագաւան, Սպանդարան-պերոժ, Որմիզդ-պերոժ, Ալեւան։ Լինի ի նմա բամբակ անբաւ եւ գարի ինքնաբոյս» (Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 109)։

[48] К. П. Патканов, նշվ. աշխ., էջ 20, տե՛ս նաև՝ «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 350, «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 33։ Ակադ. Ս. Տ. Երեմյանի ուսումնասիրությունից հետո բերված հատվածն ունի հետևյալ տեսքը. «Երկոտասաններորդ [աշխարհ] Ուտիք է, առ մտից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ և Կուր գետոյ. ունի գաւառս զոր [այժմ] Աղուանք ունին, եւթն՝ Առան-ռոտ, Տոի, Ռոտ-Պարսեան, Աղուէ, Տուս Քատակ, Գարդման, Շակաշէն, Ուտի Առանձնակ՝ յորում Պարտաւ քաղաք։ Լինի ի նմա ձիթենի, վարընկենի, եւ յասմիկ, եւ ի հաւուց կատակ» (Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 109)։

ապա «Աշխարհացոյցի» վկայությունը խիստ որոշակի է։ Ուստի դեռևս չդիմելով այլ փաստերի, որոնք ավելի որոշակի են, ստիպված ենք մերժել Փայտակարանը Բայլականի հետ նույնացնելու ամեն մի փորձ։ Միանգամայն իրավացի է Բ. Ուլուբաբյանը, երբ գրում է, որ «Աշխարհացոյցի» մեջ Երասխը հարավային սահման է Ուտիքի, Արցախի և Սյունիքի համար։ Հետևապես, Երասխը միայն կարող էր լինել Փայտակարանի հյուսիսային սահմանը։ Այստեղից էլ՝ սխալ է, երբ Փայտակարան քաղաքը (մարզի կենտրոնը) մինչև այժմ տեղադրվել է Կուրի ու Երասխի միջգետքում, և պատմաբաններից ու հնագետներից շատերն էլ անհիմն կերպով այն նույնացրել են Բայլականի (Օրհեն-կալա) հետ»[49]։ Փայտակարանի գոնե մի հատվածը Փայտակարան քաղաքի հետ Երասխից հյուսիս տեսնելու սխալն ունի բավական հին պատմություն։ Անդրադառնալով Ղևոնդի Պատմության մեջ պահպանված խազարական Թարմաչ զորավարի գնալի Այսրկովկաս կատարած արշավանքի նկարագրությանը, որտեղ ասված է, թե «Զայնու ժամանակաւ դարձեալ ամբոխ յուզէր ի կողմանցն հիւսիսոյ. քանզի մեռաւ արքայն խազրաց որում խաքանն կոչէին Իբրև եհաս մայր նորին, որոյ անուն էր Փարսբիթ՝ հրաման տայր զօրավարին որ Թարմաչ կոչէր, զօր բազում գումարել ի վերայ աշխարհիս Հայոց։ Եւ միաբանեալք ելանէին ընդ աշխարհն Հոնաց և ընդ պահակն Ճորայ ընդ երկիրն Մազքթաց, ասպատակէին յաշխարհն Փայտակարան, անցանէին ընդ գետն Երասխ յերկիրն Պարսից, աւերէին զԱրտաւէտ և զԴանձակն շահաստան և զգաւառն որ Ըթշիբագուան կոչի, և զՍպատար ոմն Փերոզ և զՐմբիզդ Փերոզ»[50], Հ. Հյուբշմանը ենթադրել է, որ Փայտակարանը գնի մի մասով գտնվել է Երասխի հյուսիսակողմում, քանի որ Դանձակ շահաստանից հետո հիշված գավառները մտնում էին Փայտակարանի մեջ[51]։ Թերևս այդ է պատճառը, որ «Աշխարհացոյցի» «Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ» նախադասությունն ակադ. Ս. Երեմյանը թարգմանել է. «...Փայտակարանը, Ուտիքից արևելք, Երասխ գետի վրա»[52], փորձելով «առ Երասխաւը» մեկնաբանել Երասխի աջ ու ձախ ափերին և Փայտակարանի մի մասը տեսնել Երասխից հյուսիս[53]։ Սակայն սույն մեկնաբանությունն անգամ ընդունելու դեպքում (չնայած այն կարծես թե ուղղակիորեն հակասում է «Աշխարհացոյցի» «Ուտի առ մտից կայ Երասխաւ» վկայությանը) Փայտակարան աշխարհի և ոչ մի հատված չի կարող տեղադրվել Կուրի և Երասխի միջգետքում՝ Ջավաթից արևմուտք ընկած հատվածում։ Եթե հաշվի առնենք, որ մինչև Կուրին միախառնվելը Երասխի մի բաղուկն առանձին հունով թափվել է անմիջապես Կասպից ծով, ապա խազարները կարող էին (և ստիպված էին) Փայտակարանով Պարսից աշխարհ գնալիս հատել ոչ միայն Կուրը, այլև Երասխը, սակայն ոչ թե Ջավաթից արևմուտք, այլ արևելք ընկած հատվածում։ Երասխի՝ Կասպից ծով թափվելու մասին վկայում են ոչ միայն անտիկ հեղինակները, այլև «Աշխարհացոյցը», որտեղ Մեծ Հայքի աշխարհների նկարագրության մեջ

---

49 «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 178։

50 «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 101։

51 Հ. Հյուբշմանն, նշվ. աշխ., էջ 102։

52 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 110։

53 «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 178։

Փայտակարանի մասին ասված է. «Մեծասաներորդ աշխարհ՝ Փայտակարան քաղաքով որ առ եզերբն Կասբից, ի մուտս Երասխայ»[54]։ Ա. Սուքրյանն այս նախադասությունը թարգմանել է՝ «Փայտակարան Կասբից ծովի եզերքը՝ Երասխ գետի արևմտակողմը»[55], որը, ինչպես ժամանակին ճիշտ ցույց է տվել Հ. Հյուբշմանը, սխալ է։ Գերմանացի հայագետը միանգամայն տեղին նշել է, որ այստեղ խոսքը Երասխի ծով թափվելու, նրա գետաբերանի մասին է[56]։ Ակադ. Ս. Երեմյանն այս հատվածը ճիշտ է թարգմանել[57], սակայն տեղեկությունը վերագրել է ոչ թե Փայտակարան քաղաքին, այլ՝ աշխարհին։ Հ. Հյուբշմանը հանճարեղորեն կռահել է, որ այս հատվածից ժամանակի ընթացքում դուրս է մնացել Փայտակարան բառը։ Այն նախապես պետք է լիներ «Սեծասաներորդ աշխարհ՝ Փայտակարան [Փայտակարան] քաղաքով, որ առ եզերբն Կասբից, ի մուտս Երասխայ»[58], սակայն արտագրությունների ժամանակ Փայտակարանի կրկնությունը պետք է համարվեր ավելորդ և չգրվեր։ Ա. Սուքրյանը ոչ միայն չի նկատել այդ հանգամանքը, այլև թարգմանության մեջ բաց է թողել քաղաք բառը, միանգամայն աղավաղելով բնագրի բովանդակությունը։ Ավելին, բերված վկայության մեջ «...որ առ եզերբն Կասբից, ի մուտս Երասխայ» արտահայտությունը ոչ թե վերաբերում է Փայտակարան աշխարհին, այլ քաղաքին (գոնե քերականորեն հնարավոր չէ այլ կերպ հասկանալ այն)։ Նույնիսկ բովանդակության տեսակետից անդամ Փայտակարան աշխարհը Կասպից ծովի ափին ցույց տալուց հետո բնավ կարիք չէր զգացվի որոշակիացնելու այն Երասխի գետաբերանով։ Մեր կարծիքով, «Աշխարհացոյցի» հեղինակը Փայտակարան աշխարհը տեղորոշել է Փայտակարան քաղաքի միջոցով, վերջինս տեղադրելով Կասպից ծովի ափին՝ Երասխի գետաբերանում։ Եվ իրոք, այդ կիսաանապատային շրջանում մեծ քաղաքներ և ընդհանրապես բնակավայրեր կարող էին հանդես գալ միայն գետերի ափին, և Երասխի բազուկը Փայտակարանի անուղղակի զարկերակն էր։ Արդյո՞ք հենց այդ հանգամանքի հետ չի կապված Փայտակարանի հետագա ճակատագրի խնդիրը։ Չէ որ որոշ ժամանակ անց Երասխն ամբողջությամբ սկսեց թափվել Կուրի մեջ, վերածվելով նրա վտակի, իսկ Երասխի վրա գտնվող քաղաքն էլ, շատանալով նրա ջրերը, պետք է դադարեր գոյություն ունենալուց[59]։ Թե երբ կարող էր այդ կատարվել, չգիտենք, սակայն պարզ է, որ Երասխն աստիճանաբար դադարեց անմիջապես Կասպից ծով թափվելուց, որի հետևանքով էլ թերևս Փայտակարանի անչքացումն ու ան-

---

54 «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյն», էջ 29, տե՛ս նաև К. П. Патканов, նշվ. աշխ., էջ 6 («Կասբից մինչև ի մուտս Երասխ գետոյն»)։

55 „Géographie de Moïse de Corène d'après Ptolémée", texte armenien, traduit en Français par le P. Arsène Soukry Mékhitariste, Venise, Imprimerie Armenienne, 1881, p. 40. „...près d'elle Païdagaran au bord de la mer Caspienne, à l'ouest du fleuve d'Araxe;".

56 Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 102։

57 «...տասնմեկերորդ աշխարհ՝ Փայտակարան (համանուն) քաղաքով, գտնվում է Կասպից ծովի եզերքին, Երասխի գետաբերանին» (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 106)։

58 Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 101։

59 Այդպիսի ճակատագիր է ունեցել Հայաստանի հինավուրց մայրաքաղաքներից մեկը՝ Արմավիրը։ Երասխի հունը փոխվելուց հետո քաղաքը զրկվեց ջրից և հայոց արքունիքը ստիպված եղավ կառուցել նոր մայրաքաղաք։ Ինչ վերաբերում է Արմավիրին, ապա այն դադարեց գոյություն ունենալուց և վերածվեց հեղաբլրի։

հետացումը կատարվեց ժամանակի ընթացքում։ Այդ նույն ժամանակներում, կավատ արքայի իշխանության օրոք (488—531), Միլի տափաստանի կիսաանապատային շրջանում պարսից արքունիքը ստեղծեց մեկ այլ ռազմաքաղաքական հենակետ հանձին Բալլկան քաղաքի[60], որի կենսականությունն ապահովվեց ներկայումս Գյավուր-արխ կոչվող ջրանցքի կառուցումով, որը չուր էր մատակարարում նորաստեղծ քաղաքին։ Պատահական չէ, որ մոնղոլական ավերիչ արշավանքներից հետո, երբ վերջիններս ծանր հարված հասցրին ջրոռոգման ցանցին ու Գյավուր-արխի համալիրը դադարեց գործելուց, ջրից զրկված Բալլկանն աստիճանաբար անշքացավ, որպես քաղաք դադարեց գոյություն ունենալուց և վերածվեց մի հսկայական հողաբլրի, որին տեղի քոչվորները տվին Օրեն-կալա կամ Օլրան-կալա անունը։ Ամփոփելով վերոգրյալը, կարծում ենք, որ Փայտակարան քաղաքի տեղադրությունը, որ տարբեր ձևով է լուծվել ուսումնասիրողների կողմից և եղել է գիտական բանավեճերի հարց, խիստ որոշակի պահպանվել է «Աշխարհացոյցում»՝ հայ աշխարհագրական մտքի այդ փայլուն կոթողում։

Սակայն Փայտակարանի նման տեղադրությունը չի համապատասխանում «Մղոնաչափքի» տեղեկություններին, որտեղ, ինչպես վերը տեսանք, Փայտակարանը հիշվում է Վարդանակերտ քաղաքից և Կասպից ծովից 60 մղոն հեռավորության վրա։ Ինչպե՞ս եղավ, որ Կասպից ծովի ափին գտնվող քաղաքը հայտնվեց նրանից 60 մղոն հեռավորության վրա։ Մեր կարծիքով, կա միայն մեկ բացատրություն։ Ամենից առաջ, պետք է ընդունել, որ «Աշխարհացոյցի» վկայությունը շատ ավելի հին է, քան «Մղոնաչափքինը» և այդ իրողության մեջ էլ գտնվում է հարցի բանալին։ Կասպից ծովը, որ ունեցել է բազմաթիվ բարձրացումներ և իջեցումներ, մեր թվականության առաջին դարերին համաշխարհային օվկիանոսի մակարդակից ցածր էր շուրջ 22 մ, ի տարբերություն ներկայիս 28,5 մետրի։ Այդ մակարդակը պահպանվել է մինչև V դ. և «Աշխարհացոյցի» հեղինակն արձանագրել է Փայտակարանի՝ Կասպից ծովի եզերքին, երասխի գետաբերանում գտնվելը[61]։ Գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ VI—XI դդ. Կասպից ծովի մակարդակը խիստ անկում է ապրում՝ գերազանցելով ներկա վիճակը 4 մետրով[62]։ Իջեցման հե-

---

60 Մինչ այդ Տրտու գետի ափին պարսից Պերոզ արքայի (459—483) հրամանով կառուցվել էր Պարտավ կամ Պերոզապատ քաղաքը (Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 52)։

61 Այս և մի շարք այլ կռվաններ խոսում են «Աշխարհացոյցի» V դ. հուշարձան լինելու օգտին, որին մոտիկ ենք անդրադառնալ առանձին հոդվածով։

62 «Каспийское море» (БСЭ, т. II, М., 1973, с. 501). Մանրամասն տե՛ս «Колебания уровня Каспийского моря», М., 1956; К. К. Гюль, Т. Н. Лаппалайнен, В. А. Полушкин, Каспийское море, М., 1970. Գ. Ռազումովի և Մ. Խասինի գրքում բերված են փաստեր, որոնք ցույց են տալիս, որ 1235 թ. Կասպից ծովի մակարդակը ներկայից ցածր էր 3 մետրով։ Ետորով I Անուշիրվանի օրոք Դարբանդում ամրություններ կառուցվեցին, որոնք ծգվում էին դեպի ծովը։ Ներկայումս քարհանքերը, որտեղից քար էին տանում շինարարության համար, ջրասույզ են եղել։ Այժմ ջրի տակ է XI—XIII դդ. միջնադարյան բնակավայր Բայանդովանը։ XIII դ. սկսած ծովի ջրերը նորից սկսում են բարձրանալ և պարսից հեղինակ Նաջաաթիի հաղորդմամբ 1304 թ. ջրասույզ են անում Աբեսկուն քաղաքը։ 1400 թ. ջրի տակ է անցնում Բաքվի ամրությունների մի մասը։ Բացի ծովի մակարդակի իջեցումներից և բարձրացումներից, տեղի է ունենում ծովի հատակի պարբերական իջեցում (Г. А. Разумов, М. Х. Хасин, Тонущие города, М., 1978, с. 46—53)։

տևանքով ջրից ազատվում են հսկայական տարածություններ, որի հետևանքով Փայտակարանը դադարում է ծովափնյա քաղաք լինելուց։

Այժմ փորձենք լուսաբանել մի հարց, որը կարևոր է առևտրական ուղիների ուղղության ուսումնասիրության տեսանկյունից։ Բերենք «Մղոնաչափքի» այն երկու հատվածը, որտեղ հիշատակվում է Կասպից ծովը. «Ի Դունա ի Բերդկունս Կ. անտի ի Պարտաւ ՃԿ. անտի ի ծովն Կասպից՝ Ղ։ Ի Նախճևանէ յԱրտեւատ Մ. անտի ի Վարդանակերտ Հ. անտի ի Փայտակարան Կ. անտի ի ծովն Կասպից Կ.»[63], ծուլց տալով Պարտավից և Փայտակարանից մինչև Կասպից ծովը համապատասխանաբար 90 և 60 (կամ 50) մղոն, «Մղոնաչափքի» հեղինակը, անշուշտ, նկատի ուներ ոչ թե պարզապես Կասպից ծովը, այլ որոշակի կետ կամ բնակավայր նրա ափին, այլապես «դեպի Կասպից ծով» արտահայտությունը խիստ անորոշ և անիմաստ կդառնար։ Նկատի ունենալով փաստաթղթի տրամաբանության, բնավ վերջնական լուծում առաջարկելու հավակնություն չունենալով, մենք հակված ենք կարծելու, որ թե՛ մեկ և թե երկրորդ դեպքում «Մղոնաչափքի» հեղինակը նկատի է ունեցել միևնույն աշխարհագրական կետը։ Հեղինակի համար այդպիսի բնակավայր կարող էր ծառայել որևէ նավահանգիստ, որը գտնվեր առևտրական ուղիների վրա։ Կարծում ենք, որ տվյալ դեպքում «Մղոնաչափքի» հեղինակը նկատի է ունեցել Բաքու նավահանգիստը։ Փորձենք հիմնավորել մեր տեսակետը։

Ինչպես ցույց են տալիս երկրաբանական և այլ բնույթի ուսումնասիրությունները, մ. թ. առաջին դարերում Կասպից ծովի մակարդակը համաշխարհային օվկիանոսից ցածր էր 22 մետրով։ Եթե հաշվի առնենք այս հանգամանքը և որոշենք Կասպից ծովի հնարավոր ափագիծը այդ դարերում, ապա Փայտակարանը պետք է գտնվեր ներկայիս Սալիան քաղաքից դեպի արևմուտք, այժմ չորացած Մահուգճալա լճի մերձակայքում[64], ուր պահպանվել են Երասխի դելտայի հետքերը[65]։ Այստեղից մինչև Բաքու ճանապարհը Պարտավ—Բաքու ճանապարհին հարաբերում է ինչպես 2-ը 3-ին։ Այլ խոսքով, ստացվում է «Մղոնաչափքում» հիշյալ ճանապարհների երկարությունների հարաբերությունը՝ 90:60 (3:2)։

Ի՞նչ որքանով են ճիշտ մեր եզրակացությունները, կարող են ցույց տալ հնագիտական հետազոտությունները։ Կարծում ենք, որ շուրջ 1300 տարի անց հնարավոր կլինի նշված վայրում հայտնաբերել Մեծ Հայքի թագավորության արքունի քաղաք և Սասանյան Պարսկաստանի ռազմաքաղաքական հենակետ Փայտակարանի ավերակները[66], որը հնարավորություն կտար լուսաբանելու հայագիտության և Այսրկովկասի պատմության մի շարք կնճռոտ հարցեր։

---

63 «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 355։

64 «Карта Кавказа», масштаб 1 : 600000, Минск, 1954.

65 «Геоморфологическая карта (Азерб. ССР)» («Атлас Азерб. ССР», Баку—Москва, 1963, карта 34—35).

66 Փայտակարանը որպես քաղաք դադարեց գոյություն ունենալուց հավանաբար VII դ. վերջից։ Թեպետ նրա անունը երբեմն հիշատակվում է ուշ շրջանի հեղինակների կողմից, սակայն ժամանակի ընթացքում նրա տեղն ու դիրքը մոռացվում են։ Արցախն Հ. Դրասխանակերտցու մոտ սխալմամբ Փայտակարան է անվանվում Տփղիսը («Ծովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 170, 187, 195)։ Եթե Հ. Դրասխանակերտցու մոտ հիշյալ նույնացումը կարելի է եզրակացնել, ապա Վարդանի

# ГОРОД ПАЙТАКАРАН И ЕГО ЛОКАЛИЗАЦИЯ

БАБКЕН АРУТЮНЯН

## Резюме

В армянистике и кавказоведении до сих пор нет единой точки зрения о локализации Пайтакарана — царского города Великой Армении, упоминаемого в источниках в связи с событиями III—VII вв. Крупный немецкий арменист Г. Юбшман отождествлял Пайтакаран с городом Байлаканом, несмотря на то, что последний был основан лишь в годы царствования сасанидского царя Кавада I (488—531). Впоследствии эту локализацию, далеко не обоснованную данными первоисточников, поддержали Н. Адонц, Я. Манандян, Е. Пахомов, С. Еремян, С. Петросян и другие исследователи.

Согласно же Г. Алишану и М. Бархударяну, город Пайтакаран находился вблизи нынешнего города Сальяны, где сохранились руины древнего города: по С. Джалаляну—на месте города Ленкорань; по А. Иессену — на месте села Тазакенд Ждановского района Азерб.ССР; Т. Акопян локализует его в районе устьев Куры и Аракса (Ерасха). Б. Улубабян, основываясь на данных «Ашхарhацуйц»-а (Армянской географии, приписываемой Анании Ширакаци), исключает всякую локализацию Пайтакарана к северу от реки Аракс, в междуречье Куры и Аракса.

Основываясь на данных первоисточников, прежде всего «Ашхарhацуйц»-а и «Мхоначапк»-а (Армянской итинерарии VII века), а также на материалах археологических раскопок города Байлакана (Оренкалы), Пайтакаран следует локализовать к западу от нынешнего города Сальяны, в районе засохшего озера Махмудчала, где сохранились следы старой дельты реки Аракс. По данным «Ашхарhацуйц»-а в V в. город Пайтакаран находился на берегу Каспийского моря, в устье восточного рукава реки Аракс. В данный период, согласно исследователям, уровень Каспийского моря был ниже уровня Мирового океана на 22 м, и береговая линия моря проходила западнее нынешней.

В VII в. регрессия Каспийского моря, начавшаяся еще в VI в., освобождает от морских вод огромные территории, вследствие чего, по данным «Мхоначапк»-а, город Пайтакаран оказывается в 60 милях от морского берега. По всей вероятности, начиная с конца VI в., восточный рукав реки Аракс, впадающий непосредственно в Каспийское море, постепенно мелеет, а в конце VII или начале VIII в. засыхает. Аракс меняет русло и превращается в приток реки Куры. Находившийся в полупустынной Муганской степи город Пайтакаран лишается водной артерии, постепенно переживает упадок и вымирает.

*«Աշխարհացոյցում» պարզորոշ ասված է. «Փայտակարան Տիխիս էն («Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի համեմատութեամբ 24 նեռագրի և տպագրի, Բարիզ, 1960, էջ 36)։ Դրանից հետո որպես կանոն Փայտակարան անունը օգտագործվում է Տիղիսի համար (տե՛ս օրինակ՝ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, Հայոց նոր վկաները (1155—1843), Վաղարշապատ, 1903, էջ 413—414)։*

В. А. АРУТЮНЯН

# АДМИНИСТРАТИВНО-ПОЛИТИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ СЕВЕРО-ВОСТОЧНЫХ ОБЛАСТЕЙ ЦАРСТВА ВЕЛИКОЙ АРМЕНИИ В 387—451 гг.

Царство армянских Аршакидов, просуществовав почти 4 столетия, в 387 г. было разделено между Римской империей и (Сасанидской Персией. В западной части вскоре исчезли последние остатки армянской государственности, а в Восточной Армении, несмотря на кратковременное воссоединение двух ее частей с 388 по 408 г., государственность просуществовала ненамного дольше и была упразднена в 428 г. Раздел царства и последовавшее за ним упразднение государственности в отдельных его частях сопровождались переделами, которые нарушали территориальную целостность Великой Армении. Какие именно проводились политико-административные изменения, сказать, однако, трудно, так как сведения первоисточников неопределённы, зачастую опосредованные или более поздние.

В арменоведении по этому вопросу по сей день преобладает точка зрения, выдвинутая Н. Адонцем[1], которая считается неоспоримой и точной[2]. Сначала мы также склонны были считать ее бесспорной, однако изучение источников постепенно поколебало нашу уверенность, а позже привело нас к убеждению, что эта точка зрения должна быть серьезным образом пересмотрена. Наше выступление по этому поводу опередила заслуживающая внимания статья Б. Улубабяна «К вопросу об административно-политическом положении Северо-Восточной Армении домарзпанского периода»[3], в которой автор приходит к сходным с нашими выводам. Однако по некоторым аспектам наши мнения существенно расходятся, и, отдавая должное благодарному труду Б. Улубабяна, мы вновь хотим обратиться к этой проблеме[4].

Фавстос Бузанд, повествуя о разделе Великой Армении 387 г., писал:

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 1—66, 199—211.

[2] Точку зрения Н. Адонца в основном принимает акад. С. Т. Еремян (см.: С. Т. Еремян, Армения по «Ашхарацуйцу», Ереван, 1963 (на арм. яз.).

[3] Б. Улубабян, К вопросу об административно-политическом положении Северо-восточной Армении домарзпанского периода.—Вестник Ереванского университета, 1975, № 2, с. 149—164.

[4] Истерия вопроса подробно изложена Б. Улубабяном, поэтому мы, избегая повторения, переходим непосредственно к исследованию.

«Так рассудив, они (Персия и Римская империя—Б. А.) разделили страну на две части; часть персидская осталась за царем Хосровом, а часть греческая за царем Аршаком. Но и у них в разных местах были отторгнуты и урезаны многие гавары, и от стран обоих только малая часть осталась за обоими царями. ... Но часть Хосрова была больше, чем часть Аршака. И у обоих много гаваров было отторгнуто; и тогда, и после того армянское царство разделилось, распалось, уменьшилось и потеряло свое прежнее величие»[5]. Несмотря на выразительное описание, свидетельство Фавстоса Бузанда весьма неопределенно, сомнительно и, по всей вероятности, преувеличено. Во-первых, вызывает удивление тот факт, что историк, прекрасно осведомленный относительно всего, касающегося царства Великой Армении, не перечисляет поименно отторгнутые окраинные провинции. Не менее удивительно и то, что двум правителям «от стран обоих только малая часть осталась», в то время как согласно даже общепринятой точке зре ния царям из династии Аршакуни досталось 174011 км2 из 285195 км2 площади Великой Армении[6]. Возражение, что речь идет об отделении 8-ми из 15-ти провинций Великой Армении, следовательно, большинство провинций уже не входило в состав владений Аршака III и Хосрова IV, не выдерживает критики, поскольку сторонники указанной точки зрения не признают до раздела существования административного деления на провинции по «Ашхарацуйцу». Наконец, ярые приверженцы данных, приводимых Фавстосом Бузандом, почему-то оставляют без внимания целый фрагмент его описания—«и тогда, и после того ... потеряло свое прежнее величие», который в отличие от предшествующего ему отрывка весьма определенно подчеркивает, что эти неясные переделы границ произошли не сразу, а в результате длительного процесса и что историк был очевидцем последовавших за разделом территориальных изменений. Понятно, что на основании этих данных нельзя делать далеко идущих выводов и они, помимо важной информации о том, что Великая Армения была расчленена в течение какого-то времени, не содержат ничего определенного. Весьма интригующим представляется другое свидетельство историка. Говоря о проповеднической миссии епископа Григориса в Царство мазкутов, он пишет следующее: «И царь (Санесан— Б. А.) изменил свою мысль и внял словам своего войска. Тогда они поймали дикого коня, привязали юного Григориса к хвосту его и пустили по полю вдоль берега великого северного моря, за пределами своего лагеря, по полю Ватнеан, и таким образом они погубили добродетельного проповедника христова, юного Григориса. Затем люди,

[5] История Армении Фавстоса Бузанда, Ереван, 1953, с. 202.
[6] С. Т. Еремян, Ук. соч., с. 69—70.

прибывшие с ним из гавара Хабанд, взяли его тело и перевезли в свой гавар Хабанд, находящийся в стране албанской, на границе Армении, в деревню под названием Амарас[7]. Это сообщение, которое отнюдь не соответствует внутренней логике сочинения Фавстоса, почему-то было удостоено серьёзного внимания исследователей. Н. Адонц, опираясь на это сообщение, полагал, что Хабанд с деревней Амарас был пограничной провинцией между Арменией и Албанией[8]. Местонахождение Амараса хорошо известно. Он находится на территории Нагорно-Карабахской АО и поныне сохраняет свое название. Исходя из подобного представления, можно предположить, что Арцах и Утик являлись частью Албании.

Обращаясь к тем же событиям, Мовсэс Хоренаци писал: «...убили блаженного (Григориса—Б. А.), растоптав его копытами лошадей на поле Ватнеан близ моря, называемого Касбийским. Его дьяконы подняли тело и перенесли в Малый Сюник и похоронили в аване Амарас»[9]. (Перевод Г. Х. Саркисяна).

Как видим, историк вовсе не считает, что эта область принадлежит Албании. Что касается географического понятия «Малый Сюник», то это, несомненно, Арцах.

Попробуем проанализировать сообщение Фавстоса. По другому поводу, касаясь положения границ между Великой Арменией и Албанским царством, историк писал: «Он (речь идет о мазкутском царе Санесане—Б. А.) перешел свою границу, большую реку Куру и наводнил армянскую страну»[10]. «Реку Куру сделал границей между своей страной (Арменией—Б. А.) и Албанией, как было раньше» (речь идет о карательной экспедиции спарапета Мушега Мамиконяна в Восточную Армению, когда были восстановлены северо-восточные границы армянского царства[11]). Эти в высшей степени интересные свидетельства со всей очевидностью указывают на то, что границей между царствами Великой Армении и Албании являлась река Кура.

Вероятно, может показаться, будто в указанном отрывке отражены новые административные деления более позднего периода, поскольку, Фавстос Бузанд—автор V в., и, возможно, воссоздает политическую ситуацию эпохи марзпанства[12]. Однако результаты наших исследований исключают эту кажущуюся вполне вероятной версию. По мнению Б. Улубабяна, Н. Адонца ввело в заб луждение выражение «в свой гавар

[7] Фавстос Бузанд, с. 14.
[8] Н. Адонц, Ук. соч., с. 223.
[9] История Армении Мовсэса Хоренаци, Тифлис, 1913, с. 259—260 (на древнеарм. яз.).
[10] Фавстос Бузанд, с. 15
[11] Там же, с. 162.
[12] Такое мнение высказал акад. С. Т. Ерамян во время нашей беседы.

Хабанд в стране (իկողմանս) албанской», которое означает не «в Албании», а «близ Албании»[13]. Однако эту точку зрения вряд ли можно принять, так как она не подтверждается фактическим материалом. В таком случае выражение «карийская страна (сторона)» должно означать не страну Карин, а ее окрестности или «Цопская страна (сторона)»—не страну Цопк, а возле Цопка. На наш взгляд, «в стране албанской» не может означать возле Албании, и точный перевод этого выражения—«в Албании, в албанской стороне» или же «в албанскую сторону». В этом отрывке вызывает интерес другое: почему историк вместо того, чтобы указать, где происходило действие—в Албании или в Армении, как бы связывает его с обоими географическими понятиями («в стране албанской, на границе Армении»). Историко-географический анализ приводит к совершенно иному заключению. Фавстос Бузанд и здесь верен себе, он ни на шаг не отступает от своей исторической концепции, следовательно путаница произошла из-за ошибок, допущенных переписчиками. В рассматриваемом отрывке выражение «из страны албанской (իկողմանսԱղուանից)», по-видимому, в результате «редактирования» было переделано писцами «в стране албанской (իկողմանսԱղուանից)» под влиянием возникшего позже административно-политического состояния. Если наше предположение верно, то тело Григориса было перевезено из страны албанской в деревню Амарас гавара Хабанд, находящуюся в пределах Армении. Следовательно Хабанд находился не в Албании, а гипотез Н, Адонца лишена основания.

Северо-восточная граница Армении, которая на несколько лет была перекроена по причине восстания некоторых князей против Аршака II и экспансии Албанского царства, при царе Папе (370— - 374) была восстановлена. По данным Фавстоса Бузанда, в северо-восточных областях Великой Армении восстали «бдэшх Гугарка, а после него владетель гавара Дзор, владетель гавара Колб, с ними также владетель Гардманадзора, и все те, кто находились в этих краях, около и вокруг них, вместе восстали против царя армянского Аршака и поехали и предстали перед персидским царем Шапухом. Против армянского царя Аршака восстали также укрепленный гавар Арцах, укрепленный гавар Тморик и укрепленная страна Кордик... от армянского царя отпала также страна каспов»[14]. Однако сведения историка о предпринятом Мушегом Мамиконяном карательном походе имеют, на наш взгляд, особо важное значение для определения тогдашнего и более позднего статуса северовосточных областей, посему мы приводим их полностью:

[13] Б. Улубабян, Ук. соч., с. 154.
[14] Фавстос Бузанд, с. 123—124.

«Он разгромил и страну Арцах в большом сражении, многих жителей взял в плен, у остальных взял заложников и обложил их данью».

«Пошел войною также в страну албанов и жестоко разгромил их. Отнял у них много гаваров, которые ими были захвачены— Ути, Шакашен и Гардманадзор, Колт и сопредельные им гавары. Реку Куру сделал границей между своей страной и Албанией, как было раньше. Многих из главарей убил, остальных обложил данью и взял у них заложников».

«Потом спарапет Мушег жестоко отомстил стране парсиев (т. е. каспов—Б. А.) и городу Пайтакарану, ибо жители этой страны отложились от армянского царя и изменили ему. Спарапет-полководец Мушег, прибыв туда, многих из них казнил, отрубив головы, многих взял в плен, а остальных обложил данью, взял у них заложников и там оставил правительственных чиновников»[15].

Прежде всего вызывает удивление тот факт, что в отличие от других областей, которые, за незначительным исключением, перечисляются историком и в рассказе о восстании, и в рассказе о карательной экспедиции Мушега Мамиконяна, в Утике из восставших князей называется только владетель Гардманадзора, а в рассказе об освобождении перечисляются гавары Ути, Шакашен, Гардманадзор, Колт. Очевидно, что здесь мы имеем дело с целым рядом важных статусов. В области Утик наследственным владетелем был только князь Гардманадзора, а владетели других гаваров, как мы скоро убедимся благодаря сопоставлению с другими данными, были несомненно, царскими чиновниками и управляющими, которые, по всей вероятности, решили воспользоваться ситуацией и стать наследственными князьями, перейдя на сторону персидского двора. Не исключено (хотя сам историк об этом ничего не сообщает), что персидский двор подстрекал их к восстанию, давая подобные обещания. Если такая гипотеза верна, то следует считать, что в 70 гг. IV в. основная часть территории области Утик являлась царским доменом.

Интересно и другое обстоятельство. Восставшие князья переходят на сторону персов, но во время карательной экспедиции Мушега Мамиконяна их владения оказываются под албанским господством. Разумеется, можно предположить, что сами персы передали эти гавары Албанскому царству, однако такое предположение представляется нам необоснованным. Албанское царство отнюдь не было сторонним наблюдателем и, имея собственную политическую программу и воспользовавшись развязанной персами против Армении войной, развернуло широкие экспансионистские действия. Более того, оно, по-видимому, отнюдь не собиралось признавать

[15] Там же, с. 162.

наследственных прав восставших наследственных князей и царских правителей, и захваченные гавары стали собственностью двора. Очевидно, этим объясняется тот факт, что главный удар в своей борьбе Мушег Мамиконян направил против Албанского царства, которое проводило откровенно завоевательскую политику. Что касается глав упомянутых гаваров, то они, несомненно были официально назначены албанским двором из представителей местной знати, и большинство их было истреблено Мушегом Мамиконяном. Не подлежит сомнению, что освобожденные районы, как и прежде, были включены в состав царских владений. Княжество Гардманадзора явилось однако, счастливым исключением. Данные «Гахнамака» (разрядной грамоты), а также других источников свидетельствуют о том, что это княжество продолжало существовать и в дальнейшем. Чем же объяснить восстановление при царе Папе восставшего против царской власти княжества? И хотя события той давней эпохи во многом неясны, а объяснение их может носить лишь гипотетический характер, нам представляется вполне вероятным, что после восстания кто-нибудь из младших представителей гардманского рода или даже сам гардманский князь оказал сопротивление албанским завоевателям, а позже был вознагражден за это возвращением княжеского титула. Однако при армянском дворе вряд ли забыли о восстании в Гардмане, а посему его новый владетель, согласно «Гахнамаку», получил не соответствующее его военным возможностям, и более низкое, двадцать четвертое место[16].

О том, что упомянутые выше гавары являлись царской собственностью, свидетельствуют и другие первоисточники. Согласно достоверным данным, сообщаемым Агафангелом, в конце III в. некоторые районы Утика входили в царский домен: «... В гаваре Утик, в городе Халхал, в зимней ставке армянских царей»[17]. Опираясь на это свидетельство, можно заключить, что вышеупомянутые владения принадлежали армянским царям еще до правления основателя династии Арташесидов Арташеса I (189—160). Косвенные сведения об этом находим у Хоренаци. «В области Утик Ерванда застает весть, что «персидский царь собрал большую рать под начальством Смбата, чтобы напасть на тебя и ввести молодого Арташеса (во владение) своим царством»[18] (перевод Г. Х. Саркисяна). Однако владения армянских царей в северо-восточных областях Великой Армении в тот период были невелики, так как благодаря

[16] Н. Адонц, ук. соч., с. 249.Хотя согласно «Гахнамаку» князь Гардмана занимает 23 место, мы считаем, что если включить в список имя Малхаза, то оно станет 24-ым.
[17] История Армении Агафангела, Тифлис, 1909, с. 21.
[18] Мовсэс Хоренаци, с. 169.

очень ценному сообщению Мовсэса Хоренаци известно, что там находились Утийское, Гардманское, Цавдейское и Гаргарское княжества[19]. Цавдейское и Утийское княжества существовали и в начале IV в. Их владетели по приказу Трдата III вместе с другими видными нахарарами и наместниками (правителями пограничных областей) отправились в Кесарию, чтобы рукоположить первосвященником Григория Просветителя[20]. Гардманское княжество упоминается у Фавстоса Бузанда[21], Корюна[22]и Хоренаци[23], и просуществовало оно дольше других. Что касается Гаргарского княжества, то оно прекратило свое существование, по-видимому, до IV в. в связи с какими-то политическими событиями, сведения о которых до нас не дошли. Во всяком случае известно, что это княжество при Трдате III уже было преобразовано в царский домен, управляемый царскими чиновниками: «Поэтому (пришли) правители северо-восточных частей, управлявшие отдельным городом, называемым Пайтакараном...»[24].

Желая обезопасить северо-восточные границы царства, армянские цари всегда стремились увеличить свои владения в приграничных северо-восточных областях. В начале IV в., как было показано выше, царской фамилии уже принадлежала часть Утика и вся территория Гаргерского княжества, управляемые царскими наместниками и чиновниками[25]. Утийское княжество, занимавшее при Трдате III остальную часть Утика, как сообщают историки и как явствует из «Гахнамака», также было ликвидировано, а его земли присоединены к царским владениям. Произошло это, несомненно, между 335 и 374 гг. Вполне вероятно, что упразднение этого княжества произошло во время похода мазкутского царя Санесана в 335 г.[26] по причине государственной измены, т. е. сотрудничества с завоевателями. Не лишено оснований и предположение, что отсутствие имени утийского князя[27] среди имен восставших против Аршака II косвенно подтверждает то обстоятельство, что такого княжества в то время уже не существовало, а его земли были переданы во владение

---

[19] Там же, с. 113. «Говорят, от потомков Арана происходят племена—Утийцы, Гардманцы, Цодэцы и княжество Гаргарское» (перевод Эмина, с. 58).

[20] Агафангел, с. 414—415: «...двенадцатый—князь Цавдейской страны, тринадцатый—князь Утийской страны...»

[21] Фавстос Бузанд. с. 38, 124, 162.

[22] Корюн. Житие Маштоца, Ереван, 1962, с. 108.

[23] Мовсэс Хоренаци, с. 340.

[24] Там же, с. 259. 25 Там же.

[26] Фавстос Бузанд, с. 15—16; Мовсэс Хоренаци, е. 266—267.

[27] Фавстос Бузанд, с. 123—124.

царской семье. Маловероятно, чтобы историк, упоминающий имена владетелей гаваров Дзоропор или Колбопор, оставил без внимания такое значительное княжество как Утийское, выставлявшее 1000 конных воинов. Даже если предположить, что упоминаемый гавар Утик был равноценен Утийскому княжеству, а это весьма нелогично и маловероятно, то следует думать, что оно прекратило свое существование при царе Папе. Так или иначе, отсутствие упоминания князя Утика в «Гахнамаке» говорит о том, что по крайней мере в 80-е гг. IV века такого княжества не существовало[28].

Несколько иная участь постигла Цавдейское княжество. Оно, по всеобщему убеждению исследователей, совпадает с территорией Арцаха, и поэтому, возможно, иногда оно именовалось по названию провинции. У Фавстоса Бузанда сохранилось свидетельство о том, что против Аршака II восстал укрепленный край Арцах[29]. Историк не упоминает имени князя, а дальнейшие события показывают, что он, по всей вероятности, поплатился своим положением за неповиновение. Это произошло в правление Папа, во время карательной экспедиции спарапета Мушега[30]. Ясно одно: Цавдейское княжество не могло быть упразднено после царя Папа, но не исключено, что оно было ликвидировано до него. Опираясь на данные «Гахнамака», можно предположить, что царь Пап, положивший конец существованию Цавдейского княжества, передал его владения одному из представителей сюнийского княжеского дома в качестве награды этому роду за оказанные услуги. Возможно, что начиная с этого времени Арцах стал именоваться Малым Сюником[31] или по персидски—Сисакан-и Котак[32]. Став владетелем Арцаха, этот представитель сюнийского рода получил, согласно «Гахнамаку», титул «Второго сюнийского» князя.

Кара спарапета Мушега постигла и Каспийское княжество, однако оно, если и было на какое-то время ликвидировано, то вскоре было восста-

---

[28] Н. Адонц, ук. соч., с. 249—250. Дошедшая до нас версия «Гахнамака» возникла в 388 г. при Аршакиде царе Хосрове IV, в период недолгого воссоединения царства Великой Армении. В 432 г. католикос Саак представил на утверждение персидскому двору «Гахнамак». однако утвержденный царем Врамом V Гором список до нас не дошел.

[29] Фавстос Бузанд, с. 123.

[30] Там же, с. 162.

[31] Мовсэс Хоренаци с. 260.

[32] С. Т. Еремян, Армения по «Ашхарацуйцу», с. 109: «Десятая (страна) — Арцах, граничащая с Сюником, имеет двенадцать гаваров—Другой Хабанд (или Сисакан-и -Котак или Сисакан-и-Востан)...»

новлено или просто продолжало существовать, как явствует из «Гахнамака»[33].

Картирование «Гахнамака» еще раз подтверждает, что приграничная область между Гардманом и Каспком действительно являлась царским доменом и, следовательно, по вполне понятным причинам в вышеупомянутой грамоте не нашли места ее княжеские фамилии. Показав, что до раздела Великой Армении в 387 г. северо-восточная ее граница проходила по реке Куре, а приграничная полоса являлась царским доменом, попытаемся определить статус северо-восточных областей Великой Армении в последующий период.

По мнению Н. Адонца, после раздела 387 г. территория Восточной Армении была ограничена рубежами, соответствующими границам созданного в 428 г. марзпанства. Основываясь на результатах его исследования, акад. С. Еремян составил карты царства Восточной Армении Аршакидов, а также марзпанской Армении, оставаясь верным этому исследователю и «Ашхарацуйцу»[34]. Не касаясь вопроса всех границ марзпанства, отметим лишь, что, согласно исследованию Н. Адонца, его границы на севере достигали гаваров Кол и Кангарк, оставляя Гугарк с гаваром Кангарк в пределах марзпанства Вирк или Варджан, а Тайк с гаваром Кол целиком—в пределах марзпанской Армении. На северо-востоке от Великой Армении были отторгнуты Арцах, Утик и Пайтакаран; первые два из них были присоединены к Албанскому марзпанству, и последний—к Атрпатакану[35]. Эта точка зрения верна только для конца VI в., но лишена реальных оснований для начала V в. (первой половины V в.). Следует отметить, что исследование Н. Адонца неполно хотя бы потому, что он пытается определить территорию Восточно-армянского царства и марзпанства на материале, касающемся периода после 50-х гг. V в., который, несомненно, мог отражать уже иное политическое состояние. Вместе с тем, к сожалению, необоснованно не были использованы ценные сведения «Гахнамака», а также зачастую неверно истолкованы некоторые интересные сообщения историков V в.

Прежде чем обратиться .к материалам «Гахнамака», попытаемся проанализировать сведения историков V в. Согласно рассказу Мовсэса Хоренаци, персидский царь Шапух III (который ошибочно именуется у него Шапухом II) после раздела царства Великой Армении отправил послание тем нахарарам восточной части, которые бежали с Аршаком III в византийскую часть, заявив следующее: «Хотя вы и поступили недостойно своему званию азата, бросив свои владения, чем, (кстати), не причинили

[33] Н. Адонц, Ук. соч., с. 222—231.
26 **Հեղինակը վկայակոչում է** Ю. Симонов-ի "Гелы-потомки древних кельтов". Տե՛ս "Наука и жизнь", 1976, N 5, с. 142-143.

27 **Մովսես Կաղանկատվացի, հատ. Ա, գլ. Բ: Հայոց Արևելից կողմերի պատմիչի հաղորդումից բոլորովին** չի բխում, թե կելտերը կովկասաբնակներ են, ինչպես կարծում է Բ. Ուլուբաբյանը:

28 **Տե՛ս Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Բ, գլ. ԻԵ, գիրք Գ, գլ. Զ:**

29 **Տե՛ս Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., 1957, էջ 12, 141, 148:**

**թուրք**» կամ «**եկվոր թուրք**»: Ձեռագրերում «**խայլանդուրք**»-ը հանդիպում է նաև «Հայլանդուրք» գրությամբ, որը որոշ գրիչներ փորձել են հայերենով հասկանալ որպես «**հայել ընդ ուրուք**», ինչը բոլորովին իմաստ չունի տվյալ կապակցության մեջ և ստացվել է անհեթեթ «***...դադարեցին հայել ընդ ուրուք ելանել ընդ Պահակն Ճորայ***» արտահայտությունը:

Հրատարակիչները պահպանել են «**Խայլանդրաց**» ձևը, սակայն Բ. Ուլուբաբյանը փորձում է տեղ տալ թե՛ «**Խայլանդուրք**» և թե՛ «**Հայլանդուրք**» ձևերին և գտնում է, որ «**Հայլանդուրք**»-ը կելտական բառ է (highlander) և նշանակում է **լեռնաբնակ** կամ **լեռնցի**: Ի հավելումն այս ամենի, հեղինակը նշում է, որ մինչև այժմ այդպես են կոչվում **Շոտլանդիայի** (**հին Ալբանիայի**) լեռնային մասերի բնակիչները: Իսկ «**հայլանդ**»-ը, նրա կարծիքով, ինչպես կելտերի, այնպես էլ նրանց ժառանգորդ անգլիացիների լեզվով նշանակում է «**լեռնաստան**», «**բարձրադիր տեղ**»: Հեղինակն այս փաստը համարում է ուշագրավ: Եթե ճիշտ է իր բացատրությունը, ապա այն գալիս է մեկ անգամ ևս շեշտելու կելտ-գաղատացիների սերտ կապը Կովկասի հետ և առավել հաստատուն հիմքի վրա դնելու Կուրի ձախափնյակին տրված «**Ալբանիա**» տեղանվան իսկությունը[30]:

Շարունակելով իր միտքը զարգացնել՝ նա գրում է, թե հետագայում, երբ եկվոր թուրքական ցեղերն ամրացան Կուրի ավազանում և հին **Ալբանիայի** դաշտային մասի բնակիչ ցեղերին մասամբ ծուլեցին իրենց մեջ կամ էլ մյուս մասով մղեցին դեպի հյուսիս՝ նրանց առավել լեռնոտ բնաշխարհը, **Ալբանիան** բաժանվեց երկու մասի՝ հարավային կամ **հարթավայրային**, որը վաղուց ի վեր կոչվում էր Շիրվան, և լեռնային, որի համար եկվորները նոր անուն չփնտրեցին, այլ «**Ալբանիա**»-«**լեռների երկիր**»-ը թարգմանեցին իրենց լեզվով որպես «**Դաղստան**», այսինքն՝ «**լեռնաստան**»: Հետևաբար, ըստ հեղինակի, «Ալբանիա» չի նշանակել «**ալբանների երկիր**» և ոչ այլ ինչ է, բայց եթե կելտական «**լեռների երկիր**» անունը, որից էլ երկրի բնակիչները կոչվել են «**ալբաններ**» (հեղինակի մոտ՝ **աղբանցիներ**-Հ.Բ.): Հետևում է եզրակացությունը, որ «**Ալբանիա**»-ն էթնիկական անուն չէ, քանի որ, ըստ Ստրաբոնի, **ալբանները** էին համարվում **Ալբանական թագավորության** մեջ մտնող 26 ցեղերը[31]:

Ինչպես կտեսնենք, մենք լիովին կիսում ենք Բ. Ուլուբաբյանի կարծիքն այն մասին, որ «**Ալբանիա**»-ն էթնիկ անվանում չէ, սակայն նրա մի շարք դրույթներին համաձայն չենք: Վերջինս, անտարակույս մեծ և օգտակար աշխատանք է կատարել **Հայոց Արևելից կողմերի** պատմության ուսումնասիրության ասպարեզում, սակայն, հավուր պատշաճը մատուցելով նրա կատարածին, պետք է նշենք, որ անկախ այն հանգամանքից, թե «**Ալբանիա**» տեղանունը կելտական ծագում ունի, թե ոչ, Բ. Ուլուբաբյանի բացատրությունն ունի մի շարք խոցելի կողմեր: Ճիշտ է, անշուշտ, որ կելտական լեզուները ազգակից են անգլերենին և ֆրանսերենին, սակայն հնդեվրոպական լեզուների ընտանիքում նրանք առանձին ենթախումբ են կազմում, իսկ անգլերենն ու ֆրանսերենը, համապատասխանաբար, մտնում են գերմանական և ռոմանական ենթախմբերի մեջ: **"Highlander"**-ը, որչափ որ մենք կարող ենք դատել, այնուամենայնիվ, կելտական բառ չէ, այլ անգլերեն[32]: Ըստ որում, անգլերեն են այդպես կոչել **շոտլանդական կելտերին** և ոչ

30 Նմանօրինակ բացատրություններ տվել են Յ. Մարքվարթը, Մ. Սևիդովը, Վ. Ղուկասյանը: Տե՛ս Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 44-45:
31 Տե՛ս Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 45:
32 Տե՛ս B.K. Miller, Modern English-Russian dictionary, Moscow, 2005, p. 369.

թե **կելտերն**՝ իրենց: Եվ եթե անգլերեն **“highlander”** նշանակում է «**լեռնաբնակ**», ապա այն V դ. չէր կարող արտասանվել «**հայլենդեր**», այլ հավանաբար «**հիխլենդեր**» կամ «**հիխլանդեր**», որը սերտ աղերս ունի գերմաներեն **“Hochländer”** բառի հետ, որը նույնպես նշանակում է «**լեռնաբնակ**» կամ՝ «**լեռնային Շոտլանդիայի բնակիչ**»[33]: Հետևաբար V դարում անգամ գերմանները «**լեռների երկիր**»-ը չէի կոչի «**Հայլանդ**», իսկ իրենց ինքնությունը դեռ լիովին պահպանած կելտերը իրենց չէին անվանի գերմանների լեզվով: Անշուշտ, կելտերը կարող էին իրենց տեղաշարժերի ժամանակ հայտնվել հեռավոր Կովկասում, սակայն, եթե դա իրոք տեղի է ունեցել և անգամ «**խայլանդուրներ**»-ը կելտեր են, ապա նրանց անվանը նման բացատրություն տալը ոչ միայն անիմաստ է, այլև անհնարին:

## 2. «Աղուան-alban» էթնանվան և «Աղուանք-Albania» երկրանվան բացատրությունը

Խոսելով Ալբանական թագավորության մասին, իր օրերում՝ մ.թ.ա. I դարի վերջերին և I դարի սկզբներին, Ստրաբոնը գրել է, որ նրա մեջ 26 ցեղեր էին գտնվում, որոնք խոսում էին տարբեր լեզուներով և մինչև միավորվելը կառավարվում էին առանձին թագավորներով[34]: Ելակետ ընդունելով այս տեղեկությունը՝ փորձենք պատասխան տալ այն հարցին, թե 26 ցեղերի այդ համադաշնության բնակչությունն ինչու՞ է ստացել հայերի կողմից «**աղուան**», իսկ հունա-հռոմեացիների կողմից «**alban**» ընդհանրական էթնանունը: Պատմահոր տեղեկություններից մեզ համար պարզ դարձավ, որ հայկազն Սիսակը ժառանգում է **Աղվանից դաշտը** և նրա լեռնակողմը **Երասխից** մինչև **Հունարակերտ** ամրոցը՝ արևելքում սահման ունենալով **Կուր գետը**, որը և հայերենով խոսողների սահմանն էր: Ընդ որում աշխարհն էլ նրա **աղու** (=**քաղցր**) բարքի պատճառով ստանում է **Աղուանք-Աղվանք** անունը: Վաղարշակ թագավորի օրոք Առանը նշանակվում է կողմնակալ «**յարևելից կողմանէ զեզերբ հայկական խօսիցս**»[35]: Այս ամենը աներկբայորեն ցույց է տալիս, որ **Առանը**, որին աղբբեջանական պատմագրությունը, փրփուրը բերանին, փորձում է ներկայացնել որպես այսպես կոչված՝ աղվանների նախահայր, ոչ մի առնչություն չունի **Կուրի** ձախափնյակում փռված հյուսիսային դաշտի և Պատմահոր հավաստմամբ՝ **Մեծ Կովկասի** ստորոտում հաստատված եկամուտ (եկվոր) ազգի հետ, որոնց անգամ Մովսես Խորենացին նման անունով չի կոչում:

Թվում է, թե Մովսես Խորենացու հաղորդումն իր հստակությամբ երկմտության տեղիք չի տալիս, սակայն այնպիսի մի նշանավոր հայագետ, ինչպիսին գերմանացի Հայնրիխ Հյուբշմանն է, եկել է այն եզրակացության, որ հայոց խոսքի եզերքը ոչ թե **Կուր գետն** էր, այլ **Սյունիքը**: Ըստ որում, սխալ հասկանալով պատմիչին՝ հեղինակը լոկ փորձում է պարզել, թե **Սյունիքը** այդ սահմանից ներս էր, թե՞ դուրս[36]: Հենվելով Պրոկոպիոս Կեսարացու այն հաղորդման վրա, որտեղ սյունեցիները Պարսկական Հայաստանի (իմա՛ մարզպանության-Ք.Հ.) զինվորներից անջատ են հիշվում, ինչպես և Զաքարիա Հռետորի տվյալն այն

33 Большой немецко-русский словарь (Grosswörterbuch Deutsch-Russisch), Москва, 2005, с. 451.
34 Տե՛ս Strabo, **XI, 4, 6**.
35 Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Ը:
36 Տե՛ս Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմանեց Հ.Ք. Պիլեզիկճեան, Վիեննա, 1907, էջ 57:

մասին, որ **Սիսական երկիրը** իբր՝ **հայերից**, **վրացիներից** և **աղվաններից** զատ երկիր է սեփական լեզվով[37], Հ. Հյուբշմանը գալիս է այն եզրակացության, որ սյունեցիները լեզվով և ազգությամբ տարբեր են հայերից[38]: Այնուհետև հեղինակը գալիս է ևս մեկ այլ անհեթեթ եզրակացության, թե **Սյունիքից** արևելք տարածվել է հայերենի և առաներենի սահմանը[39]: Ըստ երևույթին՝ Հ. Հյուբշմանի հեղինակությունը աներկբայելի է եղել հայ նշանավոր պատմաբան Ն. Ադոնցի աչքում, և նա էլ **Սյունիքը** հռչակում է Հայաստանի աղվանական ծայրամաս[40], այսինքն՝ **Սյունիքն** էլ հատկացնում է այսպես կոչված՝ **Աղվանքին**: Այս ամենը, որ գիտականության նշույլ անգամ չի պարունակում, մինչև այսօր ջուր է լցնում ադրբեջանական պատմաբանների ջրաղացին, թե իբր՝ **Առանը** նշանակվել է կուսակալ հայոց լեզվի արևելյան եզերքում կամ սահմանում և եղել է **այսպես կոչված՝ աղվանների** նախահայրը: Իրականում, ինչպես շուտով ստորև կհամոզվենք, «**աղուան**» հասկացությունը զուտ հայկական է թե՛ իր նշանակությամբ և թե՛ աշխարհագրական ընդգրկումով, եթե չհաշվենք հայերի կողմից **Կուրի** ձախափնյակին տրված **Աղվանք** անունը, որը բոլորովին էլ էթնիկական հիմք չունենալով, հռոմեացիների կողմից, հարմարեցվելով լատինական աշխարհի տեղանուններից մեկին, վերածվել է **Ալբանիայի**՝ ոչ մի կերպ չարտահայտելով **Կուրի** ձախափնյակի բնակչության էթնիկ պատկանելությունը:

Ուստի առնվազն տարօրինակ են հնչում Ռ. Մելիքովի այն խոսքերը, թե «Եղել են այդ շրջանում ալբանները առանձին ցեղ կամ էլ ցեղերի միություն (եթե ցեղերի միություն, ապա քանակապես զգալի աստիճանի տարբերվող այն ցեղերից, որոնք մ.թ.ա. I դ.-մ.թ. I դ. մտել են Ալբանական թագավորության կազմի մեջ), մենք չգիտենք»[41]: Շարունակելով իր միտքը՝ հեղինակը գտնում է, որ սկզբում ալբանները բնակվում էին **Կուր գետից** մինչև **Կովկասյան լեռներն** ընկած տարածքում, սակայն դա վերաբերում է Ալբանական թագավորության սահմաններին և որ իբր՝ ալբանական ցեղերը բնակվել են, ի դեմս **ուտիների,** նաև Կուրից հարավ ընկած շրջանում[42]: Որ **Կուրի** աջափնյա **Աղվանքը** ոչ մի կապ չունի գետի ձախափնյակի **այսպես կոչված Աղվանքի հետ**, որի իսկական անվանումը մեզ հայտնի էլ չէ և միայն կարելի է ենթադրել, մենք առաջիկայում դեռ կքննարկենք, իսկ այժմ լոկ նշենք, որ Ստրաբոնի հիշատակած 26 ցեղերի միություն հանդիսացող Ալբանական թագավորությունը էթնիկ իմաստով դեռևս անգամ **կովկասալեզու ցեղերի համադաշնություն** չէր:

Աղվանք անունն ունի զուտ հայկական բովանդակություն և ծագում է «**աղու**» բառից: «**Աղու**», որը նշանակում է քաղցր, բարի, անուշ, մեղմ և այլն, առաջացել է «**աղ**» բառի գործնական հոլովածևից և ավելի վաղ հնչել է ոչ թե «**աղու**», այլ «**աղով**» կամ, որ ավելի ճիշտ է, «**ալով**», որ կնշանակի աղով համեմված, համեղություն ձեռք բերած: Ըստ որում, հետաքրքիր է, որ վրացիները փոխառել են այդ բառը շատ վաղուց, երբ հայերը այն դեռ արտասանում էին «**ալով**»: Ինչպես ճիշտ նշում է Հր. Աճառյանը, վրացերեն **գաալովեբա**-ն, որ նշանակում

37 Տե՛ս Procop., Bell. Pers., 1, 15. Զաքարիա Հռետոր, ժամանակագրություն, գիրք XII, գլ. 7, տե՛ս Hamilton Brooks, The Syriac cronicale known as that of Zachariah of Mitylene, London, 1899:
38 Տե՛ս Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 58:
39 Անդ:
40 Տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, с. 423.
41 Տե՛ս Р. Меликов, Этническая картина Азербайджана в период Ахеменидского владычества (VI-IV вв. до н.э.), с. 126-127.
42 Անդ, էջ 127:

է«քաղցրանալ», «անուշ համ ստանալ», կազմված է արմատական «**ալով**» բառից, որ փոխառություն է հայերենից և համապատասխանում է «**աղու**»-ին: Ըստ որում, հայերեն «**աղու**»-ից է ծագում նաև վրացերեն **միալնեբա=փաղաքշել** բառը[43]: Դժվար չէ տեսնել, որ «**ալով**»-ը հայերենին հատուկ օրինաչափությամբ, ինչպես օրինակ՝ վրացիների կողմից շատ վաղուց փոխառված **Մովկանը**, որ ավելի ուշ ժամանակների հայկական աղբյուրներում արձանագրված Մուկանն է, աստիճանաբար սկսում է արտասանվել «**ալու**», իսկ ավելի ուշ՝ «**աղու**»: Միակ հնարավոր եզրակացությունն այն է, որ «**ով**»-ի վերածվելը «**ու**»-ի կատարվել է գոնե մինչև մ.թ.ա. I դարը: Սակայն բոլոր հիմքերը կան կարծելու, որ «**ալով**» ձևին՝ մինչև Գնեոս Պոմպեոսի հռոմեական բանակների Ալբանիա գալը, նախորդել է «**ալոբ**»-ը: Չի բացառվում առաջին հնարավորության իսկությունը, սակայն մենք, ելնելով մի շարք հանգամանքներից, որոնց ստորև կանդրադառնանք, հակված ենք առաջնությունը տալու «**ալոբ**» հնչմանը: Եվ, եթե ճիշտ է մեր տեսակետը[44], իսկ այն ոչ ճիշտ համարելու հիմքեր չկան, ապա «**ալոբ**»-ը վերածվելու էր «**ալով**»-ի, իսկ այնուհետև «**ալու**»-ի, իսկ վրացական փոխառությունը կարող էր կատարվել «**ալով**» ձևի հանդես գալուց հետո:

Գործիական հոլովի «**-բ**» կազմիչը պահպանվել է նաև աշխարհաբարում: Այսպես, օրինակ, եթե «ուշադրություն» բառը սեռականում «ուշադրության» է, ապա «**-բ**» գործիականակերտը ստանալուց հետո վերածվում է «**ուշադրությամբ**»-ի, որտեղ «**ն**»-ն «**բ**»-ի ազդեցությամբ վերածվում է «**մ**»-ի: Գրաբարում կա գոյականների 5 պարզ հոլովում՝ Ա, Ե, Ի, Ո, Ու և երկու խառն՝ Ի-Ա, Ո-Ա: Գոյականը Ա պարզ հոլովման դեպքում գործիականում ունի «**-աւ**» վերջավորությունը, որը ձևավորվում է սեռականի «այ» և գործիականի «**-ւ**» կազմիչի միացումով: Ե պարզ հոլովման դեպքում գործիական հոլովը կազմվում է սեռականի վերջավորության վրա գործիականի «**-բ**» կազմիչի հավելումով: Ի հոլովման ժամանակ սեռականի «**-ի**» վերջավորությանը հավելվում է գործիականի «**-ւ**» կազմիչը: Նույնը տեղի է ունենում Ո հոլովման դեպքում: Շեղում է տեղի ունենում Ու հոլովման դեպքում, երբ գործիականում գոյականը ունի սեռականի և տրականի հոլովաձևը: Իսկ այդ կարելի է բացատրել միայն մի իրողությամբ: Մենք հակված ենք կարծելու, որ վաղնջական ժամանակներում Ու հոլովման դեպքում գոյականը գործիականում պետք է ունենար «**-բ**» կազմիչը, որը վերածվելով «**-ւ**»-ի, ընկել է, քանի որ երկու «**ւ**»-ները պարզապես համագոյակցել չէին կարող: Ի-Ա խառը հոլովումը նույնպես մեզ նորություն չի տալիս: Անկանոն կամ զարտուղի հոլովման դեպքում մենք մշտապես հանդիպում ենք գործիականի «**-բ**» կազմիչին[45]:

Ի մի բերելով վերն ասվածը, մենք, հիմք ունենալով «**կին**» գոյականի գործիականում «**կանամբ**» և «**կնաւ**» ձևերը[46], գալիս ենք այն եզրակացության, որ վաղնջական հայերենում գործիականը բոլոր հոլովներում կազմվել է, ամենայն հավանականությամբ, «**-բ**» կազմիչով, սակայն, երբ հայոց լեզվի տարածման առանձին շրջաններում «**-բ**»-ն վերածվել է «**-ւ**»-ի, «**կանամբ**»-ը սկզբում վերածվել է «**կանաւ**»-ի, իսկ շեշտակորույս «**ա**»-ի անկումից հետո «**կնաւ**»-ի:

---

43 Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ա հատոր, Եր., 1971, էջ 116:
44 Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, հայերենի գործիականի կազմիչը վաղնջահայերենում պիտի ունենար –bi / -wi (-vi) տեսքը: Տե՛ս Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 241:
45 Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 29-38:
46 Անդ, էջ 56:

Ինչպես տեսնում ենք, Ա, Ե, Ի, Ո հոլովումների դեպքում գործիականի կազմիչը «**-ւ**»-ն է, իսկ ինչ վերաբերում է Ու հոլովմանը, ապա մեր բացատրությունն արդեն տվել ենք: Կարծում ենք, որ վաղնջական հայերենում թե՛ պարզ և թե՛ խառը հոլովումների դեպքում գործիականի կազմիչը եղել է «**-ք**», սակայն այն մեզ է հասել միայն խառը հոլովման որոշ և անկանոն կամ զարտուղի հոլովման դեպքերում: Նկատվում է օրինաչափություն: Ձայնավորներից հետո «**-ք**»-ն ժամանակի ընթացքում որպես կանոն վերածվել է «**-ւ**»-ի, որն էլ մեզ իրավունք է տալիս ենթադրելու, թե Ու հոլովման դեպքում նույնպես «**-ք**»-ն վերածվել է «**-ւ**»-ի, սակայն ընկել է, քանի որ չէր կարող հնչվել «**-ու**»-ից հետո:

Եթե փորձենք համեմատել լատիներենի գործիական հոլովի վերջավորությունները, ապա կտեսնենք, որ առաջին հոլովման դեպքում գործիականն ունի ուղղականի տեսքը, երկրորդ հոլովման դեպքում՝ «**-o**» վերջավորությունը, որը համընկնում է տրականին, երրորդ հոլովման դեպքում՝ «-ē», չորրորդ հոլովման դեպքում՝ հոգնակիում «bus», և հինգերորդ հոլովման դեպքում՝ կրկին հոգնակիում «būs»[47]: Կարծում ենք, որ լատիներենում ևս «**-ք**»-ն կամ «b-ŭs»-ը՝ որպես գործիականի հոգնակի թվի կազմիչներ, ցույց են տալիս, որ գործիականի «**-ք**» հոլովակազմիչը հնդեվրոպական ընդհանուր ակունքներ ունի: Անշուշտ, մեր խնդիրը չէ պարզելու, թե ինչպես են ընթացել հնչյունափոխական գործընթացները լատիներենում, առավել ևս, որ մենք համապատասխան պատրաստություն էլ չունենք, սակայն լատիներենի օրինակը ցույց է տալիս, որ վաղնջական հայերենում սկզբնապես գործիական հոլովի կազմիչը եղել է միայն «**-ք**», որը ձայնավորից հետո որպես կանոն վերածվել է «**-ւ**»-ի, իսկ Ո հոլովման դեպքում՝ «**-վ**»-ի:

Այժմ, ելնելով վերը կատարված քննությունից, դժվար չէ եզրակացնել, որ սկզբնական «**ալոք**»-ը և նրանից առաջացած «**ալով**»-ը և «**ալու-աղու**»-ն, բացի վերը նշված իմաստներից, ունեցել է «**պարարտ**», «**արգասաբեր**» իմաստ, որի վրա գումարվելով «**-ան**» վերջածանցը՝ ծնել է արգասաբեր վայրի իմաստ: Դրա վրա դրվելով «**ք**» հոգնակիակերտը, նրան տվել է աշխարհագրական տեղանքի կամ երկրամասի բովանդակություն: Վերջինիս առաջացումից հետո **Կուր-Արաքսյան** տափարակի **Կուրի** աջափնյակը ստացել է **Աղուանից դաշտ** անունը: Սակայն Մեծ Հայքին պատկանում էր միայն նշված տափարակի Մեծ Հայքի մեջ մտնող **Կուրի** աջափնյակը, հետևաբար հայերը արգավանդ դաշտի գաղափարը տարածեցին նաև **Կուրի** ձախափնյա շրջանի վրա, և երբ այնտեղ ձևավորվեց ինչ-որ մի անուն ունեցող պետություն, հայերն այն կոչեցին **Աղվանից (դաշտի) պետություն** կամ **Աղվանք**:

Ամեն ինչից դատելով՝ հայերն սկզբում այդ թագավորությունը կոչել են **Ալոբանք**, որը միայն հետագայում՝ դեռ մինչև հայ գրերի գյուտը, վերածվել է **Ալովանքի**, իսկ «**ով**»-ի «**ու**» վերափոխվելուց հետո՝ «**Ալուանք**»-ի, էլ ավելի ուշ՝ «**Աղուանք**»-ի: Հասկանալի է, որ «**Աղվանքի**» հայկական լինելը և հայերենով բացատրվելը, վերև ասվածից հետո, այլևս կասկածներ հարուցել չեն կարող, որ այն զուտ հայկական երևույթ է: Եվ, եթե հետագայում, անգամ՝ ուշ միջնադարում մարդը իրեն համարում էր «**ազգաւ հայ**» «**Աղուանից աշխարհից**», բնավ չի նշանակում, թե նա այսպես կոչված աղվան է եղել: Դա մոտավորապես նույնն է, ինչ որ վասպուրականցին կամ գուգարացին իրենց կոչեին «**ազգաւ հայ**» «**ի**

47 Տե՛ս В. И. Мирощенко, Н. А. Федоров, Учебник латинского языка, Москва, 1976, с. 26-111.

**Վասպուրական կամ ի Գուգարաց աշխարհէ**»:

Հետագա շարադրանքում մենք ցույց կտանք, որ այսպես կոչված «**աղուանները**»-ը կամ «**ալբանները**»-ը հունա-հռոմեական աշխարհին հայտնի են դառնում մոտավորապես մ.թ.ա. I դարից: Արևելք են գալիս հռոմեացիները՝ ի դեմս Գնեոս Պոմպեոսի բանակների, և **այսպես կոչված Աղվանքի** անունը, որ հայերի բերանում այդ ժամանակ հնչելու էր **Ալոբանք**, նրանք անմիջապես նմանեցնում են **Ալբանիային**, որտեղ սղվում է շեշտակորույս «**n**»-ն և հայկական «**ք**» հոգնակիակերտը, որ սովորաբար նշանակում է երկիր կամ ժողովուրդ, փոխարինվում է «**-ia**»-ով: Անկախ այն հանգամանքից, թե **Ալբանիայի** զուգահեռները հանդիպում են կելտական ժողովուրդների մոտ, այս դեպքում **Կուրի** ձախափնյակում գտնվող պետության **Ալբանիա** անվանումը զուտ պատահական նմանություն ունի նրանց հետ: Այլ խոսքով, «**alban**» և «**Albania**» անունները ծագում են հայերի շրջանում և բացատրվում են հայերենով: Այդ անունը ոչ մի կերպ չի կարելի կապել կելտական աշխարհի և ոչ էլ լատինական **mons Albanus**-ի հետ:

## 3. Այսպես կոչված ալբանական ցեղերի և նրանց լեզվական պատկանելության հարցի շուրջ:

Հասկանալի պատճառներով «**Ալբանիա-Աղուանք**»-ի վերաբերյալ հնագույն տեղեկությունները պահպանել են հունա-հռոմեական աղբյուրները: Որչափ որ մենք կարող ենք դատել, դրանց մեջ առաջինը ամասեցի հույն աշխարհագետ Ստրաբոնն է, որի հաղորդումներից մեկի համաձայն՝ «**Նրանց (իմա՛ *ալբանների* - Բ.Հ.) թագավորները երևելի են: Այժմ, ճիշտ է, բոլոր ցեղերին մեկ թագավոր է կառավարում, այն դեպքում, երբ նախկինում յուրաքանչյուր այլալեզու ցեղ կառավարվում էր սեփական թագավորի կողմից: Նրանք (իմա՛ *ալբանները* - Բ.Հ.) 26 լեզուներ ունեն, այնպես որ նրանք դժվարությամբ են մտնում միմյանց հետ հարաբերությունների մեջ**»[48]: Հենվելով այս հաղորդման վրա՝ Կ. Տրևերը գրում է, թե աղվանական ազգությունը ձևավորվել է 26 ցեղերից: Ըստ որում, այդ ցեղերի միավորումից հետո ցեղային միավորման գլուխ է կանգնում **աղվանների** կամ **ալբանների** ցեղը, որը հավանաբար տնտեսական և ռազմական տեսակետից առավել հզորն է եղել[49]: Եզրակացությունը՝ եզրակացություն, սակայն, հակառակ Կ. Տրևերի «խորիմաստ» դատողության, դեռևս և ոչ մի ուսումնասիրողի չի հաջողվել գտնել «**ալբան-աղուան**» անունը կրող որոշակի ցեղ: Իսկ եթե հաշվի առնենք այն իրողությունը, թե իբր՝ **Կուրի** ձախափնյակում է գտնվել **ալբանների** հավաքական ամբողջությունը, ապա զարմանալիորեն թագավորության անկումից հետո երբևէ չի հիշատակվում մի որևէ ցեղ, որը կրեր «**ալբան-աղուան**» անունը:

Այս հարցին, անշուշտ, մենք դեռ կանդրադառնանք, սակայն այժմ կանգ առնենք այն հարցի վրա, թե որոնք են եղել Ստրաբոնի կողմից հիշատակված այսպես կոչված **ալբանական 26 ցեղերը**, քանի որ՝ ինչ-ինչ պատճառներով հույն աշխարհագետը նրանց անունները չի պահպանել: Կ. Տրևերը, փորձելով ինչ-որ կերպ վեր հանել այսպես կոչված աղվանական ցեղերի անունները, գրում է, թե

48 Տե՛ս Strabo, **XI, 4, 6.**

49 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 44:

պատմությունը հիշյալ բոլոր 26 ցեղերի անունները չի պահպանել: Որ իբր՝ պահպանվել են, հավանաբար, առավել նշանավորների մասին առանձին տվյալներ և հիշատակություններ[50], սակայն դրանց մեջ նա այդպես էլ չի գտնում ալբաններին: Դժբախտաբար, բարեխիղճ և անգամ հայերի նկատմամբ արտակարգ բարյացակամորեն տրամադրված, սակայն, այսպես կոչված՝ Աղվանքի շատ հարցերից անտեղյակ Կ. Տրևերը, որին, որքան էլ ցավալի լինի, առանց լուրջ վերլուծության հետևել են նշանակալի թվով այլ ուսումնասիրողներ, ներկայացնում է մեզ մի այնպիսի շարադրանք, որը բացարձակորեն չի համապատասխանում պատմական ճշմարտությանը: Հեղինակի կարծիքով, «**ալբան**»-ների բուն տարածքը եղել է **Կուր** գետի միջին և ստորին հոսանքի շրջանը՝ գերազանցապես ձախափնյա շրջանը, իսկ **Կուրի** ստորին հոսանքի աջափնյակը, որ հնում կրել է **Կասպիանե** (իմա՛ հայերեն **Կասպք**-Ք.Հ.) անունը, Ստրաբոնի համաձայն, նույնպես մտել է **Ալբանիա-Աղուանքի** մեջ[51]:

Հույն աշխարհագետը **Կասպք-Կասպիանեին** անդրադարձել է երկու անգամ և, առաջին հայացքից, խիստ հակասական ձևով: Այսպես, անդրադառնալով Մեծ Հայքի ընդարձակմանը՝ Արտաշես Ա հայոց թագավորի օրոք, Ստրաբոնը գրում է, թե Արտաշեսը և Զարեհը «***...մեծացան՝ շրջակա ազգերից գրավելով զանազան գավառներ, Մարերից՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Քասորոպեդան...***»[52]:

Չնայած Ստրաբոնը խոսում է միասնական նվաճումների մասին, իրականում մարերից, բայց ոչ թե «**ալբան-աղուան**»-ներից **Կասպիանեն** կարող էր գրավել միայն Արտաշես Ա-ն: Սակայն առավելապես հենվելով Ստրաբոնի մեկ այլ հաղորդման վրա, որտեղ ասված է, թե «***ալբանների մարզին է պատկանում Կասպիանեն, որն [այդպես] է կոչվել այժմ անհետացած մի ցեղի անունով, որով կոչվում է նաև ծովը***»[53], Կ. Տրևերը[54], Ս. Երեմյանը[55] և շատ ուրիշներ գտնում են, որ **Կասպիանեն** իբր՝ եղել է «**ալբանական**» **երկրամաս**: Այսուհանդերձ Կ. Տրևերը, հավանաբար, որոշ երկմտանք է ունեցել **Կասպիանեի** հարցում, որովհետև այնուհետև նշել է, թե պարզ չէ՝ Ստրաբոնը ասում է իր ժամանակների կացության մասին, թե՞ վկայաբերում է իր նախորդներից մեկի հաղորդումը: Ուստի նա եզրակացրել է, որ չի բացառվում այն հնարավորությունը, որ հեղինակը նկատի է ունեցել ոչ միայն **Կուրից** հարավ ընկած գետաբերանի աջափնյա շրջանը, այլև ձախափնյակը՝ ներառելով **Ապշերոնի թերակղզին** և շրջակա երկրամասերը, որի բնակչությունը մ.թ. I դարերում, թերևս, կրել է կամ շարունակել է կրել կասպերի անունը[56]: **Ապշերոնի թերակղզու** և շրջակա տարածքների ներառումը **Կասպք-Կասպիանեի** մեջ մի փոքր փոխում է Կ. Տրևերի եզրակացության բնույթը, սակայն հակասությունը բոլորովին չի վերացնում, քանի որ խոսքը մի դեպքում վերաբերում է ալբանական երկրամասին, իսկ մյուս դեպքում՝ հայերի կողմից մարերից գրավված երկրամասին: Սակայն խնդիրը դրանով չի ավարտվում, որովհետև, ինչպես կտեսնենք, ոչ մի կերպ չի կարելի մ.թ. I դարի հաղորդումը տարածել առավել հին ժամանակների վրա: Եթե Կ. Տրևերը և նրան հետևողները մի փոքր

50 Անդ, էջ 44:
51 Անդ:
52 Strabo, XI, 14, 5.
53 **Անդ, XI, 4, 5.**
54 **Տե՛ս** К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 44-45:
55 **Տե՛ս Ս.Տ. Երեմյանի աշխատությունները և «Աղվանք»-ին վերաբերող քարտեզները:**
56 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 45:

խորանային սկզբնաղբյուրների՝ թեկուզև կցկտուր տեղեկությունների մեջ, ապա նրանց համար պարզ կդառնար, որ Ստրաբոնի մոտ հակասություն չկա, քանի որ հեղինակը նկատի է ունեցել երկու իրարից տարբեր **կասպիահեներ**:

Նախ՝ քննության առնենք այն հարցը, թե ալբանական համարվող **կասպերը** երբվանից կարող էին բնակվել նշված տարածքներում: Հարցը մենք քննության ենք առնում այն պարզ պատճառով, որ համենայն դեպս՝ Աքեմենյան Պարսկաստանի շրջանում **կասպերի** բնակությունը հիշյալ տարածքում լիովին բացառվում է: Աքեմենյան Պարսկաստանի հյուսիսային սահմանը՝ Հերոդոտոսի հավաստմամբ, անցնում էր Կովկասյան լեռնաշղթայով. «***Նույնիսկ կոլքերը և հարևանները՝ մինչև Կովկաս լեռը* (իմա՛ լեռնաշղթան-Ք.Հ.), քանզի մինչև լեռը տիրում են պարսիկները, իսկ *Կովկասից* հյուսիս (ընկած երկիրը) հաշվի չի առնում պարսիկներին, նույնպես հարկ են տալիս ընծաներ մատուցելու ձևով**»[57]: Ստացվում է հետաքրքիր կացություն. մի կողմից՝ կարծես թե կասկած չկա, որ Աքեմենյան Պարսկաստանի սահմանը հասել է մինչև **Մեծ Կովկասի լեռնաշղթան**, իսկ մյուս կողմից՝ զարմանալիորեն **Կուրից հյուսիս ընկած երկիրը**, թվում է, թե չի մտնում ոչ մի սատրապության մեջ:

Անշուշտ, կարելի է ենթադրել, որ Պարսից տերության սահմանն անցել է **Կուր** գետով, որը բավականաչափ ամուր պատնեշ էր հյուսիսկովկասյան քոչվորների դիմաց, սակայն, այնուամենայնիվ, այն անհամեմատ ավելի խոցելի պատվար էր, քան Կովկասյան լեռնաշղթան, ուստի միանգամայն տրամաբանական պետք է համարել այն միտքը, որ Աքեմենյան տերությունը իր սահմանները հասցրել էր մինչև **Կովկասի լեռները**: Այդ դեպքում պետք է պատասխան տալ այն հարցին, թե ովքե՞ր են բնակեցրել **Կովկասյան լեռնաշղթայի** ու **Կուրի** միջև ընկած տարածքը:

**Կասպերի** հետ կապված, կամա թե ակամա, պարտավոր ենք քննարկել մի շատ կարևոր հարց՝ կապված XI և XV սատրապությունների տեղադրության հետ, որը, մեր կարծիքով, լույս է սփռում նշված կնճռոտ հարցի վրա: Առաջինի մասին Հերոդոտոսը գրում է. «***Կասպերը, պավսիկները, պանտիմաթները և դարեյտիները, մեկ նահանգ կազմած, վճարում էին երկու հարյուր տաղանդ: Սա էլ տասնմեկերորդ նահանգն էր*»[58]:** Իսկ երկրորդն ունի հետևյալ նկարագրությունը. «***Սակերը և կասպերը վճարում էին երկու հարյուր հիսուն տաղանդ. սա տասնհինգերորդ նահանգն էր***»[59]: Ավելորդ չի լինի նշել, որ նշված սատրապությունների տեղադրության մասին միասնական կարծիք գոյություն չունի: Մասնավորապես, որոշ ուսումնասիրողներ փորձում են տասնհինգերորդ սատրապությունը տեղադրել Այսրկովկասում՝ փորձելով սակերին տեղադրել **Սակասենեի** տարածքում, այսինքն՝ **Գանձակ**, ներկայիս **Գյանջա** քաղաքի շրջակայքում[60]: Սակայն պատմաբանների մեծ մասը իրավացիորեն գտնում է, որ տեղեկությունը վերաբերում է միջինասիական սակերին, որոնք նույնանում են բեհիսթունյան արձանագրության **Saka** երկրին[61]: Հասկանալի է, որ նման բացատրության և տեղորոշման դեպքում տասնհինգերորդ սատրապությունը կհայտնվի ոչ թե Այսրկովկասում, այլ **Կասպից ծովից** արևելք ընկած շրջանում:

---

57 Herodotus, III, 97.
58 Անդ, III, 92:
59 Անդ, III, 93:
60 Տե՛ս В.В. Струве, Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, Л., 1968, с. 18.
61 Տե՛ս И.М. Дьяконов, История Мидии, М.-Л., 1956, с. 359.

Կասկածից վեր է, որ չնայած աղբրեջանցի պատմաբանների համառ ձգտումներին, Հերոդոտոսի XV սատրապության մեջ հիշատակված կասպերին տեղադրել Այսրկովկասում պարզապես հնարավոր չէ, քանի որ ավելի ուշ շրջանում հիշատակված այսրկովկասյան կասպերը բավականին համեստ տարածք էին զբաղեցնում անգամ՝ **Շակաշենեում** հաստատված ու ժամանակի ընթացքում հայացած սակերի հետ միասին և հազիվ թե կարող էին 250 տաղանդ հարկ վճարել:

Կարծում ենք՝ անգամ հարկ չկա ընդգծելու, որ XI սատրապության **կասպերը**, ազգակից լինելով հանդերձ XV սատրապության **կասպերին**, այնուամենայնիվ չեն նույնանում նրանց հետ: Եվ եթե նրանք հիշատակվում են տարբեր սատրապություններում, ապա իրողությունը պետք է բացատրել այդ երկու հատվածների բնակության իրար չսահմանակցող տարածքների առկայությամբ և, իհարկե, նշանակալից բազմամարդությամբ, որի շնորհիվ նրանք տեղ են գտել երկու սատրապությունների նկարագրության մեջ: Չխորանալով հարցի մանրամասների մեջ՝ նշենք, որ ուսումնասիրողները, ըստ մեծի մասին (Շթայն Հ., Հերման Ա., Դյակոնով Ի. Մ.), ինչպես նաև "История Дагестана" («Դաղստանի պատմություն») գրքի հեղինակները, (Կուզմինա Ե.Ե., Հերցֆելդ Ե. և ուրիշներ) կասպերին տեղադրել են Ատրպատականայան Մարաստանից հյուսիս-արևելք, **Կասպից ծովի** հարավ-արևմտյան ափերին, **Ալշերոնի թերակղզուց** դեպի հարավ[62]: Ըստ որում, այս տեսակետն, առաջին հայացքից, անթերի է, որովհետև Ստրաբոնը, Կղավդիոս Պտղոմեոսը և մի շարք այլ հեղինակներ, իրոք, Կասպից ծովի հիշյալ հատվածում են տեղադրում **Կասպիաձե երկիրը**: Հավելենք, որ դրան չեն հակասում նաև հայկական աղբյուրների տեղեկությունները, որոնք նույնպես **Կասպքը** տեղորոշում են **Կասպից ծովին** առափնյա երկրամասում: Այս տեղեկություններին մենք դեռ կանդրադառնանք, որովհետև դրանք լուրջ վերլուծություն են պահանջում, իսկ այժմ լոկ արձանագրենք, որ **Կասպից ծովի** հարավ-արևմտյան ափերին վերոհիշյալ հեղինակները տեղադրում են XI սատրապության **կասպերին**:

XV սատրապության կասպերը, ուսումնասիրողների մի մասի տեսակետով, բնակեցրել են Հինդաքաշից հարավ (Քաֆիրիստան, Նուրիստան և Չիթքալ) ընկած շրջանը[63]: Ու. Հաուն և Ջ. Ուելսը հակված են նրանց տեսնելու Քաշմիրում[64], չնայած շատ էլ վստահ չեն տեղադրության խնդրում: Ի.Մ. Դյակոնովը, ելնելով այն հանգամանքից, որ Քսերքսեսի բանակում կռվող **կասպերի** հագուստը և զենքը նման էին մ.թ.ա. I հազարամյակի **մաննացիների** և **մարերի** հանդերձանքին, նրանց համարում է այսրկովկասյան ցեղ[65]: Ինչ վերաբերում է XV սատրապության **կասպերին**, ապա Ի. Դյակոնովը նրանց տեսնում է Կասպից ծովից արևելք՝ մերձկասպյան **սակերի** հարևանությամբ: Սակայն, որքան էլ զարմանալի լինի, հեղինակը չի բացառում նաև XV սատրապության **կասպերի** տեղորոշումը Այսրկովկասում, ինչը և, սկզբնաղբյուրներից ելնելով, պետք է

62 Տե՛ս А.И. Доватур, Д.И. Каллистов, И.А. Шишова, Народы нашей страны в "Истории" Геродота, Тексты, перевод, комментарий, изд. ''Наука'', Москва, 1982, с. 196, ծնթ. 101:
63 Անդ:
64 Տե՛ս How W., Wells J., A commentary of Herodotus. Oxford, 1928, I-II, տե՛ս А.И. Доватур,..., նշվ. աշխ., էջ 196, ծնթ. 101: Հմմտ. Junge J., Sake-Studien, տե՛ս "Klio", 1939, տե՛ս Heft, XLI, p. 84.
65 Տե՛ս И.М. Дьяконов, История Мидии, сс. 103, 364. Հմմտ. Хлонин И.Н., Этнография державы Ахеменидов по Геродоту, տե՛ս "Страны и народы Востока", 1969, вып. 87, с. 288.

Ստրուվեն հիշյալ սատրապությունը փորձում էր տեղորոշել **Արալի ծովից** արևելք՝ վերջինս դիտարկելով որպես **Կասպից ծովի** շարունակություն: Նա գտնում էր, որ **կասպերը** նույնանում են **սակերին**, որոնք բնակվում էին **Սոգդից** այն կողմ և Դարեհ Ա-ի օրոք կազմել էին ծովից այն կողմ գտնվող **սակերի հատուկ շրջանը**: Ըստ հեղինակի՝ հույն պատմագիրները **Արալյան ծովից** արևելք բնակվող **սակերին** կոչում էին **մասագետներ** և **դահեր**, որոնցից ծովափնյա շրջանում գտնվողները կոչվել են **կասպեր**[66]:

Դժվար չէ տեսնել, որ կարծիքների ու տեսակետների պակաս չի զգացվում, սակայն հարցը մնում է մութ և անհասկանալի: Մի դեպքում՝ փաստորեն, երկու կասպերն էլ հայտնվում են Այսրկովկասում, մյուս դեպքում՝ Միջին Ասիայի կողմերում: Վերջապես, մի շատ էական իրողություն. այն, որ **Մարաստանը** սահմանակցում էր անմիջականորեն **սասպեյրներին**, ինչի մասին հավաստում է Հերոդոտոսը, դառնում է ոչ միայն կասկածելի, այլև անհնարին: Սակայն վերոհիշյալ ուսումնասիրողները, չգիտես ինչու, այդ մասին մոռանում են: Ելնելով նշված հակասական տեսակետների առկայությունից, որոնք, ըստ իս, լոկ խճճում են խնդիրը, կամենում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել Ու. Հաուի և Ջ. Ուելսի այն ենթադրության վրա, որ սատրապությունների ցուցակում **կասպերի** կամ **կասպիացիների** մարզը փոխարինում է **Հյուրկանիային** կամ **Վրկանին**[67]:

Շուտով պարզ կդառնա, որ այդ ենթադրությունը միակ հավանականն է, սակայն բոլորովին ավելորդ չենք համարում նշել, որ այս իրողությունը, այլ խոսքով՝ Վրկանից աշխարհի հիշատակության բացակայությունը հերոդոտյան սատրապությունների ցուցակում, լոկ շարժել է մի շարք հետազոտողների զարմանքը, սակայն չի մղել հիմնավորված բացատրությունների[68]:

Հերոդոտոսի «Պատմություն»-ն, անշուշտ, տեղյակ է վրկանների գոյությանը: Վերջիններս նրա երկում հիշատակվում են երկու անգամ: Ըստ Պատմահոր՝ **«Ասիայում կա մի դաշտավայր՝ բոլոր կողմերից լեռներով շրջափակված, իսկ այդ լեռներով անցնում են հինգ նեղ կիրճեր: Այս դաշտավայրը հնում պատկանել է *քորասմներին* և գտնվում է նույն *քորասմների*, *հյուրկանների*, *պարթևների*, *սարանգների* և *թամանների* սահմաններում: Պարսից իշխանության հաստատումից հետո այն արդեն պատկանում է (պարսից) արքային: Արդ, դաշտավայրը շրջափակող լեռից հոսում է մի մեծ գետ, որի անունն է *Ակես*: Այս գետը, բաժանված լինելով հինգ թևի, հնում յուրաքանչյուր թևով ոռոգում էր վերոհիշյալ ժողովուրդներից յուրաքանչյուրի երկիրը, քանի որ ամեն կիրճից մի թև էր հոսում»[69]:** Հերոդոտոսի հաջորդ հաղորդմամբ՝ **«*Հյուրկանները* ևս զինված էին պարսիկների նման. նրանց առաջնորդն էր Մեգապանոսը, որը հետագայում դարձավ Բաբելոնի կառավարիչ»**[70]: Հույն-պարսկական կռիվների առնչությամբ հույն պատմագիրը հիշատակում է նաև **կասպերին**, որոնք «արշավել էին այծենի հագած, և իրենց տեղական եղեգնյա աղեղներով ու ակինակեներով զինված: Նրանց հանդերձանքն այսպիսին էր, իսկ նրանց առաջնորդն էր Արտյուփիոսի

66 Տե՛ս В.В. Струве, նշվ. աշխ., էջ 55, 110:
67 Տե՛ս А.И. Доватур, ..., նշվ. աշխ., 196, ծնթ. 101:
68 Տե՛ս Stein H., Herodotus erklärt von H. Stein, Berlin, 1869, ad. III, 92, 2. Пьянков И.В., "История Персии" Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н.э., ВДИ, 1965, N 2, с. 45.
69 Herodotus, III, 117.
70 Անդ, VII, 62:

եղբայր Արիմարդոսը»[71]:

Հասկանալի է, որ **կասպերի** և **վրկանների** միաժամանակյա հիշատակությունը պատմիչի կողմից կարծես կասկածի տակ է առնում **Կասպերի երկրի** նույնացման հնարավորությունը, սակայն **Վրկանից աշխարհի** անվան բացակայությունը սատրապությունների ժողովուրդների և ցեղերի ցուցակում ոչ պակաս տարօրինակ է, որովհետև տարածական առումով պետք է ենթադրել, որ դատարկություն է առաջանում, կամ էլ **Վրկանը** վարչականորեն ներառված է մեկ այլ հպատակ երկրի մեջ: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Բեհիսթունյան ժայռին Դարեհ Ա-ի թողած եռալեզվյան արձանագրության տվյալները: Պարսից թագավորը հայտնում է, որ իրեն հպատակ են եղել 23 երկրներ, որոնց կազմում են **Պարթևքը**, **Սոգդը**, **Բակտրիան**, **Խորեզմը**, **Սագաստանը** և այլք, սակայն չի հիշատակում Վրկանը[72]: Այսուհանդերձ, Դարեհ Ա արքան նույն արձանագրության մեջ մեկ այլ կապակցությամբ գրում է, որ «***Պարթևքն ու Վարկանան*** **իմ դեմ ապստամբեցին ու հարեցին Ֆրավարտիշին**»[73]: Մի կողմից՝ երկրանունը բաց է թողնված ապստամբ երկրների ցուցակում, մյուս կողմից՝ **Վարկանան** (= **Վրկան-**Ք.Հ.) ապստամբ երկիր է: Որոնք են հնարավոր եզրակացությունները: Թերևս, **Վրկանը,** պարզապես թյուրիմացաբար, տեղ չի գտել հպատակ երկրների ցուցակում կամ էլ վարչականորեն միացված է եղել հարևան երկրներից որևէ մեկին: Առավելություն տալ դրանցից որևէ մեկին դժվար է, սակայն այն հանգամանքը, որ Դարեհը հպատակ երկրների թիվը հստակ սահմանում է 23, ապա կարծես թե գերադասելի է երկրորդ եզրակացությունը: Շատ հավանական է, որ **Պարթևքն** ու **Վարկանան**, հարելով Ֆրավարտիշին և ապստամբելով աքեմենյան գահակալի դեմ, պարտություն են կրել ու հանձնվել մի կառավարչի կառավարմանը, որով էլ պայմանավորվում է **Վարկանա-Վրկանի** բացակայությունը հպատակ երկրների ցուցակում:

Հաշվի առնելով նման հնարավորությունը՝ պետք է պատասխան տալ նաև մեկ հարցի ևս: Բեհիսթունյան արձանագրության հպատակ երկրների ցուցակն արտահայտում է սատրապությունների ստեղծմանը նախորդող վարչա-քաղաքական իրավիճա՞կը, թե՞ վարչական բարեփոխումներին հաջորդած կացությունը: Ըստ իս՝ անտարակույս է, որ արձանագրության հպատակ երկրների ցուցակը լոկ արտահայտում է ապստամբության պարտությանն անմիջապես հաջորդող ժամանակաշրջանը, որովհետև հազիվ թե այն գրվեր վարչա-քաղաքական մեծ վերափոխությունների կենսագործումից հետո: Հետևաբար, շատ էլ չպետք է կառչել արձանագրության հպատակ երկրների և հերոդոտոսյան սատրապությունների ցուցակների տարբերություններից: Առաջինը դեռևս իր վրա չի կրում վարչաքաղաքական բաժանումներ կատարելու պետական նպատակասլացությունը, ինչը չի կարելի ասել երկրորդ դեպքում:

Պարզելով, որ վարչական բարեփոխությունների հետևանքով հնարավոր էին երկրների և երկրամասերի ենթակայության փոփոխություններ, կարծում ենք, որ Ու. Հաուի և Ջ. Ուելսի ենթադրությունն առավել քան հավանական է և ամրապնդվում է հերոդոտոսյան ցուցակում Վրկանից աշխարհի անվան բացակայությամբ:

71 Նկդ, VII, 67:
72 Տե՛ս Roland G. Kent, Old Persian, grammer, texts, lexicon, Second Edition revised, New Haven, Konnecticut՛, 1953, p. 117.
73 Նկդ, էջ 122, II սյունակ, § 35:

Տասնմեկերորդ սատրապության կազմում հիշատակված ցեղերից առավել հստակ տեղադրվում են **դարեյտները**: Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ը նրանց տեղադրում է **Կասպից ծովից** հարավ՝ ներկայիս **Ռեյ քաղաքի** մերձակայքում (իմա՛ պատմական **Ռագայի**-Բ.Հ.): Ըստ հեղինակի՝ «***Զագրոս լեռից* դեպի արևելք *սագարտիացիներն* են, սրանցից հետո՝ հասնելով մինչև *Պարթիա*, *Քորոմիթրենեն*, որից դեպի հյուսիս *Էլյումայիսն* է. նրանից դեպի արևելք բնակվում են տապուրները: *Քորոմիթրենեից* դեպի հարավ *սիդիկներն* են և *Միգրանիկեն* և *Ռագիանեն*. նրանց մոտ՝ *Յասոնիոն լեռան* ստորոտում *Վադասները* և *Դարեյտիս* գավառը և ամբողջ *Պարսքի* երկայնքով՝ *Սյուրմիդիան*»**[74]: Այս նկարագրությունից դժվար չէ հետևցնել, որ **Ռագիանեն Ռագա** կամ **Ռեյ** քաղաքի շրջակայքն է, հետևաբար **Յասոնիոն լեռը** ոչ այլ ինչ է, բայց եթե **Դամավանդ լեռը**, որը գտնվում է Իրանի մայրաքաղաք Թեհրանից շուրջ 120 կմ հյուսիս-արևելք: Հաղորդման համաձայն՝ վադասներին և դարեյտներին պետք է տեղադրել **Յասոնիոն** կամ **Դամավանդ լեռան** հարևանությամբ: Հարցիս քննության տեսակետից անգամ կարևոր էլ չէ, թե վերջինները տարածվում էին լեռից հյուսիս, թե՞ արևելք: Սակայն, որոշակի է մի իրողություն: Եթե Հերոդոտոսի սատրապությունների ցանկում տասնմեկերորդ սատրապության նկարագրությունը տրված է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ, ապա **կասպերը** նույնական են հունա-հռոմեական աղբյուրների և հայ պատմիչների հիշատակած **Կասպից ծովի** հարավ-արևմտյան ափի **կասպերին**, սակայն արևելքից արևմուտք ուղղվածության դեպքում՝ կասկածից վեր է, որ սատրապության կասպերը նույնական են **վրկաններին**: Արդ, որի՞ն տալ գերադասությունը: Ըստ իս՝ սկզբնաղբյուրները խոսում են հօգուտ երկրորդ մոտեցման, որովհետև, երբ քննության ենք առնում **Կասպից ծովի** առափնյա շրջանում ապրող ցեղերի տեղորոշման խնդիրը, ապա, համաձայն Ստրաբոնի, **վրկանների** և **արիանների** միջև բնակվել են **տապիրները** կամ **տապուրները**, իսկ **վրկաններից** այն կողմ՝ **ամարդները**, **անարիակները**, **կադուսիները** (իմա՛ **կատիշները**-Հ.Բ.), **աղվանները**, **կասպերը**, **ուիտիները** և այլ ժողովուրդներ մինչև **սկյութները**[75]: Հույն աշխարհագետի մյուս հաղորդմամբ՝ **Կասպից ծովի** արևելյան ափին բնակվող **դահերին** կամ **ապարներին Վրկանից աշխարհից** բաժանում է անապատը և **Կասպից ծովը** շրջապատող լեռների լանջերին բնակվում է **ալբանների** և **հայերի** մի մասը՝ զբաղեցնելով մի ոչ մեծ հատված, իսկ մնացած մեծագույն մասը բնակատեղի է ծառայում **գելերի**, **կադուսիների**, **ամարդների**, **ուիտիների** և **անարիակների** համար[76]: Ուստի՝ ելնելով այն իրողությունից, որ տասնմեկերորդ սատրապության մեջ հիշատակություն չկա **ամարդների** և **կատիշների** մասին, որոնք կարող էին և բացակայել Մեդիայի սատրապության նկարագրության մեջ, սակայն հազիվ թե չհիշատակվեին **պավսիկների** և **պանտիմաթների** պես անհայտ ցեղերի արձանագրվելու դեպքում, կարծում եմ, որ պիտի հիմնավորված համարել վերն առաջ քաշված տեսակետը **Կասպ-Վրկան** նույնացման մասին: Այդ դեպքում պարզից էլ պարզ է, որ Աքեմենյան շրջանում կասպերը դեռևս չէին հաստատվել Այսրկովկասյան տարածաշրջանում:

Ինչ խոսք, որ այս մեկնաբանության դեպքում էլ բացատրություն է պահանջում

74 Claudii Ptolemaei Geographia, Lib. VI, cap. 2, 6:
75 Տե՛ս Strabo, XI, VIII, 8:
76 Անդ, XI, VII, 1:

**Կասպից ծովի** հարավ-արևմտյան ափին բնակվող **կասպերի** խնդիրը, որոնք, Ստրաբոնի վկայությամբ, I դարում կորցրել էին իրենց ինքնությունը՝ տեղաբնիկ հաղորդելով լոկ իրենց անունը: Հավանականության առումով **կասպերը** կարող էին հայտնվել **Կասպից ծովի** հարավ-արևմտյան ափերին կամ **Հյուսիսային Կովկասից,** կամ էլ **Միջին Ասիայից**: Կասպերն, անշուշտ, պատկանել են այսպես կոչված՝ Աղվանից թագավորությունը բնակեցնող 26 ցեղերի թվին: Սակայն **կասպերի** տեղադրության և Այսրկովկասում հաստատվելու վերաբերյալ սկզբնաղբյուրների տեղեկությունների հակասականությունը պահանջում է մանրակրկիտ քննություն և բացատրություններ: Ստրաբոնի՝ **Կասպից ծովի** առափնյա ցեղերի նկարագրության մեջ ասված է, որ ծովի շրջագծով **վրկաններից** հետո բնակվում են **ամարդները**, **անարիակները**, **կադուսիները**, **ալբանները**, **կասպերը**, **ուիտիները** և, մինչև **սկյութները**, հավանաբար, այլ ժողովուրդներ[77]:

Էրատոսթենեսի համաձայն՝ «**տեղաբնիկները *Կովկասը* անվանում են *Կասպի* (Kaspion), հավանաբար վկայակոչելով *կասպերի* անունով**»[78]: Ա. Հակոբյանը միանգամայն իրավացիորեն նշում է, որ բերված տեղեկություններին համաձայն, **կասպերը** տեղադրվում են ալբաններից հյուսիս՝ **Կովկասյան լեռների** և **Կասպից ծովի** միջև[79]:

Դրան համահունչ են Պոմպոնիոս Մելայի և Դիոնիսիոս Ալեքսանդրացու տեղեկությունները, որոնցից առաջինի համաձայն, Կասպից ծովը Հյուսիսային օվկիանոսին միացնող նեղուցի ափերին բնակվում են քոչվոր **սկյութները**, իսկ այնուհետև **Կասպից ծովի**[80] մոտ՝ **կասպերը** և **ամազոնուհիները**,...**Վրկանից ծոցի** մոտ ապրում էին **աղվանները**, **մոսխերը**, **վրկանները**[81]: Ինչ վերաբերում է Դիոնիսիոս Ալեքսանդրացուն, ապա նա տալիս է մերձծովյան ժողովուրդների ներքոհիշյալ նկարագրությունը. «**Ես կպատմեմ ամենը այն մասին, թե ինչ ցեղեր են ապրում նրա (*Կասպից ծովի* - Ք. Հ.) շուրջը՝ սկսելով հյուսիս-արևմտյան կողմից: Առաջինը *սկյութներն* են, որոնք բնակվում են *Կրոնյան ծովին* (*Հյուսիսային օվկիանոս*-Ք.Հ.) մերձակա ափը *Կասպից ծովի* բերանով. այնուհետև՝ *ունները* (ουῆνοι), իսկ նրանցից այն կողմ՝ *կասպերը*, որոնցից այն կողմ՝ ռազմաշունչ *կադուսիները* և *աղվանները (ալբանները)*, որոնք բնակվում են լեռնային երկրում: Նրանց մերձակայքում են *մարդերը*, *վրկանները* և *տապիրները***»[82]: Պոմպոնիոս Մելան մեկ այլ կապակցությամբ գրում է, որ **Կովկասյան լեռները** կոչվում էին **Տավրյան**, **Մոսքական**, **Ամազոնյան**, **Կասպիական**, **Կորաքսյան** և Կովկասյան՝ կապված նրանց մերձակայքում ապրող ժողովուրդների անվանումների հետ[83]: Հետագա հեղինակներին անդրադառնալը բոլորովին իմաստ չունի, որովհետև նրանք միայն կրկնում են վերը բերված տեղեկությունները:

---

77 Անդ, XI, VIII, 8:
78 Անդ, XI, II, 5:
79 Տե՛ս А.А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 38.
80 Շատ անտիկ հեղինակներ Կասպից ծովը համարում էին Հյուսիսային օվկիանոսի ծոցը և ենթադրում էին նրանց միացնող նեղուցի գոյությունը: Այս տեսակետը չէին կիսում Հերոդոտոսը, Պտղոմեոսը և մի շարք այլ հեղինակներ:
81 Տե՛ս В.В. Латышев, Известия древних писателей о Скифии и Кавказе, տե՛ս ВДИ, 1949, N 1, сс. 284, 374.
82 Անդ, տե՛ս ВДИ, 1948, N 1, с. 240-241.
83 Անդ, տե՛ս ВДИ, 1949, N 1, с. 274.

Ի՞նչ եզրակացությունների կարող են բերել նշված հաղորդումները: Դեռևս անցյալ դարի 80-ական թվականներին Ա. Հակոբյանը ցույց է տվել, որ վերը բերված հաղորդումների **կասպերը** չեն նույնանում Ստրաբոնի կողմից հիշատակված Փայտակարան աշխարհի կամ Կասպքի **կասպերին**: Նա գտնում է, որ բերված տեղեկությունների **կասպերին** պետք է տեղադրել Կասպից ծովի ափին, սակայն ալբաններից հյուսիս: Մեր կողմից կամենում ենք ավելացնել, որ որքան էլ Ստրաբոնի նշված, ինչպես և Պոմպոնիոս Մելայի ու Դիոնիսիոս Ալեքսանդրացու տեղեկությունները, ընդհանուր առմամբ, համերաշխ են, սակայն այնուամենայնիվ կան ուշադրության արժանի տարբերություններ: Այսպես՝ Ստրաբոնի մոտ **կասպերը** հիշվում են **ալբան-աղվաններից** հյուսիս, որոնցից էլ ավելի հյուսիս տեղադրվում են **ուիտիները**: Պոմպոնիոս Մելան սկյութներից հետո թվարկում է՝ հյուսիսից հարավ ուղղությամբ, **կասպերին** և **ամազոնուհիներին**, այնուհետև՝ **ալբաններին**, **մոսքերին** և **վրկաններին**, իսկ Դիոնիսիոս Ալեքսանդրացին, սկսելով **Վոլգայի գետաբերանից**, հիշատակում է **սկյութներին**, **ուններին**, **կասպերին** և այնուհետև՝ **կադուսիներին**, **ալբաններին**, **մարդերին**, **վրկաններին** և **տապիրներին**: Համեմատությունից, և այն էլ թռուցիկ, կարելի է եզրակացնել, որ ουλποι-ը պետք է անվերապահորեն համարել ουιτιοι-ի աղավաղված ουϰτοι գրության ուշ շրջանում կատարված գրչագրական փոփոխությունը[84], հետևաբար այն հոների հետ նույնացնելու փորձերը ոչ միայն արդարացված չեն, այլև կարող են ժպիտ առաջ բերել[85]: Զարմանալիորեն կադուսիները հայտնվել են ալբաններից հյուսիս, որը հակասում է մյուս հեղինակների տվյալներին և, ամենայն որոշակիությամբ, ճիշտ չէ: Բերված տեղեկությունների համաձայն՝ **կասպերը** հայտնվում են Հյուսիսային Կովկասում, բայց միաժամանակ՝ նրանք Ստրաբոնի օրերում ապրում էին Կասպք-Փայտակարանի և Աղվանից Կասպքի շրջանում: Հետևաբար, պետք է եզրակացնել, որ բերված տեղեկությունների նշանակալից մասը ծագում է շատ ավելի հին ժամանակներից՝ կապված, թերևս, Պատրոկլեսի արշավի հետ, և որ տեղի է ունեցել կասպերի գաղթ Հյուսիսային Կովկասից Այսրկովկաս: Անշուշտ, տեսականորեն կարելի է նաև ենթադրել, որ **կասպերը** կարող էին տեղափոխվել Այսրկովկաս Միջին Ասիայից և հյուսիս-արևելյան Իրանի տարածքներից, սակայն այն պետք է բացառել՝ ոչ միայն ելնելով վերը բերված տվյալներից, այլև մեկ այլ ոչ պակաս կարևոր իրողությունից:

Հայտնի է, որ **Իբերիան** կամ **Վիրքը** անվանվել է նաև **Վարջան**[86], որի նախնական ձևն, անկասկած, լինելու է **Վարգանա** կամ **Վարկանա**: «Աշխարհացոյց»-ը Պարսից Քուստ-ի-Խորասանի կամ Արևելյան Քուստի մեջ հիշատակում է **Վարկան երկիրը կամ աշխարհը**[87], որը նույնական է հունա-հռոմեական աղբյուրների **Հյուրկանիային** և հայկական աղբյուրների **Վրկանից աշխարհին**: Կարելի է, անշուշտ, ենթադրել, թե նմանությունը պատահական է, ինչպես օրինակ՝ **Պիրենեան թերակղզու Իբերիան** և **Վիրք-Իբերիան**[88]: Սակայն

84 Տե՛ս А.А. Акопян, նշվ. աշխ., էջ 39:

85 Տե՛ս Джафаров Ю.Р., Гунны и Азербайджан, Автореф. дисс., Баку, 1981, с. 4-5.

86 Տե՛ս **«Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», Վենետիկ, 1881, էջ 40. «Վարջան, որ է Վիրք»:**

87 Անդ. «Քուստի Խորասան, որ է կողմ Արեւելից. յորում է աշխարհ քսան և վեց, այսինքն զոր ասեմ. Աիմադան, Կոշմ, Վարկան, Ապրշահր, Մրվ,...»:

88 Նմանությունը պատահական համարելով հանդերձ, կարծում ենք, որ այս խնդիրը հատուկ քննության կարիք ունի:

այս դեպքում, ըստ իս, նմանությունը բոլորովին էլ պատահական չէ: **Վրացական Վարջանը**, կամ որ ավելի ճիշտ է, **Վիրքին** տրված՝ **Վարջան** անունը անպայմանորեն պետք է սերտ աղերս ունենա **Վրկան** կամ ավելի **հին Վարկանա երկրանվանը**: Հետաքրքիր է նաև, որ **Վիրքի Վարջան** անվանը ուղեկցում են **Կասպի քաղաքի** և **Կովկասյան լեռներին** տրված **Կասպիական լեռներ** անվանումները: **Վարկանը** (=Վարջան) կամ **Վարկանաև** պետք է ծագեր «**գայլ**» բառից, այսինքն՝ պետք է նշանակեր «**գայլի տոտեմը կրողների երկիր**»[89]: Հետևաբար հնարավոր եզրակացությունն այն է, որ ցեղային տոտեմը՝ «**վարկանաև**» կամ «**գայլը**» փոխարինել է ցեղանվանը: Մենք վերն արդեն, մեր կարծիքով, հիմնավորեցինք կասպ-վրկան էթնիկ նույնությունը: Այն ոչ միայն ճիշտ է **Վրկանից աշխարհի** բնակչության համար, այլև միանգամայն իրական է նաև **Վիրքի** կապակցությամբ: Դատելով կցկտուր, անուղղակի նյութից՝ **կասպ-վրկանների** մի մասը, **Հյուսիսային Կովկասի** վրայով շարժվելով հարավ, հաստատվում է Արևելյան Վրաստանի տարածքում՝ նրան փոխանցելով **Վարկանա-Վարգան-Վարջան** անունը, իսկ նրա քաղաքներից մեկին՝ **Կասպի** անունը: Ցավոք, այս տեղաշարժը չի արձանագրվել աղբյուրներում[90], սակայն կարելի է, գրեթե առանց սխալվելու, ենթադրել, որ այն կատարվել է, թերևս, Դարեհ Ա Վշտասպի վարչական վերակառուցումներից և Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո՝ հիմք ունենալով **կասպերի** գտնվելը Հյուսիսային Կովկասում[91]: Հասկանալի է, որ, եթե **կասպերն** անգամ հաստատվել են Այսրկովկասում՝ մ.թ.ա. V դարի կեսերից հետո, ապա նրանք չէին կարող հիշատակվել Այսրկովկասի տարածքում գտնվող որևէ սատրապության կազմում, ինչն այնքան ցանկալի է աղբրեջանական պատմաբաններին: Իրականում նրանց հաստատվելը Այսրկովկասում եղել է շատ ավելի ուշ: Միանգամայն կիսելով Ա. Հակոբյանի վերը բերված տեսակետը Հյուսիսային Կովկասի կասպերի մասին՝ լոկ կամենում ենք հավելել, որ դրանք և Ստրաբոնի հիշատակած կասպերը նույն ժողովուրդն են, որն սկզբում ապրել է Հյուսիսային Կովկասում, այնուհետև ինչ-ինչ պատճառներով շարժվելով հարավ, հաստատվել է Այսրկովկասում:

Կրկին վերադառնալով **կասպերի** և **վրկանների** նույնացման խնդրին՝ հարկ է նշել, որ **պավսիկները** և **պանթիմաթները** պետք է տեղադրվեն **Վրկանից** արևմուտք և **դարեյտներից** արևելք[92]: **Պավսիկները** և **պանտիմաթները**, ցավոք, այլևս չեն հիշատակվում աղբյուրներում, որը և հնարավորություն չի տալիս պարզելու ստուգապես ո՛չ նրանց բնակության որոշակի տարածքը, ո՛չ էլ էթնիկ պատկանելությունը:

Ի. Դյակոնովը հնարավոր է համարում **պավսիկների**, **պանտիմաթների** և **դարեյտների կադուսիական** կամ **կատիշական** ցեղեր լինելը և **անարիակների**՝ մերձկասպյան ցեղախմբին պատկանելը: Սակայն, մեր կարծիքով, վերոհիշյալ երեք ցեղերն ավելի շուտ կարող էին պատկանել **անարիակների** աշխարհին կամ **Վրկանից** ցեղախմբին, քան **կատիշներին**: Նյութը սակավ է, սակայն ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ միայն նման մեկնաբանության դեպքում է հնարավոր, մասնավորապես՝ **սասպեյրների** և Մեդիայի հարևանությունը, ինչի մասին հավաստում է Հերոդոտոսը: Հետևաբար **Դամավանդ-Յասոնիոն լեռից** արևմուտք ընկած առափնյա հողերը, որոնք օղակում են **Կասպից ծովը** հարավ-

89 Տե՛ս Roland G. Kent, Old Persian..., CA 206:
90 Տե՛ս Xenophontis Expeditio Cyrii, I, V, 2:
91 Այս հարցը կարող է նաև այլ լուսաբանում ստանալ՝ «Կյուրոպեդիա»-ի տվյալների լույսով:
92 Տե՛ս И.М. Дьяконов, История Мидии, с. 447.

արևմուտքից, պետք է կազմեին **Մեդիա-Մարաստանի** մասը: Ըստ որում, նրանց սահմանակցության շրջանը պետք է լիներ **Կուր գետի** ստորին ավազանը, ամեն ինչից դատելով՝ **Երասխի** և **Կուրի** միախառնումից մինչև **Կասպից ծովն** ընկած շրջանը:

Տասնմեկերորդ սատրապությունը **Վրկանի** և շրջակա տարածքներում տեղադրելու դեպքում, չնայած վերը կատարված քննությանը, արտաքնապես շարունակում է օրակարգում մնալ տասնհինգերորդը Այսրկովկասում տեղորոշելու խնդիրը, որովհետև **սակ-սկյութներն** իրոք հաստատվել էին **Գանձակ** քաղաքի (ներկայիս **Գանջա**) շրջակայքում՝ երկրամասին տալով իրենց անունը (**Սակասենե-Շակաշեն**), իսկ նրանցից ոչ շատ հեռու գտնվում է հունա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրների **Կասպիանե-Կասպք** երկրամասը: Մեր քննությունը բացառում է նման հնարավորությունը ևս: Ըստ որում դրա բանալին պետք է փնտրել պարսկական սեպագիր արձանագրություններում:

Դարեհ Ա-ի Բեհիսթունյան ժայռի վրա թողած եռալեզվյան արձանագրության մեջ, ինչպես վերը նշեցինք, պարսից արքան հիշատակում է իրեն հպատակ 23 երկրների անուններ, որոնց մեջ հանդիպող **Saka-Սակա** երկիրը արձանագրված է **Գադարա (=Գանդարա)**, **Սատագուշ** կամ **Սատագյուդիա** և Արաքոսիա երկրների մերձակցությամբ կամ հարևանությամբ[93]: Այս իրողությունը շատ ուսումնասիրողների, այդ թվում նաև մեզ, իրավունք է տալիս տասնհինգերորդ սատրապությունը տեսնելու Միջին Ասիայի տարածքում: Մեզ համար նրա Միջին Ասիայում գտնվելը լիովին բավարար է, ուստի մեր առջև խնդիր չենք դնում մանրակրկիտ քննության առնելու, թե **սակ-սկյութները** Միջին Ասիայի հատկապես որ շրջաններն էին բնակեցնում, սակայն մի բան հստակ է, որ նրանց ցանկացած տեղադրության դեպքում բացառվում է **սակերին** Այսրկովկասում տեսնելու հնարավորությունը: Հետևաբար՝ Վ. Ստրուվեի կողմից **սակերին Շակասենե-Շակաշենի սակերի** հետ նույնացնելու փորձը ոչ մի լուրջ կռվանով չի հիմնավորված: Ավելին, այն հակասում է թե՛ Հերոդոտոսի մյուս տվյալներին և թե՛ պարսկական արձանագրությունների հաղորդումների տրամաբանությանը[94]:

**Կասպերի** հիշատակությունը առաջավորասիական տարածաշրջանի տարբեր հատվածներում ցույց է տալիս նրանց նախնական էթնիկ միասնությունը: Ըստ որում՝ կասկած չի կարող հարուցել նրանց իրանախոս ցեղ լինելը և, եթե ուսումնասիրողները աղվաններին համարում են Կովկասյան էթնիկ ընդհանրություն, ապա կասպերը կարող էին մտնել մի մասով՝ Աղվանից կոչված թագավորության մեջ, սակայն բոլորովին էլ չպատկանելով կովկասյան լեզուների ընտանիքին: Մենք այս հանգամանքի վրա ենք հրավիրում ընթերցողի ուշադրությունը, քանի որ, ինչպես ստորև կհամոզվենք, աղվանական կոչված էթնիկ ընդհանրությունը սկզբում միանգամայն այլ բնույթ ուներ:

Այն մասին, որ Ստրաբոնը ճիշտ է՝ **Կասպիանե երկիրը** տեսնելով և՛ Աղվանից կոչված թագավորության, և՛ Արտաշես Ա թագավորի տիրույթների մեջ, հստակ տեղեկություն է պահպանել Մովսես Կաղանկատվացին: Խոսելով Մեսրոպ Մաշտոցի առաքելության մասին դեպի Աղվանք՝ նա գրում է. «**Եւ ձգէր զքարոզչութիւն աւետարանին *յաշխարհն Ուտիացւոց* և *յԱղուանս*, և՛ *Լփինս*, և**

93 Տե՛ս R.G.Kent, Old Persian..., p. 117: Gadāra:Saka:Qataguš:Harauvatis (=Aracosia).

94 Մեր խնդրի քննության տեսակետից այս հարցը հետագա հետազոտման կարիք չունի, սակայն մեծ կարևորություն է ներկայացնում Աքեմենյան Պարսկաստանի վարչաքաղաքական պատմության ուսումնասիրության առումով:

**ի *Կասպս*, և մինչև ի *դուռն Չորայ***»[95]: Մաշտոցի երթուղին շատ հստակ է. **Ուտիացվոց աշխարհ-Աղվանք-Լփինք-Կասպք-Չորա դուռն**: Համաձայն այդ երթուղու՝ **Կասպքը** հայտնվում է **Լփինքի** և **Չորա դռան** միջև՝ **Կասպից ծովին** առափնյա շրջանում, ինչը լիովին ապացուցում է հայկական և աղվանական **Կասպքերի** գոյությունը: Նույն իրողությունը մենք տեսնում ենք «Աշխարհացոյց»-ում, որը հակառակ այսօր տիրապետող կարծիքի, պատկանում է ոչ թե Անանիա Շիրակացու, այլ Պատմահոր՝ Մովսես Խորենացու գրչին: Նրա Ասիական Սարմատիայի նկարագրության մեջ , որն ամեն ինչից դատելով, արտացոլում է III դ. քաղաքական կացությունը, ասված է. «**Եւ բնակին ի *Սարմատիա* ազգ բազումք, որք են այսոքիկ. ...*Տապասպաւանք, Աղուպականք, Խենաւկք, Շիղպք, Ճիղպք, Խեղայք, Կասբք, Փախք, Շրուանք...***»[96]: **Կասպքի** հարևանությամբ **շիղպերի**, **ճիղպերի**, **Շրվանի** և մյուս ցեղերի ու ցեղային երկրների հիշատակությունը ոչ մի կասկած չի թողնում, որ այստեղ խոսքը վերաբերում է այսպես կոչված՝ աղվանական **Կասպքին**, որը հայտնվել է **Ասիական Սարմատիայի** կազմում, այլ խոսքով՝ քաղաքակիրթ աշխարհից դուրս, **մազքթական ցեղերի** Այսրկովկաս ներխուժելու հետևանքով:

Կարծում ենք՝ ընթերցողին պարզ դարձավ, որ այն դրույթը, թե իբր՝ սկզբում **աղվանները** հիշատակվում են **կասպ** անվան ներքո, հեռու է իրականությունից: Կ. Տրևերի կարծիքով՝ անտիկ սկզբնաղբյուրները տեղեկություններ են պահպանել ևս մի քանի ցեղերի մասին, որոնք մտել են ալբանական միության մեջ**. ուտիներ**, **գելեր**, **լեգեր**, **գարգարներ**, **սիլվեր**, **դիդուրներ**[97]: Ինչպես վերը տեսանք, հեղինակի համար աղվանական միությունը կազմում են Ստրաբոնի հիշատակած 26 ցեղերը, որոնք նախկինում կառավարվել են իրենց արքայիկների կողմից, իսկ հետո հայտնվել էին մեկ միապետի իշխանության ներքո: Հետևաբար, տեսնենք, թե հեղինակի հիշատակած ցեղերից ո՞րոնք էին, որ կարող էին մտնել այսպես կոչված՝ Աղվանից թագավորության կամ Աղվանական ցեղային միության մեջ:

Ուստի քննության առնենք նշված ցեղերն առանձին-առանձին և վերջում անդրադառնանք էթնիկ ընդհանրական «**ալբան-աղուան**» անվանը: Կասպերից հետո Կ. Տրևերը հիշատակում է **ուտիներին**՝ որպես նշված 26 ցեղերից մեկը: Սակայն ոչ միայն նա, այլև մյուս բոլոր հետազոտողները, ովքեր փորձում են հայկական **Ուտիք աշխարհի** անունը կապել այսպես կոչված **ուտիների** հետ, պարզապես ցույց են տալիս իրենց անգրագիտությունը՝ տեղանունների և էթնանունների վերլուծության խնդրում: Վերջերս լույս տեսավ Ռաուֆ Մելիքովի «Աղրբեջանի էթնիկ պատկերը Աքեմենյան տիրապետության շրջանում (VI-IV մ.թ.ա.)» աշխատությունը, որը թերևս աղրբեջանական պատմագիտության վերջին խոսքն է՝ **Կուրի** և **Երասխի** միջին և ստորին ավազանի էթնիկ կազմի վերաբերյալ: Ավելորդ համարելով անդրադառնալ այն խնդրին, որ Աքեմենյան տերության շրջանում դեռ ո՛չ **Ատրպատական** կար և ո՛չ էլ, բնականաբար, դրանից ինչյունափոխված **Աղրբեջան** անունը, ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք այն խնդրի վրա, որ ըստ հեղինակի՝ ուտիները հայտնի են ակկադական, շումերական, ուրարտական և անտիկ սկզբնաղբյուրներից, ինչպես նաև վաղմիջնադարյան հայ հեղինակների և իբր թե՝ աղվան պատմիչ Մովսես

95 Մովսես Կաղանկատվացի, գիրք Ա, գլ. ԻԷ:
96 Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը (ուսումնասիրություն), Եր., 1944, էջ 347: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ գրիչների մեղքով Կասպքի անունը սպրդել է:
97 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 46:

Կաղանկատվացու երկերից[98]: Ըստ հեղինակի՝ չնայած **ուտիների** ցեղը քննության է առնվել արդի շատ հետազոտողների կողմից, մինչև օրս էլ նրանց բնակության տարածքի և էթնիկ ծագման հարցերը ճեռք չեն բերել բավարար պարզություն: Հեղինակը հավելում է, որ **ուտիների** խնդրին ուսումնասիրողները անդրադարձել են լոկ հպանցիկ՝ կապված Մարաստանի, Ատրպատականի և Աղվանքի պատմության հետազոտության հետ[99]:

Պատմագիտության մեջ կարծիք է հայտնվել, որ **ուտիները** սերում են իբր՝ **կուտիներից**, որոնք մ.թ.ա. XXIII-XXI դդ. բնակվել են Ատրպատականի և Զագրոշի շրջաններում: Իսկ Ի. Դյակոնովը լիովին հավանական է համարում Զ. Յամպոլսկու այն կարծիքը, որ **կուտիների** անունը նույն էթնիկական անվանումն է, որ առավել ուշ շրջանի սկզբնաղբյուրները պահպանել են «**ուտիներ**», «**ուիտիներ**», «**ուդեր**», «**ուդիններ**» և «**օտեններ**» ձևով[100]: Թաքնվել Դյակոնովի թիկունքում և նման տեսությունը վերակենդանացնել, կարծում ենք, իմաստ չուներ: Ուստի և հեղինակն ավելի լավ կաներ բերեր առնվազն երեք օրինակ՝ ցույց տալու համար, որ **Կուտիի** «**կ**»-ն կարող էր վերածվել սկզբում «**u**»-ի, այնուհետև «**h**»-ի և վերջապես անհետանալ:

Ի. Ալիևը հակված է կարծելու, որ **կուտիները**՝ դուրս մղված **լուլուբեյների** կողմից, գրավում են հարավային և հարավ-արևելյան Անդրկովկասի երկրամասերը և հայտնի դառնում «**էտիուսի**» անունով, որը հետագայում վերածվում է «**ուտի**»-ի, մի ցեղի, որը եղել է Կովկասյան Ալբանիայի հիմնական բնակչությունը[101]: Եվ եթե Ի. Ալիևը, համադրելով «**կուտի**» և «**ուտի**» անունները, գտնում էր, որ «**կուտի**»-ի սկզբնական «**կ**»-ի անկումը բնորոշ է Զագրոշի լեռնականների լեզուներին, ապա Ի. Դյակոնովը ավելի ուշ գտնում էր, որ **Kutī**-ի արտաքին նմանությունը uti էթնանվանը բավարար չէ որոշակի եզրակացությունների համար[102]: Այսուհանդերձ Ռ. Մելիքովը պաշտպանում է «**կուտի**»-ի և «**ուտի**»-ի լեզվական ազգակցությունը՝ գտնելով, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը պատկանել են կովկասյան լեզուների հյուսիս-արևելյան ճյուղին: Դրանով է նա բացատրում Անդրկովկասում միջագետքյան և հյուսիս-իրանյան հնագիտական իրերի տարածումը և որոշ ձեռագրերում կուտիներին Κουίϐιοι անվանելը[103]:

*Ռ. Մելիքովը անդրադառնում է նաև Բ. Տուրաևի տեսակետին, թե Էրիունին համապատասխանել է Անդրկովկասի հարավային մասին, թե Ի. Մեշչանինովը Էթիունցիներին համարել է ուդերի (ուդինների) նախնիներ, որոնք բնակվել են Նուխիի գավառի Նիջ և Վարդաշեն գյուղերում և տեղափոխվել են այդ շրջանը ուշ ժամանակներում: Որպես ապացույց նշվում է, որ ուդերը չեն բնակվում այլևս նախկին Էթիունիի սահմաններում, թե Գր. Ղափանցյանը Էթիունին համարել է ընդարձակ երկիր կամ էլ բազմաթիվ մանր իշխանություններից բաղկացած դաշնային պետություն: Սակայն ընդունելով հանդերձ ուտիների գտնվելը Երասխի մերձակայքում՝ Ատրպատականի սահմանին, քիչ հավանական*

---

98 Տե՛ս Р. Меликов, Этническая картина Азербайджана в период Ахеменидского владычества (VI-IV вв. до н. э.), Баку, 2003, с.111:

99 Անդ:

100 Տե՛ս И.М. Дьяконов, История Мидии, էջ 110: Նույնի "Языки древней Передней Азии", М., 1987, с. 23.

101 Տե՛ս И. Алиев, О первых племенных союзах на территории Азербайджана, Баку, 1959, с. 4. Տե՛ս նաև И. Алиев, История Мидии, Баку, 1960, с. 65.

102 Տե՛ս И. Алиев, История Мидии, с. 65. И.М. Дьяконов, Языки древней Передней Азии, ծնթ. 12:

103 Տե՛ս И. Алиев, История Мидии, с. 156, 65. Հեղինակը նկատի ունի Ստրաբոնի երկի Կ. Մյուլլերի Փարիզյան 1858թ. հրատարակությունը: Տեղեկանքը գալիս է Զ. Յամպոլսկուց:

*է համարել Etiuni-ի կամ Etiuḫi-ի նույնացումը uti-ին*[104]*:*

*Գ. Մելիքիշվիլին իրավացիորեն գրնում էր, որ Էթիունի էր կոչվում Կարսից մինչև Սևանա լիճը ներառող տարածքը, և Էթիունին քաղաքական կազմավորում չի եղել, այլ ընդհակառակը՝ աշխարհագրական հասկացություն: Նրա կարծիքով՝ Էթիունին տեղական անվանում է և իբր՝ կապ ունի աղվանական ուդ կամ ուդին տեղանվան հետ, հետևաբար Էթիունիի բնակչությունը համարել է կովկասալեզու*[105]*: Անցնելով որոշ հեղինակների մտավարժանքներին, թե Սևանա լճի ավազանի վանյան շրջանի Իշտիխունիվ, Լուերունիվ, Կամանիվ երկրների անունները, երկրներ, որոնք գտնվում են Ուեդուրի-Էթիունի երկրում, աղերս ունեն հյուսիսկովկասյան Գունիք, Յուրիք, Կախիք և այլ անունների, uduri-ին՝ ուդին ցեղանվան, Ուրիք աշխարհանվան հետ, հեղինակը կանգ է առնում վանյան արքա Սարդուր Բ-ի արձանագրություններից մեկում հանդիպող Կուալբանի երկրանվան վրա՝ այն համահունչ գտնելով Ալբանիային*[106]*:*

*Այնուհետև Ռ. Մելիքովը նշում է, որ ուրիների մասին գրում են Հերոդոտոսը, Ստրաբոնը, Պլինիոս Ավագը, Կղավդիոս Պտղոմեոսը, Եվսեբիոսը, Ստեփան Բյուզանդացին, իբր՝ աղվան պատմիչ Մովսես Կաղանկատվացին և հայ հեղինակներ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին և Մովսես Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ը*[107]*:*

*Արդ տեսնենք, թե որքանո՞վ են հիմնավոր հեղինակի բերած կռվանները: Ըստ Ռ. Մելիքովի՝ Հերոդոտոսը հիշատակում է ուրիներին Աքեմենյան տերության տասնչորսերորդ սատրապությունում: Հույն հեղինակի մոտ ասված է. «Սագարտրիները, սարաևգները, բամանները, ուրիները (իմա՝ Ουϱιων -Հ.Բ.), մյուկերը և Կարմիր ծովում գտնվող կղզիների բնակիչները, որտեղ արքան բնակեցնում է, այսպես կոչված, տեղահանվածներին, այս բոլորը վճարում էին վեց հարյուր տաղանդ հարկ. սա տասնչորսերորդ նահանգն էր»*[108]*: Պատմահոր մեկ այլ հաղորդման համաձայն՝ «ուրիները և մյուկերը և պարիկանիները զինված էին պակտյոսացիների նման: Սրանց առաջնորդում էին հետևյալները. ուրիներին և մյուկերին՝ Դարեհի որդի Արամենեսը, իսկ Պարիկանիներին՝ Ոյոբազոսի որդի Սիրոմիտրեսը»*[109]*: Հիրավի, պետք է շատ վառ և երազկոտ երևակայություն ունենալ՝ տեղադրելու համար ուրիներին, որոնք մյուսների հետ միասին գտնվում էին Կարմիր (իմա՝ Արաբական) ծովի մերձակայքում, Ասրպատականի տարածքում: Աքեմենյան տերության վարչատարրապական քարտեզը կազմողներից և ոչ մեկը չի էլ փորձել նման տեղադրություն կատարել: Մինչդեռ, ըստ Ռ. Մելիքովի՝ սովորաբար սագարտրիները տեղադրվում են ներկայիս Իրանի արևելա-կենտրոնական շրջանում, սարաևգները՝ ներկա Աֆղանստանի հարավ-արևմտյան մասում, ուրիները՝ Պարսից ծոցի հյուսիս-արևելյան առափնյա և մյուկերը՝ Օմանի ծովի հյուսիս-արևմտյան առափնյա հատվածում*[110]*:*

*Ժամանակին Ի. Դյակոնովը կարծիք է հայտնել, թե 14-րդ սատրապության սագարտրիներից զատ հավանաբար գոյություն են ունեցել արևմտյան սագարտրիներ, որոնց նա փորձում է նույնացնել սեպագրական շրջանի Զիկիրտու երկրի բնակիչների հետ*[111]*: Եթե*

104 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 113:
105 Տե՛ս Меликишвили Г.А., Население северных областей Наири-Урарту и его роль в древневосточной истории,-"XXV международный конгресс востоковедов", М., 1960, сс. 2-4.
106 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 113-114:
107 Անդ, էջ 115:
108 Տե՛ս Herodotus, III, 93:
109 Անդ, VII, 68:
110 Տե՛ս "Atlante Storico", Navara, 1979, "Impero Persiano", քարտեզ 7: F.W. Putsgers, Historischer Schul-Atlas, Տե՛ս 53. Auflage, Bielefeld und Leipzig, 1936, քարտեզ 6: "Atlas zur Geschichte", Band I, Gotha/ Leipzig, 1973, քարտեզ 8 III:
111 Տե՛ս И. Дяконов, История Мидии, с. 340. Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Ер., 1985, с. 81.

*անգամ զուտ տեսականորեն ընդունենք նման ցեղի գոյությունը Այրպատականի տարածքում, վիճակը ոչնչով չի փոխվում: Կամ պիտի ենթադրել, որ նրանք ինչ-ինչ պատճառներով տեղափոխվել են հարավ-արևելք և նույնական են 14-րդ սատրապության սագարտիներին կամ էլ իրար հետ ոչ մի առնչություն չունեն, քանի որ ուտիների և մյուկերի տեղադրությունը որոշվում է ոչ թե Զիկիրտուի տեղորոշմամբ, այլ շատ ավելի հարավ-արևելք գտնվող՝ սագարտիների և սարանգների բնակության վայրով:*

*Շատ տարօրինակ կարծիք է հայտնել Ի. Խլոպինը, որը գտնում է, թե սագարտիները սխալմամբ են մտցվել 14-րդ սատրապության մեջ՝ վրկանների փոխարեն[112]:*

*Ռ. Մելիքովը, քննության առնելով նախորդ ուսումնասիրողներին, գտնում է, որ սագարտիները զբաղեցրել են Հարավային Աղրբեջանի շրջանները, որտեղ գտնվել է Ասագարդեին նույնական Զիկիրտու երկիրը, մյուկերը ապրել են Արաքս գետի մոտ, իսկ ուտիները՝ Կուր գետի մոտ: Երկուսից մեկը. կամ Ռ. Մելիքովը չի պատկերացնում Հերոդոտոսի սատրապական ցանկի վարչաքաղաքական բաժանման համակարգը, կամ էլ ամեն գնով փորձում է հերոդոտյան հիշատակության ցեղերին հայտարարել Կուր-Արաքսյան ավազանի բնակիչներ: Իրականում, ինչպես ցույց են տվել մեծ թվով ուսումնասիրողներ, սագարտիները պետք է բնակվեին Քաֆիրիստանում, մյուկերը՝ շատ հարավ գտնվող Մակրանում և ուտիները՝ Յուտիայում: Հավանաբար Յուտիան սկզբում մաս է կազմել Պարսքի, քանի որ Վահյազդատը, որ ապստամբում է Դարեհի դեմ, ապրել է Յուտիայում և ապստամբությունը ճնշելուց հետո պարսից թագավորը հանել է այդ երկիրը Պարսքի կազմից, մտցրել է 14-րդ սատրապության մեջ և հարկատու դարձրել[113]:*

*Ըստ որում, առավել հավանականն այն է, որ մ.թ.ա. VI դարում Յուտիան պարսկահնոս երկիր է եղել, ուստի Ռ. Մելիքովի կարծիքն այն մասին, թե ուտիները վերաբերում են արևելա-հյուսիսկովկասյան լեզվախմբին[114], ոչնչով հիմնավորված չէ: Տարրական ծանոթություն չունենալով պատմաաշխարհագրական քննության մեթոդներին՝ նա հայտարարում է, թե ուտիների երկրամասի նույնացումը Յուտիային համոզիչ չէ, քանի որ հին պարսկական Yautiā և հին հունական Οὐτίοι (ըստ հեղինակի՝ Uti-ից կամ Outii-ից, հավանաբար, նաև Uiti-ից) ձևերը ճիշտ չեն համընկնում և չեն կարող վկայել այդ անունների նույնության մասին և որ Վահյազդատի ապստամբությունը եղել է Պարսքում[115]: Բոլորովին չհամաձայնելով հեղինակի հետ այդ բացատրության հարցում՝ ստորև ցույց կտանք, թե որքանո՞վ է հեղինակը հարգում համապատասխանության խնդիրները ուտիների էթնիկական պատկանելության հարցերը քննելիս:*

*Անդրադառնալով Հերոդոտոսի մեկ այլ վկայությանը, թե հույն-պարսկական պատերազմներում ուտիները, մյուկերը և պարիկանիները զինված էին պակտյուների պես, իսկ ուտիներին ու մյուկերին առաջնորդում էր Դարեհի որդի Արամեհեսը (Քսերքսես արքայի եղբորորդին-Ք.Հ.), հեղինակը եզրակացնում է, որ ուտիները և մյուկերը ոչ միայն հիշվում են միասին, այլև ունեն այնպիսի նշանավոր առաջնորդ, որը հավաստում է, թե պարսիկները ինչ կարևորություն էին տալիս ուտիների և մյուկերի զորքերին: Երկրորդ եզրակացությունն այն է, որ նրանք մտել են միևնույն ռազմավարչական միավորի մեջ, հետևաբար եղել են հարևաններ[116]: Մինչև այժմ հեղինակի եզրակացությունները կարծես թե*

---

112 Տե՛ս Хлопин И.Н., Этнография державы Ахеменидов по Геродоту,-"Страны и народы Востока", М., 1969, в. 87, с. 187.

113 Տե՛ս Грантовский Э.А., Сагартии и XIV округ государства Ахеменидов по списку Геродота, ИАН Азерб. ССР, серия литература, язык и искусство, 1968, N 2, сс. 239-240.

114 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 115:

115 Անդ, էջ 115-116:

116 Անդ, էջ 116:

*առարկություններ չեն հարուցում, սակայն հաջորդ եզրահանգումը պարզապես ապշեցնում է: Ըստ Ռ. Մելիքովի՝ իրոք, ուրիների և մյուկերի բնակության վայրերը գտնվել են իրար կողքի և որոշակի ժամանակաշրջաններում անմիջականորեն շփվել են, քանի որ Մուղան-Մուկանի հյուսիս-արևմտյան սահմանը եղել է Արաքս գետը, իսկ ուրիների մարզը տարածվել է Թարթառ գետի ավազանից մինչև Արաքս[117]: Որպես հավելյալ փաստ հեղինակը բերում է Պլինիոս Ավագի տեղեկությունն այն մասին, թե Ուրիք-Օրհենեն սահմանակցել է Ատրպատականին Արաքս գետով[118], այն մասում, հավանաբար, որը հարել է Մուղանին: Այնուհետև հեղինակը ուշադրություն է դարձնում ուրիների զինվածությանն ու հագուստներին՝ ցույց տալով, որ ուրիները կապերի պես զինված են եղել եղեգնից պատրաստված տեղական աղեղներով, սակայն, ի տարբերություն նրանց, կրել են դաշույններ: Կապերի նման ուրիները կրել են այծի մորթուց պատրաստված հագուստներ և որ որոշ պատմաբանների կարծիքով՝ մ.թ.ա. VII դ. կապերը և ուրիները ապրել են հարևանությամբ՝ Փայտակարան նահանգում: Հետևում է եզրակացությունը, թե ուրիների և մյուկերի բնակության շրջանները մտել են մի շրջանի մեջ՝ ներառելով հարավ-արևելյան Անդրկովկասը՝ Կուր գետից հարավ ընկած շրջանում[119]: Այնուհետև պարզվում է, որ իբր՝ աքեմենյան արձանագրություններում դրանք պետք է մտնեին Միդիայի սատրապության մեջ, իսկ, երբ Ասագարտան վերածվում է առանձին սատրապության, մտնում է վերջինիս մեջ, այլապես Ասագարտան ուրիներին և մյուկերին կբաժաներ Մարաստանից: Եվ որ, իրոք, Հերոդոտոսի մոտ սագարտիները, ուրիները և մյուկերը մտցված են միևնույն XIV սատրապության մեջ[120]: Այս հարցը դեռևս մենք կքննարկենք, իսկ այժմ հետևենք հեղինակի հաջորդ դատողություններին:*

*Ուրիք-Օրհենեն, ըստ Ռ. Մելիքովի, գտնվել է Կուրի աջափնյակում և հյուսիս-արևմուտքում սահմանակցել է Շակաշենին, իսկ արևմուտքում՝ (?) Հայաստանին, հարավում Արաքս գետով Ատրպատականին այն մասում, որը հարել է Մուղանին և արևելքում՝ Կասպիանե-Կասպքին[121]: Հետո հեղինակի երևակայությունը այնպիսի խթան է ստանում, որ նա հայտարարում է, թե մ.թ.ա. II դ. հայոց Արտաշես Ա (189-160) թագավորը գրավում է ոչ միայն Կասպիանեն, Փավնիտիսը, Բասորոպեդան, այլև Խորչենեն, Գոգարենեն և Պարիադրեսի լանջերը[122], իսկ Աղվանքը իրեն է ենթարկում Օրհենե-Ուրիքը: Եվ միայն մ.թ.ա. I դ. հայոց թագավոր Տիգրան Բ-ն (95-55) կարճ ժամանակով գրավել է Օրհենե-Ուրիքը[123]:*

*Իրականությունն այն է, որ հեղինակը, նույնացնելով Ատրաբոնի երկում հանդիպող վիտիներին կամ ուիտիներին ուրիների հետ, նշում է, որ համաչայն Ատրաբոնի, Վրկանին սահմանակից Կասպից ծովը տարածվում է մինչև մարական և հայկական լեռների շփման կետը: Այդ լեռներն ունեն լանջերում կիսալուսնի տեսք, որոնք ավարտ գտնելով ծովի մոտ, կազմում են ծոցի ամենաահեռավոր անկյունը: Իսկ այդ լեռների լանջին՝ ծովից մինչև զագաթները ոչ մեծ տարածության վրա ապրում է ալբանների ու հայերի մի մասը, սակայն լանջի մեծ մասը գբաղեցնում են գելերը, կադուսիները, ամարդները, վիտիները (իմա՛ ուիտիներ-Ռ.Հ.) և անարիակները[124]: Մեկ այլ կապակցությամբ հույն աշխարհագրը գրում է, թե վրկաններից հետո ծովափին ապրում են ամարդները, անարիակները, կադուսիները,*

117 Անդ:
118 Տե՛ս Plin. Hist. Natur., VI, 42:
119 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 116-117:
120 Անդ:
121 Անդ, էջ 117:
122 Տե՛ս Strabo, XI, 14, 5:
123 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 117:
124 Տե՛ս Strabo, XI, 8, 8:

*ալբանները, կասպերը, վիտիները և մինչև սկյութները, հավանաբար, այլ ժողովուրդներ[125]: Հեղինակը համաձայն է Կ. Տրևերի այն մտքին, որ Ստրաբոնը, Պլինիոս Ավագը և Պտղոմեոսը, խոսելով ուտի-վիտիների մասին և ցույց տալով Կասպից ծովի առափնյա շրջանը որպես նրանց բնակության վայր, օգտվել են Պատրոկլեսի հաշվետվությունից, որն իբր՝ հետազոտելով Կասպից ծովի առափնյա շրջանը, կարող էր ծանոթ լինել միայն այն ուտիներին, որոնք բնակվում էին մերձափնյա լեռնային վայրերում, այն դեպքում, երբ այդ ցեղի հիմնական մասը զբաղեցրել է Կուրի չախափնյակն ու աջափնյակը[126]: Վիտիների մարզում Ստրաբոնը տեղորոշում է նաև էնիաններին, պարրասիներին, ինչպես նաև անարիակներին[127]:*

*Մինչդեռ, Ռ. Մելիքովը մեջբերել է հայոց Պատմահոր հաղորդումը և աղավաղելով՝ նրան հետևած Մովսես Կաղանկատվացու տեղեկությունները, որոնք արդեն մեր կողմից մեջ են բերվել, հանգել այն եզրակացության, որ Արաքս գետի ոլորանից մինչև Աղստաֆա-Ռուսթավի գոտին մ.թ. I դարում պատկանել է Աղվանքին, որ հատկապես այդ տարածքում են գտնվել Ուտիք, Ճավդեք, Արցախ և Գարդման երկրամասերը, որոնք մտել են պատմական Ալբանիայի մեջ և բնակեցված են եղել ալբանական ցեղային միության հիմնական ցեղերի կողմից: Հետևում է հաջորդ ցնցող հայտարարությունը, թե այն հանգամանքը, որ ուտիները հանդիսանում են դիցաբանական ալբանական նախնու՝ Առանի հետնորդները, որին գահ է բարձրացրել իբր՝ պարթևական թագավոր Վաղարշակ/Վոլոգեսոսը, հիմք է տալիս կարծելու, որ ուտիները եղել են ալբանական ցեղային միության հիմնական ցեղերից մեկը[128]: Հենվելով հնագիտական նյութի վրա՝ հեղինակը գտնում է, որ ուտիները եղել են Յալոյլութեփեի մշակույթի կրողներ (մ.թ.ա. IV դ.-մ.թ. I դ.) և որ դա ցույց են տալիս Կուրկաշենի շրջանի Նիջ գյուղի մոտ կատարված պեղումների նյութերը[129]: Շարունակելով զարգացնել իր միտքը՝ հեղինակը նշում է, որ հետագա դարերում «ուտիները» հիշատակվում են հին պատմագիրների երկերում Ուտիք-Օտենե երկրամասի անվան տեսքով: Արաբ աշխարհագետները, անդրադառնալով Շաքիի գոտու բնակչության էթնիկ պատկանելությանը, այն որոշակիորեն կոչում են ūð, այսինքն «ուդինական» և որ արաբական տիրապետության շրջանում Ուտիքի դաշտային մասի բնակչությունը շարունակում էր խոսել ալբաներեն, այսինքն՝ ուդիներեն լեզվով: Զաքարիա Հռետորը և արաբ հեղինակներն այդ լեզուն համարում են առաներենը, իսկ երկրամաս Ուտիքը՝ Առան, այսինքն Ալբանիա՝ բառիս նեղ իմաստով[130]:*

*Այսպիսով, եզրակացնում է Ռ. Մելիքովը, ուտիները (οὐτιοι կամ οὖιτιοῖ և նրանց բնակության երկրամասի անունը (Οὐτία, Ἀθηνᾶ ըստ անտիկ հեղինակների) ծագում են նախասկզբնական Uti կամ Viti էթնանունից[131]: Հետևելով Կ. Տրևերին, հեղինակը, հենվելով Պլինիոս Ավագի երկում հիշատակված «ուտիդորս» գեղանվան վրա[132], գտնում է, որ այն առաջացել է վիտի-ուդիների և աորսների անունների միախառնվելուց և, հավանաբար, նշանակել է «ուտիական աորսներ» (համմր. «կելտական սկյութներ», «կելտական լիգուրներ», «Լյուկիական ասորիներ» և այլն)[133]: Չհստակեցնելով այլևս այս անվանումների քննության մեջ , որ մտավարժանքներից այն կողմ չի անցնում, նշենք, որ հեղինակը հին ուտիների հետնորդներ է համարում նաև ներկայիս ուդիներին՝ հենվելով Ա. Շանիձեի*

---

125 Անդ:
126 Տե՛ս К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 46:
127 Տե՛ս Strabo, XI, 7, 1; XI, 8, 8; XI, 14, 14:
128 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 118:
129 Անդ, էջ 118-119:
130 Անդ, էջ 119:
131 Անդ:
132 Տե՛ս Plin. Hist. Nat., VI, 42: Р. Меликов, նշվ. աշխ., էջ 119-120:
133 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 119-120: Капанцян Гр., Хайаса-колыбель армян, Ереван, 1948, с. 172.

*ուսումնասիրության վրա[134]: Հեղինակը հարկ է համարում ավելացնել նաև, որ հայկական ավանդույթը ևս պատմական ալբաններին, այսինքն՝ ուտիներին, նույնացնում է ժամանակակից ուդիների հետ և որ իրենք՝ ուդիները, դեռևս XVIII դարի սկզբին իրենց համարում էին «աղվաններ և ազգությամբ ուտիներ»[135]:*

*Ռ. Մելիքովն իրավացի է մի հարցում, որ ուտիների լեզվի պատկանելությունը նախիական-դաղստանյան լեզվախմբին կասկածներ չի հարուցում և ոչ մի լուրջ հետազոտողի մոտ: Նա քննադատում է Ա. Մնացականյանին, որը ուտիներին համարել է հայկական ցեղ, գտնելով, որ դա ոչ մի բանով չի հաստատվում, քանի որ հայերենը և ուտիերենը (չի գրում ուտիներենը-Ռ.Հ.) պատկանում են տարբեր լեզվախմբերի: Քննադատության է ենթարկվում նաև Ա. Հակոբյանը[136], որն իբր՝ընդունելով ուտիների կովկասյան լեզվախմբին պատկանելը, գտնում է, որ հնում գոյություն են ունեցել ուտիների չորս ցեղեր՝ հիմք ունենալով սկզբնաղբյուրներում նրանց գրության չևերը, որն էլ արդյունք է սկզբնաղբյուրների ոչ ճիշտ մեկնաբանման և կեղծ գիտական սենտենցիաների[137]: Ա. Հակոբյանը, իրոք, գտնում է, որ ուտիների մի ցեղը տեղորոշվում է ներկա Իրանի հարավում, երկուսը՝Կուրի ձախափնյակում և մեկը՝Կուրի աջափնյակում: Ա. Հակոբյանը գտնում է նաև, որ Կուրի աջափնյակի ուտիները հայացել էին արդեն մ.թ.ա. IV դարում, և միայն նրանց էթնանվանումը պահպանվել էր երկրամասի վրա: Ռ. Մելիքովին խիստ զայրացնում է, որ հեղինակը փորձում է Ուտիք անվանումը բխեցնել «Տուիք» կամ «Տուս» տեղանունից, իբր՝ չնկատելով, որ «ք» ածանցը Ուտիքում ցույց է տալիս էթնիկ պատկանելություն: Հեղինակին հատկապես հավասարակշռությունից հանում է Ա. Հակոբյանի այն տեսակետը, որ Էթիունի երկրի անունը կապ չունի ուտիների հետ և այն բխում է հայերի «հայ» ինքնանունից, ինչը, Ռ. Մելիքովի կարծիքով, հեշտությամբ մերժվում է իր բերած նյութերով[138]:*

*Ամփոփելով իր կատարած քննությունը՝ Ռ. Մելիքովը եզրակացնում է, որ հնում կուտիները զբաղեցրել են Հարավային Ադրբեջանի ընդարձակ տարածքները՝ Զագրոշի լեռներից և Ուրմիո լճից մինչև Արաքս գետը[139]: Դուրս մղվելով իրենց բնակության վայրերից՝ կուտիները շարժվում են հյուսիս և զբաղեցնում Հարավային Անդրկովկասը և սեպագիր արձանագրություններում հիշատակվում Etiu անունով: Հեղինակը էթիունիների բնակության շրջանը հասցնում է մինչև Փոքր Կովկաս և ընդ, որ անտիկ սկզբնաղբյուրները ուտիներին հիշատակում են Կուր գետի ավազանում, որտեղ գտնվում է Ուտիք աշխարհը: Իսկ երբ Ուտիքը իբր՝ հայտնվում է Ալբանիայի կազմում, ուտիները շարժվում են հյուսիս և հաստատվում Կուրի ձախափնյակում, որտեղ մինչ օրս ապրում են նրանց հետնորդներ ուտիները: Սրանց լեզուն պատկանում է նախիական-դաղստանյան լեզվախմբին, որին իբր՝ վերաբերում են նաև կուտիները, էթիունիները և ալբանները[140]:*

Այսպիսով, այլ հետազոտողներին համարձակորեն քննադատող և այլևայլ դատողություններ կատարող Ռ. Մելիքովը, իրականում, ոչնչով չհաստատվող հայտարարությունների մի տրցակ է մատուցում: Համարձակ բնորոշումներ տալ այս կամ այն ցեղի լեզվին, որից գործնականում մեզ ոչինչ չի հասել, բոլորովին էլ անվտանգ չէ իրեն հարգող պատմաբանի կամ լեզվաբանի համար: Ուստի

134 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 120: Шанидзе А. Г., Язык и письмо кавказских албанцев, М., 1960, сс. 4-15.
135 Р. Меликов, նշվ. աշխ., էջ 120:
136 Տե՛ս Акопян А.А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, сс. 74-82.
137 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 121:
138 Անդ:
139 Անդ: Հեղինակը հղում է կատարում Պլինիոս Ավագի աշխատությանը (VI, 42):
140 Անդ, էջ 121-122:

փորձենք քննարկել **ուտիների** խնդիրը մեզ այսօր մատչելի նյութի շրջանակներում: Որ **կուտիների** նույնացումը **ուտիներին** ընդամենը մատից ծծած տեսակետ է, ըստ էության կասկածներ չի հարուցում: Համենայն դեպս, պարզ է մի բան, որ դրա հավանականությունը միայն ապացուցելու համար անհրաժեշտ է բերել առնվազն երեք օրինակ, որտեղ բառասկզբի «**K**»-ն վերածվում է «**S**»-ի, այնուհետև «**H**»-ի և վերջապես անհետանում է: Անգամ այդ տեսակետի կողմնակիցները չեն էլ փորձել նման օրինակներ փնտրել և մատուցել գիտական հասարակայնությանը: Գիտական հավանականության առումով Kuti-ն, որը տեսականորեն կարող է կարդացվել նաև Koti , կարող է և աղերս ունենալ՝ աճական «**r**» ձեռք բերելուց հետո **Կորդուքի** հետ: Սակայն ուտիների ցեղանվան առաջացումը ոչ մի կերպ չի կարելի կապել Kuti-ների հետ: Նույնքան անհեթեթ է ուտիներին էթիունիների հետ կապելը: Առայժմ քննության չառնելով այս խնդիրը, որը որևէ ձևով չի առնչվում ուսումնասիրվող հարցերի հետ, կամենում ենք նշել, որ ուսումնասիրողները **Ուեդուրի-Էթիունի** անունը կապում են հնդեվրոպական watara (=ջուր) բառի հետ և իրավացիորեն այդ երկիրը տեղադրում Սևանա լճի ավազանում: **Էթիունի** անունը որևէ կերպ **ուտիներին** աղերսելու համար անհրաժեշտ է ցույց տալ մի քանի օրինակ, թե ինչպես «**է**»-ն կարող է վերափոխվել «**ու**»-ի:

**Ուտի** անվան մասին դրանով իսկ, կարելի է խոսել Աքեմենյան Պարսկաստանի շրջանից՝ համաձայն պարսկական սեպագիր արձանագրությունների և հունա-հռոմեական աղբյուրների: Պարսկական սատրապությունների էթնիկ կազմը, համաձայն հերոդոտոսյան ցանկի, ցույց է տալիս, որ **ուտիները** (οὐτίοι) մտել են XIV սատրապության մեջ, որը ոչ մի դեպքում և ոչ մի կերպ չի կարող գտնվել Մարաստանի տարածքում և տարածվել է վերջինից հարավ մինչև **Կարմիր (Արաբական) ծովի** ափերը, որոնցից ոչ հեռու գտնվել են **մյուկերը**: Հետևաբար՝ կամ պետք է ցույց տալ ուտիների շարժը դեպի հյուսիս և այն հիմնավորել փաստական նյութով, կամ էլ բացատրել նրանց աղերս ունենալը **ուդինների** կամ **Ուտիք** աշխարհանվան հետ: Այն հանգամանքը, որ **ուտիները**, **մյուկերը** և **պարիկանիները** զինված էին **պակտյուների** նման, ցույց է տալիս, որ թե՛ **ուտիները** և թե՛ **մյուկերը**, որոնց կամենում են տեսնել **Մուղանի** դաշտում, գտնվել են **պակտյուների** հարևանությամբ, ինչը բացառում է **ուտիների** գտնվելը հայկական **Ուտիք** աշխարհի տարածքում, իսկ **մյուկերինը՝ Մուղանում**:

Կամենում ենք նշել, որ ի տարբերություն մերօրյա ուսումնասիրողների, հունա-հռոմեական հեղինակները շատ էլ լավ իրարից տարբերում էին Առաջավոր Ասիայի ցեղերին, ուստի, եթե նրանց ներկայացնում էին տարբեր գրությամբ, այդ նշանակում էր, որ դրանք նույնը չեն և նույնացվել չեն կարող: Ստրաբոնն, օրինակ, հիշում է ոչ թե **ուտիներին**, այլ **վիտիներին**, ըստ որում՝ դատելով նրա հաղորդումներից, նրանց մի հատվածը պետք է բնակվեր **ամարդների** և **անարիակների** հարևանությամբ՝ **Կասպից ծովի** առափնյա շրջանում, **գելերից** և **կադուսիներից** հարավ[141]: Հույն աշխարհագետի մեկ այլ տեղեկությամբ, **պարրասիները** ապրում են **անարիակների** հետ, որոնց այժմ **պարսիներ** են կոչում, իսկ **էնիանները վիտիների** մարզում կառուցել են քաղաք **Էնիանա** անունով[142]: Եվ եթե **վիտիները** ոչ մի կերպ չեն նույնանում **ուտիների** հետ, ապա Էնիանա քաղաքն էլ ոչ մի ձևով չէր կարող կառուցվել **Ուտիք** աշխարհում: Ստրաբոնի մեկ այլ

141 Տե՛ս Strabo, XI, 7, 1:
142 Անդ:

հաղորդմամբ՝ **վրկանների** և **արիանների** միջև ապրում են **տապիրները**, իսկ **վրկաններից** հետո՝ **ամարդները**, **անարիակները**, **կադուսիները**, **ալբանները**, **կասպերը**, **վիտիները** և մինչև **սկյութները**, հավանաբար էլ ուրիշ ժողովուրդներ[143]: Այս հատվածում **վիտիները**, որոնք գտնվում են **սկյութների** մերձակցությամբ, անշուշտ, չեն կարող նույնանալ **գելերից** և **կադուսիներից** հարավ բնակվող վիտիներին: Ուստի հարց է ծագում, արդյո՞ք դրանք նույն ցեղախմբի տարբեր հատվածներն են, թե՞ դրանցից մեկն ու մեկի գրությունը փոխվել է մյուսի ազդեցությամբ: Մեր կարծիքով, Կասպից ծովի հարավային մերձափնյա շրջանում գտնվողները կոչվել են **վիտիներ**, սակայն **սկյութների** մերձակցությամբ գտնվող **վիտիների** անունը շփոթված է, և թերևս պետք է լիներ Ouδinoi: Անկախ նման սրբագրությունից՝ հիշյալ վիտիներից և ոչ մեկը տարածքային առումով որևէ առնչություն չի կարող ունենալ հայկական **Ուտիք** աշխարհի հետ, որի անունը հույները հստակ տարբերակում էին ստրաբոնյան **վիտիներից,** գրելով՝ Υ̓θηνή: Վերջինս, որին Ռ. Մելիքովը ցանկանում է հայտարարել **ուտիների երկիր**, սոսկ պատահական նմանություն է **հերոդոտոսյան ուտիների** և **ստրաբոնյան վիտիների** երկրների հետ: Եվ դա ցույց է տալիս երկրամասի հունարեն գրությունը: Հայտնի է, որ հույները Υ̓-ով սովորաբար արտահայտում էին հայերեն «**ով**» կապակցությունը, որը հայերենի արցախյան և սյունիքյան բարբառներում միտում ունի վերածվելու «ու»-ի: **Ուտիքի** անունը կապված է **Կուրի** աջափնյակի ընդարձակ հարթության հետ, որը ոռոգվում է մի քանի գետերի ջրերով: Այլ խոսքով՝ հարթությունը ներկայացնում էր մի քանի գետահովիտներ և կոչվել է հայերի կողմից «**Ովիտք**», այսինքն՝ հովիտներ կամ ովիտներ: «**Ով**»-ի վերածումը «**ու**»-ի և առաջացած **Ուիտք** տեղանվան արտասանության դժվարությունը առաջ է բերում հնչյունների դրափոխություն, որը **Ուիտքը** վերածում է **Ուտիքի**[144]:

Որ մեր ասածը ճշմարտություն է, պարզ կդառնա ստորև՝ մյուկերի անունը քննելիս: Եթե Պլինիոս Ավագը Υ̓θηνή-ն տեղադրում է **Ատրպատականից** հյուսիս՝ **Երասխ** գետով նրանից բաժանված, իսկ Պտղոմեոսը այն տեղադրում է **Կուրի** աջափնյակում, ապա ըստ հիշյալ հեղինակների՝ **Օտենե-Ուտիքը** համարժեք է հայկական **Ուտիք** աշխարհին: Սակայն Պլինիոս Ավագը, որը հիշատակում է ուդիններին udini, իսկ Պտղոմեոսը՝ Υ̓δαι անունով, ցույց են տալիս, որ անհեթեթ է udin-ների երկրի նույնացումը **Ուտիքի** հետ: Բայց ամենակարևորն այն է, որ համաձայն Պլինիոսի, այսպես կոչված՝ աղվանական ցեղերի միության մեջ ո՛չ վիտիները կարող էին մտնել և ո՛չ էլ **udin-ները**: Հետևաբար, այն իրողությունը, որ բազմաթիվ սկզբնաղբյուրներով հաստատված է **Ուտիքի** Մեծ Հայքի աշխարհ լինելը, ոչ մեկը չի կարող կասկածի տակ առնել, ինչը փորձում է կատարել Ռ. Մելիքովը՝ հայտարարելով, թե իբր՝ **Ուտիքը** արևմուտքից սահմանակցում էր Հայաստանին:

Վերջապես, եթե հեղինակը մի փոքր ավելի խորանար Ստրաբոնի երկի բովանդակության մեջ, ապա նրան աներկբայորեն պարզ կդառնար, որ **Հայոց Արևելից կողմերը**, այսինքն՝ **Արցախը** և Ուտիքը, եղել են հայոց Արտաշես Ա թագավորի տիրույթների մեջ: Եվ եթե նա մարերից գրավել է **Կասպիանեն**, **Փավնիտիսը** և **Բասորոպեդան**, ապա Ստրաբոնը ոչինչ չի ասում **Ալբանիայից**

143 Անդ, XI, 8,8:

144 Մեր դրույթի օգտին է վկայում այն իրողությունը, որ jRwma-ն հայերը տառադարձում էին Հռովմ, Kappadokia-ն՝ Կապադովկիա, իսկ հույները հայերեն Գովգարք-Գուգարքը տառադարձել էին Gwgarhnhv Վերջապես այն իր հաստատումն է գտնում Մուկանի (Մուղան) դաշտի վրացական Մովական կամ Մովկան դաշտ գրութան մեջ, որը ցույց է տալիս, որ Մովկանը օրինաչափորեն վեր է ածվել Մուկանի:

կատարված նվաճումների մասին: Իսկ ինչ վերաբերում է **Ուտիքի** Ալբանական թագավորությունից կախման մեջ ընկնելուն և Տիգրան Մեծի օրոք կարճ ժամանակով նվաճվելուն, դրանք մատից ծծած անհեթեթ, քաղաքական նպատակներ հետապնդող, հիմնազուրկ ենթադրություններ են, որոնք անկախ այն հանգամանքից, թե ինչ հեղինակություն է առաջ քաշել, փաստական նյութով երբեք հիմնավորման ենթակա չեն: Եվ, որ ամենակարևորն է, պետք չէ Հայոց Պատմահորը վերագրել այնպիսի խոսքեր, թե իբր՝ Առանի հետնորդներից առաջացան **ուտիների**, **գարդմանների** և **ծավդեների** ցեղերը և **Գարգարացվոց իշխանությունը**: Խորենացու երկի այդ հատվածը, որը հատուկ քննության կարիք ունի, հավաստում է ոչ թե ցեղերի, այլ իշխանական տների կամ «ազգերի» ձևավորման մասին:

Եվ որպեսզի այս հարցի քննությունը ավարտենք, անդրադառնանք նշված հատվածի ուսումնասիրությանը: Պտղոմեոսյան Մեծ Հայքի նկարագրությամբ **Գոգարենե-Օբարենեին** (=**Գուգարք**) արևելքից սահմանակցել է Wthnh (=Ուտիք)[145] աշխարհը, և արտաքնապես ստացվում է, որ պտղոմեոսյան **Ովտենեն** և աշխարհացույցյան **Ուտիք** աշխարհը տարածքապես համընկնում են, քանի որ հիշյալ **Ովտենեն** տարածվել է մինչև **Երասխ գետը**[146]: Սակայն հիշյալ հաղորդման շարունակությունը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, **Գոգարենե-Օբարենեի** և **Ովտենեի** միջև գտնվել է **Սակասենեն**, որը, ինչպես պարզվում է Ստրաբոնի երկի քննությունից և «Աշխարհացոյց»-ի տվյալներից, պետք է տարածվեր մինչև **Տրտու** (ներկայիս **Թարթառ**) գետի ստորին հոսանքի հյուսիսակողմը:

Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ը **Արաքս** գետի մոտ տեղադրում է **Կոլբենե** մարզը, որն, իհարկե, անվան առումով նույնանում է **Արցախ** աշխարհի **Կողբ** կամ էլ **Վասպուրականի Գողթն** գավառին: Սակայն աշխարհագրական հերթականությունը նման զուգադրումները բացառում է, որովհետև պտղոմեոսյան **Կոլբենեն** տեղորոշվում է **Ուտիք-Օտենեի** հարևանությամբ՝ Երասխից հարավ ընկած շրջանում: Կոլբենեն ձեռագրերում հայտնի է նաև Konqhnhv ընթերցմամբ, որն, անշուշտ, խոսում է նահանգանվան աղավաղված լինելու մասին: Անտարակույս, մեզ համար դժվար է պատշաճ բացատրություն գտնել, սակայն աշխարհագրական քննությունը պարզում է, որ աղավաղված անունը ծագում է Kasphnhv Կասպք անվանումից և աշխարհագրական տեսակետից էլ լիովին համընկնում է նրան:

Ըստ պտղոմեոսյան նկարագրության՝ վերոհիշյալ **Կոլբենե-Կասպիանեից** ներքև գտնվել է Sodoukhnhv, որը նույնանում է **Արցախին**: Այս նոր անվանումը, որ հայտնվում է Մեծ Հայքի վարչական բաժանման մեջ, պահպանվել է Պատմահոր երկում **Ծավդեք** կամ **Ծավդեից** իշխանություն անունով: Խորենացու վերը բերված հաղորդումից կրկին մեջբերենք. «**Եւ ի սորա (իմա՛ Առանի-Հ.Ք.) զաւակաց ասեն սերեալ զազգն *Ուտէացւոց* և *Գարդմանացւոց* և *Ծաւդէացւոց*, և *Գարգարացւոց իշխանութիւնս***»[147]: Ուշագրավ է, որ Խորենացու հիշատակած չորս իշխանություններից և ոչ մեկն անվանապես չի համընկնում հիշյալ տարածքում Ստրաբոնի երկում հանդիպող երկրամասերի հետ, և միայն երկուսն

145 Պտղոմեոսի «Աշխարհագրության» ձեռագրերում այս երկրամասը հանդիպում է նաև Wkhnh, Mwthnhv, Mothnhv, Twmhnhv և Twthnhv տարընթերցումներով (Claudii Ptolemaei Geographia, p. 938, not. 1):

146 Տե՛ս Plinii Secundi C., Naturalis historiae, VI, 16, 41: «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 33: К.П. Патканов, Армянская география VII века, сс. 19-20.

147 Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Ը:

են այդ առումով համապատասխանում Պտղոմեոսի հիշատակած նահանգներին՝ **Ուտեացվոց** և **Ծավդեացվոց իշխանություններին**: Հասկանալի է, որ Պատմահոր և Պտղոմեոսի երկի տեղեկությունների համադրումը հնարավորություն է տալիս **Սակասենե-Շակաշենը** նույնացնելու **Գարդմանացվոց իշխանության** հետ, որին դեռ կանդրադառնանք, սակայն միաժամանակ պարզ է դառնում, որ մեզ հետաքրքրող տարածքում տեղ չի մնում այսպես կոչված **Գարգարացվոց իշխանության** համար, քանի որ **Կուրի** աջափնյա տափարակը զբաղեցնում են **Օտենե-Ուտիքը** և **Սակասենե-Գարդմանացիքը**, իսկ նախալեռնային և լեռնային շրջանները՝ **Սոդուկենե-Ծավդեացիքը**: Այս հետաքրքիր պատմա-աշխարհագրական իրողությունը բացահայտում է մի շատ կարևոր պատմական գաղտնիք, ինչը մեզ իրավունք է տալիս հայտարարելու, որ Պատմահոր երկի նշված հատվածը մեզ անաղարտ չի հասել:

Բնականաբար՝ հարց է ծագում, թե ինչպե՞ս է Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հայտնվել **Գարգարացվոց իշխանության** անունը, երբ տարածքային առումով **Կուրի** և **Երասխի** միջագետքում այլևս ազատ տարածքներ չեն մնում: Եվ արդյո՞ք այս կողմերում եղել է գարգարացիների բնակչություն և իշխանություն, որ այնքան փողհարվում է մեր հարևան հանրապետության պատմագիտական շրջանների կողմից: Համենայն դեպս, սա պատկանում է **Հայոց Արևելից կողմերը «աղվանական երկիր»** հռչակող պատմաբանների առավել կարևոր «փաստարկների» թվին:

## Summary

### ON SEVERAL ISSUES CONCERNING THE ETHNIC AND POLITICAL HISTORY OF SO-CALLED ALBANIA (AŁUANK‘)

Part One: Issues on Ethnic History

Babken H. Harutyunyan

In the present article an attempt is being made to investigate a number of issues concerning the ethnic and political history of Ałuank‘ or the Caucasian country called Albania.

According to the results of the investigation, the place name Albania from Greco-Roman sources and the place name Ałuank‘ from Armenian sources have merely Armenian origin and mean **“a country of a fruitful field”**, i.e. they do not have an ethnic origin. The names originate from the proto-initial form “Alobank‘” which emerges from the instumental case of the word **“al” (salt)**, which in ancient times was pronounced as **“alob,”** then it was changed into **“alov,”** and later into **“alu”** and **“alu”.**

The Armenians called **“Alobank,” “Alovank,”** and **“Ałuank”** the fruitful field on the right shore of the Kura River, and later the state, finding on the left shore of the Kura River, was called by the same name, as **“a country of a fruitful field,”** and the people were called the **“Albanians”** or **“Ałuans,”** as “people of a fruitful field”, as it was the

continuation of the Armenian fruitful field. The people living on the left shore of the Kura River never called themselves that way, the testification of which is the fact that after the decline of the Albanian Kingdom, no tribe preserved this name.

Most likely, this state was initially called after the name of the **Mazkuts** or **Massagets**, and afterwards after the names of the **Gargarians** and again **Mazkuts** who successively invaded from the **Nothern Caucasus** in the Transcaucasus. It is not by chance that Faustus Byzand identifies the Kingdom of **Mazkuts** with the **Kingdom of Aluank'** or **Albania.**

It is being shown that in the recordings of the Greek geographer Strabo, among the union of the 26 Albanian tribes there were neither the **Gargarians**, nor the **Udins** nor a number of other tribes which, notwithstanding the viewpoints of investigators, during the times of Strabo were in the Northern Caucasus.

It is also shown that the Caspians entered into the union of the Albanian tribes, but are not identified with the Albanians.

In connection with the Caspians it is revealed that the XI and XV satrapies of Achaemenid Persia were not in the region of the Transcaucasus, and the XVIII was in the region of Eastern Georgia and in the so-called Albania region, consequently the **Matieni**, **Saspiri** and **Alarodii** do not belong to the tribes of the Armenian Highland.

Բաբկեն Հ. Հարությունյան
*ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ*

# ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ԱՂՎԱՆՔԻ ԷԹՆԻԿ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Մաս երկրորդ: Քաղաքական պատմության հիմնախնդիրները էթնիկ պատկանելության համատեքստում*

## Մուտք

**Ուսումնասիրության առաջին մասում մենք փորձեցինք ցույց տալ, որ «Աղվանք» հասկացությունը էթնիկական բովանդակություն չունի և ընդամենը նշանակում է «արգավանդ դաշտի երկիր»: Ընդ որում՝ այն ծագում է առավել նախնական «Ալոբանք»-ից, որը հունա-հռոմեական աշխարհում վերածվել է Ալբանիայի:**

**Անդրադարձ եղավ Աղվանքի բնակիչներ *գարգարներին* ու *մազքութներին*, ինչպես նաև այն իրողությանը, որ իրենց՝ այսպես կոչված աղվանների կողմից, այս թագավորությունը տարբեր ժամանակներում կոչվել է Մազքութների և Գարգարների պետություն, իսկ հայերը Մազքթաց թագավորությունը նույնացրել են Աղվանքի հետ:**

**Իսկ այժմ անդրադառնանք այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության ևս մի քանի հարցերի:**

## 1. Որտե՞ղ է գտնվել Պատմահոր հիշատակած Գարգարացվոց իշխանությունը

Հայտնի է, որ Պտղոմեոսի «**Աշխարհագրություն**»-ը Արաքս գետի մոտ տեղադրում է **Կոլքենե** մարզը, որն, իհարկե, անվան առումով կարծես թե նույնանում է Արցախ աշխարհի **Կողբ** կամ էլ Վասպուրականի **Գողթն** գավառին: Սակայն աշխարհագրական հերթականությունը նման զուգադրումները բացառում է, որովհետև պտղոմեոսյան **Կոլքենեն** տեղորոշվում է **Ուտիք-Օտենեի** հարևանությամբ՝ Երասխից հարավ ընկած շրջանում: **Կոլքենեն** ձեռագրերում հայտնի է նաև

* Ընդունվել է տպագրության 20.06.2011:

Κονθηνή ընթերցմամբ, որն, անշուշտ, խոսում է նահանգանվան աղավաղված լինելու մասին: Անտարակույս, մեզ համար դժվար է պատշաճ բացատրություն գտնել, սակայն աշխարհագրական քննությունը պարզում է, որ աղավաղված անունը ծագում է Κασπιηνή- Կասպք անվանումից և աշխարհագրական տեսակետից էլ լիովին համընկնում է նրան:

Ըստ պտղոմեոսյան նկարագրության՝ վերոհիշյալ **Կոլբենե-Կասպիենեից** ներքև գտնվել է Σοδουκηνή-ն, որը նույնանում է **Արցախին**: Այս նոր անվանումը, որ հայտնվում է Մեծ Հայքի վարչական բաժանման մեջ, պահպանվել է Պատմահոր երկում **Ծավդեք** կամ **Ծավդեից իշխանություն** անունով: Կրկին մեջբերենք Խորենացու հաղորդումից. «**Եւ ի սորա (իմա՛ Առանի-Հ.Ք.) զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց, և Գարգարացւոց իշխանութիւնսն**»[1]: Ուշագրավ է, որ Խորենացու հիշատակած չորս իշխանություններից և ոչ մեկն անվանապես չի համընկնում հիշյալ տարածքում Ստրաբոնի երկում հանդիպող երկրամասերի հետ, և միայն երկուսն են այդ առումով համապատասխանում Պտղոմեոսի հիշատակած նահանգներին՝ **Ուտեացվոց** և **Ծավդեացվոց իշխանություններին**: Հասկանալի է, որ Պատմահոր և Պտղոմեոսի երկի տեղեկությունների համադրումը հնարավորություն է տալիս **Սակասենե-Շակաշենը** նույնացնելու **Գարդմանացվոց իշխանության** հետ, որին դեռ կանդրադառնանք, սակայն միաժամանակ պարզ է դառնում, որ մեզ հետաքրքրող տարածքում տեղ չի մնում այսպես կոչված **Գարգարացվոց իշխանության** համար, քանի որ Կուրի աջափնյա տափարակը զբաղեցնում են **Օտենե-Ուտիքը** և **Սակասենե-Գարդմանացիքը**, իսկ նախալեռնային և լեռնային շրջանները՝ **Սոդուկենե-Ծավդեացիքը**: Այս հետաքրքիր պատմաաշխարհագրական իրողությունը մեզ իրավունք է տալիս հայտարարելու, որ **Պատմահոր երկի նշված հատվածը մեզ անաղարտ չի հասել:**

Բնականաբար և տեղին՝ հարց է ծագում, թե ինչպե՞ս է Մովսես Խորենացու «Պատմութեան» մեջ հայտնվել **Գարգարացվոց իշխանության** անունը, երբ տարածքային առումով Կուրի և Երասխի միջագետքում ազատ տարածքներ չեն մնում: Եվ արդյո՞ք այս կողմերում եղել է գարգարացիների բնակչություն և իշխանություն, որ այնքան փողհարվում է մեր հարևան հանրապետության պատմագիտական շրջանների կողմից: Համենայն դեպս, սա պատկանում է **Հայոց Արևելից կողմերը** «աղվանական երկիր» հռչակող պատմաբանների առավել կարևոր «փաստարկների» թվին:

Պատմահոր հռչակավոր երկասիրությունը, որ հայ ժողովրդի ամբողջական պատմության ստեղծման մեզ հասած առաջին փորձն էր, հետագա դարերում դարձավ դասական գործ, և հայ հեղինակները Հայոց համընդհանուր պատմությունը շարադրելիս հաճախ դիմում էին նրա հաղորդումներին ու հիշատակած փաստերին: Սակայն Խորենացու գործը, ինչպես ցույց են տվել բանասիրական ուսումնասիրությունները, մեզ է հասել զգալի խմբագրումներով և փոփոխություններով, որոնք և կասկածի տակ են դրել Խորենացու՝ V դարի հեղինակ լինելը: Բնական է, որ զարգացած միջնադարի հայ պատմիչները օգտվում էին «Պատմութիւն Հայոց»-ի անհամեմատ ավելի անաղարտ ձեռագրերից, ուստի այն բոլոր տարբերությունները, որ նկատվում են Խորենացու և նրան հետևող հեղինակների երկերում հանդիպող միևնույն իրադարձությունների նկարագրություններում, մեծ

1 Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Ը:

Հայաստանի եւ նրան սահմանակից տարածաշրջանների տնտեսական շրջանները

կարևորություն են ներկայացնում անտիկ շրջանի և վաղ միջնադարի մի շարք իրողությունների բացահայտման և լուսաբանման համար:

Խորենացուց բերված հիշյալ հատվածի քննության համար մեծ կարևորություն են ներկայացնում Ասողիկի, Մովսես Կաղանկատվացու և Վարդան Արևելցու երկասիրությունները, որոնց մի զգալի մասը շարադրված է Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի հիման վրա: Այսպես, Ասողիկը, անդրադառնալով Մեծ Հայքի արևելյան կողմնակալությանը, գրել է. «**Եվ արեւելեան կողմնակալս բիւրաւորս՝ զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսականն և որ ի տանէն Կադմեայ: Եւ յարևելեան ի հիւսիսոյ կողմանէն կարգէ կողմնակալ զԱռան առ Կուր գետով, որ հատանէ զդաշտն մեծ: Զի ի Սիսակայ ցեղէն էր գունդն, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և լեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Հունարակերտ. և աշխարհն անուն նահապետին նոցա անուանեցան Աղուանք. զի աղու ձայնէին զնա վասն քաղցրութեան բարուցն: Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ՝ կարգեցաւ բիւրաւոր կողմնակալ ի Վաղարշակայ: Ի սորա ծննդոց սերեցան ազգք Ուտեացւոց և Գարդմանացւոց և Ծավդէացւոց և Գարգարացւոց**»[2]**:**

Մեծ Հայքի արևելյան կուսակալության խնդիրը հետաքրքրել է Մովսես Կաղանկատվացուն (Մովսես Դասխուրանցուն) իր քաղաքական հարցադրումների տեսակետից, ուստի Պատմահոր նշված հաղորդումը, իսկ նա այլ աղբյուր չունի, ստացել է ներքոբերյալ տեսքը. «**Ապա կարգեաց նեցա առաջնորդ և վերակացուս, յորոց գլխաւոր ոմն ի Սիսական տոհմէ Յաբեթական ծննդոցն կարգի հրամանաւ Վաղարշակայ, Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս և զլերինս Աղուանից՝ ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ: Եւ աշխարհն յաղագս քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա վասն քաղցրութան բարուցն: Ի սորա՝ Առանայ ծննդոց, ասեն արք անուանիք և քաջք կարգեցան կողմնակալք բիւրաւորք ի Պարթևէն Վաղարշակայ: Եւ ի սորա զաւակէ, ասեն, սերեալ զազգս Ուտէացւոց, Գարդմանացւոց և Ծաւդիացւոց և Գարգարացւոց իշխանութեանց**»[3]**:**

Հիշյալ հարցին անդրադարձել է նաև Վարդան Արևելցին. «**…և Աղուանիս ի թոռանցն Հայկայ զԱռան ոմն կողմնապետ արևելից հիւսիսոյ կացուցանէ, յորմէ սերեցան ազգն Ուտեացւոց և Գարդմանացւոց և Ծողիացւոց**»[4]**:** Տոհմերի ցուցակում, ինչպես տեսնում ենք, բացակայում է Գարգարացվոց իշխանությունը, սակայն Վարդանի երկի վենետիկյան հրատարակությունը և մի շարք ձեռագրեր նշված հատվածում հետևյալ պատկերն ունեն. «**…ազգն Ուտեացւոց և Գարդմանացւոց և Գարգարացւոց և Ծօղացւոց**»[5]**:**

Այն հանգամանքը, որ Վարդան Արևելցու երկում, որոշ ձեռագրերի համաձայն, **Գարգարացվոց իշխանությունը** բացակայում է, իսկ ըստ մյուսների՝ հիշատակվում է ո՛չ Պատմահոր տված հերթականությամբ, ուսումնասիրողի առաջ բարձրացնում է խնդիրներ, որոնք ոչ միայն մեծ կարևորություն ունեն Մեծ Հայքի վարչական բաժանման պատմության, այլև Աղվանից կոչված թագավորության

2 «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական» (այսուհետև՝ Ասողիկ), հրատ. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 34-35:

3 Մովսես Կաղանկատվացի, I, գլ. Դ:

4 «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 45:

5 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 30: Տե՛ս նաև Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռ. թիվ 1487, 1770 և 3074:

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՑ ԿՈՂՄԵՐԻ, ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ԱՂՎԱՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ

Նեղինակ՝ Բ. Ղարաբաղլյան

Քարտեզագրիչ՝ Վ. Մինթաբյան

քաղաքական պատմության ուսումնասիրության համար: Նախ, **Ծավդեքից** առաջ **Գարգարացվոց իշխանության** հայտնվելը կասկածի տակ է առնում սկզբնական բնագրին նրա վերաբերելը: Բանասիրական հպանցիկ քննությունն անգամ ցույց է տալիս, որ Վարդան Արևելցու երկն իր հիշյալ փաստի մատուցմամբ պարտական է Պատմահորը, ուստի ոչ մի հիմնավոր շարժառիթ չկար, որպեսզի Վարդան Արևելցին փոխեր նշված չորս իշխանությունների թվարկման հաջորդականությունը: Հետևաբար, միակ տրամաբանական եզրակացությունն այն է, որ խախտումն արդյունք է ընդմիջարկման, ինչը կատարվել է բավականին վաղ ժամանակներում: Հավանաբար գրիչներից մեկը լուսանցքում նշել է, որ Պատմահոր երկի համեմատությամբ պակասում է **Գարգարացվոց իշխանությունը**, իսկ հաջորդ գրիչը, որն, ըստ երևույթին, մեծ պատրաստություն չի ունեցել, այն կամայականորեն մուծել է բնագիր: Ելնելով այս եզրահանգումից, կարծում ենք, որ նախապատվությունը պետք է տալ Վարդան Արևելցու երկի այն ձեռագրերին, որտեղ **Գարգարացվոց իշխանությունը** պարզապես բացակայում է: Սակայն այս մոտեցումն էլ իր հերթին ծնում է նոր հարցադրում, թե ինչու՞ հեղինակը հարկ չի համարել հիշատակելու **Գարգարացվոց իշխանությունը**: Արդյո՞ք դա պայմանավորված չի եղել մի իրողությամբ, ըստ որի՝ վերջինս մեզ անհայտ պատճառով առանձնանում էր մնացյալ երեքից: Արդյո՞ք Վարդան Արևելցին, իր տրամադրության տակ ունենալով Պատմահոր երկասիրության առավել անաղարտ ձեռագրեր, չի հանգել այն մտքին, որ **Գարգարացվոց իշխանությունը** չի սերվում Առանից, չի կապվում Հայաստանի հետ, հետևաբար հարկ չի համարել այն հիշատակել: Այս բոլորովին նոր հայեցակետը, որ առաջին հայացքից հիմքեր չունի, ավելի է ամրապնդվում, երբ փորձում ենք համադրել վերը տրված մեջբերումները:

Պատմահոր «Պատմութեան» նշված հատվածի սկզբնական ընկալումն այնպիսին է, որ կարծես **Ուտեացիները ցեղ** են, իսկ **Գարդմանացիները**, **Ծավդեացիները, Գարգարացիները՝ իշխանություններ**, այլ խոսքով, «**ազգն Ուտէացւոց**» արտահայտությունը կարծես թե խոսում է, ի տարբերություն մյուսների, Ուտեացիների էթնիկական առանձնահատկության մասին: Սակայն այսօրինակ տեսակետը, որ տարիներ առաջ մեզ նույնիսկ առավել քան հավանական էր թվում, հիմնազուրկ է, որովհետև V դարում հիշատակված գարգարները, որոնք, ի դեպ, բնակվում էին Կուրի ձախափնյակում և Մեսրոպ Մաշտոցի շնորհիվ գիր ստացան, առավել հիմքեր ունեին այդպիսի ցեղային առանձնահատկության կրող հանդիսանալու համար, քան **Ուտեացիները**, սակայն Պատմահայրը նրանց ներկայացնում է «**իշխանութիւն**» արտահայտությամբ: Ասողիկի՝ Պատմահոր երկի գրեթե նույնական ազատ շարադրանքը մեզ է մատուցում մի հետաքրքիր անակնկալ: Պարզվում է, որ ոչ միայն **Ուտեացիները**, այլև մյուսները «**ազգ**»-եր (ազգք) են, իսկ «իշխանութիւն» բառը հեղինակն ընդհանրապես չի հիշատակում: Այս հանգամանքն իր հաստատումն է գտնում Մովսես Կաղանկատվացու աշխատության մեջ: Համեմատենք Պատմահոր և նրանից օգտված հեղինակների երկերի համապատասխան հատվածները.

| | |
|---|---|
| **Մովսես Խորենացի** | **Մովսես Կաղանկատվացի** |
| **«Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնսն»:** | **«Եւ ի սորա զաւակէ, ասեն, սերեալ զազգս Ուտէացւոց, Գարդմանացւոց, Ծաւդիացւոց և Գարգարացւոց իշխանութեանց»:** |

Թռուցիկ համեմատությունն անգամ ցույց է տալիս, որ Մովսես Կաղանկատվացին պարզապես արտագրել է Պատմահոր երկից: Կան որոշ չնչին տարբերություններ: Այսպես, Խորենացու «**Ի սորա զաւակաց**»-ի դիմաց **Հայոց Արևելից կողմերի** պատմիչն ունի «**Եւ ի սորա զաւակէ**» արտահայտությունը, Պատմահոր երկի S և Խ խմբի ձեռագրերը պահպանել են «**ի սորա զաւակէ**» տարընթերցումը, որը և վկայում է այն մասին, որ Կաղանկատվացին օգտվել է հիշյալ խմբերի մի որևէ ձեռագրից[6], հետևաբար այս հատվածում տարբերություն չկա: Հեղինակի ինքնուրույնության դրսևորումը «**և**» շաղկապն է, որը, սակայն, իմաստային որևէ նրբերանգ չի հաղորդում հիշյալ տեղեկությանը: Հետևաբար, Խորենացու «**զազգն**»-ի դիմաց «**զազգս**»-ի, «**իշխանութիւնսն**»-ի դիմաց «**իշխանութեանց**»-ի առկայությունը, ինչպես նաև «**Գարդմանացւոց**»-ից առաջ «**և**» շաղկապի բացակայությունը խորհելու տեղիք են տալիս, թե անմիջապես Պատմահորը հետևող հեղինակը ինչու՞ է հեռանում իր աղբյուրից: Մեր կարծիքով, որքան էլ որ տարօրինակ հնչի, այս տարբերությունները պատահական չեն և պայմանավորված են սկզբնաղբյուրին հարազատ մնալու միտումով, որը, սակայն, հետագայում ենթարկվել է փոփոխությունների: Նախ և առաջ, դատելով Ասողիկի և Կաղանկատվացու տվյալներից, պետք է ենթադրել, որ Պատմահոր մոտ սկզբնապես եղել է ոչ թե «**զազգն**», այլ «**զազգս**», այլապես երկու հեղինակներն էլ «**ազգ**»-ը չէին օգտագործի հոգնակի թվով: Կաղանկատվացու երկի «**և Գարգարացւոց իշխանութեանց**» արտահայտության մեջ «իշխանութիւն» բառի հոգնակի թվով սեռական հոլովաձևը անուղղակիորեն վկայում է այն մասին, որ բնագրում ինչ-որ բան պակասում է: Մեր բանասիրական պրպտումները մեզ բերել են այն եզրակացության, որ Խորենացու նախնական անաղարտ բնագրում եղել է «**ի [կողմանէ]_Գարգարացւոց իշխանութեանն**» արտահայտությունը, որի «**կողմանէ**» բառը դեռևս շատ վաղ ժամանակներում ինչ-ինչ պատճառներով արտագրության ժամանակ դուրս է մնացել շարադրանքից: Դրանից հետո որոշակիորեն քերականական տեսակետից կաղացող ***«Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութեանն»*** արտահայտությունը պետք է ենթարկվեր սրբագրման, որովհետև ստացվում է, որ առաջին երեքը մտել են վերջինի մեջ: Հետագա արտագրողները, որ գիտակցել են սրանց անհամարժեքությունը, «**Գարգարացւոց**»-ից առաջ դրված «**ի**» նախդիրը դարձրել են «**և**» ու քանի որ այդ դեպքում «**իշխանութեան**» բառը չէր շաղկապվում շարադրանքին, որովհետև «**զազգս**»-ը դրված է հոգնակի թվով, այն դարձրել են «**իշխանութեանց**»: Ահա այս վիճակում է եղել Պատմահոր երկի հիշյալ հատվածը, երբ նրանից օգտվել է Մովսես Կաղանկատվացին: Սակայն նշված տողերում կա մի **աննշան** տարբերություն ևս. «**Գարդմանացւոց**» բառից առաջ բացակայում է «**և**» շաղկապը: Իհարկե, դրա բացակայությունը կարելի է բացատրել Կաղանկատվացու անփութությամբ կամ էլ արտագրողների թույլ տված սխալով, սակայն, մեր կարծիքով, այն ևս բացակայել է Պատմահոր նախասկզբնական բնագրում: Երբ **Ուտեացվոց**, **Գարդմանացվոց** և **Ծավդեացվոց** «ազգերը» հակադրվում էին Գարգարացվոց իշխանությանը, ապա բնական է, որ «և» շաղկապը դրվեր միայն «**Գարդմանացւոց**»-ի և «**Ծաւդէացւոց**»-ի միջև, սակայն «**կողմանէ**» բառի կորստից հետո, երբ «**ի**» նախդիրը ևս «և»-ի վերածվեց, միանգամայն աններդաշնակ էր «և» շաղկապի բացակայությունը «**Գարդմանացւոց**»-ից առաջ, որը և պատ-

6 Տե՛ս Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Ը. «14 Տխ զաւակէ [pqrs զաւակէն]»:

ճառ է դարձել, որ Պատմահոր երկի արտագրողներն այդտեղ մուծեն «և» շաղկապը: Սակայն Մովսես Կաղանկատվացին օգտվել է մի ձեռագրից, որտեղ այդ փոփոխությունը դեռևս չէր կատարվել, և այդ պատճառով էլ չի արձանագրվել «**և**» շաղկապի գոյությունը:

Դատելով բոլոր տվյալներից՝ ավելի ուշ «**ս**»-ի և «**և**»-ի շփոթի պատճառով Խորենացու մոտ «**զազգս**»-ը վերածվում է «**զազգև**»-ի, որը հիշյալ հատվածը քերականական տեսակետից դարձնում է անհարթ. «**Ի սորա զաւակէ, ասեն, սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութեան»:** Արդեն այս կապակցության մեջ «զազգն»-ը, որը նշանակում էր իշխանական ընտանիք և ոչ թե ցեղ, փաստորեն վերաբերում էր «Ուտեացւոց»-ին, քանի որ դրված էր եզակի թվով, ուստի ստացվում էր, որ վերջին երեքը իշխանություններ են: Սակայն այս դեպքում էլ «**իշխանութեան**» բառը քերականորեն չէր կապակցվում մնացած շարադրանքին: Արտագրողները նկատել են այդ իրողությունը և «**իշխանութեան**»-ը դարձրել են «իշխանութիւնսն», այն դնելով հայցական հոլովով, սակայն չեն գիտակցել, որ այդ դեպքում և՛ **Գարդմանացվոցը,** և՛ **Ծավդեացվոցը,** և՛ **Գարգարացվոցը** պետք է ստանային «**զ**» նախդիր: Որ «իշխանութիւն» բառը ենթարկվել է այսպիսի փոփոխությունների, պարզ կերպով վկայում են «**իշխանութիւնք**» և «**իշխանութիւն**» տարընթերցումները: Ավելին, «իշխանութիւն» տարընթերցումը հավաստում է, որ սկզբնապես այդ բառը դրված է եղել եզակի թվի սեռական հոլովով, այսինքն՝ իրոք վերաբերել է միայն **Գարգարացիներին**:

Ընթերցողը բնականաբար հարց կտա, թե ի՞նչ հիմունքով ենք մենք փորձում բնագրի մեջ մուծել «**կողմանէ**» բառը: Կարծում ենք, դրա բանալին տալիս է Ագաթանգեղոսի երկը, որն՝ անդրադառնալով Մեծ Հայքի բդեշխություններին, հաղորդում է. «**Եւ ի զինուորական կողմանէն՝ զչորեսին գահերեցսն իւրոյ տաճարին, որ բդեաշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, և զերկրորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, և զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, և զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն…**»[7]**:** Ինչպես տեսնում ենք, զինվորական կուսակալությունները հիշվում են որևէ պետության կամ երկրամասի դիմաց ստեղծված լինելու սկզբունքով: Վերջինը, որի անունը հեղինակը բաց է թողել, ակնհայտ Գուգարաց բդեշխությունն է, որը Մեծ Հայքի սահմանները պետք է պաշտպաներ Այսրկովկաս ներխուժած մասքութներից: Չպետք է տարակուսել, որ **Ուտեացվոց**, **Գարդմանացվոց** և **Ծավդեացվոց իշխանությունների** ստեղծումը նույնպես պատահական քաղաքականություն չէր և կապվում է Գարգարացիների՝ Այսրկովկաս ներխուժելու և հաստատվելու հետ: Ստեղծվելով որպես ռազմական հակակշիռ Գարգարացիների նոր ձևավորված իշխանությանը, դրանք, վերը նշված սկզբունքով, պետք է հիշվեին որպես «**ի կողմանէ Գարգարացւոց իշխանութեան**» կուսակալություններ: Թերևս նրանք այդպես չկոչվեին, սակայն Այսրկովկաս ներխուժած Գարգարացիների ռազմական մեծ վտանգը Մեծ Հայքի քաղավորության համար այնքան առաջնային էր, որ ծնել է նման մոտեցումը:

7 Ագաթանգեղոս, § 873:

## 2. Արդյո՞ք կապ կա **Ուտիք** տեղանվան և «**ուդին**» ու «**ուտի**» ցեղանունների միջև

Ստրաբոնի տեղեկությունների համաձայն՝ մ.թ.ա. I դարի սկզբներին **գարգաբացիները** բնակվում էին Կովկասյան լեռների հյուսիսային նախալեռներում, որոնք կոչվում էին **Կերավնյան**[8]**:** Պլինիոս Ավագի վկայությամբ՝ այդ նույն ժամանակներում Կասպից ծովի ողջ ափագիծը՝ աղվաններից հյուսիս մինչև Հյուսիսային օվկիանոսի հետ կապող նեղուցը, զբաղեցնում էին **ուդինները** (Udini)[9], իսկ սրանցից էլ վեր գտնվում էին **Ուտիդորսները** (Utidorsi)[10]: Շատ հնարավոր է, որ ճիշտ են այն ուսումնասիրողները, որոնք վերջին ցեղանունը միանգամայն պատճառաբանված բաժանում են երկու բաղկացուցիչ մասի՝ «**ուտի**» և «**առրս**», **ուտիդորսների** մեջ տեսնելով սարմատական առրսների կողմից սարմատականացված **ուդիններին**[11]**:** Ինչ վերաբերում է Պլինիոսի հիշատակած **ուդիններին**, ապա նրանք, ամենայն հավանականությամբ, նույնանում են Ստրաբոնի հիշատակած **հյուսիսային ուիտիներին** (Οὒιτιοι)[12] և Պտղոմեոսի **ուդերին** (῾Οδαί)[13]: Եվ եթե **հյուսիսային վիտիները** կամ **ուիտիները** իրոք կարող են և նույնանում են **ուդիններ**ի հետ, ապա նրա երկում հանդիպող **հարավային ուիտիները** կամ **վիտիները**, որոնց որոշ ուսումնասիրողներ թյուրիմացաբար, իսկ մյուսները, ընդհակառակը, գիտակցաբար և նպատակաղիր փորձում են նրանց անպայմանորեն կապել, ինչպես նշեցինք, **Ուտիքի և Ուտեացվոց տոհմի հետ** (այն ընկալելով որպես ցեղ- Ռ. Հ.), որը գտնվում էր Մեծ Հայքում: Ղ. Ինճիճյանը, որը չի պատկանում պատմաբանների այսպես կոչված «քննական վերլուծության» դպրոցին, չի էլ մտածել **ուիտիներին ուտեացիների** ու Մեծ Հայքի **Ուտիք** աշխարհի հետ նույնացնելու մասին[14]: Սակայն արդեն մեծավաստակ Ն. Ադոնցը գտնում էր, որ Ստրաբոնի **ուիտիները** ազգակցական կապի մեջ են իբր հայկական՝ **ուտեացիների** հետ: Նրա կարծիքով՝ ուիտիները սկզբնապես ապրել են Երասխից հարավ և, այնուհետև, աննշուշտ, տեղափոխվելու հետևանքով՝ Երասխից հյուսիս, Կուրի երկայնքով, ըստ որում **Օտենեի** և **Ատրպատականի** սահմանը հանդիսացել է **Երասխ-Արաքս** գետը: Բնական է, որ այս մոտեցման դեպքում ուիտիները հայտարարվում են ուտեացիների նախնիներ և Մեծ Հայքի եկամուտ բնակիչներ[15]: Հ. Մանանդյանը և Ս. Երեմյանը **Ուտիք** աշխարհի ուղղակի հիշատակություն են համարում հույն աշխարհագետի երկի **Ուիտիա** երկիրը. «**Պատմում են նաև, թե էնիաննների (այնիաննների) մի մասը հաստատվել է Ուիտիայում և մյուսները՝ հայերից վերև՝ Աբոս և Նիբարոս լեռներից այն կողմ**»[16]**:** Սակայն նույն հեղինակի մեկ այլ հաղորդումից հայտնի է, որ պարրասիների արկադական ցեղի մի մասը հաստատվել էր անարիակների երկրում, որոնց Ստրաբոնի օրերում **պարսիներ** էին կոչում, իսկ **այնիաննների (էնիաննների)** թեսալական ցեղը ուիտիների երկրում կառուցել էր

8 Տե՛ս Strabo, XI, 5, 1:
9 Տե՛ս Plin., Nat. Hist., VI, 38:
10 Անդ, VI, 39:
11 Տե՛ս К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 174-175:
12 Տե՛ս Strabo, XI, 7, 1; XI, 8, 8; XI, 14, 14:
13 Տե՛ս Claudii Ptolemaei Geographia, V, 8, 13:
14 Տե՛ս Ղ. Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 334-337:
15 Տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 420:
16 Я.А. Манандян, О некоторых проблемах древней Армении и Закавказья, Е., 1944, էջ 13: С. Т. Еремян, «Махелония» надписи Кааба-и-Зардушт, ВДИ, 1967, թիվ 4, էջ 51-52: Strabo, XI, 14,14:

**Այնիանա** (Αἰνιανα) ամրացված քաղաքը[17]: Միանգամայն իրավացի է Ա. Հակոբյանը, որն անդրադառնալով բերված տեղեկություններին, նշել է, որ հազիվ թե հույն գաղթականները քաղաք հիմնած լինեին Մեծ Հայքի հյուսիս-արևելյան շրջաններում, երբ Ալեքսանդր Մակեդոնացին չէր կարողացել հայաստանը նվաճել: Հեղինակը հիմնավոր ցույց է տալիս, որ **էնիանների (Այնիանների)** մասին հատվածում **Ուիտիան** չէր կարող նույնանալ **Ուտիքի** հետ, քանի որ ըստ ամասեցի աշխարհագետի՝ **Ուիտիան** և Հայաստանը այս վկայության մեջ որպես աշխարհագրական միավորներ իրար են հակադրվում, որոնցից առաջինը երկրորդի մասը չէ: Ուստի **Ուիտիան** ոչ այլ ինչ է, բայց եթե Կասպից ծովի հարավ-արևմտյան կամ կամ հարավային ափերին գտնվող **Ուիտիների երկիրը**[18]**:**

Ք. Ալիևը, լավ հասկանալով, որ Ստրաբոնի հիշատակած **ուիտիները**, որոնք բնակվում էին **անարիակների** և **ամարդների** հարևանությամբ, կապ չունեն ո՛չ Մեծ Հայքի և ո՛չ էլ Աղվանքի հետ, առաջ է քաշում այն տեսակետը, որ Պլինիոս Ավագի հիշատակած **Օտենեն**, որն, անշուշտ, Մեծ Հայքի **Ուտիք** աշխարհն է, բնակեցված է եղել **ուդիններով**, որոնց տարածման շրջանը, իբր, ժամանակի հետ կրճատվել է և ի վերջո ամփոփվել Արցախի և Կուր ու Երասխ գետերի միջև ընկած հողերում[19]: Սակայն հեղինակը, զարմանալիորեն, իրեն հարց չի տալիս, թե ինչու՞ այսպես կոչված աղվաններից հյուսիս հիշատակված ցեղը հիշվում է **Udini**, իսկ Ատրպատականին սահմանակից հայկական Ուտիքը՝ **Otene** գրությամբ, հանգամանք, որ ոչ միայն չի խոսում նրանց նույնացման օգտին, այլև բացառում է այն:

Հետաքրքիր է այն, որ ինչը որոշակի թեականությամբ է ընդունվում Ք. Ալիևի կողմից, վերջնական ճշմարտության է վերածվում Ֆ. Մամեդովայի աշխատության մեջ, ըստ որի՝ **Ուտի-Ուտիքում** գտնվել են անտիկ **Այնիանա**, **Հանի** և **Անարիակե** քաղաքները և այնտեղ ապրել են **ուտիներ**, **գարգարներ**, **ծավդեացիներ**, որոնք իբրև թե եղել են աղվանական միության հիմնական ցեղերից, և վերջապես, արաբ պատմիչների ու աշխարհագետների տվյալներով՝ **Ուտիի** բնակիչների լեզուն IX դարում եղել է **առաներենը**[20]**:** Հեղինակի մակերեսային քննությունը ոչ միայն այդպիսի հեռուն գնացող եզրակացությունների հիմք չի տալիս, այլև բացահայտ վկայում է փաստերը ծուռ հայելու մեջ ներկայացնելու նրա ցանկության մասին: Կ. Տրևերը, իր հերթին, փորձել է **Անարիակե** քաղաքը տեսնել **Ուիտիների երկրում** և ենթադրել, որ անարիակների ցեղային անվանումը, որ նշանակում է «ոչ իրանցիներ», հավաքական իմաստ է ունեցել՝ ցույց տալով ոչ իրանական լեզուներով խոսող ցեղերին: Շարունակելով իր միտքը՝ նա հանգում է մի անհեթեթ եզրակացության, թե «**անարիակներ**»-ը աղվանական մի ինչ-որ ցեղի անվան աղավաղումն է, առաջացած, թերևս, «**առանիակներ**» անունից, որն իբր աղերսվում է Առան նահապետի անվանը[21]: Սակայն առանձնապես մեծ պատրաստվածություն չի պահանջվում հասկանալու համար, որ նախ՝ Ստրաբոնի երկից բնավ չի

17 Տե՛ս Strabo, XI, 7, 1:

18 Տե՛ս Ա. Ա. Акопян, նշվ. աշխ., էջ 78-79: Հյուբշմանը բացառում էր Ուիտիայի և Ուտիքի նույնացումը (Հիմն Հայոց տեղւոյ անունները, էջ 106-108):

19 Տե՛ս К. Алиев, Кавказская Албания (I в. до н.э-I в. н.э.), Баку, 1974, էջ 128-130: Տե՛ս նաև К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 45-46:

20 Տե՛ս Ф. Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.-VIII в. н.э.), Баку, 1986, էջ 100-108:

21 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 143-144:

բխում, որ **Անարիակե քաղաքը** գտնվել է **Ուիտիայում**, առավել ևս շատ զարմանալի կլիներ, որ անարիակների քաղաքը տեղադրվեր ոչ թե այդ ցեղի, այլ հարևան **ուիտիների** երկրում: Եվ վերջապես, **Անարիակե քաղաքի** և **Ուիտիայում Այնիանա** ամրացված քաղաքի համատեղ հիշատակությունը մեզ կրկին վերադարձնում է հույն աշխարհագետի այն տեղեկությանը, որ **ուիտիները** բնակվել են **ամարդների** ու **անարիակների** միջև, հետևաբար **Ուիտիան** հիշյալ **Ուիտիների երկիրն** է և ոչ մի առնչություն չունի հայկական **Ուտիքի** հետ: Ինչպես տեսնում ենք, այն, ինչ Կ.Վ. Տրևերը մեզ մատուցում է եռաստիճան հավանականությունների ու ենթադրությունների հայեցակետից, Ֆ. Մամեդովայի թեթև գրչով վերածվել է պատմական «**անվիճելի ճշմարտության**»:

Այս առնչությամբ անհրաժեշտ է անդրադառնալ Ֆ. Անդրեասի՝ Ուտիքի և Այնիանայի մասին արտահայտած տեսակետներին: Վերջինիս կարծիքով՝ Ստրաբոնի տեղեկությունները Թեսալիայի Ὄτινη-ի երկրամասի և տեղական երկրի անունների համահնչյունությունից ելնելով, երկրորդը բխեցրել են առաջինից և դրա վրա հիմնվելով՝ **ուիտիներին** համարել են հույն գաղթականներ: Ինչ վերաբերում է **այնիաններին** (**էնիաններին**), ապա Անդրեասը գտնում է, որ այդ Փայտակարանի «**Հանի**» գավառանվան փոփոխված տարբերակն է, որը «Աշխարհացոյց»-ի որոշ ձեռագրերում ունի «**Հանհանի**» տարընթերցումը: Ուստի, եզրակացնում է նա, Αἰνιάνης թեսալական ցեղային անունը կարող էր ծագել կամ հայկական «**Հանհանի**»-ից, կամ էլ իրանական «**Հանեան**»-ից, իսկ Հանիի տարածքն էլ հնում հավանաբար մտել է **Ուիտիա-Ուտիքի** մեջ, որն ավելի ընդարձակ է եղել, քան VII դարում[22]: Դժբախտաբար, չնայած Կ. Տրևերի հիացմունքին[23], Ֆ. Անդրեասի տեսակետներն այնքան էլ անխոցելի չեն, որովհետև Ստրաբոնի երկը նման մտահանգման համար բավարար հիմքեր չի տալիս: Համենայն դեպս, եթե «**Հանի**» կամ «**Հանհանի**» անունը կապված է **այնիանների** գաղթականության հետ, ապա այդ չի արձանագրված և ոչ մի աղբյուրում և դրա մասին լոկ կարելի է ենթադրել, բայց ահա հույն աշխարհագետը **ուիտիներին** տեղադրում է բոլորովին այլ վայրում՝ **ամարդների** և **անարիակների** հարևանությամբ, որտեղ էլ հիշատակում է **Այնիանա** քաղաքը:

Ի մի բերելով վերն ասվածը՝ գտնում ենք, որ Ստրաբոնի հիշատակած **ուիտիները** այսպես կոչված Աղվանքից հյուսիս կամ Կասպից ծովի հարավ-արևմտյան ու հարավային ափերին ապրող տարբեր ցեղեր են և չեն առնչվում Մեծ Հայքի Ուտիք աշխարհի հետ: Այսպես կոչված Աղվանքից հյուսիս տեղորոշվող **ուիտիները** նույնական են **ուդիններին** կամ **ուդերին**, որոնք, **գարգարացիների** հետ մեկտեղ, մեծապես նեղվելով Հյուսիսային Կովկաս ներխուժած **ալաններից**[24], ներխուժում են Այսրկովկաս և արմատապես փոխում այսպես կոչված Աղվանքի ցեղային կազմը:

22 Տե՛ս F.K. Andreas, Ainiana (տե՛ս PWK): Անդրեասի կարծիքով՝ «Աշխարհացոյց»-ը VII դարի ստեղծագործություն է, ուստի Ուտիքի աշխարհացույցյան սահմանները վերագրում է VII դարին:

23 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 143. «Как это блестяще показал Андреас, …»:

24 Տե՛ս «История народов Северного Кавказа с древнейших времен до конца XVIII в.», отв. редактор книги Б.Б. Пиотровский, М., 1968, ¿ç 85-86:

## 3. Ի՞նչ ցեղեր են մտել աղվանական 26 ցեղերի համադաշնության մեջ

**Գարգարացիները**, հակառակ քաղաքացիություն ստացած տեսակետի, երբեք չեն մտել և չէին էլ կարող մտնել Ստրաբոնի հիշատակած աղվանական միության 26 ցեղերի մեջ, այլ ընդհակառակը՝ ներխուժելով և տիրելով Աղվանքի տարածքին, դարձել են տիրապետող տարր, որի համար, ինչպես նշեցինք, V դարում գրեր է ստեղծել Մեսրոպ Մաշտոցը[25]: **Գարգարացիների** և **ուդիների** մուտքը Այսրկովկաս կատարվեց մ.թ. I դարի երկրորդ կեսին, որը համապատասխանում է Մեծ Հայքի թագավորությունում Տրդատ Ա հայոց թագավորի գահակալության շրջանին: Հովսեփոս Փլավիոսի վկայությամբ՝ ալանաց ազգը ավերում է Մեդիան, որի Պակորա (Բակուր) թագավորն առանց դիմադրելու փախչում է երկրի դժվարամատույց վայրերը՝ իր կնոջն ու հարճերին 100 տաղանդով մի կերպ փրկագնելով ալանական գերությունից. «**Շատ հեշտությամբ և առանց մարտի կողոպուտի ենթարկեցին երկիրը մինչև Հայաստան ու վերադարձան ամեն ինչ թալանելով: Իսկ (Հայաստանում) թագավորում էր Տիրիդատեսը, որը ռազմերթի ելնելով նրանց դեմ, ճակատամարտ տվեց, բայց քիչ էր մնացել, որ կռվի ընթացքում նրանց ձեռքը գերի ընկներ կենդանի: Որովհետև (ալաններից) մեկը հեռվից պարան ձգեց նրա վրա և նրան արդեն կբռներ, եթե (Տիրիդատեսին) չհաջողվեր իր սրով իսկույն կտրել պարանը և անհապաղ ճողոպրել: Մինչդեռ ալանները այդ կռվի (ելքից) ավելի ևս գազազած, երկիրը թալանեցին և՝ երկու թագավորություններից էլ մարդկանց մեծ բազմություն և ուրիշ շատ ավար տանելով, նորից վերադարձան իրենց երկիրը**»[26]**:** Այս իրադարձությունը ծանոթ է նաև Պատմահորը, որը, սակայն, այն սխալմամբ վերագրում է Տրդատ Գ-ի ժամանակներին. «**Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանեօք իջեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի. և ի խառնել երկոցունց կողմանցն՝ յերկուս ճեղքէ զամբոխն թշնամեացն, սկայաբար շահատակելով: Ոչ կարեմ ասել զերագութիւն ձեռինն, որպէս անբաւք ի նմանէ յերկիր անկեալ թաւալգլոր խաղային, օրինակ իմն ի գեղեցիկ ցանցորդէ լի ձկամբք յերկիր թոթափեալ ցանցոյն, կայառէին յերեսս երկրին: Զոր տեսեալ թագաւորին Քասլաց՝ մօտ հասանէ յարքայն. և հանեալ յասպազինէն զներդեայ քեմխտապատ պարանն, և կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ՝ ճահ դիպեցուցանէ յուս ձախակողմանն և յանուխ աջակողմանն. զի էր վերացուցեալ զձեռնն ածել ումեք սուսերաւ. և ինքն վառեալ վերտ պահպանակօք, ուր ոչ գծէին նետք: Եւ քանզի ոչ կարաց շարժել ձեռամբ զիսկայն՝ զլանջօք առ երիվարին. և ոչ այնչափ ինչ շութափեաց մտրակել զերիվարն, քան թե ահեակ ձեռամբն ի ներդեայն ածապարեալ սկային, և սաստկութեամբ ուժոյն զիւրեաւ ցանցեալ՝ ի ճահ դիպեցուցանէր զերկսայրին, և ընդ մէջ կտրէր զայրն և զոյգ ընդ զպարանոցին զգլուխ զերիվարին:**

**Իսկ զօրացն ամենայնի տեսեալ զթագաւորն իւրեանց և զզօրաւորն միջակտուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ՝ ի փախուստ դառնային. զորոց զհետ մտեալ Տրդատ, վարէ մինչև յաշխարհին Հոնաց: Եւ թէպէտ ոչ փոքր հարուած եհաս**

25 Տե՛ս Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ՃԴ. «(Մաշտոցը-Հ.Բ.) ստեղծ զնշանագիրս կոկորդախոս աղխազուր խժական խեցբեկագունին այնորիկ Գարգարացւոց լեզուին»:

26 Հովսեփոս Փլավիոս, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս.Ս. Կրկյաշարյանի, Եր., 1976, տե՛ս «Հին հունական աղբյուրներ», հատ. Ա, էջ 52-53:

**զօրացն իւրոց, և բազմաց անկում մեծամեծաց, յորում մեռաւ և սպարապետն ամենայն Հայոց Արտավազդ Մանդակունի, սակայն Տրդատ անտի ըստ հայրենի օրինին պատանդս առեալ դառնայ»**[27]**:**

Որ այս հիշատակությունը նույնական է Հովսեփոս Փլավիոսի հաղորդմանը[28], վեր է ամեն կասկածից: **Ալանների** ներխուժումը Այսրկովկաս կատարվել էր, ամենայն հավանականությամբ, ուրիշ ցեղերի զինակցությամբ, որի արտահայտությունն է բասիլների թագավորի հիշատակությունը Խորենացու կողմից: Բասիլները, ինչպես ճիշտ ցույց է տվել Ք. Պատկանյանը, սարմատական ցեղ էին, որոնց Պտղոմեոսը հիշում է Βασιλικοί Σαρματαί անունով, որի հայերեն թարգմանություն է «**Թագաւորական սարմատք**»[29]**:** Իրականում այդ անունը թարգմանելու կարիք չկա, քանի որ այն պետք է հասկանալ պարզապես «**Բասլիկ սարմատներ**» կամ «**բասիլներ**»[30]**:** Պատմահոր մոտ ալանների անվան բացակայությունը պայմանավորված է թերևս ուշ ժամանակների ազդեցությամբ, երբ Հյուսիսային Կովկասից ամեն մի արշավանք ընկալվում էր որպես «**հիւսիսականաց**» հարձակում[31]: Այս հաղորդման մեջ բասիլների արքան, անշուշտ, ալանների թագավորը չէ, այլ ալաններին ենթակա «**թագաւորական սարմատների**» արքայիկը, որը և զոհվում է ճակատամարտում:

Մ. Խորենացու հաղորդմամբ, Տրդատը, հյուսիսականներին հաղթելուց հետո, նրանցից օգնական ուժ ստանալով, արշավում է պարսից արքա Արտաշիրի որդու՝ Շապուհ թագավորի դեմ[32]: Բայց սա արդեն III դարի իրողություն է, հանգամանք, որը ցույց է տալիս, թե ինչպես Պատմահոր մոտ միահյուսվել են **Տրդատ Ա**, **Տրդատ Բ** և **Տրդատ Գ** թագավորների վերաբերյալ պատմական անցքերը: Սակայն սույն տեղեկության մեջ կա ուշադրության արժանի մի փաստ ևս, որ հաշվի չի առնվել ուսումնասիրողների կողմից: Հովսեփոս Փլավիոսի տեղեկությունից պարզվում է, որ ալանները Հայաստանի խորքերը չէին մտել և ասպատակել էին միչև Հայաստան ընկած երկրները: Ըստ այդմ էլ, հասկանալի պատճառներով, ալան-հյուսիսականներին պետք է ճակատամարտ տված լիներ Մեծ Հայքի սահմաններից դուրս՝ այսպես կոչված Աղվանքի տարածքում: Հետևաբար, միանգամայն տեղին է կարծել, որ **Գարգարացվոց դաշտը**, որի մասին հիշում է Պատմահայրը, գտնվում էր Կուրի ձախափնյակում: Քննաշխարհագրական այս անվանումը կարող էր Կուրի ձախափնյակում ի հայտ գալ **գարգարացիների**՝ Աղվանքում հաստատվելուց հետո, սակայն միևչև ալանական ներխուժումը, որովհետև հայերի աչքում Կուրի ձախափնյակի ընդարձակ դաշտն արդեն ընկալվում էր որպես **գարգարացիների դաշտ**: Անշուշտ, կարելի է ենթադրել, որ գարգարացիների դաշտի հիշատակությունը Պատմահոր կողմից ուշ ժամանակների աշխարհագրական հասկացությունների ազդեցության արդյունք է, սակայն բասլիկների միաժամանակյա արձանագրումը, մեր կարծիքով, վկայում է այդ անվան առավել հին ծագման մասին: Թովմա Արծրունին **Գարգարացվոց դաշտի** մասին Պատմահոր տեղեկությունը որոշակիացրել է՝ տեղադրելով այն **Պարտավ քաղա-**

27 Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Ձե:
28 Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Եր., 1968, էջ 357-358, ծնթ. 152:
29 Տե՛ս К.П. Патканов, Армянская география VII века, էջ 37, ծնթ. 134:
30 Անդ:
31 Տե՛ս Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Ձե:
32 Անդ:

**քի** շրջակայքում[33]: Սակայն պատմիչը **Պարտավի** շրջակայքը մեկ այլ կապակցությամբ կոչում է «**աշխարհին Գարգարացւոց**»[34]**:** Նման մոտեցումը, ցավոք, սոսկ պատմիչի սխալ կռահումն է, որովհետև **Ուտիք Առանձնակը**, որի մեջ էր **Պարտավ քաղաքը**, ոչ մի ձևով չէր կարող վերաբերել **Գարգարացվոց աշխարհին**:

Ելնելով վերոհիշյալ հաղորդումից՝ կարելի է հանգել միակ հավանական եզրակացությանը, որ արդեն I դարի կեսերին **գարգարացիները**, **ուդիները** և մի շարք ցեղեր, **ալանների** ռազմական ճնշմանը տեղի տալով, ուժով մտել էին Այսրկովկաս, հաստատվել ու գերիշխանություն հաստատել այսպես կոչված Աղվանից թագավորության տարածքում: Վերջինս ավանդույթի ուժով հայերի կողմից շարունակում էր կրել Աղվանից անունը, իսկ հունահռոմեացիների կողմից կոչվում էր Ալբանիա, չնայած արդեն վերածվել էր **Գարգարացիների թագավորության**, որի դեմ էլ Տրդատ Ա-ն դեռ մինչև ալանական ներխուժումը ստեղծել էր **Ուտեացվոց**, **Գարդմանացվոց** և **Ծավդեացվոց** ռազմական կուսակալությունները: **Ուդիների** I դարում Այսրկովկաս մուտք գործելու օգտին չէ Պտղոմեոսի երկում **ուդերի** հիշատակությունը, որով ստացվում է, որ նրանք դեռևս II դարում գտնվում էին այսպես կոչված Աղվանքից հյուսիս ընկած շրջանում: Սակայն Ասիական Սարմատիայի նկարագրությունը իրականում ավելի հին է, քան Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ը, այսինքն՝ ուդերի հիշատակությունը չի վերաբերում II դարին, որովհետև հունա-հռոմեական աշխարհը մինչև II դարը վերջին անգամ հարուստ տեղեկություններ էր քաղել Գնեոս Պոմպեոսի արշավանքների շրջանում: Այլ խոսքով, **ուդերի** մասին տեղեկությունը ժամանակագրական առումով պետք է համընկնի Ստրաբոնի և Պլինիոս Ավագի հիշատակություններին:

Եթե ի մի բերենք վերև ասվածը, ապա հստակ է եզրակացությունը: Այսպես կոչված աղվանական 26 ցեղերի միության մեջ չեն մտել ո՛չ **ուդինները** և ո՛չ **գարգարները**:

Մենք բավական հանգամանալից կանգ առանք **գարգարացիների** և **ուդինների** կնճռոտ հարցի վրա, սակայն խնդիրն ամբողջացնելու համար հարկ է քննության առնել ևս մի քանի խնդիր: Նախ՝ կա՞ արդյոք կապ **ծավդեացիների** և Պլինիոսի հիշատակած Sodi ցեղի միջև: Հարցն այն է, որ որոշ ուսումնասիրողներ հակված են կարծելու, որ Արցախի Ծավդեք անունը աղերս ունի Sodi ցեղանվան հետ, որ **ծավդեք-սոդերը** աղվանական ցեղ են և այլն: Ս. Երեմյանի կարծիքով՝ **ծավդեք-սոդերը** բնակվել են Խորի գետի միջին հոսանքի շրջանում[35], ինչը ոչնչով փաստարկված չէ, ուստի պատահական չէ, որ Կ. Տրևերը գտնում է, որ **սոդերի** բնակության տարածքի վերաբերյալ տեղեկություններ չկան[36]: Մենք հակված ենք կարծելու, որ Պլինիոսի «**Քնապատմության**» մեջ պահպանված Sodi անունը մեզ անաղարտ չի հասել և, ամենայն հավանականությամբ, սկզբնապես եղել է Sondi, որն անմիջականորեն համընկնում է Պտղոմեոսի «**Աշխարհագրության**»՝ Σονδαί տեղանվան հետ[37]: Անշուշտ, սրբագրելի է նաև «**Իսոնդաի**» անունը, որտեղ հետագայում «Τ»-ն վերածվել է «Ι»-ի, այսինքն՝ տեղանունը սկզբնապես հնչել է «Τσονδαί»-**Ծոնդաի**: Աշխարհագրական դասավորության տեսակետից նույնպես **Իսոնդաի-Ծոնդաին** տեղաղրվում է **Դիդոյքի** հարևանությամբ, որն իրավունք է

33 Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Եր., 1985, դպր. Գ, գլ. ժ:
34 Անդ, դպր. Գ, գլ. ԺԸ:
35 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 202, ծնթ. 3:
36 Անդ, էջ 48:
37 Տե՛ս Plin. Nat. Hist., VI, 10: Claudii Ptolemaei Geographia, V, 8, 13:

տալիս Sodi>Sondi սրբագրումը համարել արդարացված: Հասկանալի է, որ այս հայեցակետի առկայությամբ Ծավդեքի և Sodi-ի ազգակցության հանգամանքը, որն առանց այդ էլ խարխլված էր ավազի վրա, ի չիք է դառնում: Ի հավելումն ասվածի, հարկ է նշել, որ **Ծավդեք** անունն Արցախում հայտնվել է հարավից, ծագելով **Զաբդիկենե-Ծավդեք** երկրանունից: Պատմահոր մի արժեքավոր տեղեկության համաձայն՝ հայոց ավանդական Վաղարշակ թագավորը «**յարեւելից կողմանէ զեզերբ հայկական խօսիցս, կողմնակալս բիւրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսակեանս և որ ի Կադմեայ տանէն, զորոց զանուանսն ի միում ի յառաջագունից ասացեալ ճառիցն կարգեցաք**»[38]**:** Ստացվում է, որ Վաղարշակ թագավորը հայոց լեզվի տարածման եզերքում և ոչ թե աղվանների երկրում, արևելից կողմնակալ բյուրավորներ է նշանակում Սիսակյաններին և Կադմոսի տնից ինչ-որ մեկին: Սակայն, երբ դիմում ենք Խորենացու նախորդ տեղեկությանը, ապա տեսնում ենք, որ երկու հաղորդումների միջև տարբերություն կա: Այսպես, անդրադառնալով Արամի գործունեությանը արևմուտքում և Կեսարիայի գրավմանը՝ նա նշում է. «**Եւ քանզի զարևելեանն և զհարաւայինն նուաճեալ, յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոցիկ, Սիսակեանցն զարևելս և որք ի Կադմեայ տանէէն՝ զԱսորեստանին՝ ոչ ինչ այնուհետև կասկած շփոթից ուստեք ունէր**»[39]**:** Այս տեղեկությամբ Կադմյանները կողմնակալ են նշանակվում ոչ թե արևելքում, այլ հարավում, ուստի նշված հակասությունը վերացնելու համար Խորենացին նախորդ հիշատակությունից հետո, մասնավորեցնելով Սիսակյանների կուսակալության հաստատման խնդիրը, գրում է. «**Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարևելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, սա մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր**»[40]**:** Պատկերը միանգամայն այլ է: Առանը ոչ թե արևելքի, այլ հյուսիս-արևելքի կողմնակալ է նշանակվում, որով կարծես թե պատմիչը փորձում է տեղ թողնել Կադմյան տոհմի ներկայացուցչի համար: Հավանական է, որ եթե Առանը հյուսիս-արևելքի կողմնակալ է, ապա Կադմյան տոհմի ներկայացուցիչը կարող է դիտվել որպես հարավ-արևելքի կողմնակալ: Սակայն, մեր կարծիքով, Խորենացու նշված տեղեկությունները կարող են այլ լուսաբանություն ստանալ:

Պարզելով, որ հայկական **Ծավդեքը** չի աղերսվում Պլինիոսի Sodi-Sondi-ին, հարց է ծագում, թե այնուամենայնիվ, ինչու՞ Արցախ երկրամասի կողմնակալության, փոխանակ Արցախացիքի կոչվում է Ծավդեացիք: Անունս, որքան էլ որ Պատմահայրը Ծավդեքի իշխանական տունը **Առանի սերունդ** համարի, կարծես թե եկամուտ է և ոչ տեղական, որն ստիպում է վերհիշել Խորենացու տեղեկությունն այն մասին, թե արևելքից կողմնակալ բյուրավոր են նշանակվել ոչ միայն Սիսակյանները, այլև ինչ-որ մեկը **Կադմյան տոհմից**: Հայտնի է, որ Կադմյան տոհմ ասելով՝ հայկական աղբյուրները հասկանում են **Կորդուքը** հարևան **Ծավդեքի** հետ միասին, ուստի ոչ միայն կարելի է, այլև շատ հավանական է ենթադրել, որ Արցախի **Ծավդեք** անունը սերում է **Կադմյան Ծավդեքից**, որի իշխողների ներկայացուցիչներից մեկը Տրդատ Ա-ից ինչ-ինչ ծառայությունների համար ստացել է Արցախի կուսակալությունը: Այլ խոսքով, եթե Սյունիները, Գարդմանացիները և

38 Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Ը:
39 Անդ, գիրք Ա, գլ. ԺԴ:
40 Անդ, գիրք Բ, գլ. Ը:

Ուտեացիները կարող են համարվել Սիսակյաններ, ապա Ծավդեացիների «ազգ»-ը սերում է Կադմյան Ծավդեքից: Երբ հետագայում հայոց արքունիքը վերացրեց **Ծավդեացիների կուսակալությունը** և Արցախը որպես վարչական միավորի անուն կրկին մտավ իր իրավունքի մեջ, աստիճանաբար ծավդեացիների անունը մոռացության տրվեց, որոնք ևս վերագրվեցին Առանի սերնդին: Ագաթանգեղոսի հաղորդմամբ՝ **Ծավդեացիների իշխանությունը** գոյություն ուներ դեռևս Գրիգոր Լուսավորչի՝ քահանայապետ օծվելու ժամանակներում[41]: Սյունյաց և Ուտեացվոց իշխանների միջև հիշատակված **Ծավդեից աշխարհի իշխանը** կարող է նույնանալ միայն ու միայն **Արցախի** հետ[42]: Արշակ Բ թագավորի դեմ ապստամբած նահանգների մեջ, համաձայն Փավստոս Բուզանդի, Ծավդեքն այլևս չի հիշատակվում: Կրկին **Արցախը**[43] պատմական ասպարեզ է գալիս, ինչը վկայում է Ծավդեից իշխանության ոչնչացման մասին: Արցախը, որտեղ Ծավդեացիների տոհմի իշխանությունը մարել էր, ամենայն հավանականությամբ, Խոսրով Կոտակ կամ Տիրան թագավորների իշխանության տարիներին, երբ հայոց արքունիքը թագավորական իշխանությունը ամրապնդելու համար բազմաթիվ իշխանական ընտանիքներ բնաջնջեց, այն, անկասկած, վեր է ածվում արքունի տիրույթի, որը կառավարվում էր արքունի գործակալի կամ վերակացուի կողմից: Այդ մասին է վկայում այն իրողությունը, որ, ի տարբերություն բազմաթիվ այլ դեպքերի, երբ ապստամբներ են հռչակվում այս կամ այն աշխարհի կամ գավառի իշխողները, Փավստոս Բուզանդը հայտնում է «**ամուր գաւառն Արծախայ**»-ի ապստամբության և «**զերկիրն Արծախայ**»-ի հնազանդեցման մասին:[44] Թերևս կարելի է առանց սխալվելու ենթադրել, որ «Արծախ»-ի ապստամբությունը պայմանավորված էր երկրամասի վերակացուի ժառանգատեր իշխան դառնալու ցանկությամբ, ինչը հաջողությամբ օգտագործվում էր պարսից դիվանագիտության կողմից:

**Ծավդեք** անունը Մեծ Հայքի պտղոմեոսյան նկարագրության մեջ հանդիպում է հունականացված Σοδουκηνή տառադարձությամբ, որը, մեր կարծիքով, ցույց է տալիս, որ «**աւ**» երկհնչյունը արդեն երբեմն «**o**» էր արտասանվում: Լեզվական այս գործընթացի վկայությունն է նաև **Սոթք** կամ **Սողք** գավառանունը, որն, անշուշտ, աղերս ունի **Ծավդեքի** հետ: Սակայն Սողուկենե ձևը միաժամանակ ցույց է տալիս, որ **Ծավդեքը** նաև ոչ մի կապ չի կարող ունենալ Sodi կամ Sondi ցեղանվան հետ, քանի որ «**աւ**»-ի վերածումը «**o**»-ի կատարվել է հայկական միջավայրում, սակայն Sodi-ն կամ Sondi-ն բոլորովին արդյունք չէ Saudi-ի կամ Saundi-ի հնչյունափոխության:

**Ծավդեք** անունով երկիր է հիշում Եղիշեն: Անդրադառնալով պարսից հազկերտ Բ թագավորի հավատափոխության հրովարտակին, նա գրում է, որ «**ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհին Հայոց, ի Վրաց և Աղուանից և ի Լփնից, ի Ծաւդէից և ի Կորդուաց, յԱղձնեաց և բազում այլ տեղեաց հեռաւորաց, որոց ոչ էին օրէնք երբալ զայն ճանապարհ յառաջ ժամանակաւ**»[45]: Մեկ այլ կա-

41 Տե՛ս Ագաթանգեղոս, § 795. «մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին, երկոտասաներորդ՝ իշխանն Ծաւդէից աշխարհին, երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին»:

42 Տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 294. «Цодеи или Завдеи=Арцах»:

43 Տե՛ս Փավստոս Բուզանդ, դպր. Դ, գլ. Ծ. «Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արծախայ...», դպր. Ե, գլ. Ծ. «(Մուշեղ Մամիկոնյան սպարապետը-Հ.Բ.) հարկանէր զերկիրն Արծախայ մեծաւ պատերազմաւ, գերէր զբազումս ի նոցանէն և զմնացորդսն առնոյր պանդանդս, և զմնացեալսն ի հարկի կացուցանէր»:

44 Անդ:

45 «Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Եր., 1957, էջ 10:

պակցությամբ պատմիչը նշում է, որ «**Չի առհասարակ հրաման առեալ էր յարքունուստ, որպէս Հայոց աշխարհին, նոյնպէս և Վրաց և Աղուանից և Լփնաց, Աղձնեաց և Կորդուաց և Ծաւդէից և Դասն և որ այլ ևս ուրեք ուրեք ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունէին զքրիստոնէութիւն**»[46]**:** Անգամ փոքր քննությունը ցույց է տալիս, որ Եղիշեի **Ծավդեքը** Մեծ Հայքի հարավային երկրամաս **Ծավդեքն** է կամ **Զաբդիկենեն**, ուստի, եթե նկատի չունենանք լեզվական կապը **Ծավդեք-Արցախի** իշխանական տան անվան հետ, որևէ ձևով հնարավոր չէ այն առնչել **Արցախ-Ծավդեքին**[47]**:** Առավել ևս, որ **Արցախը** պատմիչին հայտնի է որպես **ամրակուռ աշխարհ**[48]**, անտառաշատ երկիր**[49]**:**

Մենք երկար ու հանգամանալից քննության առանք Գարգարացիների առեղծվածի և Արցախ-Ծավդեքի ու Ուտիքի հետ կապված մի շարք հարցեր, սակայն հարցն ամբողջացնելու տեսակետից հարկ է հետազոտության ենթարկել նաև մյուս, այսպես կոչված, աղվանական ցեղերի խնդիրը: Ուսումնասիրողները, որպես կանոն, հատկապես ադրբեջանցի պատմաբանները, աղվանական ցեղ են հռչակում **մյուկերին**, որոնք առաջին անգամ հիշատակվում են Հեկատեոս Միլետացու կողմից. «**Մյուկերից մինչև Արաքս գետը**»[50]**: Մյուկերին** երկու անգամ հիշատակում է Հերոդոտոսը: Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունները ներկայացնելիս նա **մյուկերին** տեղադրում է **սագարտիների**, **սարաւգների**, **թամանների** և **ուտիների** հարևանությամբ՝ տասնչորսերորդ սատրապության մեջ, որը հեղինակը տեղորոշում է Կարմիր ծովի (իմա՛ ներկայիս Արաբական ծովը-Բ.Հ.) առափնյակում և դրանից հյուսիս[51]: **Մյուկերը**, ինչպես արդեն վերը նշել ենք, հեղինակի մեկ այլ հաղորդմամբ մասնակցել են հույն-պարսկական պատերազմին **ուտիների** և **պարիկանիների** հետ մեկտեղ և զինված են եղել **պակտյուացիների** պես[52]:

Կ. Տրևերից և մյուսներից սկսած մինչև Ռ. Մելիքով **մյուկերի** անունը հետազոտողները փորձում են կապել Մուղան անվան հետ[53]: Վերջինս անգամ մեղադրանք է ներկայացնում այն հետազոտողներին, որոնք Աքեմենյան Պարսկաստանի սատրապություններից տասնչորսերորդը վերլուծելիս, այդ իրողությունն իբր հաշվի չեն առել: Սովորաբար **մյուկերին** նույնացնում են Maka (Makran) երկրի բնակիչներին, սակայն Ռ. Մելիքովը փորձում է հիմնավորել այն դրույթը, թե հույները պարսկական անունները տառադարձելիս «u»-ն արտահայտում էին ս-ով, հետևաբար պարսկական Maka-ն չի կարող համապատասխանել Μύκοι-ին[54]: Հեղինակը ընթերցողի ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ Հերոդոտոսը երկու անգամ էլ **մյուկերին** հիշատակում է **ուտիների** հետ մեկտեղ, իսկ անտիկ հեղինակները տարբերակում էին Արաքսի վրա ապրող **մյուկերին** և **Մակայում**

---

46 Անդ, էջ 51:

47 Կ. Տրևերը չնայած որոշակի չի գրում, Եղիշեի այս հաղորդումը մեջբերելով՝ պահում է միայն Ծավդեքի անունը, թերևս կապելով Արցախի հետ (նշվ. աշխ., էջ 202:):

48 Տե՛ս Եղիշե, էջ 94. **«ընդ ամենայն կողմանս ամրակառոյց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ...»**:

49 Անդ, էջ 125. **«ի թաւնձրախիտ մայրիսն Արծախայ»**, էջ 127. **«Նա և որ յԱրծախայ մայրիսն անկեալքն էին փախստականք»:**

50 Hekat., fr. 170:

51 Տե՛ս Herodotus, III, 93:

52 Անդ, VII, 68:

53 Ավելորդ համարելով բոլոր հեղինակների աշխատությունների թվարկումը՝ լոկ նշում ենք միայն վերջերս լույս տեսած Ռ. Մելիքովի աշխատությունը, էջ 122:

54 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 122:

ապրող ժողովրդին, որին կոչում էին Μακαί[55]: Ոգևորվելով իր փայլուն հիմնավորումից՝ նա հայտարարում է, թե տարբեր տվյալների համաձայն՝ **մյուկերը** բնակվել են Մուղանի տարածքում (ներկայիս Մուղանի տափաստանը- Ք.Հ.)՝ զբաղեցնելով Երասխի ստորին հոսանքի, Կասպից ծովի և Թալիշի լեռների միջև ընկած տարածքը: Շարունակելով իր միտքը զարգացնել՝ Ռ. Մելիքովը նշում է, որ **մյուկերի** բնակության շրջանը Mūkān գրությամբ հանդիպում է մ.թ. III դարի պահլավական արձանագրություններում, որ իբր միջինպարսկական Mūkān ձևը կազմվել է -an վերջածանց-ֆորմանտի միջոցով և լիովին համապատասխանում է μύκοι-ին[56]: Ըստ հեղինակի՝ Մուղանի երկրամասը հիշատակում են արաբ աշխարհագետները, իսկ մոնղոլական շրջանից սկսած՝ վերջինիս անունը դառնում է ընդհանրական և իբր ժողովրդական ստուգաբանությունը այն հանգեցնում է «muğ»-(մուգ-Ռ.Մ.)-ին, որին իբր նպաստում է այդտեղ միջնադարում մեծ քանակությամբ **զրադաշտական մոգերի** գտնվելը[57]: Այնուհետև հեղինակը հայտարարում է, որ ամենավաղ և ճիշտ Mūkān ձևը հանդիպում է արաբ աշխարհագետների գործերում և Թեոփանեսի ժամանակագրության մեջ, ինչպես նաև «Հայկական աշխարհացոյց»-ում՝ որպես **Մարաստանի** մարզ, որ գտնվել է **Գիլանի** և **Դեյլեմի** միջև, իսկ վրացական աղբյուրներում հայտնի է Mowakan ձևով[58]: Հենվելով Հերոդոտոսի տվյալների վրա՝ հեղինակը գրում է, որ քանի որ **ուտիները** և **մյուկերը** մտել են միևնույն ռազմա-վարչական միավորի մեջ և եղել են հարևաններ, ապա ուտիները համապատասխանում են **Ուտիքի** բնակիչներին, իսկ մյուկերը զբաղեցրել են **Մուղանի** դաշտը՝ սահման ունենալով **Երասխ-Արաքս** գետը[59]: Հեղինակն, իհարկե, բերում է Պլինիոսի տեղեկությունն այն մասին, որ **Օտենե-Ուտիքը Արաքս գետով** սահմանակցում էր **Ատրպատականին** և հավանաբար հենց այդ հատվածում էլ սահմանակցում էր **Մուղանին**[60]**:** Ընդունելով հանդերձ, որ **մյուկերի** լեզվի որևէ լեզվախմբին պատկանելու մասին աղբյուրները լռում են, նա, **ապրիորի**, գտնում է նաև, որ **մյուկերը** հավանաբար խոսել են տեղական լեզուներից մեկով: Հեղինակի վերջին եզրակացությունն այն է, որ, համաձայն Յակուտ ալ-Համավիի մի հաղորդման, կարելի է կարծել, որ վաղ միջնադարում **մուղանները** իրանականացվել են[61]:

Ի՞նչ կարելի է ասել մյուկերի նման տեղաղրության մասին: Անշուշտ, եթե որևէ ուսումնասիրող հոգեբանորեն պատրաստ է կեղծիքի գնալու, ապա ամեն ինչ կարելի է գրել և իրականությունը ներկայացնել ծուռ հայելու մեջ: **Մյուկերի** տեղորոշումը **Մուղանի տափաստանում** առաջին հայացքից կարծես թե տրամաբանական է: Սակայն, անունների կարծեցյալ նմանությունն իր հաստատումը չի գտնում սկզբնաղբյուրներում: Եթե հեղինակը կարծում է, որ հույն հեղինակները Ասիայում գիտեին միայն մեկ գետ՝ Արաքս անունով, ապա նա պարզապես սխալվում է, քանի որ հայկական Երասխ-Արաքսից բացի Արաքս են կոչվել ևս մի քանի գետեր: Հետևաբար Հեկատեոս Միլետացու աղավաղված և ոչ ամբողջական «**...մյուկե-**

55 Անդ:
56 Անդ, էջ 122-123: Տե՛ս նաև Касумова С.Ю., Южный Азербайджан в III-V вв., Баку, 1983, էջ 53:
57 Տե՛ս Грантовский Э.А., Сагартии и XIV округ государства Ахеменидов по списку Геродота,-КСИНА, թիվ 46, 1962, էջ 237: Р. Меликов, նշվ. աշխ., էջ 123:
58 Տե՛ս Р. Меликов, նշվ. աշխ., էջ 123:
59 Անդ:
60 Անդ:
61 Անդ, էջ 124:

**րից մինչև Արաքս գետը**» հաղորդումը բնավ չի նշանակում, թե հույն հեղինակը նկատի է ունեցել հայկական Արաքսը: Ավելին, եթե իրոք **մյուկերը** եղել են **Մուղանի տափաստանի** բնակիչներ, ապա Հեկատեոսը չէր գրի «**մյուկերից մինչև Արաքս գետը**», քանի որ տվյալ տեղեկությունը ենթադրել է տալիս մյուկերի և Արաքս գետի միջև որոշակի տարածքի առկայությունը, ինչը պարզապես անհնար է մյուկերին Մուղանի տափաստանում տեղորոշելու դեպքում:

Հանրահայտ է, որ Հերոդոտոսը լայնորեն օգտվել է Հեկատեոս Միլետացու աշխատությունից, հետևաբար նրա տվյալները հազիվ թե կարող են հակասել միլետյան հեղինակի հաղորդմանը: Մանրակրկիտ ծանոթությունը Հերոդոտոսի «Պատմության»-ը միայն հաստատում է տվյալ տեսակետը: Հույն հեղինակը **մյուկերին** տեղադրում է **Էրիտրեան Կարմիր ծովի** շրջանում՝ դրանով իսկ հաստատելով Հեկատեոսի հաղորդումն այն մասին, որ **մյուկերից** մինչև **Արաքս գետը**, տվյալ դեպքում, ըստ երևույթին, մինչև Ամու-դարյա և Ինդոս, տարածվում էր հսկայական տերիտորիա: Հերոդոտոսի մյուս հաղորդումը, ըստ որի ուտիները, մյուկերը և պարիկանիները զինված էին **պակտյուների** նման, հստակություն է մտցնում հարցիս մեջ և հնարավորություն է տալիս մյուկերին տեղորոշել **Էրիտրեան ծովի** և **Պակտյուիկե** երկրի միջև, որը գտնվել է Աֆղանստանի և ոչ թե ներկայիս Աղրբեջանի տարածքում:

Կարդալով Ռ. Մելիքովի աշխատությունը՝ զարմանում ես, թե ինչպես հեղինակը պարզապես մի քանի նախադասությամբ կարողացել է աղավաղել սկզբնաղբյուրների տվյալները և դրանք «**լուսաբանել**» համաձայն իր առջև դրված քաղաքական նպատակների: Մենք բոլորովին չենք առարկում և համաձայն ենք, որ **ուտիները** և **մյուկերը** եղել են հարևաններ, սակայն չպետք է մոռանալ, որ նրանք եղել են նաև **պարիկանիների** և **պակտյուների** հարևանը, որոնց հեղինակը պարզապես մոռացության է տալիս: Կամենում ենք նշել, որ ոչ մի առողջ մտածող մարդ չի կարող առաջնորդվել միայն **ուտիների** և **մյուկերի** հարևանությամբ և տեսադաշտից դուրս թողնել նրանց հարևանությունը **պարիկանիներին** և **պակտյուներին**: Վերջիններիս ճշգրիտ տեղադրությունը, հակառակ Ռ. Մելիքովի ջանքերին, բացառում է **ուտիների** և **մյուկերի** գտնվելը **Կուրի և Երասխի ստորին հոսանքի** շրջանում: Ուրեմն Հերոդոտոսի երկրորդ հաղորդման լույսով դժվար չէ կռահել, որ Հեկատեոս Միլետացին, խոսելով **Արաքսի** մասին, նկատի է ունեցել ամենից առաջ **Ինդոս գետը**: Ինչպես մյուս հարցերում, այս խնդրում ևս հեղինակը ոչ միայն ի հայտ է բերել սեփական քաղաքական շահագրգռություններն ու նպատակները, այլև իր լիակատար անճեռնհասությունը և գիտական անբարեխղճությունը: Հետաքրքիրն այն է, որ հեղինակը ծանոթ է **Մուկան** կամ **Մուղան** անվան վրացական աղբյուրներում հանդիպող Mowakan, Mowkan և Mowkank ձևերին[62]: Դատելով «Քարթլիս ցխովրեբա»-ի հայերեն թարգմանությունից, վրացական պատմագրությունը պահպանել է Մուղան-Մուկան անվան առավել հին ձևը՝ Մովկան, այն դեպքում, երբ հայկական աղբյուրներում երկրամասը հնում հայտնի է Մուկան[63], իսկ վերջին դարերում՝ Մուղան արտասանությամբ: Պետք է հեղինակին հայտնի լիներ, որ **մյուկերի** ցեղանունը հայերենում չի կարող վերած-

62 «Քարթլիս Ցխովրեբայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությամբ և բառգրքով լույս ընծայեց Ի. Աբուլաձեն, Թիֆլիս, 1953, էջ 5, 6, 7, 16, 70, 134, 140, 145, 165:

63 «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը չի հիշատակում **«Մուկան»** երկրամասի անունը, որը պահպանվել է համառոտ խմբագրության մեջ. **«Երեսուն եւ հինգերորդ՝ Մարք են, որ կոչին Քուստի Քապկոհ...: Ունի աշխարհս զայսոսիկ. ...զՌէ, զԳեղան, զՄոկան, զԴիղումն...»** (Աշ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 352):

վել «**մուկ**»-երի: Հունական υ-ը օրինաչափորեն հայերենում տրվում է «**ու**» երկհնչյունով կամ էլ ժամանակի ընթացքում վերածվում է «**ի**»-ի: Իսկ ինչ վերաբերում է «**ով**»-ին, ապա հայերենի արևելյան բարբառների լեզվական օրինաչափություններով այն, որպես կանոն, վերածվում է «**ու**»-ի, դրանով իսկ «**Մովկան**»-ը վերածելով **Մուկանի**: Այնպես որ **Մուղանի** տափաստանի և **մյուկերի** ցեղանվան նմանությունը պարզապես պատահական է: Նման քննությունից հետո եզրակացությունը շատ որոշակի է: Նախ, **մյուկերը** չէին կարող մտնել այսպես կոչված աղվանական 26 ցեղերի միության մեջ, երկրորդ՝ **մյուկերի** տեղաղրությունը **Մուղանի տափաստանում** անհնարին է, քանի որ այն Կասպերի երկիրն է, որը հայոց Արտաշես Ա թագավորի ժամանակներից մաս է կազմել Մեծ Հայքի թագավորության:

Այս քննությունը հազիվ թե կարող է հաճույք պատճառել հարևան հանրապետության պատմաբաններին, որոնք, աղվաններին հռչակելով աղրբեջանական ժողովրդի նախնիներ, փորձում են ի սկզբանե անտի «Աղուանք-Ալբանիան» տեսնել որպես կովկասյան լեզուներով խոսող ցեղերի միություն: Մեր հետազոտությունը պարզորոշ ցույց է տալիս, որ Ստրաբոնի հիշատակած աղվանական 26 ցեղերի միության մեջ անվանապես կարելի է վկայակոչել միայն կասպերին, որոնք իրանախոս ցեղ էին, իսկ **գարգարացիները**, **ուդիները**, **մյուկերը** և **մյուսները** մ.թ. I դարում կամ դեռևս չէին գտնվում ստրաբոնյան Ալբանիայի տարածքում, կամ էլ երբեք չէին կարող գտնվել ո՛չ Կուրի Ձախափնյակում և ո՛չ էլ Աջափնյակում:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև **գելերին**, **լեգերին**, **ճիղբերին**, **շիղբերին** և **դիդուրներին**[64], ինչպես նաև Փավստոս Բուզանդի հիշատակած **Փոխերին, Թավասպարներին, Հեճմատակներին, Իժմախներին, Գաթերին, Գղուարներին, Գուգարներին (?), Շչբերին, Ճղբերին, Քաղասիճներին** ու **Եգերսվաններին**[65] և Եղիշեի երկում արձանագրված **Լփիններին, Ճղբերին, Վատնին, Գավնին, Գղուարին, Խրսանին, Հեճմատակնին, Փասխնին, Փոսխնին, Փյուքուանին** և **Թավասպարանին**:[66]

Ինչպես իրավացիորեն նշում է Կ. Տրևերը, համաձայն Ստրաբոնի՝ **գելերը** եղել են Կասպից ծովի առափնյա և լեռնային շրջանների բնակիչներ և նրանց տեղադրում է **ամազոնուհիների** և **ալբանների** միջև **լեգ-սկյութների** հետ միասին[67]: Նույնը տեսնում ենք Պլուտարքոսի մոտ, որի համաձայն՝ նույնպես **ամազոնուհիների** և **ալբանների** միջև բնակվել են **գելերը** և **լեգերը**[68]**:** Իսկ Կ. Տրևերը ուշադրություն է դարձրել այն իրողությանը, որ **գելերը** բնակվել են նաև Կասպից ծովի հարավարևմտյան մասում՝ **Գիլանի** մարզում[69]: Ամեն ինչից դատելով՝ **գելերը իրանական ցեղ** են կամ ցեղախումբ, որի մի հատվածը, գաղթելով հարավ, հաստատվել է **Գիլանում**, իսկ մյուսը՝ թերևս Սևանա լճի ավազանում, որտեղ վանյան բևեռագիր արձանագրությունները հիշատակում են Velikuni կամ Velikuẖi երկիրը[70]:

Գելերի հետ հիշատակվող **լեգերը**, հավանաբար, բնակվել են ալբաններից հյուսիս՝ Սամուր գետի կամ Ղազիղումուխյան Կոյսուի վերին հոսանքի լեռնային

64 Տե՛ս К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 46:
65 Տե՛ս Փավստոս Բուզանդ, դպր. Գ, գլ. Է:
66 Տե՛ս Եղիշե, էջ 94:
67 Տե՛ս Strabo, V, 5, 1: К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 47:
68 Տե՛ս Plutarxus, գլ. 35 (638):
69 Տե՛ս К. Тревер, նշվ. աշխ., էջ 47:
70 Տե՛ս Н.В. Арутюнян, Корпус урартийских клинообразных надписей, Е., 2001, արձ. 241, 242, 388, 389:

մասերում: Պատահական չէ, որ վերջինիս վերին հոսանքի շրջանում մինչև օրս բնակվում են **լակերը**, որոնք պետք է լինեն **լեգերի** հետնորդները: Դատելով ամեն ինչից, եթե իրանախոս **գելերը** տարբերակվում են **ալբաններից**, ինչը կարելի է եզրակացնել Ստրաբոնի հաղորդումից, ապա նրանք ևս լեգերի հետ միասին չէին մտել այսպես կոչված աղվանական 26 ցեղերի միության մեջ: Սրանց կարելի է ավելացնել նաև **ճիղբերին**, որոնք, Պլինիոս Ավագի տեղեկությունների համաձայն, ապրել են Ալբանիայի սահմաններից դուրս՝ լեռների ճակատային երկայնությամբ, և եղել են վայրենի ցեղեր[71]: **Ճիղբերի** լատինացված «Silv» անվանումը Կ. Տրևերին մտածել է տվել, թե այդ ցեղի անունը թերևս եղել է տեղական մի տերմինի թարգմանություն, որը ցույց է տալիս նրանց բնակությունը անտառներում[72]: Կարծում ենք, նմանությունը պատահական է ու **ճիղբերի** և, անտարակույս, նրանց ազգակից **շիղբերի** հիշատակությունը հայկական աղբյուրներում հավաստում է նման թարգմանության անհնարինությունը: Դրա օգտին չի խոսում նաև այն իրողությունը, որ հունարեն Ագաթանգեղոսում **ճիղբերը** անվանվում են Σιλβανοί[73]: Կ. Կրեչմերը նրանց տեղադրում է Կովկասյան լեռների արևելյան լանջերին, այլ խոսքով՝ ներկայիս Դաղստանի տարածքում[74]: Այս տեղադրությունը միանգամայն ընդունելի է և ցույց է տալիս, որ **ճիղբերը**, ինչպես նաև, անտարակույս, նրանց ազգակից **շիղբերը** չեն մտել այսպես կոչված Աղվանք-Ալբանիայի մեջ, սակայն հայկական աղբյուրները ցույց են տալիս, որ **ճիղբերը** հետագայում շարժվել են հարավ և հաստատվել ներկայիս **Շամախի** քաղաքի շրջակայքում[75]: Ամենայն հավանականությամբ, **ճիղբերը** եղել են կովկասյան ցեղ:

Պլինիոս Ավագը **ճիղբերից** ներքև տեղադրում է **լփիններին**, որոնց Ս. Երեմյանը հակված է տեղադրելու **Իբերիա-Վիրքի** և **Աղվանք-Ալբանիայի** միջև՝ Կովկասյան լեռների հարավային լանջերին, որտեղ, ըստ նրա, Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ը տեղադրում է «**Լուբիոն գյուղը**»:[76] Ս. Երեմյանը, համադրելով անգամ «**ալբան**» և «**լփին**» (լբին-Ս.Ե.) էթնանունները, գալիս է այն եզրակացության, թե երկրորդը առաջինի սղված ձևն է[77]: Կ. Տրևերը իրավացիորեն նշում է, որ այդ տեսակետին հակասում են ոչ միայն Պլինիոսի տեղեկությունները, այլև այսպես կոչված աղվանից կաթողիկոսի տիտղոսաշարքը, որտեղ նա VI դարից սկսած կոչվում էր **Աղվանից, Լփնաց** և **Ճորա** կամ **Չողա** կաթողիկոս[78]:

Ի՞նչ կարելի է եզրակացնել բերված տեղեկություններից: Նախ՝ Պլինիոսի օրերում վիճակն այլ էր, քան վաղ միջնադարում: Այն ժամանակ լփինները չէին մտնում Աղվանքի մեջ, հետևաբար նաև 26 ցեղերի միության մեջ, իսկ վաղ միջնադարում արդեն նրանք հաստատվել էին Այսրկովկասում և մաս կազմել Աղվանից թագավորության:

Ինչ վերաբերում է **դիդուրների** և **սոդերի** (diduri et sodi) աղվանից ցեղ լինելուն,

---

71 Տե՛ս Plin., VI, 10, 29. **"rursus ab Albaniae continio tota montium fronte gentes silvorum ferae"** :

72 Տե՛ս К. Тревер, նշվ. աշխ., էջ 47:

73 Տե՛ս Ագաթանգեղոս, Տրդատի թագավորության պատմություն, գլ. II, § 10 (FHG, հատ. V, մաս I, էջ 116:):

74 Տե՛ս K. Kretschmer, Silvi, տե՛ս PWK:

75 Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, հատ. Ա, գլ. ԺԹ, հատ. Բ, գլ. ԼԹ: Բ.Հ. Հարությունյան, Լփինքի տեղադրության հարցի շուրջ, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, թիվ 1, էջ 108-124:

76 Еремян С. Т., Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу.-«Записки института востоковедения АН СССР», т. VII, 1939, էջ 148-149:

77 Անդ, էջ 149:

78 К. Тревер, նշվ. աշխ., էջ 48: Մովսես Կաղանկատվացի, հատ. Գ, գլ. ԻԳ:

ապա կարելի է լոկ արձանագրել, որ դրանցից առաջինը համապատասխանում է հայկական աղբյուրների **դիդոյներին**, իսկ երկրորդը՝ **սոդերը**, հանդիսանում են կովկասյան ժողովուրդներ, սակայն նրանց պատկանելությունը Ստրաբոնի հիշատակած 26 աղվանական ցեղերի միությանը պարզապես բացառվում է:

Անկախ այն հանգամանքից՝ կովկասյա՞ն են, թե՞ ոչ **փոխերը, թավասպարները, հեճմատակները, իժմախները, գաթերը, գղուարները, գուգարները** (իմա՛ հավանաբար **գարգար-** Բ.Հ.) և **եգերսվանները** կամ իրանական **բաղասիճները**, Փավստոս Բուզանդի աշխատությունից կարելի է միայն եզրակացնել, որ Մեծ Հայքի թագավորության վրա հարձակված Մազքթաց թագավոր Սանեսանը, որ, իհարկե, տիրապետող **մազքութ** ցեղի ներկայացուցիչն էր, հավաքում է մնացած ուժերը ոչ միայն կովկասալեզու **գուգար-գարգարներից, ճիղբերից, շիղբերից, եգերսվաններից** ու **իրանալեզու բաղասիճներից**, այլև իր անմիջական ենթակայության տակ գտնվող **փոխերից, թավասպարներից, հեճմատակներից, իժմախներից** և **գաթերից** ու այլ վաչկատուն ցեղերից: Սակայն սա ընդամենը մ.թ. IV դարի վիճակ է, երբ մազքթաց ներխուժման հետևանքով ներկայիս Դաղստանի հարավը ներառվել էր Մազքթաց թագավորության մեջ, իսկ վերջինիս կողմից Աղվանից թագավորությանը տիրելուց հետո Մազքթաց թագավորությունը սկսել էր պարզապես Աղվանից կոչվել: Ուստի ոչ մի կերպ չի կարելի նրանց տեսնել ստրաբոնյան 26 ցեղերի համադաշնության մեջ: Ըստ էության նույնը կարելի է ասել նաև Եղիշեի հիշատակած ցեղերի մասին, որտեղ վերոհիշյալների մի մասից բացի նշվում են նաև **լփինները, Վատնը, Գաթնը, Խրսանը, Փուսխնը** և **Փյուքվանը**:

Եվ ի՞նչ է ստացվում: Վերը քննության առնված ցեղերից ճշտիվ այսպես կոչված աղվանական 26 ցեղերի համադաշնության մեջ կարող էին մտնել միայն **կասպերը**: Այս բոլոր կովկասալեզու ցեղերը, որոնց ուսումնասիրողները համարում են հիշյալ համադաշնության անդամներ, Ստրաբոնի օրոք չէին կարող գտնվել Աղվանից կոչված թագավորության տարածքում, հետևաբար հրատապ հարց է դառնում այն խնդիրը, թե իրականում իրենցից ի՞նչ էին ներկայացնում «**աղուանա-ալբան**» հավաքական էթնանունով հայտնի 26 ցեղերը և ո՞ր լեզվախմբին էին պատկանում:

Ռ. Մելիքովը և նրանից էլ առաջ շատ ուրիշներ գտնում են, թե բոլոր հիմքերը կան կարծելու, որ ալբանները մտել են XI սատրապության մեջ, որտեղ իբր թաքնված են եղել հավաքական **կասպեր** անվան ներքո:[79] Վերը կատարված քննությունը ցույց տվեց, որ այդ ենթադրությունը ոչնչով փաստարկված և հիմնավորված չէ, քանի որ XI սատրապությունը պարզապես չէր կարող գտնվել Այսրկովկասում, իսկ ինչ վերաբերում է **կասպերին**, ապա Դարեհ Ա-ի օրոք նրանք դեռևս չէին հաստատվել Կովկասյան լեռներից հարավ ընկած շրջաններում: Հետևաբար, եթե կասպերը Ստրաբոնի օրերում կարող էին մտնել այսպես կոչված աղվանական 26 ցեղերի համադաշնության մեջ, ապա նրանք անգամ մ.թ.ա. VI-V դդ. չէին կարող գտնվել Կուրի ձախափնյակում:

79 Р. Меликов, նշվ. աշխ., էջ 126: Հեղինակը հենվում է Կ. Տրևերի ենթադրության վրա (К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 61):

## 4. Արդյո՞ք աղվաններն հիշատակվում են մ.թ.ա. IV դարում

Առաջին անգամ աղվանները կարծես թե հիշատակվում են մ.թ.ա. IV դարի վերջին քառորդին՝ պարսից և հունա-մակեդոնական զորքերի միջև տեղի ունեցած **Գավգամելայի ճակատամարտի** հետ կապված[80]: Սակայն այդ հիշատակության մեջ, եթե գործողությունները վերաբերում են մ.թ.ա. IV դարին, ապա սկզբնաղբյուրը մ.թ. II դարի է: Արրիանոսը ճակատամարտի մասնակիցների մեջ հիշատակում է աղվաններին և սակեսիններին: Համաձայն հույն հեղինակի՝ Դարեհ Գ-ին օգնության էին եկել **բակտրիացիների** հարևան **հնդիկները**, իրենք՝ **բակտրիացիները** և **սոգդերը**, **սակերը**, որ սկյութական ցեղեր էին և բնակվում էին Ասիայում ու Դարեհի անմիջական դաշնակիցներն էին, **արաքոսիացիները, լեռնային հնդիկները, արիացիները, պարթևները, վրկանցիները, տապուրները, մարերը, կադուսիները, աղվանները** և **սակեսինները, Կարմիր ծովի ափից եկածները, սուսիանները, ուքսերը, բաբելացիները**, «արտաքսված» **կարիացիները**, **սիտակենները, կապադովկիացիները, Կելեսիրիայի և Միջագետքի ասորիները**, որոնց թիվը, համաձայն Արրիանոսին հասած տվյալների, կազմել է 40 հազար հեծյալ և մինչև մեկ միլիոն հետևակային, 100 մանգաղակիր մարտակառք և ոչ մեծ թվով փղեր՝ 15 գլուխ, որ բերել էին իրենց հետ **հնդիկները** Ինդոս գետի այս ափից[81]: Արրիանոսը անդրադառնում է նաև Դարեհ Գ-ի զորքերի դասավորվածությանը Գավգամելայի ճակատամարտում. «**Նրա** (Դարեհ Գ-ի-Ք.Հ.) **զորքը շարված էր հետևյալ կերպ** (Դարեհի կողմից կազմված զորքի դասավորման պլանը, հետագայում, ըստ Արիստոբուլոսի, ընկել էր մակեդոնացիների ձեռքը). **նրա ձախ թևում կանգնած էր բակտրիացիների հեծելազորը և նրա հետ միասին դահերն ու արաքոսիացիները. նրանց կողքին էին պարսիկները՝ հեծյալներն ու հետևակայինները մեջընդմեջ. պարսիկների թիկունքում կանգնած էին սուսիանները և վերջապես՝ կադուսիները: Ձախ թևը ձգվում էր համարյա մինչև զորքի մեջտեղը: Աջ թևում կանգնած էին զինվորներ Կելեսիրիայից և Միջագետքից, ինչպես նաև մարեր, նրանց հետևում՝ պարթևները և սակերը, ապա՝ տապուրներն ու վրկանցիները, այնուհետև՝ աղվաններն ու սակեսինները, որոնք նույնպես հասնում էին մինչև զորքի մեջտեղը: Իսկ մեջտեղում, որտեղ գտնվում էր Դարեհի արքան, կանգնած էին արքայի բարեկամները, «սերկևիլ կրող» պարսիկները, հնդիկները, «գաղթական» կոչված կարիացիները և նետաձիգ մարդերը: Ուքսերը, բաբելոնացիները, Կարմիր ծովի մարդիկ և սիտակենները տեղավորված էին խորքում: Առջևում՝ ձախ թևում, Ալեքսանդրի աջ թևի դիմաց, գտնվում էր սկյութական հեծելազորը, մոտ հազար բակտրիացիներ և հարյուրի չափ մանգաղավոր մարտակառքեր: Փղերը և մոտ 50 մարտակառք կանգնած էին Դարեհի արքայական իղոսի մոտ: Աջ թևի առջևում շարված էին հայկական և կապադովկիական հեծելազորները և 50 մանգաղավոր մարտակառք: Հելլեն վարձկանները կանգնած էին Դարեհի մոտ՝ նրա և նրա հետ գտնվող պարսիկների երկու կողմում»[82]:**

Աղվանների մասնակցությունը[83], առաջին հայացքից, շատ հավաստի է թվում,

80 Տե՛ս Arr., III, 8, 4:

81 Անդ, III, 8, 3-6:

82 Անդ, III, 11, 3-7: Թարգմանությունը վերցրել ենք Արիանոս Փլաբիոսի (Ալեքսանդրի արշավանքը, Եր., 1987) աշխատության հայերեն հրատարակությունից:

83 Անդ, III, 13, 1: Հեղինակը աղվաններին հիշում է նաև Դարեհի շրջապատում. **«...Դարեհը իրեն շրջապատող պարսիկ «սերկևիլ կրողների», հնդիկների, աղվանների, «գաղթական» կարիացիների ու նետաձիգ մարդերի հետ միասին կանգնած է Ալեքսանդրի ու արքայական իղոսի դիմաց»**:

սակայն որքան էլ զարմանալի լինի, նրանք տեղ չեն գտել **Կուրտիոս Ռուֆոսի՝ Գավգամելայի ճակատամարտին պարսիկների կողմից մասնակցած ցեղերի ցուցակում**: Հեղինակի հաղորդմամբ. «**Ձախ թևում գնում էին բակտրիական հեծյալները՝ ընդամենը հազար ձի. այդքան էլ դահեր: Արաքոսիացիներն ու շոշեցիները չորս հազար էին: Նրանց հետևում էին հարյուր մանգաղակիր մարտակառքեր, քառաձի մարտակառքի հետևից գալիս էր Քեսը, ութ հազար հեծյալներով՝ նույնպես բակտրիացիներ: Այս շարասյունը եզրափակում էին մասսագետները, որոնց կազմում երկու հազար ձի կար: Այդ ժողովուրդների մեծ մասի հետևակայինները չէին խառնվում հեծելազորին, սակայն ամեն մեկը ձգտում էր յուրայինների կողքին լինել: Այնուհետև պարսիկներին մարդերի ու սոգդերի հետ առաջնորդում էին Արիոբարզանը և Օրոնդոբատը: ...Նրանց հետևում էին ցեղեր, որոնք քիչ էին հայտնի նույնիսկ իրենց դաշնակիցներին. նրանց հետևից գնում էր Ֆրադատը կասպիացիների (իմա՛ կասպերի- Ք.Հ.) մեծ ջոկատով, հիսուն քառաձի մարտակառքերի առջևից: Հնդիկների և Կարմիր ծովի ափերի բնակիչները քայլում էին մարտակառքերի հետևից ավելի շատ մարդաքանակի, քան որևէ իրական օգնության համար: Այս ամբողջ շարքը եզրափակում էին հիսուն մանգաղակիր մարտակառքեր, որոնց Դարեհը կցել էր օտարերկրյա զինվորներին: Նրանց հետևում էին հայերը, այսպես կոչված Փոքր Հայքից, հայերին հետևում էին բաբելոնացիները, նրանց և ուրիշներին բելիտները՝ Քոսեյան լեռների բնակիչները: Նրանց հետևից գալիս էին հորտուացիները Էվքեա կղզուց, որոնք ինչ-որ ժամանակ հարել էին մարաստանցիներին, սակայն այլասերվելով, մոռացել էին իրենց հայրենի սովորույթները: Նրանց Դարեհը կցել էր փռյուգիացիներին և կատաոնցիներին: Սկյութիայից գաղթած պարթևների ցեղը, որ բնակվում է այժմ պարթևների զբաղեցրած երկրում, եզրափակում էր ողջ շարժումը: Այսպիսին էր ձախ թևի կազմը: Աջ թևում կանգնած էին Մեծ Հայքի հայերը, կադուսիներն ու կապադովկիացիները, ասորիներն ու մարաստանցիները, որոնք նույնպես ունեին մանգաղակիր մարտակառքեր: Ողջ զորքի ընդհանուր թիվը հետևյալն էր. քառասունհինգ հազար հեծյալ, երկու հարյուր հազար հետևակային**»[84]:

Երկու հեղինակն էլ մանրակրկիտ հաղորդում են պարսկական բանակի էթնիկ կազմի մասին, բայց աղվանները, որ, ըստ Արրիանոսի, գտնվում էին այնպիսի պատվավոր տեղում, ինչպիսին Դարեհ Գ-ի շրջանակն էր, զարմանալիորեն չեն հիշատակվում Կուրտիոս Ռուֆոսի կողմից: Իսկ եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ վերջինս մ.թ. I դարի պատմագիր է, ապա հասկանալի կդառնա, որ աղվանների մասին Արրիանոսի հիշատակությունը մեծ չափով կորցնում է իր հավաստիությունը: Այսուհանդերձ բացատրության կարիք ունի աղվանների հիշատակության առկայությունը Արրիանոսի երկում: Երկու հեղինակների երկերի համադրական քննությունը ցույց է տալիս, որ, նախ՝ նրանց մոտ տարբեր էր պարսկական զորքի դասավորությունը և երկրորդ՝ Կուրտիոս Ռուֆոսի համեմատությամբ Արրիանոսի մոտ ավել են հիշատակված **գաղթական «կարիացիները», ուքսերը, սիտակենները, սակերը, վրկանցիները, տապուրները, աղվանները** և **սակեսինները**, իսկ Արրիանոսի համեմատությամբ Կուրտիոս Ռուֆոսի մոտ ավել են **մասագետները, սոգդերը, կասպիացիները, բենետները, փռյուգիացիները, կատաոնները**: Արրիանոսի հելեն վարձկաններին համապատասխանում են օտարերկրյա զինվորները: Այս ցանկի քննությունը առանձին ուսումնասիրության

84 Քվինտոս, Կուրցիոս Ռուֆոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, Եր., 1987, IV, 12, 6-13:

խնդիր է, ինչը, ցավոք, մինչև օրս չեն կատարել պատմաբանները: Սակայն հստակորեն կարելի է ասել, որ Արրիանոսի կողմից հիշատակված «**գաղթական**» **կարիացիները, ուքսերը, սիդակենները, սակերը** և **տապուրները** մասնակցել են ճակատամարտին, իսկ մասնակիցների մեջ հիշատակված **վրկանիներին** կամ **վրկանացիներին** համապատասխանում են **կասպերը** կամ **կասպիացիները**: Սակայն կասկած չի հարուցում, որ ճակատամարտին մասնակցել են նաև Կուրտիոս Ռուփոսի հիշատակած **մասագետները, սոգդերը, կասպ-վրկանները, փոյուգիացիները, հորտուացիները Էվբեայից, կատաոնները, բենետոները**: Իհարկե, առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, թե ինչու՞ նշված ցեղերի՝ ճակատամարտին մասնակցությունը ոչ միայն հավանական է, այլև իրականություն, իսկ աղվանների և սակեսինների մասնակցությունը՝ կասկածելի: Խնդիրն այն է, որ, մեր կարծիքով, եթե Կուրտիոս Ռուփոսը չի հիշատակում «**գաղթական**» **կարիացիներին**, ապա այդ պետք է բացատրել նրանց համեստ ռազմուժով, **սիտակենները** համարվել են **բաբելոնացիների** մի մասը, **ուքսերը** դիտարկվել են **շոշեցիների** կամ **սուսիանների** հետ որպես մի ամբողջություն, **տապուրները** նույնպես աչքի չեն ընկել իրենց ռազմուժով: Սակայն շատ զարմանալի է, որ Արրիանոսի երկում չեն հիշատակվում **մասագետները** և **սոգդերը**, որոնց չմասնակցելը ճակատամարտին պարզապես բացառվում է: Եթե Արրիանոսը չի հիշատակում **բենետոներին**, ապա դա նրանց աննշանության պատճառով միանգամայն հասկանալի է, եթե չի արձանագրում **կատաոնների** մասնակցությունը, ապա, դա էլ արդարացված է, քանի որ նրանք վաղուց ձուլվել էին **կապադովկիացիների** մեջ և Արրիանոսի օրերում գոյություն չունեին, եթե չեն հիշատակվում **փոյուգիացիները**, ապա՝ հաշվի առնելով մակեդոնացիների կողմից Փոքր Ասիայի նվաճված լինելը, նրանք կարող էին չարժանանալ հեղինակի ուշադրությանը փոքրաթիվ լինելու պատճառով, իրողություն, որ կարող էր նաև այդպիսին չլինել, սակայն **մասագետների** և **սոգդերի** հիշատակության բացակայությունը գործնականում ոչ մի բացատրություն չունի: Ուստի մենք կփորձենք, մասնավորապես, անդրադառնալ **մասագետների**՝ Արրիանոսի կողմից չհիշատակվելուն: Պատմությունը հիշատակում է **մասագետներին** որպես սկյութական ցեղ, որի գոյությունը Միջին Ասիայում արձանագրում է Հերոդոտոսը: Պատմիչի խոսքերով՝ Կյուրոս Մեծը կամեցավ իրեն հպատակեցնել նաև **մասագետներին**, որոնք մեծաթիվ էին ու քաջարի, բնակվում էին արևելքում՝ **Արաքս գետից** այն կողմ, **իսեդոններին** հանդիպակաց: Համաձայն պատմիչին հասած նյութերի՝ նրանք **սկյութական ազգ** էին[85]: Արշավանքը **մասագետների** դեմ ավարտվեց պարսիկների պարտությամբ, իսկ Կյուրոսը սպանվեց[86]: Ենթարկվո՞ւմ էին **մասագետները** մ.թ.ա. IV դարի վերջին Աքեմենյան տերությանը, թե՞ ոչ, դժվար է ասել: Սակայն հաշվի առնելով այն իրողությունը, որ մ.թ.ա. V դարի վերջին Աքեմենյան Պարսկաստանի տարբեր կողմերում արդեն հայտնվել էին նրա իշխանությունը չճանաչող ցեղեր, պետք է ենթադրել, որ ավելի շուտ նրանք **անկախ** էին, **դաշնակից**, քան **հպատակ**:

Ամեն ինչից դատելով՝ մասագետների դեպի հարավ շարժվելը կատարվեց երկու ուղղությամբ՝ Միջին Ասիայի և Կովկասի: Մի բան հստակ է, որ մասագետների մի մասը գոնե մ.թ. I դարում հաստատվել էր Հյուսիսային Կովկասում, որտեղ թագավորություն էր ստեղծվել Արշակունյաց տոհմի կրտսեր ճյուղերից մեկի գլխա-

85 Տե՛ս Herodotus, I, 201:
86 Անդ, I, 202—216:

վորությամբ: Համենայն դեպս, Տակիտոսը, խոսելով հռոմեական փաստական գերության մեջ գտնվող Մեծ Հայքի նախկին թագավոր Վոնոնի փախուստի մասին, նշում է, որ նա փորձեց փախչել Հայաստան, որպեսզի այնտեղից անցնի **ալբանների** և **հենիոքների** մոտ և այնուհետև՝ իր ազգական սկյութների թագավորի[87]: Որ հիշյալ **սկյութների** անվան տակ թաքնված են **մասագետները**, պարզ է դառնում Դիոն Կասիոսի մի հետաքրքիր հաղորդումից. «**Հրեաների պատերազմն այսպես ավարտվեց. մի երկրորդ պատերազմ սկսեցին ալանները, որոնք մասագետներ են.-Փարասմանեսի դրդմամբ: Այն մեծապես վնասեց Ալբանիային[88] և Մեդիային, շոշափեց նաև Հայաստանն ու Կապադովկիան, որից հետո ալանները մասամբ համոզվեցին Վոլոգեսոսի ընծաներից, մասամբ էլ վախեցան Կապադովկիայի կառավարիչ Փլավիոս Արրիանոսից և դադարեցրին** (պատերազմը-Ք.Հ.)**:**

**Երբ Փարասմանես Իբերացին իր կնոջ հետ եկավ Հռոմ, (Անտոնինոսը) ընդարձակեց նրա իշխանությունը...»[89]:** Այս հաղորդման հետ կապված ծագում են մի քանի խնդիրներ, որոնք կարիք ունեն բացատրության: Խնդիրն այն է, որ Վ. Լատիշևի թարգմանության մեջ ալանների փոխարեն հիշատակվում են ալբանները[90], որի ճիշտ լինելու դեպքում մեր պատկերացումները կարող են արմատական փոփոխությունների ենթարկվել: Գերմանացի նշանավոր պատմաբան Թ. Մոմզենը, ելնելով Ալբանիայի անվան հիշատակության բացակայությունից, այն համարել է թյուրիմացություն և գտել, որ **ալբանների երկիրը** ևս պետք է տուժեր **ալանների արշավանքից**[91]**:** Սակայն, եթե տեքստում եղել է ալբաններ, ապա Ալբանիայի անվան բացակայությունը միանգամայն տրամաբանական է: Վ. Լատիշևի թարգմանության հրատարակիչները, անդրադառնալով **մասագետների՝ ալբանների** հետ նույնացնող արտահայտությանը, ենթադրել են, որ երևի դա արդյունք է երկուսի էլ **Արաքսի մոտ** ապրելու[92], քանի որ նրանց նույնացումը չի ապացուցվում և չի հաղորդվում այլ աղբյուրներով: Կ. Տրևերը արձանագրում է, որ XI դարի հեղինակ Քսիֆիլինոսը, որը քաղվածքներ է կատարել Դիոն Կասիոսի չպահպանված գրքերից, ալանների փոխարեն հիշատակում է ալբաններին, սակայն XI դարի և XII դարի սկզբի պատմիչ **Զոնարասը** արշավանքի մասնակիցներին համարում է **ալաններ**[93]**:**

Թ. Մոմզենը Դիոն Կասիոսի նշված հատվածում հանդիպող Վաղարշին նույնացնում է պարթևական թագավոր Վաղարշ Բ-ի հետ (105-147)[94], սակայն, մեր կարծիքով, ճիշտ է Կ. Տրևերը՝ գտնելով, որ պատմիչը խոսում է հայոց Վաղարշ Ա թագավոր մասին (113/117-140), քանի որ **Մեծ Հայքի** վրա էին առաջին հերթին արշավել **ալանները,** և ավելի հեշտ էր նրա համար կաշառել թշնամուն, քան Պարթևստանում գտնվող Վաղարշ Բ-ին[95]:

87 Տե՛ս Corn. Tacitus, Ann., II, 68:

88 Այսպես է Ս. Կրկյաշարյանի թարգմանության մեջ, սակայն բնագրում բացակայում է Ալբանիայի անունը:

89 Տե՛ս Dio Cassio, LI, 15, 1:

90 Տե՛ս В.В. Латышев, Известия древних писателей..., տե՛ս ВДИ, 1948, թիվ 2, էջ 277:

91 Տե՛ս Th. Mommsen, Römische Geschichte, Bd. V, էջ 405: Թ. Մոմզենի տեսակետը ճշմարտանմանն է համարում Կ. Տրևերը (նշվ. աշխ., էջ 137):

92 Մասագետներն Արաքսի տակ հասկանում էին ներկայիս Ամու-Դարյան (հին Յաքսարտը):

93 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 130: Տեղեկությունը վերցված է Թ. Մոմզենից (Römische Geschichte, Bd. V, էջ 405):

94 Տե՛ս Th. Mommsen, Römische Geschichte, Bd. V, էջ 405: Հեղինակը Վաղարշ Բ-ին սխալմամբ կոչում է Վաղարշ Գ, որն իշխել է բավական ուշ՝ 148-192 թթ.:

95 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 130-131:

Ալանների կամ ալբանների արշավանքը (էքնիկական այս կնճռին մենք դեռ կանդրադառնանք), առաջին հայացքից, կարող էր տեղի ունենալ Անտոնինոս Պիոս (138-161) կայսեր իշխանության առաջին տարիներին, որի անունը հիշվում է Դիոն Կասիոսի երկի համապատասխան բաժնում: Սակայն, եթե հաշվի առնենք, որ հրեական ապստամբությունը ճնշվեց 135 թվին, ապա վերոհիշյալ արշավանքը պետք է դնել 135 կամ 136 թվին: Դատելով արշավողների էքնիկ պատկանելությունից՝ **ալան-մասագետները** կամ **ալբան-մասագետները այդ ժամանակ** հաստատվեցին, եթե ալաններ էին, Արևելյան Այսրկովկասում, իսկ եթե **ալբաններ** էին՝ դրանից ոչ շատ առաջ: Կլավդիոս Պտղոմեոսը, որ օգտվել է ավելի հին նյութից, Ասիական Սարմատիայի նկարագրության մեջ չի արձանագրում **մասագետների** հայտնվելը **Այսրկովկասում**[96]**:** Սակայն Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ը, որը Ասիական Սարմատիայի բաժնում նույնպես շարադրված է հին նյութերի հիման վրա, արձանագրում է, որ Արևելյան Այսրկովկասի տարածքը մինչև Կուր գետը եղել է Ասիական Սարմատիայի մաս[97]: Մասագետները, որոնց հայկական աղբյուրները գիտեն **Մազքութք** կամ **Մազքութ** անունով, հայտնվեցին Այսրկովկասում, հավանաբար, ինչ-ինչ ցեղերի ճնշման ներքո և կորցնելով իրենց տարածքները Հյուսիսային Կովկասում՝ հաստատվեցին Արևելյան Այսրկովկասում իրենց պետական կառույցներով հանդերձ: Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ը արձանագրում է հենց այդ պահը, երբ **մասագետ-մազքութները** հաստատվել էին Արևելյան Այսրկովկասում և չնայած ունեին իրենց թագավորությունը, դեռևս չէին համարվում քաղաքակիրթ աշխարհի մաս: Սակայն, շատ չանցած, նրանք տիրեցին նաև այսպես կոչված **Ալբանիա-Աղվանքի** արևմտյան մասին ևս, որից հետո նրանց պետությունը սկսեց ավանդույթի ուժով հարևանների կողմից կոչվել **Ալբանիա-Աղվանք**՝ պահպանելով, սակայն, իր **Մազքթաց թագավորություն** անվանումը: Այդ են հավաստում Փավստոս Բուզանդի հաղորդումները: Վերջինս, անդրադառնալով Գրիգորիս եպիսկոպոսի Աղվանից և Վրաց եպիսկոպոս կարգվելուն, գրում է. «**...ի հնգետասաներամենից եհաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց և Աղուանից, այսինքն սահմանացն Մազքթաց**»[98]**:** Դժվար չէ տեսնել, որ պատմիչը, հակառակ Ս. Երեմյանի այն տեսակետի, թե IV դարում միաժամանակ գոյություն են ունեցել Աղվանքի և Մազքթաց թագավորությունները, տալիս է միանգամայն այլ տեղեկություն՝ նույնացնելով այդ երկուսը:

Մազքթաց թագավորության նաև Աղվանք կոչվելը շփոթության մեջ է գցել Արրիանոսին, որը, իմանալով նրանց նույնության մասին, մասագետների փոխարեն Գավգամելայի ճակատամարտի մասնակից է դարձնում **ալբաններին**, ինչպես նաև **սակերին** և **սակեսինիներին**: Անշուշտ, պատմիչի կողմից նման մոտեցումը կարելի է հեշտությամբ բացատրել այն իրողությամբ, որ **մասագետները սկյութ** էին համարվում: Եվ քանի որ Ստրաբոնի «Աշխարհագրություն»-ից պարզ էր, որ Այսրկովկաս ներթափանցել էին **սկյութ-սակերը**, որոնք անգամ իրենց անունն էին թողել Հայաստանի մի արգավանդ երկրամասի՝ Շակաշենի, վրա, Արրիանոսը **մասագետների** տակ տեսնում է ոչ միայն **ալբաններին**, այլև **սակերին** ու **սակե-**

96 Տե՛ս Cl. Ptol., Geographia, V, 8, 1-3: Պտղոմեոսը, իհարկե, մահացել է 168 թվին, սակայն նրա օգտագործած նյութերը շատ ավելի հին են:

97 Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 25-27: Աշ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 347-348:

98 Փավստոս Բուզանդ, դպր. Գ, գլ. Ե:

**սիններին**: Սակայն, եթե առաջինի հիշատակությունը տրամաբանական է, առավել ևս, որ Դիոն Կասիոսի մի շարք ձեռագրերում **ալբանները** նույնանում են **մասագետներին**, ապա մյուսների հիշատակությունը, թերևս, կարող է զարմանք հարուցել: Այսպես, եթե սակեսինները համապատասխանում են Շակաշեն-Սակասենի բնակիչներին, ապա անունս կեղծ է, քանի որ ցեղի անունը **սակ** է, ոչ թե **սակեսին** կամ **սակասեն**:[99] Այլ խոսքով նրանք պետք է **սակերի** մաս կազմեին, եթե, իհարկե, IV դարի վերջերին դեռ պահպանել էին իրենց էթնիկ գիտակցությունը: Մեկ այլ խնդիր էլ է առաջանում. այդ ինչպե՞ս է, որ կովկասյան լեզուներով խոսող **աղվանները** (գոնե այդպիսին պետք է լինեին դրանք **գարգարացիների**, **ուդիների** և այլ ցեղերի Այսրկովկաս ներխուժելուց հետո) հանգիստ նույնանում են իրանալեզու **մասագետ-մազքութների** հետ: Պատճառը կարող է լինել միայն այն իրողությունը, որ Ստրաբոնի օրերում **աղվան-ալբանները** դեռևս գերակշռաբար իրանախոս ցեղեր էին և միայն մ.թ. I դարի երկրորդ կեսին Աղվանք-Ալբանիայի էթնիկ դիմագիծը վերածվելու էր գերազանցապես **կովկասյանի**: Այլ խոսքով՝ աղվաններ մինչև մ.թ. I դարի երկրորդ կեսը և անգամ՝ ավանդաբար, դրանից հետո էլ համարվում էին սկյութական աշխարհի մաս: IV դարում **մասագետ-մազքութները** իրենց Սանեսան թագավորի գլխավորությամբ հարձակվեցին Մեծ Հայքի թագավորության վրա՝ ավերելով ու կողոպուտի ենթարկելով մինչև Փոքր Հայքի Սատաղ և հայոց թագավորների Ատրպատականյան ձեռական իշխանության մեջ գտնվող Գանձակ քաղաքները[100]: Թշնամին, ի վերջո, Օշականի ճակատամարտում (331 կամ 332 թվին) ջախջախվեց, իսկ նրանց թագավոր Սանեսանն սպանվեց: Այս առնչությամբ շատ հետաքրքիր է այն փաստը, որ հայոց Խոսրով Բ Կոտակ թագավորը, տեսնելով սպանված Սանեսանին, լաց եղավ և հայտարարեց, թե «**եղբայր իմ էր ազգաւ Արշակունի**»[101]**:** Այլևս կասկած չի մնում, որ հայոց Վռնոն թագավորի ժամանակներից Արշակունի թագավորների կողմից կառավարվող **սկյութները** հենց նույն **մասագետ-մազքութներն** են, որոնք արդեն մ.թ. II դարում հաստատվել էին Այսրկովկասում իրենց պետական ողջ կառույցով: Ասվածի լույսով պարզ է դառնում, թե ինչու Կապադովկիայի կառավարիչ Փլավիոս Արրիանոսը կարող էր, որպես պատմիչ, Դիոն Կասիոսի կողմից հիշատակված մասագետ-մազքութների անվան տակ տեսնել **սկյութ-սակերին, աղվաններին** և իր կողմից հավելված **սակեսիններին**:

Այս ամենը շատ տրամաբանական է, սակայն բախվում է երկու փաստի: Դրանք են Դիոն Կասիոսի կողմից **ալբանների** նույնացումը **մասագետների** հետ և Պլինիոս Ավագի և նրան հետևող Գայոս Սոլինի հաղորդումն այն մասին, որ Ալբանական թագավորը Ալեքսանդր Մակեդոնացուն երկու հաղթամարմին շուն է նվիրել: Լատին հեղինակը գրում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի ժամանակ ալբանական թագավորը նրան մի անսովոր մեծության շուն է նվիրում: Տեսնելով, թե ինչպես շունը, չնայած իր ահռելի չափերին, ոչ մի ակտիվություն հանդես չի բերում իր վրա բաց թողնված արջերի և վարազների նկատմամբ, Ալեքսանդրը կարգադրում է նրան սպանել: Երբ լուրը հասնում է ալբանական թագավորին, վերջինս ուղարկում է երկրորդ շունը՝ առաջարկելով նրա խիզախու-

99 Որոշ հետազոտողներ փորձում են Պլինիոսի հիշատակած Sacasan-ներին նույնացնել Sacesin-ների հետ, սակայն նման փորձն անգամ անհեթեթություն է, քանի որ նրանք գտնվում էին հակառակ Շակաշենում հաստատված սակերի, Ճորոխի ավազանում:
100 Տե՛ս Փավստոս Բուզանդ, դպր. Գ, գլ. է:
101 Անդ:

թյունը փորձել **առյուծների** կամ **փղերի** վրա: Եթե հավատանք Պլինիոսին, ապա շունը հաղթում է մի **առյուծի** և մի **փղի**[102]**:** Անկախ այն հանգամանքից, թե որքանով պետք է հավատալ այդ պատմությանը, նշենք, որ մասագետների անվան բացակայությունը Արրիանոսի՝ Գավգամելայի ճակատամարտի մասնակիցների ցուցակում հետաքրքիր է նաև այլ տեսանկյունից: Հազիվ թե կարելի է կասկածել, որ Կուրտիոս Ռուփոսը սխալմամբ է հիշում մասագետներին Գավգամելայի ճակատամարտում, ուստի առավել քան հետաքրքիր է, թե ինչպես է Արրիանոսը նրանց դուրս թողնում Գավգամելայի ճակատամարտի մասնակիցների ցուցակից, երբ նա **մասագետներին** հիշատակում է Միջին Ասիայում մղված կռիվների կապակցությամբ: Նույն ձևով Արրիանոսին ծանոթ են **սոգդերը**, որոնք նույնպես չեն հիշատակվում Գավգամելայի ճակատամարտի մասնակիցների մեջ[103]: Եզրակացությունը մեկն է. Արրիանոսն, իրոք, **մասագետներ** ասելով հասկացել է և մատուցել **ալբանիներին, սակեսիններին** ու **սակերին**:

Արրիանոսի մոտ մի թյուրիմացություն էլ կա: Հիշատակելով Գավգամելայի ճակատամարտի սկզբում պարսկական բանակի դասավորությունը՝ Արրիանոսը **ալբանիներին** տեղադրում է **աջ թևում**, սակայն ճակատամարտի ընթացքում **ալբանները հանկարծակի հայտնվում են Դարեհ Գ Կոդոմանին անմիջապես շրջապատող «սերկևիլակիր» պարսիկների, հնդիկների, «գաղթական» կարիացիների ու նետաձիգ մարդերի** հարևանությամբ[104]: Հակառակ Արրիանոսի՝ Կուրտիոս Ռուփոսը նման մանրամասնություններ չի հաղորդում[105]: Ավելին, ըստ Արրիանոսի՝ **Դարեհ Կոդոմանը գտնվել է ձախ թևում**, իսկ **ալբանիներն** ու **սակեսինները**՝ աջ[106]: Իսկ եթե նկատի ունենանք, որ, համաձայն Կուրտիոս Ռուփոսի, հենց **մասագետներն** էին գտնվում ձախ թևում, ապա պարզ կդառնա, որ պարսից արքային շրջապատողների մեջ **մասագետ-սակ-սկյութներն** էին և ոչ թե **աջ թևում իբր թե գտնվող ալբանիներն ու սակեսինները**: Ինչ վերաբերում է Արրիանոսին, ապա նա Դարեհին տեղորոշում է կենտրոնում: Ինչպես տեսնում ենք, մտածելու շատ բան կա, սակայն մի բան հստակ է, որ ճակատամարտին **ալբանները կամ սակեսինները չեն մասնակցել**:

Կա մի հարց ևս, որը շրջանցել ոչ մի կերպ չի կարելի: Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը շարադրողները, որոնք ձեռքի տակ են ունեցել զանազան վավերագրեր, ոչինչ չեն հայտնում այն մասին, թե մեծ զորավարը կամ նրա մերձավոր հետնորդները երբևէ փորձել են գրավել Հայաստանը կամ Այսրկովկասը[107]: Ուստի միանգամայն տեղին է Կ. Տրևերի տարակուսանքը, թե ի՞նչ աղբյուրների հիման վրա է Պլինիոս Ավագը գրել, թե մակեդոնական զորքերը գրավել են Հայաստանը, **Իբերիա-Վիրքը** և **Ալբանիա-Աղվանքը**[108]**:** Պլինիոսն իր աշխատությունը գրել է նշված դեպքերից գրեթե չորս դար անց, և նրա աղբյուրը հայտնի չէ, սակայն նրա աշխատությունը հիմք է ծառայել III դ. առաջին կեսի հեղինակ Հուլիոս Գայոս Սոլինին, ըստ որի՝ Ալեքսանդր Մակեդոնացին նվաճել է **Հայաստանը, Իբերիան** և **Ալբանիան**[109]**:** Կ. Տրևերի կարծիքով՝ Պլինիոսի նման հաղորդումը

102 Տե՛ս Plin. Natur. Hist., VIII, 149:
103 Տե՛ս Arr., IV, 16, 4-6; 17, 1-7:
104 Անդ, III, 13, 1:
105 Տե՛ս Curt. Rufus, IV, 14, 8, Arr., III, 11, 4:
106 Տե՛ս Arr., III, 11, 5:
107 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 54:
108 Տե՛ս Անդ: Plin. Nat. Hist., IV, 10, 39:
109 Տե՛ս Հուլիոս Սոլին, տե՛ս В.В. Латышев, Известия древних писателей..., տե՛ս ВДИ, 1949, թիվ 3, էջ 241 (IX, 19):

պետք է բացատրել այն իմաստով, որ նա ոչ թե նկատի է ունեցել հենց Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները, այլ **դիադոխների** և, որ շատ հնարավոր է, **սելևկյան զորավար Պատրոկլեսի** շրջայցը Կասպից ծովում, որի հաշվետվությունից օգտվել է հռոմեական զորավար Գնեոս Պոմպեոսը[110]:

Հայտնի է, որ պարսկական զորավար, ազգությամբ մար **Ատրպատը** Գավգամելայի ճակատամարտից հետո հարեց Ալեքսանդրին և ստացավ Մարաստանի մի մասի կառավարման իրավունքը, որն այնուհետև նրա անունով սկսեց կոչվել **Ատրպատական**[111]**:** Սակայն ոչինչ հայտնի չէ ո՛չ Հայաստանի գրավման և ո՛չ էլ Կուրի ձախափնյակի կարգավիճակի մասին, որը մենք միանգամայն գիտակցաբար Ալբանիա-Աղվանք չենք կոչում: Թե ինչ կացություն է տիրել այսպես կոչված՝ հետագա **Ալբանիա-Աղվանքի** տարածքում, պարզապես հայտնի չէ: Իսկ Կ. Տրևերի բերած տեղեկությունն այն մասին, թե 1929 թ. Պարտավի շրջանում հայտնաբերվել է մ.թ.ա. II դարի մակեդոնական և սելևկյան դրամների գանձ, գրոշի արժեք չունի, քանի որ այդ տարածքը պարզապես մաս էր կազմում Մեծ Հայքի թագավորության, ուստի ոչ մի կերպ չի կարող կապվել **Ալբանիա-Աղվանքի** հետ:

Պատրոկլեսն իր Կասպից ծովի շրջայցը կազմակերպեց մ.թ.ա. 283-282 թթ. Սելևկոս Ա-ի և նրա կառավարչակից որդի Անտիոքոս Ա-ի հանձնարարությամբ: Հայտնի չէ, թե որտեղ պատրաստվեց Պատրոկլեսի տորմիղը: Ստրաբոնը և Պլինիոսը, օգտվելով Էրատոսթենեսի գործերից, որոնց համար հիմք է ծառայել Պատրոկլեսի հաշվետվությունը, կցկտուր տեղեկություններ են պահպանել Պատրոկլեսի արշավախմբի գործունեության մասին[112]: Պատրոկլեսի արշավախումբը ցույց տվեց, թե իբր՝ **Կասպից ծովը հյուսիսում միանում է օվկիանոսին**, իսկ **Մայոտիսը կապված չէ Կասպից ծովին**[113]**:** Ա. Հերմանի կարծիքով՝ Պատրոկլեսի ծովային շրջայցի արդյունքները արտացոլվել են Կ. Պտղոմեոսի քարտեզում[114]: Բոլորովին հաշվի չառնելով այն հանգամանքը, թե Պատրոկլեսի արշավախմբի արդյունքները ճիշտ էին, թե սխալ, վերջինս մեծ նպաստ բերեց անտիկ աշխարհագրության զարգացմանը: Ինչպես արդեն նշվեց, Ստրաբոնը և Պլինիոս Ավագը միջնորդավորված ձևով օգտվել են Պատրոկլեսի արշավախմբի նյութերից: Սակայն այդ բոլորովին չի նշանակում, թե Պլինիոսը, **Կասպից ծովը** կոչելով «mare Albanum», նշված տեղեկությունը վերցրել է Պատրոկլեսից:[115] Այն կարող էր լինել պարզապես իր ժամանակաշրջանի իրողություն:

Է՛լ ավելի ցնցող է Կ. Տրևերի և նրան հետևողների այն կարծիքը, թե իբր՝ **հայոց Արտաշես Ա թագավորը (189-160)** գրավել է **Կուրի Աջափնյակը**, որտեղ իբր ապրում էին **շակերը, ուտիները** և **գարգարները**[116]**:** Հետաքրքիրն այն է, որ եզրակացությունը կատարվում է Ստրաբոնի իբր՝ հաղորդումների հիման վրա, երբ հույն աշխարհագրագետի մոտ անգամ հեռավոր ակնարկ չկա այդ մասին[117]: Ինչ վերաբերում է **Կասպիանե-Կասպքին**, ապա մենք վաղուց ցույց ենք տվել, որ Հայոց Արտաշես Ա թագավորի կողմից մարերից գրավված **Կասպիանեն** դարձել է Մեծ Հայքի թագավորության մաս և երբեք բաղկացուցիչը չի եղել **Աղվանից թա-**

110 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 55: Տե՛ս նաև Հուլիոս Սոլին, IX, 56 և այլք:
111 Տե՛ս Strabo, XI, 13:
112 Տե՛ս Strabo, XI, 7, 3:
113 Տե՛ս Անդ, XI, 7, 1; 6, 1: Plin. Nat. Hist., VI, 36-38:
114 Տե՛ս A. Hermann, Kaspisches Meer, PWK, էջ 2285; Kiessling, Hyrcania, PWK, էջ 465:
115 Տե՛ս Plin., Nat. Hist., IV, 15, 39:
116 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 58:
117 Տե՛ս Strabo, XI, 4-5:

**գավորության**: Սակայն **Կասպիանե** անունով **մարզ** եղել է նաև **Աղվանքում**, որի մասին հայտնում է ոչ միայն Ստրաբոնը, այլև հայկական «Աշխարհացոյց»-ն ու Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն»-ը: Ուստի Ստրաբոնի երկում ոչ մի հակասություն էլ չկա, որից ճգտելով կառչել, Կ. Տրևերը հայտարարում է, թե այդ հակասականությունը արդյունք է այն բանի, որ Ստրաբոնն իբր Աղվանքը նկարագրել է Պատրոկլեսի տվյալների համաձայն, այսինքն՝ իբրև թե Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներով ստեղծված կացությունն արձանագրելով: Այս ամբողջը մատից ծծած է և ոչ մի հիմք չունի և, հասկանալի պատճառներով, չի կարող կռվան ծառայել՝ ցույց տալու համար ալբանների գոյությունը նշված ժամանակներում:

## 5. Այսպես կոչված Աղվանքի թագավորության մասին

Կ. Տրևերը Աղվանից թագավորության հիմնադրումը դնում է մ.թ.ա. I դարում[118], չնայած չի բացառվում, որ այն ստեղծվել է մ.թ.ա. II դարի վերջին երեսնամյակում: Հենց այս պետության մասին է, որ Ստրաբոնը գրում է, թե 26 ցեղերի համադաշնություն էր: Աղվանից թագավորությունը քաղաքական կյանքում հայտնի է դառնում մասնավորապես Գնեոս Պոմպեոսի արշավանքների շնորհիվ, ուստի մինչ այդ ասել, թե այսպես կոչված աղվանները հիշատակվում են աղբյուրներում, նշանակում է կեղծել պատմությունը:

Ասվածի լույսով կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների: **Մասագետներին**, որ ավանդաբար տեղորոշում են Միջին Ասիայում, սկզբնաղբյուրները տեղադրում են Դոնի մերձակայքում: Մաքսիմոս Տյուրացին նշում է, որ Կապադովկիայում պաշտում են լեռը և երդվում նրանով, **մեոտների** մոտ այդ դերը խաղում է լիճը (իմա՛ **Մայոտիսը=Ազովի ծով**-Ք.Հ.), իսկ **մասագետների** մոտ՝ **Տանաիսը** (իմա՛ Դոն գետը-Ք.Հ.)[119]: Տեղեկությունն այնքան հստակ է, որ **մասագետների** գոնե մի հատվածը պետք է տեղադրել Դոն գետի, հավանաբար, ստորին ավազանի շրջանում: Նրանք սկզբում հաստատվում են Հյուսիսային Կովկասում և, դատելով հայոց Պատմահոր տեղեկություններից, մ.թ.ա. II դարի 30-ական թվականների վերջին կամ 20-ական թվականներին նրանց մի մասը ներխուժում է Այսրկովկաս և հիմք դնում մի շարք ցեղային թագավորությունների, որոնց բնակիչները միմյանց չէին հասկանում լեզվական պատնեշի պատճառով: Ցավոք, Մովսես Խորենացին նրանց անունը չի պահպանել և լոկ անվանում է «**եկամուտ**» ազգ: Ի վերջո, **մասագետները** միավորվում են և ստեղծում իրենց միասնական թագավորությունը, որն, անկասկած, կոչվելու էր նրանց անունով: Սակայն հայերը, հիմք ունենալով այն իրողությունը, որ իրենց կողմից **Աղվանից դաշտ** կոչված տափարակի հյուսիսային հատվածը զբաղեցնում են մասագետները, նոր ծնունդ առած թագավորությունը կոչում են **Աղվանից դաշտի պետություն** կամ, այլ խոսքով, պարզապես **Աղվանք** (հին ձևը՝ **Ալոբանք**-Ք.Հ.), որն անցնում է հունա-հռոմեական աշխարհին աննշան փոփոխությամբ՝ **կելտական աշխարհի Ալբանիա** անվան ազդեցությամբ: Նմանությունը զուտ պատահական է:

**Մասագետների** գտնվելը Միջին Ասիայում և Հյուսիսային Կովկասում ու Այսր-

118 Տե՛ս К.В. Тревер, նշվ. աշխ., էջ 58-59:
119 Տե՛ս В.В. Латышев, Известия древних писателей..., տե՛ս ВДИ, 1948, թիվ 2, էջ 278:

կովկասում թյուրիմացության մեջ է գցել ոչ միայն Պլինիոս Ավագին, այլև շատ այլ հեղինակների: Եթե Միջին Ասիայի **մասագետները** ենթարկվում են Ալեքսանդր Մակեդոնացուն, ապա ալբան-մասագետ նույնացումը կարող էր ծնել այն միտքը, թե մակեդոնական մեծ զորավարը գրավել է նաև **Ալբանիան**, ինչը հնարավոր էր միայն **Հայաստանի** և **Իբերիա-Վիրքի** նվաճման դեպքում: Այդ շփոթին նպաստել է նաև այն իրողությունը, որ Կովկաս անունով լեռներ գտնվում էին ոչ միայն Կովկասում, այլև Միջին Ասիայի և ներկայիս Աֆղանստանի տարածքում: Եվ երբ Վոնոնը փախչում էր, նա հույս ուներ ապավինել ոչ միայն Հյուսիսային Կովկասի Արշակունի թագավորով կառավարվող սկյութներին, այլև **ալբան** կոչվող **մասագետներին**: Չնայած **գարգարացիների** և **մյուս կովկասալեզու ցեղերի** ներխուժմանը **Այսրկովկաս** և **Կուրի Ձախափնյակի բնակչության էթնիկ փոփոխությանը**, շատ չանցած Գարգարացվոց նոր ձևավորված թագավորությունը հարձակման ենթարկվեց **մասագետական նոր ցեղերի** կողմից, որոնք հիմք դրեցին **Մազքթաց** կամ **Մասագետների թագավորությանը**: Հատկապես հենց այս կրկին **ալբան** անունը ստացած **մասագետները** հարձակվեցին մինչև **Մեդիա** և **Կապադովկիա**: Ուստի Դիոն Կասիոսի մոտ խոսքը վերաբերում է ոչ թե ալաններին, ինչպես ընդունված է, այլ **ալբան-մասագետներին,** և այդ է պատճառը, որ հարձակման ենթարկված երկրների շարքում բացակայում է **Ալբանիայի անունը**: **Կովկասալեզու ցեղերը մասագետ-մազքութների ճնշման տակ** շարժվեցին **Աղվանքի արևմտյան շրջանները**՝ ընդունելով, սակայն, մազքթաց Արշակունի թագավորի իշխանությունը: Իսկ երբ 387 թվին Աղվանից թագավորությունն ընկավ Սասանյան Պարսկաստանի գերիշխանության ներքո, **պարսից արքունիքը մազքութներով բնակեցված շրջանը վերածեց արքայական տիրույթի** և հանձնեց Աղվանից կամ Ճորա մարզպանի կառավարմանը, ստեղծեց Լփնաց և Բաղասականի թագավորությունները, որի արդյունքում **Մազքթաց Արշակունիների իշխանությունը պահպանվեց միայն կովկասալեզու հատվածի վրա, որի գլխավոր ցեղի՝ գարգարացիների համար Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց այսպես կոչված աղվանական գրերը**:



## 6. Ովքե՞ր են ալարոդները և արդյո՞ք կապ կա նրանց և «աղվաններ»ի միջև

Մենք պարզեցինք, որ այսպես կոչված **ալբան-աղուանները** գոյություն չունեին մ.թ.ա. IV դարում: Սակայն Հերոդոտոսը պահպանել է մի ցեղանուն **ալարոդիներ** անունով, որի առաջին մասը կարծես ինչ-ինչ նմանություն ունի «**ալբան**»-ի հետ: Ճիշտ է, պատմագիտության մեջ **ալարոդներին**, ավելի շուտ, փորձել են նույնացնել **ուրարտացիների** հետ, սակայն շուտով կտեսնենք, որ նման մոտեցումն էլ քննություն չի բռնում:

**Այսրկովկասի արևելյան հատվածը էթնիկ առումով, բառիս իսկական իմաստով, հիշեցնում էր մի խառնարան, ուր ալիք առ ալիք հայտնվել են տարբեր ցեղախմբերի ներկայացուցիչներ:** Վանյան բևեռագիր արձանագրությունները՝ կապված Վանի թագավորության քաղաքական ազդեցության շրջանակների հետ, ըստ էության, չեն անդրադարձել նշված տարածաշրջանին՝ չնայած տարբեր էթնիկական խմբերի ներթափանցումներ Այսրկովկաս եղել են թե՛ այդ շրջանում և

թե՛ դրանից էլ առաջ: Ուստի մեզ համար առավել հին վկայություններն ու տեղեկությունները պահպանել են հունա-հռոմեական հեղինակների երկերը, որոնք արձանագրում են քաղաքական և էթնիկ անցուդարձերը՝ սկսած Մարաստանի քաղաքական ասպարեզ մուտք գործելու և Աքեմենյան Պարսկաստանի հանդես գալու ժամանակներից:

Հերոդոտոսի երկի համաձայն, ինչպես արդեն վերը նշեցինք, Աքեմենյան տերությունը պարսից արքայից արքա Դարեհ Ա Վշտասպի (522-486) կողմից բաժանվեց 20 սատրապությունների: Ինչպես նշում է հեղինակը. «**Յուրաքանչյուր ազգի նա կցեց մերձակա հարևաններին և, բացի այդ, հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը**»[120]**:** Այդ սկզբունքը խախտվել է փաստորեն մեկ անգամ՝ կապված կասպերի հետ, որոնք իրենց հյուսիսից հարավ գաղթի ճանապարհին հայտնվել են հատվածաբար, աշխարհագրական տարբեր և իրարից հեռու վայրերում: Այլ խոսքով, պարսից արքունիքը նպատակ չի ունեցել որևէ ժողովրդի վարչականորեն տրոհել տարբեր սատրապությունների տարածքում, այլ, որպես կանոն, մի քանիսին մտցրել է մեկ սատրապության մեջ: Հակառակ դրան, ուսումնասիրողների՝ ցայսօր քաղաքացիություն ստացած կարծիքով, պարսից արքունիքը Հայաստանի տարածքում ստեղծել է ոչ միայն XIII սատրապությունը, որտեղ հականե հանվանե հիշատակվում են հայերը և Հայաստանը, այլև XVIII-ը, որի մասին Հերոդոտոսը գրել է. «**Մատիենների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված էր երկու հարյուր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր**»[121]**:** Այսպիսով, չնայած բոլոր փաստերին և փաստարկներին, ստացվում է մի անհեթեթ վիճակ: Մի կողմից՝ բոլոր տվյալները հստակ հավաստում են հայ ժողովրդի գոյությունը Արևելյան Հայաստանում, իսկ մյուս կողմից, ըստ ուսումնասիրողների, վերջինս բնակեցված է **մատիեններով, սասպեյրներով** և **ալարոդներով**: Ուստի՝ կամա թե ակամա, նրանց մի մասի մոտ ծնունդ է առել այն միտքը, թե **ալարոդների** տակ պետք է հասկանալ **հայերին** կամ էլ **հայացած ուրարտացիների հետնորդներին**: Նման եզրակացության հանգել է ճանաչված պատմաբան Գ. Սարգսյանը, որն անդրադառնալով այդ խնդրին, գրել է. «**Արևելյան (իմա՛ Հայաստանի-Ք.Հ.) մասի վերաբերյալ այդ (հարցուփորձից, պարսիկների և հույների պատմածներից, լոգոգրափոսների գրառումներից) աղբյուրները լռել են և Հերոդոտոսը նույնիսկ չի իմացել, թե Հայաստանը (Արմենիան) տարածվում է նաև այդ հողերում: Դրանց մասին նա տեղեկացել է միայն պարսկական պաշտոնական վավերագրերից, այն էլ արամերենից արված հունարեն թարգմանություններից, որտեղ Հայաստանը (Արմենիան) հնացած ձևով կոչվել է Ուրարտու: Այսպես է պատահել, որ նա Արևելյան Հայաստանը բնակեցրել է ալարոդներով (ուրարտացիներով), մինչդեռ այնտեղ հայերն են ապրել, ինչպես այդ բխում է Բեհիսթունյան արձանագրության մեջ այդ տարածքը Արմինիա անվանելու փաստից: Ուրարտացիներն այդ ժամանակ այլևս գոյություն չունեին, նրանք հայացել էին: Ուստի Հերոդոտոսի այս հատվածում հիշատակված ալարոդների տակ միանշանակ կերպով պետք է հասկանալ հայերին և վերը մեջ բերված հատվածը (V, 94) հասկանալ այսպես. «Մատիենների, սասպեյրների և արմենների վրա սահմանված էր 200 տաղանդ հարկ: Սա տասնութերորդ շրջանն**

120 Herodotus, III, 90: Տե՛ս նաև Հերոդոտոս, Պատմություն իննը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Եր., 1986, III, 30:
121 Անդ, III, 94:

**է»»[122]:**

Այս, անշուշտ, վերին աստիճանի սրամիտ բացատրությունը, ցավոք, հանդիպում է դժվարությունների մի շարք պատճառներով: Նախ, սատրապությունների ցուցակը և սատրապությունների մեջ մտնող ժողովուրդների և ցեղերի ցանկը, անտարակույս, Հերոդոտոսի ստեղծագործությունը չէ, որի հիմքում դրված լինեին մասամբ հունական աղբյուրներ, իսկ մյուս մասով՝ պարսկական արամեագիր վավերաթղթեր: Հազիվ թե կարելի է կասկածել, որ այն ամբողջությամբ ծագում է պարսկական մի ինչ-որ փաստաթղթից: Հետևաբար ենթադրել, թե պարսիկները **հայերի մի մասին** անվանել են **արմեններ**, իսկ **մյուս մասին՝ ալարոդներ**, անընդունելի վարկած է: Բացառությամբ կասպերի, որոնք հիշատակվում են երկու տարբեր սատրապությունների մեջ և, որ կարևոր է, նույն անունով ու այդ իրողությունը հատուկ քննություն է պահանջում, մյուս բոլոր դեպքերում ժողովուրդները վարչականորեն երբեք չեն բաժանվում, ուստի ավելի շուտ պետք է ենթադրել, որ **ամբողջ Հայաստանն է մտել տասներեքերորդ սատրապության մեջ**, քան վերջինիս տարածքում ստեղծվել են տասներեքերորդ և տասնութերորդ սատրապությունները:

Սակայն ամենաարտառոցն այն է, որ ասվածի լույսով և ցայսօր հայագիտության մեջ արմատացած տեսակետներով առաջնորդվելու դեպքում ստիպված ենք հանգելու մի անհեթեթ եզրակացության, թե մակեդոնական-սելևկյան շրջանում անգամ **այսրեփրատյան Արմենիան** ընդգրկել է միայն **Ծոփքը, Աղձնիքը, Տուրուբերանը, Վանա լճի ավազանը** և **Այրարատի մի մասը**[123]**:** Եվ դա այն դեպքում, երբ վանյան թագավոր Ռուսա Ա-ի թողած **Ծովինարի արձանագրության** տվյալները հստակորեն արձանագրում են հայկական բնակչության կամ ցեղերի գոյու-

122 Գ. Սարգսյան, Պատմահայր Հերոդոտոսը, տե՛ս Հերոդոտոս, էջ 576:

123 Այսպիսի կարծիք են հայտնել այնպիսի նշանավոր հայագետներ, ինչպիսիք են Հ. Հյուբշմանը և Հ. Մանանդյանը: Ըստ առաջինի՝ այսրեփրատյան Հայաստանը պարունակել է իր հետագա 15 նահանգներից հազիվ 4-ը. «Չորրորդ Հայքը (իմա՛ Ծոփքը-Բ.Հ.), Աղձնիքը, Տուրուբերանը և Այրարատը» (Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 16), իսկ երկրորդը՝ ընդհանուր առմամբ ընդունելով Հ. Հյուբշմանի եզրակացությունը, գտնում էր, որ այն «ըստ իս մոտավորապես ճիշտ է, բայց կարոտ է որոշ ուղղման: Արմենները, ինչպես վերն ասացինք, դեռևս հնագույն ժամանակներում գրաված են եղել, հավանորեն, նաև մի քանի շրջաններ Վանա լճի հարավում և հարավ-արևելքում: Իսկ Այրարատ նահանգը նրանք գրավել էին այդ ժամանակ ոչ ամբողջությամբ» (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1944, էջ 103): Շարունակելով իր միտքը զարգացնել, Հ. Մանադյանը գտնում էր, որ հայերը կամ արմենները Երվանդյանների առաջնորդությամբ «դեռևս երրորդ դարում մեր թվականությունից առաջ գրավել էին Արարատյան դաշտը և Արմավիրը դառել էր այստեղ Երվանդյան թագավորության աթոռանիստ կենտրոնը: Ըստ երևույթին, հենց այս թագավորությունն է այն հին Արարատյան թագավորությունը, որի մասին աղոտ և խառնաշփոթված հիշողություններ պահպանված են Խորենացու պատմության մեջ: Սելևկյան շրջանի արմենական այս երկիրը պարզապես այն կորիզն է, որից հետզհետե աճեց ու զարգացավ հետագայում անկախ ու հզոր մեծ Հայաստանը» (էջ 104): Այս տեսակետը պաշտպանել են այլևայլ կապակցությամբ Յ. Մարքվարթը, Գ. Խալաթյանցը, Հ. Սանտալճյանը և ուրիշներ, որոնք հակված էին մ.թ.ա. III դարի երկրորդ կեսին Արմավիրը տեսնելու Ատրպատականի Արտաբազանես թագավորի իշխանության ներքո (J. Marquart, Erānsāhr nach der Geographie des Ps. Moses Xorenaci, Berlin, 1901, էջ 108: Г. Халатянц, Очерк истории Армении, Москва, 1910, էջ 128: Sandalgian Jos., Histoire documentáire de l'Arménie, t. II, Rome, էջ 414 և այլք): Եթե նման տեսակետը ինչ-որ մի տեղ բացատրելի է հայագիտության XX դարի սկզբի մակարդակի պայմաններում, ապա այն միանգամայն անընկալելի է մեր օրերում, երբ պատմագիտական միտքը մեծ նվաճումներ է ձեռք բերել: Ուստի պարզապես զարմանալ կարելի է, որ վերջերս ԱՄՆ-ում լույս տեսած "The Armenian People from Ancient to Modern Times" (Volume I, Edited by Richard G. Hovanisian, University of California, Los Angeles, St. Martin's Press, New York, 1997, էջ 39) աշխատության հեղինակներից Նինա Գարսոյանը "The Achaemenid Satrapy of "Armina", c. 550-330" (կարծում ենք, որ քարտեզի հեղինակը նա է, որովհետև համապատասխան բաժինը պատկանում է նրա գրչին) քարտեզում Այրարատից Արմինայի մեջ մտցնում է միայն Բասենի դաշտը և Երասխաձորը, իսկ մնացած հատվածը հատկացնում է այլևայլ ցեղերի: Ասել է, թե հեղինակը ծանոթ չէ հայագիտության վերջին նվաճումներին կամ դրանց կարևորություն չի տալիս:

թյունը **Արցախի և Ուտիքի տարածքում մ.թ.ա. VIII դարում**[124]**:** Հետևաբար, որքան էլ ցավագին լինի մի շարք ուսումնասիրողների համար, որոշ կարծրացած տեսակետներ պետք է վերանայվեն և նորովի լուսաբանվեն Այսրկովկասի և Հայաստանի էթնիկ պատմության որոշ խնդիրներ:

Հերոդոտոսի կողմից բերված Դարեհ Ա-ի կազմավորած սատրապությունների ցուցակը միանշանակորեն չի ընդունվում ուսումնասիրողների կողմից: Պատճառն այն է, որ Հերոդոտոսի հաղորդման տվյալները չեն համապատասխանում պարսից թագավորների արձանագրություններում տրված սատրապությունների (եթե, իհարկե, դրանք սատրապություններ են) հերթականությանը: Ըստ որում, հատկապես բարդություններ է հարուցում Այսրկովկասում և Միջին Ասիայում ստեղծված սատրապությունների թե՛ տեղադրության և թե՛ սահմանների խնդիրը: Օրինակ՝ XVI սատրապության մեջ Հերոդոտոսը հիշատակում է **Պարթևստանը, Արեան, Սոգդը** և **Խորեզմը**, իսկ արձանագրություններում դրանք սովորաբար հանդես են գալիս առանձին, և **Սոգդը** հաճախ հիշատակվում է **Բակտրիայի** հետ մեկտեղ[125]: Նմանատիպ անհամապատասխանությունները ծնել են այն միտքը, որ Պատմահոր ցուցակն իրեն կամ նրան աղբյուր ծառայած Հեկատեոսին հայտնի երկրների և ժողովուրդների կամայական խմբավորման արդյունք է[126]: Սակայն այս բոլորով հանդերձ՝ ուսումնասիրողների գերակշիռ մասը հակված է կարծելու, որ հերոդոտոսյան ցուցակը արժեքավոր է, չնայած անհամապատասխանություններին տալիս է տարբեր բացատրություններ[127]: Չխորանալով խնդրիս մեջ, լոկ նշենք, որ, համաձայն Ի.Մ. Դյակոնովի, հերոդոտոսյան ցուցակի հիմքում պարսկական պաշտոնական աղբյուր է ընկած և որ Պատմահոր ցուցակում սատրապությունները թվարկված են նրանց՝ Մարական պետությանը և Աքեմենյան Պարսկաստանին միացվելու ժամանակագրական հերթականությամբ: Այս, անկասկած, սրամիտ եզրակացությունը, սակայն քննություն չի բռնում, քանի որ հերոդոտոսյան ցուցակում առաջինը հիշատակվում են ոչ թե կենտրոնական կամ արևելյան, այլ արևմտյան սատրապությունները: Կամ, ասենք, ինչու՞ Բաբելոնը Ասորեստանի հետ կազմում է միասնական սատրապություն, երբ այն Մարական պետությանն ընդհանրապես չի միացվել: Հերոդոտոսյան ցուցակի քննությունը ցույց է տալիս, որ սատրապությունների թվարկման հերթականությունը պայմանավորված է վերջիններիս ձևավորման ժամանակագրական հերթականությամբ: Չմտնելով մանրամասների մեջ, որոնք մենք քննարկել ենք մեր «Աքեմէնեան Պարսկաստանի XVIII սատրապութեան տեղադրութեան շուրջ»[128] հոդվածի մեջ, նշենք միայն, որ Դարեհ Ա-ի վարչական վերակառուցումների վերջին փուլում կազմվում են **տասնութերորդ, տասնիններորդ** և **քսաներորդ սատրապությունները**, որոնցից առաջինը, ինչպես նշել ենք, ընդգրկում էր **մատիենիներին, սասպեյրներին** և **ալարոդներին**: Տասնութերորդ սատրապությունը Հայաստանում տեղադրող գիտնականները առաջնորդվում են այն հանգամանքներով, թե, ըստ Հերոդոտոսի, **մատիենները** տեղադրվում են Ուրմիո լճի ավազանում և շրջակայ-

124 Տե՛ս մանրամասն Յովհաննէս Կարագեոզեան, Սեպագիր տեղանուններ, Եր., «Մագաղաթ», 1998, էջ 133-134, 234-235 և այլն: Տե՛ս նաև Բ.Հ. Հարությունյան, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Դարաբաղի տարածքի հարցի շուրջը, տե՛ս ՊԲՀ, 1994, թիվ 1-2, թիվ 257-259:

125 Տե՛ս А.И. Доватур, Д.П. Каллистов, И.А. Шишова, Народы нашей страны в "Истории" Геродота, Тексты, перевод, комментарий, изд. "Наука", Москва, 1982, էջ 191-192:

126 Տե՛ս Junge J., Saka-Studien-"Klio", 1939, Beiheft XLI, էջ 44f:

127 Բ.Ս. Տուրաևը, Վ.Մ. Մասսոնը, Ի.Մ. Դյակոնովը և ուրիշներ:

128 «Հանդէս ամսօրեայ», 1999, I-XII, էջ 46-114

քում, **սասպեյրները** համարվում են քարթվելալեզու ժողովուրդ և տեղորոշվում են Սև ծովի հարավ-արևելյան անկյունի մերձակայքում՝ Ճորոխի ավազանում, իսկ **ալարոդներին**, ինչպես վերը նշեցինք, նույնացնում են **ուրարտացիների** հետ: Սկզբնաղբյուրների համակողմանի և համադրական քննությունը ցույց է տալիս, որ **մատիենները** բնակվել են Աքեմենյան տերության մի քանի շրջաններում, իսկ տասնութերորդ սատրապության **մատիենները** զբաղեցրել են մի ինչ-որ տարածք՝ սասպեյրներից արևմուտք ընկած շրջանում,[129] **սասպեյրները բնակվել են Կողքիսից մինչև Մեդիա** կամ **Մարաստան** ընկած շրջանում, այսինքն՝ **Արևելյան Վրաստանի և Կուրի Ձախափնյակի տարածքներում**,[130] իսկ **ալարոդները**, որ ընդամենը երկու անգամ են հիշատակվում Հերոդոտոսի կողմից, մաս են կազմել սասպեյրական ցեղերի և զբաղեցրել են **Կուրի Ձախափնյակը**:[131] Այլ խոսքով՝ տասնութերորդ սատրապությունը, որ հայագետների մի մեծ ծաղկաբույլ մշտապես փորձել է տեղադրել Արևելյան Հայաստանի տարածքում, **Հայաստանում չի գտնվել, այլ ամբողջությամբ մտել է XIII սատրապության մեջ**: **Կուրի Ձախափնյակը**, այլ խոսքով, **այսպես կոչված Աղվանքի տարածքը** մտել է Աքեմենյան Պարսկաստանի **XVIII սատրապության մեջ**:

Հերոդոտոսը «**աղուան**» կամ «**ալբան**» անվանմանը տեղյակ չէ և Կուրի Ձախափնյակի բնակչությանը կոչում է «**ալարոդ**»: Հնարավո՞ր է արդյոք նույնացնել **ալարոդներին աղվանների** հետ: Մեր կարծիքով՝ հնարավոր չէ: Խնդիրն այն է, որ հայոց Պատմահայրը աղվաններ ասելով հասկանում է **եկամուտ վայրենի ազգը**, որը մուտք էր գործել Այսրկովկաս հայոց Վաղարշակ թագավորի օրերում կամ մի փոքր դրանից առաջ: Ամեն ինչից դատելով, **ալարոդները** իրանական ցեղ են և մտել են վրացականացման ուղին բռնած իրանական **ասպեյր=սասպեյր** ցեղախմբի մեջ: Ինչպե՞ս կարող է մեկնաբանվել **ալարոդ** էթնանունը: Բոլորովին էլ չհավակնելով վերջնական պատասխանի, մենք կամենում ենք դիմել իրանագետ Գ. Ասատրյանի մի բացատրությանը, որ նա վերջերս տվեց մեզ բանավոր զրույցներից մեկի ժամանակ: Նա գտնում է, որ «**ալարոդ**» պետք է նշանակի «**գետից այն կողմ ապրող**»: Դա, մեր կարծիքով, միանգամայն տրամաբանական է, քանի որ սասպեյրական ցեղախմբի մի մասը, որ բնակվում էր Կուրի՝ այդ մեծ գետի, Ձախափնյակում, կարող էր որակվել որպես «**գետից այն կողմի բնակիչ**»:

Հերոդոտոսի երկի ողջ տրամաբանությունն ասում է այն մասին, որ **ալարոդների** երկու անգամ հիշատակությունը պայմանավորված է հեղինակի սատրապությունների ցանկի պարսկական աղբյուրով, այլապես **ալարոդները**՝ որպես **սասպեյրների ցեղախմբի բաղկացուցիչ մաս**, անգամ չէին հիշատակվի: Մտածելու տեղիք է տալիս նաև այն իրողությունը, թե ինչու են պարսիկները նրանց առանձնացրել: Այս հարցին հազիվ թե կարելի է միանշանակ պատասխան տալ: Մեր կարծիքով, այդ հանգամանքը պետք է բացատրել **սասպեյրների՝ Արևելյան Վրաստանում նստակեցության անցնելով**, որի հետևանքով Կուրի Ձախափնյակում հաստատված և քոչվորական կենցաղը պահպանող սասպեյրները պարսիկների կողմից առանձնացվել են որպես **Կուր մեծ «գետից այն կողմ բնակվողներ»**:

Պատմահոր մեկ այլ տեղեկությամբ, որի մասին արդեն թռուցիկ նշվեց, հույն-

129 Տե՛ս Հարությունյան Բ., Աքեմենեան Պարսկաստանի XVIII սատրապութեան տեղադրութեան շուրջ, էջ 55-67:
130 Անդ, էջ 67-83:
131 Անդ, էջ 84-85:

պարսկական պատերազմի ժամանակ «**Մարերին** (չեն նույնանում **մեդացիների** հետ-Ք.Հ.) **և կոլխերին առաջնորդում է Տեասպիսի որդի Փառանդատեսը: Ալարոդները և սասպեյրները արշավում էին կոլխերի նման: Սրանց առաջնորդում էր Սիրոմիտրեսի որդի Մասիստիասը**»[132]**:** Ուշադրություն է գրավում այն իրողությունը, որ այս հաղորդման մեջ **ալարոդները** հիշատակվում են **սասպեյրներից** առաջ, հանգամանք, որ թերևս հավաստում է նրանց կողմից պատերազմի ռազմադաշտ դուրս բերված ավելի մեծ թվով զորաջոկատի մասին, որն, անշուշտ, նույնպես պետք է բացատրել **ալարոդների** քոչվորական կենցաղով: Ժամանակին մեր հոդվածներից մեկում ցույց էինք տվել, որ թե՛ **կոլխերը** և թե՛ **սասպեյրները** եղել են իրանախոս, հետևաբար **ալարոդները** նույնպես եղել են իրանախոս, և այդ հեռավոր ժամանակներում Կուրի ձախափնյակը բնակեցված էր առավելապես իրանական ցեղերով: Կովկասյան լեզվախմբին պատկանող եթե առանձին ցեղեր էլ եղել են, ապա նրանք տիրապետող չեն եղել, իսկ նրանց առավել նշանավոր ներկայացուցիչներ **գարգարները** և **ուդիները**, անգամ Ստրաբոնի օրերում, դեռ **շարունակում էին գտնվել Կովկասյան լեռների հյուսիսահայաց լանջերին**: Քոչվորական կյանքով ապրող ալարոդների մոտ պետություն այդպես էլ, անգամ Աքեմենյան պետության շրջանակներում, չձևավորվեց: Այլ տեղեկություններ չեն պահպանվել, և Կուրի ձախափնյա շրջանը անհայտ է սկզբնաղբյուրներին մինչև Ալեքսանդր Մակեդոնացու դարակազմիկ արշավանքը:

Ի մի բերելով վերն ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ «**ալարոդ**» անունը որևէ կապ չունի «**ալբան-աղուան**»-ի հետ, ուստի չի կարող հիմք ծառայել **այսպես կոչված աղվանների** ներկայությունը Արևելյան Այսրկովկասում հիմնավորելու համար այդ հեռավոր ժամանակներում: Միակ խոցելի տեղը Գ. Ասատրյանի բացատրության մեջ թերևս այն է, որ մ.թ.ա. VI դարում գետը պարսկերենում «rauta» էր, իսկ Հերոդոտոսի մոտ հանդիպում է ավելի ուշ ժամանակների «rod» ձևը, որը, անկասկած, նույնպես բացատրության կարիք ունի, ինչը իրանալեզվագիտական բանասիրության խնդիր է:

## Եզրակացություններ

Այսպիսով, «**աղուան**» և «**Աղուանք**» հասկացությունները զուտ հայկական երևույթ են և կապված են Կուրի աջափնյա տափարակի հետ: Այդ են ապացուցում ոչ միայն Պատմահոր տեղեկությունները, այլև Հայոց Արևելից կողմերի պատմիչ Մովսես Կաղանկատվացու երկի հաղորդումները, չնայած հեղինակը փորձել է ամեն կերպ կապ ստեղծել **հայկական Աղվանքի** և **այսպես կոչված Աղվանքի միջև**, որը գտնվել է **Կուրի Ձախափնյակում**:

Իրանախոս այսպես կոչված աղվանների հաստատվելը Արևելյան Այսրկովկասում տեղի է ունեցել մ.թ.ա. II դարի վերջերին, և քանի որ նրանց անունը միանգամայն այլ էր, Պատմահայրը բավարարվել է նրանց «**եկամուտ**» ազգ անվանելով: Սկզբնաղբյուրների համադրական քննությունը հնարավորություն է տալիս պարզելու, որ այդ «**եկամուտ**» ազգը հավանաբար եղել են **մասագետական-մազքթաց ցեղերը**:

**Հայերը**, ելնելով այն իրողությունից, որ **իրենք Աղվանից էին կոչում Կուրի**

132 Հերոդոտոս, VII, 79:

**Աջափնյակի դաշտը**, ինքնաբերաբար այդ անունը տարածում են **Կուրի Ձախափնյակում հանդես եկած պետության վրա**: Եվ քանի որ այդ հեռավոր ժամանակներում հայերը անունս հնչում էին «**Ալոբանք**», վերջինս հայերից անցավ սկզբում հռոմեացիներին, իսկ այնուհետև՝ հույներին: «**Ալոբանք**»-ի լատինականացումը, ծնելով «**Ալոբանիա**» ձևը, հռոմեացիների մոտ առաջ բերեց այն համոզումը, որ «**Ալոբանիա**»-ն ոչ այլ ինչ է, բայց եթե իրենց պետության տարբեր մասերում հանդիպող **Ալբանիա** անունը, ուստի ինքնաբերաբար «**Ալոբանիա**»-ն վերածվեց «**Ալբանիա**»-ի:

**Ստրաբոնի հիշատակած այսպես կոչված աղվանական 26 ցեղերի համադաշնությունը հիմնականում իրանախոս ցեղերի միություն էր**: Ցավոք, բացառությամբ **կասպերի**, պատմությունը նրանց անունները չի պահպանել: Չի բացառվում, որ նրանց կազմում եղել են աննշան թվով կովկասալեզու ցեղեր, սակայն նրանք եղանակ չեն ստեղծել:

Մ.թ. I դարում Հյուսիսային Կովկասում հայտնված ալանների հարվածների ներքո բազմաթիվ կովկասալեզու ցեղեր, ինչպիսիք էին **գարգարացիները, ուդիները** և ուրիշներ, գաղթում են Արևելյան Այսրկովկաս, որի արդյունքում գրավվում է **այսպես կոչված Աղվանական թագավորությունը**, և **փոխվում է վերջինիս էթնիկ կազմը**: Թագավորությունը հարևան ժողովուրդների կողմից շարունակում է կոչվել «**Ալբանիա-Աղուանք**» ավանդական ձևով, սակայն պետք է ենթադրել և դրա համար հիմքեր կան, որ այն կոչվել է «**Գարգարացվոց թագավորություն**»: Դրա օգտին է խոսում այն հանգամանքը, որ Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծված այսպես կոչված «**աղվանական գիր**»-ը իրականում պատրաստվել է **գարգարացիների լեզվի** համար: Հենց **գարգարացիների հարձակումների առաջն առնելու համար** Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելքում ստեղծվում են **Գարդմանացվոց, Ուտեացվոց** և **Ծավդեացվոց ռազմական կուսակալությունները: Կուրի Աջափնյակում Գարգարացվոց իշխանություն չի եղել, ինչն ապացուցվում է ոչ միայն հայ հեղինակների երկերի համադրական քննությամբ, այլև Պտղոմեոսի «Աշխարհագրությամբ», որտեղ Կուրի և Երասխի միջագետքում հիշատակվում են միայն երեք կուսակալություն՝ Սակասեննե (իմա՛ Գարդմանացվոց իշխանություն), Օտենենե (իմա՛ Ուտեացվոց իշխանություն) և Սոդուկենենե (իմա՛ Ծավդեից իշխանություն կամ Արցախ)**:

**Մ.թ. II դարի 30-ական թթ.** կամ մի փոքր առաջ **Արևելյան Այսրկովկաս** ներխուժում **մասագետների կամ մազքութների երկրորդ ալիքը**: Սրանք, հասկանալի է, իրանական ցեղ էին: **Նրանք հաստատվում են Գարգարացվոց թագավորության արևելյան երկրամասերում՝ գարգարացիներին, ուդիներին և մյուսներին մղելով թագավորության արևմտյան հատվածը: Շուտով նրանք գրավում են Գարգարացվոց թագավորությունն ամբողջությամբ, որն ավանդույթի ուժով շարունակում է կոչվել Ալբանական կամ Աղվանից թագավորություն կամ էլ պարզապես Մազքթաց թագավորություն**: Նոր իրանախոս տարրը առավելապես հաստատվում է թագավորության հյուսիս-արևելյան երկրամասերում, որոնք ստանում են **Մազքութք** անունը: **Գարգարացիները հիմնականում կենտրոնանում են Շաքի քաղաքի շրջակայքում, ինչն արձանագրված է Վարդանի «Աշխարհացոյց»-ում**[133]**:**

133 Տես Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատարակութիւն Հ. Պէրպէրեանի, համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960, էջ 10. **«Գուգարացիք Շաքի է»**: Գուգարացիքի օգտագործումը Գարգարացիքի փոխարեն սովորական շփոթ է, որ տեղ է գտել հայկական ձեռագրերում:

Աղվանք անվան կիրառության դեպքերը V դարից հետո խճողվում են՝ կապված մի շարք քաղաքական և վարչական իրողությունների հետ, որն առանձին քննության նյութ է: Բականն այն է, որ, ինչպես պետք էր սպասել, «**աղուան**» և «**Աղուանք**» **անունները շարունակում են պահպանել դրանք ծնած հայերը, իսկ Կուրի Ձախափնյակի և ոչ մի ցեղ այն չի պահպանում**:


Summary

## A FEW QUESTIONS ABOUT THE ETHNIC AND POLITICAL HISTORY OF THIS SO-CALLED AGHVANK (ALBANIA)

### Part II: Political-Historical Issues in the Context of Ethnic Belonging

Babken H. Harutyunyan

The historical geography of all the Eastern part of the kingdom of Great Armenia is discussed in the article, it illustrates that **Colthene** (Κονθηνή) Claudii mentioned by Ptolemy corresponds to the region of Great Armenia's **Kaspk'**(Կասպք) or **Caspiene** (Κασπηνή).

The information given by Movses Khorenatsi about the governorships of **Utik', Gardmanatsik'** and **Tsavdeatsik'** and about the principality of the **Gargaratsik'**(**Gargarians**) is elucidated through the source study examination. It is clearly illustrated that the rule of the **Gardmanatsik'** was to be found on the left bank of the river Kura, the name **Utik'** in Armenian simply means **Ovits** (**Ովիտք**), something which due to the development of the language became **Utik'** (**Ուտիք**) and the name **Tsavdek'** originated from the name of the Southern Armenia's region called **Tsavdek'** (**Ծավդեք**).

It was also examined the issue of how many names of 26 tribes of so-called Albanians mentioned by Strabo were preserved. Comprehensive research has shown that only the name of the **Caspians** was preserved, and the purely Albanian declared **Gargarians (գարգարացիք), Udins (ուդիններ)** in those days lived in the Northern Caucasus, outside of the borders of Albania. It is illustrated also that՛Ουιτιοι (ուիտիները/վիտիները) were not found in Armenia and have no connection with the region of **Utik'**. The Greeks knew it very well; if the **Uitis** were called ՞Ουιτιοι, then **Utik'** was called ՞Ωτηνη. Rich factual material shows that the name of muvkoi has absolutely nothing to do with **Mukan** (**Մուղան**), whose old Armenian form Movkan is preserved in Georgian as a loan.

Through the comparative study of the dates by Curtius Rufus and Arrianus it becomes clear that these so-called Albanians did not participate and could not have taken part in the famous Battle of Gaugamela in 331 BC. Their name is simply confused with the **Massagets – Mazkuts** who had invaded the left bank of the river Kura and who had taken over the Albanian kingdom, whose fellow Mid-Asian tribsmen had participated indeed in the Battle of Gaugamela. The article shows that the **Albanian - Massaget** confusion also was to be found in the works by Plinius Secundus and Solinus.

It is proved that Ἀλαροδιοι are not Albanians, they belong to the Iranian-speaking Saspeir tribes, which have taken the way to the georgianisation. It is also shown very clearly and objectively that only the Achaemenid Persia's XIII satrapy was situated in the territory of Armenia, and the XVIII satrapy occupied the territory of the Eastern Georgia and the left bank of the river Kura, and included Matiens, Saspeirs and Alarodis.

The basic conclusion of the article is that the name *Albania* given by Greek and Roman authors and the name *Aghuank'* given by Armenian historiographs has a purely Armenian origin and means "Country of fertile field". And as the left bank of the river Kura was the continuation of the Armenian fertile field, the state formed there was called by the Armenians **Alobank'** (**Ալոբանք**), which through the development of the Armenian language became **Aluank (Aghuank')**, and in the Greek – Roman world the Armenian *"Alobank'"* was associated with the Celtic toponym of **Albania**, and thus was transformed to **Albania.**

Բաբկեն Հ.Հարությունյան
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

# ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ԱՂՎԱՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ, ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ԳԱՎԱՌԱԲԱԺԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ*

## Մուտք

**Այսպես կոչված Աղվանքն իբրև ադրբեջանցիների նախահայրերի կողմից ստեղծված պետություն ներկայացնելու ադրբեջանական պատմաբանների համառ փորձերը մեզ ստիպեցին անդրադառնալ Կուրի ձախափնյակում ծնունդ առած այդ թագավորության էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցերի, որոնք, մեր կարծիքով, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն կովկասագիտության, այլև հայագիտության համար**[1]: **Ելնելով հիմնախնդրի հետագա՝ ավելի խոր և համակողմանի քննության անհրաժեշտությունից, սույն հոդվածում հետազոտության ենք ենթարկում նաև նշված պետության սահմանների, տարածքի ու գավառաբաժանման հարցերը:**

Այսպես կոչված Աղվանքի պատմական աշխարհագրության հարցերով զբաղվել են **Ա. Յանովսկին**, **Բ. Դոռնը**, **Վ. Տոմաշեկը**, **Ա. Կրիմսկին**, **Ս. Յուշկովը**, **Կ. Տրևերը** և ուրիշներ՝ իրենց նպաստը բերելով հարցի ավել կամ պակաս չափով քննությանը:

Հարևան Ադրբեջանի Հանրապետության պատմաբանները նույնպես անդրադարձել են քննարկվող հիմնախնդրին՝ հետապնդելով լոկ մի նպատակ. աղվաններին իրենց նախնիներ հռչակելու միջոցով՝ եկամուտ բյուրքական ժողովրդին վերածել ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքի ավտոխթոնների կամ տեղաբնիկների:

Ադրբեջանական պատմաբաններից այսպես կոչված Աղվանքի պատմական աշխարհագրությանը, գավառաբաժանմանը, տեղանուններին անդրադարձել են Ք. Ալիևը[2], Ֆ. Մամեդովան,[3] Գ. Գեյբուլաևը[4] և ուրիշներ, որոնց տեսակետների հոգևոր հայրն է եղել Զ. Բունիաթովը: Դրանց մեջ հատկապես Ֆ. Մամեդովան

* Հոդվածն ընդունվել է տպագրության 24.05.2012:

1 Տե՛ս **Բաբկեն Հարությունյան**, Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր, «Վէմ», 2011, թիվ 2 (34), էջ 30-64, թիվ 3 (35), էջ 34-73:

2 Տե՛ս **Êåìàëè Àëèåâ,** Êàâêàçñêàÿ Àëáàíèÿ, Áàêó, 1974.

3 Տե՛ս **Ôàðèäà Ìàìåäîâà,**Ãåîãðàôèÿ Êàâêàçñêîé Àëáàíèè (IIIâ. äî í.ý.-VII â.í.ý.), Áàêó,1986.

4 Տե՛ս **Ã.À.Ãåéáóëàåâ,** Òîïîíèìèêà Àçåðáàéäæàíà, Áàêó, 1986.

հակված է կարծելու, որ իրենից առաջ եղած ուսումնասիրողները, այդ թվում նաև Ք. Ալիևը, հենվել են հարցի քննության հայկական ավանդույթի վրա: Ուստի Ֆ. Մամեդովան գովեստի խոսքեր է ուղղում հատկապես Զ. Բունիաթովի հասցեին և պնդում է, թե իբր՝ Զ. Բունիաթովն է, որ հիրավի կարողացել է ուսումնասիրել խնդիրը[5]: Մի կողմ թողնելով հեղինակի ճամարտակությունները հարցի քննության համար կիրառած իր «մեթոդի» մասին, որ շատ հեռու է նոր հռչակվելուց, ինչպես նաև զերծ մնալով աղրբեջանցի պատմաբանների տեղեկություններին առանձին-առանձին անդրադառնալուց, քանի որ նրանց մոտ, ըստ էության, ոչ մի նոր բան չկա, անցնենք այսպես կոչված Ալբանիայի կամ Աղվանքի թագավորության գավառների տեղադրությանը՝ անհրաժեշտության դեպքում, անշուշտ, դիմելով նաև հրապարակի վրա եղած նյութերին և կարծիքներին :

## 1. Թագավորության ստրաբոնյան նկարագրությունը

Դատելով հույն աշխարհագետ Ստրաբոնի տեղեկություններից՝ Ալբանիայի կամ այսպես կոչված Աղվանից թագավորությունը ծնունդ է առել մ.թ.ա. II դարի վերջերին կամ I դարի սկզբներին՝ իրենից ներկայացնելով նախկին 26 ցեղային թագավորությունների մի համադաշնություն, որը Ստրաբոնի օրերում կառավարվում էր մեկ միապետի կողմից: Ամասեցի աշխարհագետը այս կապակցությամբ գրում է. «…նրանց ( ալբանների- Բ. Հ.) թագավորները նույնպես նշանավոր են: Այժմ, ճիշտ է, նրանց բոլոր ցեղերին կառավարում է մեկ թագավոր, այն դեպքում, երբ նախկինում յուրաքանչյուր տարբերալեզու ցեղ կառավարվում էր սեփական թագավորի կողմից: Նրանց լեզուները 26-ն են, այնպես որ նրանք դժվարությամբ են մեկը մյուսի հետ հաղորդակցվում»[6]: Անկախ այն իրողությունից, թե ինչ տարածք էին ընդգրկում այդ ցեղերը, պարզ է մի բան, որ նոր ձևավորված թագավորությունը պետք է բաղկացած լիներ առնվազն 26 վարչական շրջաններից: Դժբախտաբար, Ստրաբոնը բոլորովին տեղեկություններ չի պահպանել Ալբանիայի թագավորության վարչական բաժանման վերաբերյալ, իսկ Մովսես Խորենացու «Աշխարհացոյցի»-ի ընդարձակ և համառոտ խմբագրությունները արտացոլում են բոլորովին այլ ժամանակների վարչական վիճակը: Միաժամանակ՝ ավելորդ չենք համարում նշել, որ Ստրաբոնի ժամանակներից մինչև մ.թ. III դարի վերջերն ընկած ժամանակահատվածում էապես, առնվազն երկու անգամ, փոխվեց հիշյալ տարածքի էթնիկական պատկերը:

Ստրաբոնը, նկարագրելով Ալբանիայի թագավորությունը, հայտնում է հետևյալը. «Մեջտեղում կա մի դաշտավայր՝ ոռոգված գետերով, որոնցից մեծագույնն է Կուրը, որ սկիզբ է առնում Հայաստանից, մտնում է անմիջապես հիշյալ դաշտավայրը, ընդունում է իր մեջ Արագոսը (իմա՛ ներկայիս Արագվի գետը- Բ.Հ.), որ բխում է Կովկասից, ինչպես և ուրիշ ջրեր, և մի նեղ հովտի միջով մտնում է Ալբանիա: Այս երկրի և Հայաստանի միջև հոսելով անցնում է բազմաթիվ հույժ մարդաշատ դաշտավայրերով, ընդունում է իր մեջ նաև ուրիշ շատ գետեր, ինչ-

5 Տե՛ս **Ôàðèàà Ì àìääîâà,** նշվ. աշխ., էջ 87:

6 "The Geography of Strabo", with an English Translation by Horace Leonard Jones, in eight volumes, Cambridge, Massachusetts, London, 1969, XI, 4, 6. Տե՛ս նաև՝ **Страбон**, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г.А. Стратановского, Ленинград, 1964. Թարգմանությունները տրված են ըստ Հր. Աճառյանի՝ որոշ փոփոխություններով: Տե՛ս նաև՝ **Ստրաբոն,** քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Եր., 1940:

պիսիք են Ալազոնիոսը, Սանդոբանեսը, Ռոյտակեսը և Քանեսը, բոլորն էլ նավարկելի, և թափվում է Կասպից ծովը: Առաջ այս գետը կոչվում էր Կորոս»[7]:

Սույն հաղորդումը մեր առջև մի շարք խնդիրներ է դնում: Տարակույս չկա, որ, ինչպես արդեն նշել ենք տեքստում, Արագոսը Արագվի գետն է, սակայն բացառությամբ Ալազոնիոսի, որ Ալազանն է, մյուս գետերի տեղադրության հստակեցումը կապված է բարդությունների հետ: Խնդիրն այն է, որ համաձայն աշխարհագետի՝ դրանք Կուրի ձախափնյա վտակներն են, սակայն մյուս կողմից՝ նավարկելի, ինչն այսօր դժվար է վերագրել Կովկասյան լեռներից հոսող Կուրի ձախափնյա վտակներին: Խնդիրն է՛լ ավելի է խճողվում, երբ ծանոթանում ենք Ալբանիայի պտղոմեոսյան նկարագրությանը, որին կանդրադառնանք ստորև, իսկ այժմ փորձենք տեղորոշել Կուրի՝ Ստրաբոնի հիշատակած վտակները:

Փորձենք տեղադրել Ալազոնիոսից, այսինքն՝ Ալազանից հետո հիշատակված մյուս վտակները: Մեր կարծիքով, հիշատակված հաջորդ վտակը, որ անվանված է **Սանդոբանես**, ամենայն հավանականությամբ, **Սարդոբանեսի** կամ **Զարդոբանեսի** աղավաղված գրությունն է: Անունը պահպանել է ներկայիս Տուրիան-չայ գետի գետաբերանի շրջանում գտնվող **Զարդոբ** բնակավայրը: Σαρδοβανής-ը կամ Ζαρδοβανής-ը արտագրությունների ժամանակ վերածվել է Σανδοβανής-ի, իսկ տեղանունն առաջացել է **Զարդոբ** գետանունից, որ նշանակում է **Դեղին ջուր**, այլ խոսքով՝ **Տղմուտ գետ**: Գետանունն ավելի ուշ փոխանցվել է հիշյալ վտակի գետաբերանում ծնունդ առած բնակավայրին:

**Ալազանի** և **Տուրիան-չայի** միջև գտնվող **Ալիջան-չայ** վտակն իր փոքրության պատճառով տեղ չի գտել Ստրաբոնի հիշատակության մեջ: **Կուր** գետը **Զարդոբ-Տուրիան-չայ** վտակից արևելք ունի քիչ թե շատ նշանակալից ընդամենը երկու վտակ՝ **Գյոք-չայը** և **Գիրդիման-չայը**: Առաջինը, անտարակույս, համապատասխանում է Ստրաբոնի հիշատակած **Ռոյտակեսին**, իսկ երկրորդը՝ **Քանեսին**: Փոքրության պատճառով Աղ-սու վտակը ևս չի հիշատակվել կամ դուրս է մնացել Ստրաբոնի տեսադաշտից: Ներկայիս **Փիրսահաբ, Սումգայիթ** և **Սամուր** գետերը չէին կարող վերաբերել **Ռոյտակեսին** կամ **Քանեսին**, քանի որ դրանք **Կուրի** վտակներ չեն: Միակ խանգարիչ հանգամանքը մնում է հիշյալ գետերի նավարկելի լինելը, որովհետև այսօր թե՛ **Տուրիան-չայ**, **Գյոքչայ** և **Գիրդիման-չայ** վտակները և թե՛ անգամ անհամեմատ ջրառատ **Ալազանը** բոլորովին էլ նավարկելի չեն: Միակ հնարավոր եզրակացությունն այն է, որ կլիմայի փոփոխության պատճառով պակասել է նրանց հորդառատությունը, իսկ Ստրաբոնն էլ, նավարկելի ասելով, նկատի է ունեցել դրանց նավարկելիությունը նավակների համար:

Կարծում ենք, որ **Ռոյտակես** անվանումը ևս անաղարտ մեզ չի հասել: Վերջինս հազիվ թե նշանակեր գետակ կամ փոքր գետ: Առավել հավանական է, որ անվանումը եղել է **Ռոստակես**, այսինքն՝ **Ռոստակ** կամ **արքունի տիրույթ**, քանի որ այդ վտակի վերին հոսանքի շրջանում էր գտնվում երկրի **մայրաքաղաք Կապաղակը**: **Քանեսի** համար դժվարանում ենք որևէ բացատրություն տալ, սակայն հիմք ունենալով Ստրաբոնի հիշատակությունը սկյութական Ալազան ցեղի վերաբերյալ[8], կարելի է ենթադրել, որ անունը իրանական ծագում ունի և ոչ թե վրացական:

Ստրաբոնը հետաքրքիր տեղեկություններ է պահպանել Ալբանիայի սահման-

7 Անդ, XI, 3, 2-3:
8 Տե՛ս **Strabo,** XII, III, 21.

ների ու տարածքի վերաբերյալ, որոնց լուսաբանումը ներկայացնում ենք ընթերցողի դատին: Հաղորդումներից մեկի համաձայն՝ «…այնուհետև արևելքից հենց նույն ծովը (իմա՛ Կասպից ծովը -Ք.Հ.) ընդհուպ Ալբանիայի և Հայաստանի սահմանը, որտեղ ծովի մեջ են թափվում Կուրը և Արաքսը. Արաքսը հոսում է Հայաստանի միջով, իսկ Կուրը՝ Իբերիայով և Ալբանիայով...»[9]: Այս հաղորդման մեջ դժվարություն է հարուցում լոկ Կուրի՝ Ալբանիայով հոսելու փաստը, որովհետև իրականում Կուրը հանդիսացել է Ալբանիայի հարավային սահմանը, ինչը ցույց են տալիս աշխարհագետի մյուս վկայությունները: Կա՛մ այստեղ հեղինակը նկատի է ունեցել **Կուրի** սահմանային գետ լինելը, կա՛մ էլ **Ալբանիա** ասելով հասկացել է **Արգավանդ դաշտի երկիր**, որը կարող էր տարածվել գետի երկու ափերին: Սակայն հաշվի առնելով մյուս հաղորդումները՝ մենք ավելի հակված ենք առաջին կարծիքին:

Ստրաբոնը, հենվելով Էրատոսթենեսի մի հաղորդման վրա, գրում է. «Լեռը (Կովկասյան լեռը - Ք.Հ.) հարավից բաժանում է Ալբանիան և Իբերիան, իսկ հյուսիսից՝ սարմատական հարթությունները…: Էրատոսթենեսի խոսքերով, տեղացիները Կովկաս [լեռը] անվանում են Կասպիոն, հավանաբար կասպերի [ցեղի] անունով»[10]: Հստակ է, որ Ստրաբոնը **Ալբանիայի** հյուսիսային սահմաններն անցկացնում է **Կովկասյան լեռնաշղթայով**:

Ստրաբոնի խոսքերով Արտաշեսը և Զարեհը մարերից գրավում են **Կասպիանեն**, **Փավնիտիսը** և **Բասորոպեդան**, սակայն մեկ այլ հաղորդմամբ՝ «Ալբանների մարզին է պատկանում **Կասպիանե** երկրամասը, կոչված ներկայումս անհետացած ցեղի անունով, որի անունով կոչված է նաև ծովը: Իբերիայից Աղվանք անցքն անցնում է անջուր և քարքարոտ Կամբյուսենե ( իմա՛ Քամբեճան- Ք.Հ.) մարզով և [դուրս գալիս դեպի] Ալազոնիոս գետը»[11]: Այս տեղեկությունը շփոթության մեջ է գցել շատ ու շատ ուսումնասիրողների, ի մասնավորի՝ պատմական աշխարհագրության հմուտ մասնագետ ակադ. Ս. Երեմյանին: Նա անվերապահորեն **Մեծ Հայքի Փայտակարան** աշխարհի կամ Արտաշեսի ու Զարեհի կողմից մարերից գրավված **Կասպիանեի** տարածքը մտցրել է Ալբանական թագավորության սահմանների մեջ՝ իր կազմած բոլոր քարտեզներում և «Հայաստանը ըստ "Աշխարհացոյց"-ի» աշխատության մեջ[12]: Ավելին, նա զարմանալիորեն ուշադրություն չի դարձրել այն իրողության վրա, որ ալբաններին պատկանող **Կասպիանեն** չի կարող նույնանալ մարերից գրավված **Կասպիանեի** հետ: Խնդիրը հստականում է Մովսես Կաղանկատվացու տեղեկությունների լույսով. «Մի ոմն ի նախեղելոցն վարդապետաց, որ ի հոգւոյն սրբոյ խնամոցն նշանագիր երից ազգացն առնէր՝ Հայոց, Աղուանից և Վրաց. նա այնուհետև և ի սուրբն երթայր յԵրուսաղէմ մատուցանել ուխտադրութիւն: Անտի դարձեալ աշակերտօքն. ընդ ինքեան ունելով զխաչն արծաթեղեն՝ ոսկեխաղաց տեսակաւ յորում ի տէրունեան խաչէն էր մասնավորեալ: Անցանելով ընդ Հայաստան՝ ճանապարհորդէ հասանել ի սահմանս արևելից՝ ի գաւառն Ուտիական: Եւ մտեալ բնակէին ի ճախճախուտ տեղիս և ի լոռաբոյս մօրսն առ տեղեաւն, որում **Գ-իան** կոչեն. և յայնժամ նորոգեալ զեկեղեցւոյ հաստատէ զհաւատս: Եւ ձգէր զբարոզութիւն աւետարանին, յաշ-

9 Անդ, XI, I, 5:
10 **Strabo,** XI, II,15.
11 Անդ, XI, IV, 5:
12 Տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** «Հայաստանը ըստ "Աշխարհացոյց"»-ի, Եր., 1963, էջ 34, 88:

խարհն Ուտիացւոց և յԱղուանս և Լփինս, և ի Կասպս եւ մինչև ի դուռն Չորայ»[13]:

Դժվար չէ տեսնել, որ գոյություն է ունեցել ևս մեկ **Կասպիանե** կամ **Կասպք**, որը մտել է Ալբանական թագավորության մեջ և այն չի կապվում մարերից գրավված **Կասպիանեի** հետ:

Այս հետաքրքիր տեղեկությունից կարելի է թերևս ենթադրել, որ Կամբյուսենեն կամ Քամբեճանը գոնե մի մասով պատկանել է Իբերիային, ինչը ցույց է տալիս աշխարհագետի մյուս հաղորդումը: Ստրաբոնի խոսքերով՝ «… Հայաստանը մասամբ հարթավայր է ներկայացնում , մի մասով՝ լեռնային երկիր Կամբյուսենեի նման, որտեղ հայերը սահմանակցում են միաժամանակ իբերների և ալբանների հետ»[14]: Քամբեճանի մի մասն էլ, բնականաբար, պատկանել է ալբաններին, ինչի վերաբերյալ, բացի այժմ բերված հաղորդումներից, հավաստում է աշխարհագետի մեկ այլ տեղեկությունը, թե «…անցումը Ալբանիայից սկզբում գնում է ժայռերի մեջ փորված արահետով, իսկ հետո Ալազոնիոս գետի ողողադաշտով»[15]:

Վերջապես, կամենում ենք մեջբերել ամասեցի աշխարհագետի աշխատությունից մի հաղորդում ևս՝ կապված գարգարների նախասկզբնական տեղադրության հետ. «Ինչպես ասում են, Ալբանիայից վերև լեռներում բնակվում են ամազոնուհիները: Թեոփանեսը, որ ուղեկցում էր արշավանքի ժամանակ Պոմպեոսին և այցելեց ալբանների երկիրը, պատմում է, որ **գելերի** և **լեգերի** սկյութական ցեղերը ապրում են ամազոնուհիների և ալբանների միջև, և որ այդ երկրում հոսում է Մերմադալիս գետը այդ ցեղերի և ամազոնուհիների միջև: Մյուս հեղինակները, նույնպես քաջածանոթ այդ վայրերին (նրանց մեջ Մեթրոդորոս Սկեպսացին և Հիպսիկրատեսը), պնդում են, սակայն, թե ամազոնուհիները բնակվում են **գարգարների** հետ հարևանությամբ՝ Կովկասյան լեռների այն մասերի հյուսիսային նախալեռներում, որոնք կոչվում են Կեռավնյան»[16]: Այս տեղեկությունը հատկապես կարևոր է այն առումով, որ Ստրաբոնի ժամանակներում գարգարները, որոնց համար հետագայում Մեսրոպ Մաշտոցը գրեր ստեղծեց[17] և որոնք սովորաբար պատմիչների մոտ կոչվում են **աղվանից**, դեռևս գտնվում էին հյուսիսային Կովկասում և մուտք չէին գործել Այսրկովկաս: Մեզ մնում է պարզել **Կերավնյան լեռների** տեղադրությունը:

Ոչ միայն ամասեցի աշխարհագետը, այլև Կլավդիոս Պտղոմեոսը և հայկական «Աշխարհացոյց»-ը Մեծ Հայքի թագավորության և Ալբանիայի միջև սահմանագիծ են ցույց տալիս **Կուր** գետը: Ստրաբոնը, օրինակ, այդ կապակցությամբ գրում է. «Արաքսենեի դաշտը, որով Արաքս գետն է հոսում մինչև Ալբանիայի ծայրը և թափվում է Կասպից ծովը, և նրա հետ Սակասենեն (իմա՛ Շակաշենը- Բ.Հ.) սահմանակից Ալբանիային և Կուր գետին, հետո Գոգարենեն (իմա՛ Գուգարքը- Բ.Հ.): Շակաշենը, որ դուրս էր գալիս Ալբանիայի սահմանը և Կուր գետ»[18], Հայոց թագավորության մաս էր կազմում, հետևաբար՝ Կուրը ծառայում էր որպես բնական սահմանագիծ Ալբանիայի և Մեծ Հայքի թագավորությունների միջև:

Եթե բերված տեղեկությունների լույսով մատուցենք Ալբանիայի սահմանները, ապա դրանք ներկայացնում են ներքոհիշյալ պատկերը: Հյուսիս-արևմուտքում

13 **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, էջ 95:
14 **Strabo,** XI, IV,1.
15 Անդ XI, III, 5:
16 Անդ, XI, V, 1:
17 Տե՛ս **Մովսես Խորենացի,** Պատմութիւն Հայոց, Տփղիս,1913, գիրք Բ, գլ. ՕԴ:
18 **Strabo,** XI, XIV,4 .

**Ալբանիայի** սահմանն անցել է **Կովկասյան լեռներով** մինչև վերջիններիս մաս կազմող **Կերավնյան լեռները**, հյուսիս-արևելքում՝ **Կերավնյան լեռներով**, որոնք ձգվում էին **Սամուր** և **Սուլակ** գետերի ջրբաժանից մինչև **Դերբենդի** հյուսիսակողմը: Արևելքում Ալբանիան տարածվում էր մինչև **Վրկանից** կամ **Կասպից ծովը**՝ հյուսիսում սահման ունենալով Դերբենդի հյուսիսակողմը, իսկ հարավում ՝ **Կուր գետի գետաբերանը**: Հարավային կամ Մեծ Հայքի թագավորության հետ սահմանն անցնում էր ամբողջ երկարությամբ **Կուր գետով**, իսկ արևմուտքում՝ **Իբերիայով**, որը, սակայն, մինչև վերջ հստակեցնելը հնարավոր չէ ստույգ տեղեկությունների բացակայության պատճառով: Ստրաբոնի օրերում **Քամբեճանի** հարավը պատկանել է Մեծ Հայքի թագավորությանը, հյուսիս-արևմտյան մասը՝ **Իբերիային**, իսկ հյուսիս-արևելյան մասը՝ Ալբանիային: Սահմանի մնացած մասը անորոշ է, և ստորև այն կփորձենք ճշգրտել Պլինիոս Ավագի, Կլավդիոս Պտղոմեոսի և Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ի հաղորդումներով:

## 2. Թագավորության նկարագրությունն ըստ Պլինիոս Ավագի, Կլավդիոս Պտղոմեոսի և Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ի

Պլինիոս Ավագը հետևյալ կերպ է նկարագրում Ալբանիան. «Կյուրոսից այն կողմ գտնվող ամբողջ հարթավայրը զբաղեցնում է ալբանների ցեղը, հետո՝ Հիբերների, որը բաժանված է նրանցից Կովկասյան լեռներից Կյուրոսի մեջ թափվող Ալազոն գետով: Ալբանիայի կարևոր քաղաքներից են Կաբալական, իսկ Հիբերիայում՝ գետի վրա տեղադրված Հերմաստոսը և Նեորիսը: Այսպիսով, բնակեցված են և՛ հարթավայրերը, և՛ սարալանջերը: Վերադառնալով Ալբանիային՝ նրան սահմանակից լեռների ողջ երկայնքով ապրում են Սիլվերի վայրի ցեղերը, ներքևում՝ Լուպենները, այնուհետև՝ Դիդուրները և Սոդերը»[19]:

Այնուհետև պարզվում է, որ, «Մուտքի աջ կողմից. բերանի հենց սկզբում բնակվում է սկյութական ուղիներ ժողովուրդը, հետո ափի երկայնքով՝ ալբանները, որոնք, ասում են, ծագում են Յասոնից, այդ պատճառով այդ հատվածը կոչվում է Ալբանական ծով:

Այս ցեղն, անցնելով Կովկասյան լեռները, իջնում է մինչև Կյուրոս գետը, որն, ինչպես արդեն ասվել է, սահման է կազմում Հայաստանի և Հիբերիայի միջև: Նրա (Ալբանիայի) ծովամերձ շրջաններից և ուղիների ցեղերից վերև տարածվում են սարմատները, ուտիդորսները, արոտերները, որոնց թիկունքում արդեն նշված ամազոնուհիներն են և սավրոմատիդները: Ալբանիայի տարածքով դեպի ծովն են հոսում Կասսոս (իմա՛ Կասիոս- Բ.Հ.) և Ալբանոս գետերը, այնուհետև Կովկասյան լեռներում սկիզբ առնող Կամբյուսեսը և, ինչպես արդեն ասել ենք, Կորաքսյան լեռներում սկիզբ առնող Կյուրոսը (իմա՛ Կուր գետը-Բ.Հ.): Ագրիպպան հաղորդում է, որ Կասսոսից սկսած 425 մղոն երկայնքով ամբողջ ափն անմատչելի է չափազանց բարձր ժայռերի պատճառով, Կյուրոսից սկսած ծովը կոչվում է Կասպից ծով, այստեղ բնակվում են կասպերը:

Այստեղ պետք է ուղղել այն սխալը, որ գործում են շատերը, նույնիսկ նրանք, ովքեր մասնակցել են վերջերս Հայաստանում մղած Կորբուլոնի պատերազմին:

19 **Plinii Secundi C.**, Naturalis historiae, vol. 1-10, Cambridge, Mass., London, 1950-1962 (Loeb Classical Library), VI, 11.29.

Քանի որ նրանք Կասպիական են անվանում Հիբերիայի դռները, որոնք, ինչպես ասացինք, կոչվում են Կովկասյան, և գծագրված և այդտեղից ուղարկված այդ շրջանների [քարտեզների] վրա գրված է այդ անվանումը: Եւ ասում են, որ Ներոն կայսեր արշավանքը վերաբերում էր Կասպից դռներին, այնինչ այն ուղղված էր այն դռներին, որոնք Հիբերիայի միջով անցնում են դեպի Սարմատիա, քանի որ Կասպից ծովին մոտենալու հազիվ թե ուրիշ ճանապարհ կա առջևում հառնող լեռների միջով: Կան թերևս Կասպյան ցեղերը միացնող այլ [դռներ], որոնք չի կարելի տարբերակել [ առաջիններից] ոչ այլ կերպ, բայց եթե Ալեքսանդր Մեծի արշավանքների ուղեկիցների [հաղորդումներով]»[20]:

Դժվար չէ տեսնել, որ Պլինիոս Ավագի տեղեկությունները շատ բան չեն ավելացնում Ստրաբոնի հաղորդումներին: Կրկին արձանագրվում է Իբերիայի և Ալբանիայի սահմանակցությունը արևմուտքում, հիշվում են հայկական աղբյուրների **ճիղբերը՝ սիլվեր** անունով, **լփինները՝ լուպենիեր** գրությամբ, հետո **դիդուրները** և **սոդերը**: Հեղինակը սխալմամբ **ուդիններին** համարում է սկյութական ժողովուրդ և նրանց չի վերագրում այսպես կոչված ալբանական էթնիկ խմբին: Այլ խոսքով, **ուդինները** դեռ գտնվում էին **Հյուսիսային Կովկասում** և միայն **ալանների** ճնշման տակ՝ մ.թ. I դարի 70-ական թվականներին, պետք է մուտք գործեին **Այսրկովկաս**: Պլինիոս Ավագը հիշատակում է **Կասսոս** և **Ալբանոս** գետերը, որոնց մենք կանդրադառնանք Կլավդիոս Պտղոմեոսի հաղորդումների կապակցությամբ: Հիշատակվում է Կովկասյան լեռներից սկիզբ առնող **Կամբյուսեսը**, որը հավանաբար հնչել է **Քամբեճ** ձևով՝ ծնունդ տալով **Քամբեճան** գավառանվանը:

Պլինիոս Ավագը սխալի մեջ է մեղադրում բոլոր նրանց, ովքեր **Կովկասյան դռները** կամ մի փոքր ուշ ժամանակների՝ **Ալանաց դրունքը** կոչում են **Կասպիական դռներ**: Սակայն իրականում սխալվում է լատին հեղինակը, քանի որ **Կովկասյան դռները** իրոք կոչվել են նաև **Կասպիական** (Կասպիոն) կամ **Կասպից դրունք,** և դրա վառ ապացույցն է այն իրողությունը, որ **կասպերի** մի մասը ներխուժել է **Վիրք** կամ **Իբերիա** և հիմնել է **Կասպի** քաղաքը:

Ալբանիայի թագավորության մասին հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ է պահպանել ալեքսանդրացի հույն մեծ աշխարհագրագետ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ը: Վերջինս, անդրադառնալով Ալբանական թագավորությանը, նշում է հետևյալը. «Ալբանիան սահմանափակվում է հյուսիսից, Սարմատիայի նկարագրած մասով, արևմուտքից՝ Իբերիայով նշված գծով, հարավից՝ Մեծ Հայքի մի մասով, որը ձգվում է Իբերիայի սահմաններից մինչև Հյուրկանյան (իմա՛ Վրկանից- Ր. Հ.) ծով և Կուր գետի գետաբերանը, որ գտնվում է 79º 40′-44 º 30′-ի տակ, արևելքից՝ Հյուրկանյան ծովի մի մասով, որը տարածվում է այդտեղից մինչև Սոանաս գետը հետևյալ նկարագրությամբ»[21]:

Նկարագրությունը միանգամայն ընկալելի է, սակայն խնդրական է մնում այն հարցը, թե **Սոանասը** ներկայիս ո՞ր գետին է նույնանում: **Սոանասից** դեպի արևմուտք հիշատակվում է **Գերրոս** գետը, այնուհետև՝ **Կասիոսը** և **Ալբանոսը**, որոնք, ինչպես վերը տեսանք, հանդիպում են Պլինիոս Ավագի Ալբանիայի նկարագրության մեջ, սակայն որոնց տեղադրությունները նույնպես հստակ չեն: Ըստ աշխարհագրագետի նշանակած կոորդինատների՝ **Սոանասը** գտնվում է 86º-47º-ի

20 Անդ, VI,15. 38, 39, 40:

21 Claudii Ptolemaei Geographia, e codicibus recognovit,prolegomenis annotatione indicibus, tabulis, instruxit Carolus MƁllerus. Vol. primi, pars II, Parisiis,1901, գիրք V, գլ. 11.7.

տակ, որից արևմուտք **Տելեբա** քաղաքն է 85º- 46º40′-ի տակ, այնուհետև **Գերրոսի** գետաբերանը 84º30′-46º30′-ի տակ, հետո **Ալբանա** վայրը 81º40′-45º50′-ի տակ և **Ալբանա** գետի գետաբերանը 80º 30′- 45º-30′-ի տակ: Հետո հիշատակվում է **Գանգարա** (համաձայն այլ տարընթերցման՝ Gaitara - Բ.Հ.) բնակավայրը 79º 40′-44º 30′-ի տակ[22]: Տեղադրության առումով կարևոր է նաև այն տեղեկությունը, որ **Ալբանից դրունքը** գտնվել է 80º-42º-ի ներքո[23]:

Արդ, ի՞նչ եզրակացությունների կարելի է գալ հիշյալ տեղեկությունների հիման վրա: Նախ և առաջ, կամենում ենք, թե ոչ, պետք է ընդունենք, որ այսպես կոչված Ալբանիայի մի մասը գտնվել է Ալբանական դրունքից հյուսիս, ինչը մեր առջև դնում է մի շարք տեղագրական խնդիրներ:

Քննության շահեկանությունից ելնելով՝ հարկ ենք համարում մեջբերումներ կատարել նաև Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ի ընդարձակ և համառոտ խմբագրություններից և Մովսես Կաղանկատվացու աշխատությունից: Այսպես, ընդարձակ խմբագրության մեջ ասված է. «ԻԱ. Աշխարհ Աղբանիա, այսինքն Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով. մինչեւ ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով. թէպէտ եւ աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց: Բայց մենք ասասցուք զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն»[24]:

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության տվյալներն ավելի համեստ են. «Քսան և վեցերորդ Աղբանիա է, այսինքն Աղուանք, յելից կալով Վրաց առ երի Սարմատիոյ առ Կաւկասաւ մինչև ի Կասբից ծովն եւ ցՀայոց սահմանն առ Կուր գետով: Եվ ունի Աղուանք դաշտս արգավանդս, եւ գետս բազումս եւ եղեգունս հզաւրս եւ քաղաքս, եւ բերդս եւ գեղաքաղաքս»[25]:

Հայոց Արևելից կողմերի պատմիչ Մովսես Կաղանկատվացին հետևյալ խոսքերով է ներկայացնում Աղվանքը, որը նրա մոտ Առանի կամ Ռանի մարզպանությունն է. «Բարեվայելուչ և ցանկալի է աշխարհն Աղուանից ամենագիւտ շահիւք և բարձրաբերձ կոհակօք Կաւկասայ: Եւ գետն մեծ Կուր հեզասահ գնացիւք բերելով յինքեան ձկունս մեծամեծս և մանունս՝ ճեմելով գայ անցանէ անկանի ի ծովն Կասպից. եւ որ շուրջ զնովաւ են դաշտք, գտանի ի նոսա հաց և գինի շատ, նաւթ և աղ, ապրեշում և բամբակ, անբաւ ձիթենիք: Եւ հատանի ի լերանցն ոսկի, արծաթ, պղինձ և դեղնախունկ: Եւ որ ինչ վայրենիք՝ առիւծ, ինձ, յովազ, ցիռ: Եւ ի թռչնոց յոլովից՝ արծուիք և բազէք և նմանք նոցին: Եւ մայրաքաղաք ունի զմեծն Պարտաւ»[26]:

Կլավդիոս Պտղոմեոսի և «Աշխարհացոյց»-ի տվյալներին մենք դեռ կանդրադառնանք, իսկ ինչ վերաբերում է Մովսես Կաղանկատվացու հաղորդմանը, ապա նշենք, որ կարելի է սոսկ ենթադրել, որ **Կովկասյան լեռները** գտնվում են Ալբանիայի հյուսիսային սահմանագլխին, որ **Կուրը** դանդաղ հոսում է Առանի մարզպանության տարածքով և թափվում է Կասպից ծովը, որ մարզպանության կենտրոնն է **Պարտավ** քաղաքը և Աղվանից մարզպանությունը հարուստ երկրամաս է:

Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» և Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրությունը, որի որոշ տվյալներ դեռ կներգրավենք մեր

22 Անդ, գիրք V, գլ. 11.2:
23 Անդ, գիրք V, գլ. 11.5:
24 «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 28-29:
25 Պրոֆ., դր. **Ա.Գ.Աբրահամյան,** Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 348:
26 **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 9:

քննության մեջ, բերում է հետաքրքիր և անգամ անսպասելի եզրակացությունների: Ալբանիայի արևմուտքում՝ Իբերիայի սահմաններից դեպի արևելք, հիշվում է մի **Անաևուև** գետ, որը, դատելով ամեն ինչից, պետք է համապատասխաներ Ստրաբոնի հիշատակած **Ալազոնիոսին** կամ ներկայիս **Ալազանին**, քանի որ դա միակ գետն է, որ ըստ ալեքսանդրացի աշխարհագրագետի՝ հոսում է **Կովկասից** և թափվում **Կուրի** մեջ: Սակայն նման եզրակացությունը, այնուամենայնիվ, աշխարհագրագետի մյուս տվյալներում հիմնավորում չի գտնում:

Խնդիրն այն է, որ Պտղոմեոսը **Իբերիայի** և **Անաևուև** գետի միջև տեղադրում է Niga-ն, որը պահպանվել է մինչև մեր օրերը և կոչվում է **Նիժ**: Բոլորովին նպատակ չունենալով անդրադառնալու աշխարհագրագետի հիշատակած բոլոր բնակավայրերի տեղադրությանը, որը մեծ ծավալի աշխատանք է և չի մտնում սույն ուսումնասիրության շրջանակների մեջ, լոկ նշենք, որ Պտղոմեոսի հիշատակած Sanua-ն թերևս կարելի է տեղադրել «Աշխարհացոյց»-ում[27] հիշատակված **Սանի** գետի ավազանում, որի տեղադրությանը ստորև կանդրադառնանք:

Հնարավոր եզրակացությունը, թե ո՞րն է **Կուրի Անաևուև վտակը**, այն է, որ վերջինս նույնանում է **Գյոք-չայ** գետին, որը, ինչպես տեսանք, համապատասխանել է Ստրաբոնի հիշատակած **Ռոստակեսին** կամ, որ ավելի հավանական է՝ **Ռոստակեսին**: Ուշադրություն է գրավում մի իրողություն ևս: Հիշյալ տարածքում պետք է, կարծես թե, հիշատակվեր Ալբանիայի մայրաքաղաք **Կապաղակ**-Cabalaca-ն, սակայն զարմանալիորեն այդ անունը նշված հատվածում բացակայում է[28]: Պտղոմեոսի տեքստի քննությունը բացահայտում է, որ հիշյալ տարածքից ավելի արևելք մեծ աշխարհագրագետը տեղադրել է Chabala քաղաքը, որը, առավել քան հավանական է, որ համապատասխանում է **Կապաղակ**-Cabalaca-ին և զուտ թյուրիմացաբար է հայտնվել ոչ իր տեղում, եթե, իհարկե, բոլորովին այլ բնակավայր չէ:

Կլավդիոս Պտղոմեոսը **Անաևուև գետից** հետո հիշատակում է Albana գետը[29], որը թափվում է **Կասպից ծովը**: Զուտ տեսականորեն կարելի է կարծել, որ **Ալբանան** պետք է համապատասխանի աշխարհացույցյան **Աղուան** գետին, սակայն վերջինս նույնանում է **Ալազանին**, իսկ պտղոմեոսյան Albana-ն, ամեն ինչից դատելով, նույնական է ներկա **Փիրսահաթ** գետին, որն այսօր անգամ **Կասպից ծով** չի հասնում: Զարմանալի է մի ուրիշ իրողություն ևս: Ինչո՞ւ պետք է գետը և քաղաքներից մեկը կոչվեին **Ալբանա**, երբ երկիրը **Ալբանիա** են կոչել հայերը և հայերի միջնորդությամբ հունահռոմեական աշխարհը, իսկ իրենք՝ երկրի բնակիչները, այն երբեք **Ալբանիա** չեն կոչել:

Որ Albana-ն, անկախ բոլոր խնդրահարույց հանգամանքներից, նույնանում է **Փիրսահաթ** գետին, գալիս է հաստատելու **Կուրի Անաևուև վտակի** և **Ալբանայի** միջև հիշատակվող Camechia-ն[30]: Թռուցիկ ծանոթությունն անգամ հուշում է, որ այն Շամախին է, որը, անտարակույս, ալեքսանդրացի աշխարհագրագետի մոտ, մեզ անհայտ ինչ-ինչ պատճառներով, վերածվել է Camechia-ի կամ էլ անվան աղավաղումը տեղի է ունեցել Պտղոմեոսի «Աշխարհագրության» արտագրու-

---

27 Տե՛ս **«Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ...»,** էջ 29. «... առ որով հոմանուն գավառ՝ առ Սանի գետով»:

28 Տե՛ս Claudii Ptolemaei Geographia, V, 11.4.

29 Անդ:

30 Camechia-ի հնարավոր նույնացումը Samachia- Շամախիին նկատել են В.В. Латышев-ի «Известия древних писателей о Скифии и Кавказе»-ի վերահրատարակիչները: Տե՛ս ВДИ, 1948, N 2, с. 480.

թյունների ժամանակ:

Հետևաբար, որ տվյալ հատվածում խոսքը գնում է **Փիրսահաթ գետի** մասին՝ կասկածից վեր է, սակայն առավել քան հավանական է, որ Պտղոմեոսի նկարագրության մեջ ինչ-որ բան խառնված է: Այն իրողությունը, որ հայկական «Աշխարհացոյց»-ը **Իբերիայի** սահմանում հիշատակում է **Աղուան**, այսինքն՝ **Ալբան** գետը, հստակ ցույց է տալիս, որ անգամ հայերի կողմից **Աղուան** կոչված գետը նույնանում է **Ալազանին** և դուրս է մնացել Պտղոմեոսի տեսադաշտից, իսկ պտղոմեոսյան Albana-ն, իրականում, մեկ այլ գետանվան կամ անգամ երկրամասի անվանման աղավաղումն է:

Մեր կարծիքով, պտղոմեոսյան Albana-ն աղավաղումն է **Լփինք** կամ **Լբինք** տեղանվան: Իսկ որ նման եզրակացությունը միակ հնարավորն է, հավաստում է Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ը, քանի որ այսպես կոչված Ալբանիայի կամ Աղվանքի աշխարհագրությունը հայերն ավելի լավ գիտեին, քան ալեքսանդրացի մեծ աշխարհագրագետը: Մեր կարծիքով, գետը կոչվել է **Լփնաց** կամ **Լբնաց** գետ, որը Albania երկրանվան ազդեցությամբ հույների կողմից վերածվել է [A]lb[a]na-ի : Նույն ձևով **Լփնաց քաղաքը** վերածվել է Albana-ի:

Albana գետից դեպի արևելք գտնվել է **Կասիոս** գետը կամ Պլինիոս Ավագի հիշատակած **Կասսոսը**, որը, մեր համոզմամբ, նույնանում է **Սումգայիթ** գետին: Albana կամ **Լփնաց գետի** հյուսիսային ջրբաժանի շրջանում էլ գտնվել է **Ալբանական** կամ **Ալբանից դրունք** լեռնանցքը, որը համապատասխանում է Եղիշեի հիշատակած **Պահ դռանը**[31]:

Հասկանալի է, որ նման տեղադրություններից ելնելով, **Գերրոս** գետը պետք է նույնանա կամ **Սամուրին,** կամ էլ մինչև այն Կասպից ծով թափվող գետերից մեկին: Համենայն դեպս, ելակետ ունենալով նախորդ գետերի իրարից մոտավոր հեռավորությունները, առավել հավանական է, որ այն համապատասխանել է ներկայիս **Կուդիալ-չայ** գետին, որի ափին ներկայումս գտնվում են **Ղուբա** և **Խաչմաս** քաղաքները: Չի բացառվում, որ մերձակա տեղանքում հիշատակված Chabota բնակավայրից էլ ծագած լինի **Ղուբա** քաղաքի անունը: Սակայն այդ դեպքում պետք է ընդունենք, որ Պտղոմեոսը կրկին սխալվել է տեղադրության խնդրում: Իսկ եթե նման նույնացումը հնարավոր չէ, ապա ներկա **Ղուբա** և **Խաչմաս** քաղաքները կարող են համապատասխանել Thiauna-ին և Thabilaca-ին: Համենայն դեպս, ոչ մի դեպքում չի կարելի Thiauna-ն նույնացնել **Թիոնեթի** հետ:

**Գերրոսի** նման տեղադրության դեպքում **Սոանասը** անվերապահորեն պետք է համապատասխանի **Սամուրին**: Նման տեղադրության դեպքում պտղոմեոսյան Thilibis-ը կարող է նույնանալ հետագա **Ճորա** կամ **Չողա** քաղաքին:

*Ալբանիայի վերաբերյալ պտղոմեոսյան նկարագրության քննությունն ամբողջացնելու համար հարկ ենք համարում անդրադառնալ կովկասագետ Սերգեյ Մուրավյովի «Птолемеева карта Кавказской Албании и уровень Каспия» հոդվածում արծարծված որոշ խնդիրների*[32]*:*

*Հեղինակը պատմաաշխարհագրական քննության միջոցով փորձում է ցույց տալ, որ Կասպից ծովի մակարդակը Պտղոմեոսի օրերում շատ ավելի բարձր է եղել, և **Կասպից ծովը** հասել է մինչև ներկայիս **Եվլախի** մերձակայքը*[33]*: Դրա հետևանքով*

31 Տե՛ս **Եղիշե,** Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1957, էջ 9, 19:

32 **Տե՛ս С.Н. Муравьев,** Птолемеева карта Кавказской Албании и уровень Каспия, տե՛ս ВДИ, 1983, N 1, с. 117-147.

33 Անդ, էջ 134-135: Տե՛ս հեղինակի կազմած քարտեզները:

*Կուրի շատ վտակներ պարզապես վերածվել են ամիջապես Կասպից ծովը թափվող գետերի: Անտարակույս, հարցադրումը հետաքրքիր է, սակայն դժբախտաբար այն ունի խոցելի կողմեր: Չմոռանանք, որ Ալբանիայի պտղոմեոսյան նկարագրության բաժնում, որը կազմում է Ասիայի երրորդ քարտեզի մի մասը, Մեծ Հայքի նկարագրության մեջ ցույց է տրված, որ **Երասխ-Արաքսը** մի բազուկով թափվում է **Կուրի** և մյուսով՝ **Կասպից ծովի** մեջ[34]: Եթե ճիշտ է Ս. Մուրավյովը, թե **Կասպից ծովը** հասել է մինչև **Եվլախի** մերձակայքը, ապա նա պետք է իմանա, որ այդ դեպքում պարզապես բացառվում է **Երասխ-Արաքսի** թափվելը **Կուրի** մեջ և միաժամանակ՝ **Կասպից ծովի** մեջ: Հետևաբար՝ Կասպից ծովի մակարդակը քննության առնել միայն Կովկասյան Ալբանիայի նկարագրությամբ և վերջինիս մեջ հիշատակված տեղանունների կամայական սրբագրումներով, բոլորովին էլ հիմնավոր չէ: Փորձենք անդրադառնալ հեղինակի մի քանի սրբագրումներին:*

***Քակխիան** նա հակված է համարելու ավելի շուտ Bakria և փորձում է նույնացնել **Քակուրցիխեին** կամ էլ **Քակիրին՝ Սղնախի** մոտակայքում: **Սանուան** նա սրբագրում է **Սանորա** և նույնացնում **Ցնորիի** (իմա՛ Ցնորի- Ք.Հ.) հետ (կրկին՝ Սղնախի մերձակայքում): Դեզլանեն, ըստ նրա, Ջիգաանեն է՝ նույնական **Ջուգաանիին** (Ցնորից՝ հարավ-արևելք): Չնայած **Նիժի** գոյությանը՝ հեղինակը **Նիգան** սրբագրում է **Նագա** և նույնացնում **Անագային**: Այս շարքը կարելի է շարունակել, սակայն դրա անհրաժեշտությունը բոլորովին չկա: Միայն հիշենք **Տագոդայի** սրբագրումը **Լագոդայի** և վերջինիս նույնացումը **Լագոդեխիի**: Մի՞թե հեղինակին թվում է, թե ուզած տառը ուզած փոփոխությունների կարող է ենթարկվել արտագրությունների ժամանակ: Եթե Ταγοδά է ապա Τ-ն կարող է շփոթվել Γ-ի և Ι–ի և հետո, բայց ոչ վերածվել Λαγοδά–ի: Վերջինիս հնարավորության մասին կարելի էր խոսել, եթե տեքստում լիներ Δαγοδά[35]: Այս հարցը, ինչպես տեսնում ենք, տարողունակ է և առանձին քննություն է պահանջում: Դրան մենք, ամենայն հավանականությամբ, կանդրադառնանք մեր առաջիկա հետազոտություններից մեկում: Այժմ լոկ նշենք մի իրողություն, որը մի քիչ էլ տարօրինակ է թվացել հեղինակին: Ալբանիայի արևմտյան հատվածը, որն ընկած էր **Իբերիայի** և **Կուրի Անանուն վտակի** միջև, Պտղոմեոսի նկարագրության մեջ հանդես է գալիս փոքրաթիվ բնակավայրերով: Սա մենք կապում ենք **Մասագետական** կամ **Մազքթական** ներխուժման հետ, որը նախորդել է Ալբանիայի պտղոմեոսյան նկարագրությանը: Պետության կենտրոնը տեղափոխվել է արևելք և հենց արևելյան հատվածում են հիշվում առավել մեծ թվով բնակավայրերը: **Գարգարացիները, ուդիները** և կովկասալեզու մյուս ցեղերը իրանական **Մազքթաց** ցեղերի կողմից քշվել են արևմուտք, և Ալբանիայի արևելյան մեծ հատվածը զբաղեցրել են **մազքութները**:*

*Եվ վերջապես՝ մի խնդիր ևս, որ, կարծում ենք, դուրս է մնացել հեղինակի տեսադաշտից: Մի՞թե Ս. Մուրավյովին թվում է, թե Սուրաբոնից հետո, մինչև Կլավդիոս Պտղոմեոսն ընկած ոչ մեծ ժամանակահատվածում, Կասպից ծովը հասցրել է այնքան բարձրանալ, որ ծածկել է **Կուր-Արաքսյան դաշտավայրը**՝ մինչև **Եվլախ** ընկած հատվածում: Սուրաբոնը (65 թ. մ.թ.ա. - 21թ. մ. թ.) ապրել է Կլավդիոս Պտղոմեոսից (90-168) շուրջ մեկ ու կես դար առաջ, և ստացվում է , որ այդ ընթացքում Կասպից ծովը հասցրել է բարձրանալ 2,5 տասնյակ մետրով և գրեթե հավասարվել համաշխարհային օվկիանոսի մակարդակին: Ընդունենք, որ դա հնարավոր է՝ իր ամբողջ անկարելիությամբ հանդերձ, սակայն միաժամանակ մենք բախվում ենք մեկ այլ լուրջ դժվարության*

34 Տե՛ս **Claudii Ptolemaei** Geographia, V,գլ.11.17.
35 Տես **С.Н. Муравьев,** Птолемиева карта…, с. 132-135.

*հետ, որը, գոնե մեր կարծիքով, գործնականում անլուծելի է: Պլինիոս Ավագը (23-79), որ ծնվել է Սյուրաբոնի մահվանից ընդամենը երկու տարի անց, իր «Բնապատմության» մեջ հստակ հիշատակում է **Ալբանա** և **Կասսոս** (իմա՛ **Կասիոս**- Ք.Հ.) գետերը, որոնք հանդիպում են Պտղոմեոսի նկարագրության մեջ և գրնվում են **Գերրոս** և **Սոանաս** գետերից արևմուտք: Եթե **Ալբանան** և **Կասսոսը** թափվում են անմիջականորեն Կասպից ծով, ապա ստացվում է, որ արդեն գոնե մ.թ. 79 թվականին, այսինքն՝ Սյուրաբոնի մահվանից ընդամենը 58 տարի հետո **Կասպից ծովը** հասցրել էր տարածվել մինչև **Եվլախ** և հավասարվել կամ գրեթե հավասարվել համաշխարհային օվկիանոսի մակարդակին: Իհարկե, ո՛չ և ո՛չ: Այսօր, երբ մեր աչքերի առաջ Կասպից ծովը սկսել է բարձրանալ, մի քանի տասնյակ տարիների ընթացքում այն հասցրել է ծածկել միայն ու միայն անհնչան տարածքներ:*

## 3. Այսպես կոչված Աղվանքի գավառաբաժանման նախկին փորձերը

Այժմ անցնենք գավառաբաժանման խնդրին: Ալբանիայի կամ Աղվանքի գավառների մասին «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ ասված է. «… Նախ առ Վրօք: Եխնի գաւառ առ Աղուան գետովն, եւ Քամբէճան առ Կուրաւ. են ըստ հարաւոյ նորա բերդն Վարազմանավառ, հանդերձ Կուղրաք գեղաքաղաքաւ, եւ վայրքն անապատ միչև ցԿուր գետ. յորոց յելից կողմանէ Գւգաւ քաղաք առ Աղուան գետով, եւ Բիխ գաւառ առ Կաւկասաւ, եւ ելից նորա[36], Շաքէ և Դէգառու գետ. առ որով հոմանուն գաւառ՝ առ Սանի գետով: Այս ամենայն հոսին ի Կովկասայ և խառնեալ ի յԱղուան գետ՝ անկանին ի Կուր գետ, իսկ ի յելից կուսէ Քաւաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէբոջ դեպի հարաւոյ ըստ Փոքր (?) Հայոց»[37]:

Քննությունը միանգամից համակողմանիորեն կատարելու համար հարկ ենք համարում մեջ բերել նաև պրոֆ. Աշ. Աբրահամյանի կողմից հրատարակված Երևանի Մատենադարանի թիվ 582 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության հաղորդումը Առանի կամ Աղվանքի մարզպանության Կուրի ձախափնյակում գտնվող գավառների վերաբերյալ. «… Եւ գաւառք են այսոքիկ. Եխնի, Բեխ, Քամբէճան, Հողմազ, Շաքէ, Դեգառու, Ոստան, Հաբանդ, Իմարծ, Պանան, Քաղաց դաշտ, Իրազկան. եւ այլ գաւառք, զոր ի[38] Հայոց հանեալ է: Շակաշէն, Գարդման…»[39]:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը, դժբախտաբար, պահպանվել է ընդամենը մեկ օրինակով, ուստի տարընթերցումներ, բնականաբար, չկան: Սակայն համառոտ խմբագրության ձեռագրական քննությունը ցույց է տալիս, որ այսպես կոչված բուն Աղվանքի գավառների անվանումներն ունեն հետևյալ տարընթերցումները.

| | |
|---|---|
| Եխնի, Եխնիք, Նիբախ, Խենի | **Եխնի** |
| Բեխ, Բիխ, Բիղ, Նի(բուխ) | **Բեխ,Բեղ** |
| Քամբեճան, Քամբէճան | **Քամբէճան** |
| Հողմազ, Հողմաղ, Խողմախ, Խողմազ | **Հողմաղ** |

36 Ձեռագրում իրականում գրված է «Յելիհ Շաքէ»:
37 «Աշխարհացոյց **Մովսեսի Խորենացւոյ**…», էջ 29:
38 Առանի մարզպանությանը կցված հայկական գավառներին չենք անդրադառնում:
39 **Ա.Գ. Աբրահամյան,** Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 348:

| | |
|---|---|
| Շաքէ, Շաքի | **Շաքէ** |
| Գեգաւու, Դեգաւու,Դեռաւր, Դեգաւուղէ, Դեգաւուզէ, Դէռօռ, Գէռօռ, Գէգաւու | **Գէգաու , Դէգաւու** |
| Ոստան Խաբանդ (Հաբանդ, Համբասի, Համբաղի, Համբանդ, Հաբանք, Խամբանդ) | **Հաբանդ** |
| ի Մարծպանաւ (Ի Մարծ, Պանան, Մարծպան, Մարզպանաւ, Մարճպանաւ) | **ի Մարծպանաւ** |
| Քաղաց, Քաղա, Քաղաղաշտ | **Քաղա (դաշտ)** |
| Քաղա (դաշտ), Քաղաց դաշտ | **Քաղաց (դաշտ)** |
| Դաշտ-ի-Բաղասական (Բաղական, Բէլական, Բալասական, Բելական, այ Բաղականք, Պալասական) | **Դաշտ-ի-Բաղասական**[40]: |

Կուրի ձախափնյակի գավառների մասին հետաքրքիր հաղորդում է պահպանել Ղևոնդ պատմիչը: Խոսելով Ռամթարխան զորավարի դեպի Այսրկովկաս կատարած արշավանքի մասին, նա գրում է. «Որոյ սփռեալ զասպատակս իւրեանց ըստ հիւսիսոյ գետոյն հզօրագունի որ կոչի Կուր առնուին բազում գավառս, զՀէջար, զՔաղա, զՈստանի, զՄարծպանեաց, զՀաբանդ, զԳեղաւու, զՇաքէ, զԲեխ, զԽենի, զԿամբեխճան, զԽողմաջ: Այս գաւառք աշխարհին Աղուանից: Առին և զցանկալի դաշտն Բաղասական, յորում անթիւ բազմութիւն հոտից եւ նախիրք անդէոց բազմաց, զորս առին յաւարի... Եւ հաւաքեալ զբազմութիւն գերեստանեացն և աւար բազում՝ դարձան ի բնակութիւնս իւրեանց»[41]: Ավելացնենք միայն, որ Ղևոնդի «Պատմութեան» ձեռագրերում հանդիպում են լոկ մի քանի տարընթերցումներ՝ զՈստան Մարզպանեաց, Ոստանի Մարզպանեաց, զԽողմաջ[42], որոնք գործնականում ոչինչ չեն տալիս մեր քննությանը:

Այսպիսով՝ մենք հարազատորեն տվեցինք բոլոր տարընթերցումները և փորձեցինք ի մի բերել ավանդական անվանումները, որոնք, սակայն, մեր կողմից վերջնական տեսքի կբերվեն միայն քննության ավարտից հետո:

Հարկ է նշել, որ «Աշխարհացոյց»-ի Աղուանքին վերաբերող հատվածը որոշ սրբագրությունների է ենթարկել ակադ. Ս. Երեմյանը: Ավելորդ չենք համարում նշված հատվածը մեջբերել Ս. Երեմյանի սրբագրություններով՝ բացառությամբ Առանի մարզպանության մեջ մտցված Արցախի և Ուտիքի գավառների.

«Յաղագս Աղուանից»

Աշխարհ Աղբանիա, այսինքն՝ Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմարիոյ առ Կաւկասաւ մինչև [ի Կասպից ծովն եւ] ցՀայոց սահմանն, առ Կուր գետով, թէպէտ եւ աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց: Բայց մեք ասասցուք զբուն աշխարհն Աղուանից, որ ընդ մէջս է մեծի գետոյն Կուրայ եւ Կովկաս լերինն:

Նախ առ Վրօք՝ Եղնի (Խենի) գաւառ առ Աղուան գետովն եւ Կամբեճան առ Իւրաւ. եւ ըստ հիսիսոյ նորա բերդն Վարազմանավառ, հանդերձ Կուղրաք գեղաքաղաքաւ, եւ վայրքն անապատ մինչև ցԿուր գետ. յորոյ յելից կողմանէ Գլուգաւ քաղաք՝ առ Աղուան գետով, եւ Բեղ գաւառ առ Կաւկասաւ, եւ յելից նորա՝ Շաքէ և Գետառու գետ. առ որով հոմանուն գաւառ՝ առ Սանի գետով: Այս ամենայն հոսին ի Կովկասայ, եւ խառնեալ ի յԱղուան գետ՝ անկանին ի Կուր գետ. իսկ ի

---

40 Մեր կողմից օգտագործվել են Երևանի Մատենադարանի թիվ 582, 696, 1267, 1459, 1486, 1717, 1748, 1893, 1898, 2019, 2191, 2231, 3100, 3301, 3502, 3941, 4284 5013, 5120, 7993 ձեռագրերում պահպանված «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունները:

41 «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս.Պետերբուրգ, 1887, էջ 132-133:

42 Անդ, էջ 132:

յելից կուսէ Հողմազ, Գեղաւու, Համբասի (=Հաբանդ?). [Ոստան-ի Մարզպան գաւառ] եւ Կապաղակ [մայրա]քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոց մէջ գետն Սէբոջ, եւ դէպ ի հարաւոյ. [gԿուր գետ] ըստ [որում] Քաղաղաշտ, Դաշտ-ի Բազկան, [որ է Հէջէրի], եւ այլ քսան գաւառս զորս ի Հայոց հանեալ է…»[43]:

Ալբանիայի կամ Աղվանքի գավառների տեղադրության առաջին փորձը կատարել է թերևս Մակար եպիս. Բարխուդարյանցն իր «Աղուանից աշխարհ և դրացիք» աշխատության մեջ: Հեղինակը **Փիր-Սհաք** (իմա՛ **Փիրսահաք**-Ք.Հ.) և **Աղսու** գետակների, դաշտաբերանի և **Կուր** գետի միջև տեղադրում է **Հեջար**, **Համբասի** կամ **Հեճարի** գավառը, որ, ըստ նրա, համապատասխանել է իր ժամանակվա **Ղոշունի գավառին**[44]: Նման տեղադրության համար նա հենվում է Ղևոնդի վերը բերված հաղորդման վրա: Անտարակույս, Ղևոնդ պատմիչի հայտնած տեղեկությունն առավել քան հետաքրքիր է, սակայն, ցավոք, բոլորովին էլ հեշտ ու միանշանակ տեղադրությունների համար հիմք չի կարող ծառայել: Հեղինակը **Կուրի Աղ-սու** և **Կոկիսոն** (ներկայիս **Գյոք-չայ** գետը-Ք.Հ.) վտակների, դաշտաբերանի և **Կուրի** միջև տեղադրում է **Քաղա, Քաղաղաշտ** կամ **Քաղաեատ** և **Շրվան** կոչվող գավառը, ինչը նրա ժամանակներում կոչվում էր **Բարկուշատ**[45]: **Կոկիսոն** կամ **Գյոք-չայ** գետի, **Բոզդաղի** հարավահայաց լանջերի և **Կուրի** միջև տեղադրվում է **Հաբանդ, Հաբանք, Աղբերդ, Աղդաշ** կամ **Արեշ** գավառը, որը, նրա խոսքերով, իր ժամանակներում կոչվում էր **Արաշի գավառ**[46]: **Աղ-սու** և **Սուղայիդ** կամ **Սուքման** գետակների, դաշտաբերանի և **Կովկասյան լեռնաշղթայի** գագաթնագծի հարավահայաց լանջերի միջև նա տեղադրում է **Ոստանի, Ոստան, Հաշու** կամ **Շամախի** գավառը, որը ուշ շրջանում կոչվում էր **Կապրիստանի** գավառ (իմա՛ **Գոբիստան**-Ք.Հ.)[47]: Ըստ հետազոտողի՝ **Աղ-սու** և **Գիրդրման-չայ** (իմա՛ **Գարդման**-Ք.Հ.) գետակների, դաշտաբերանի և **Բաբա-դաղ** լեռնաշղթայի հարավահայաց լանջերին գտնվող գավառը կոչվել է **Մարզպանեան, Մարծպանեան, Գարդման** կամ **Դաւսան**, որը նրա օրերում կոչվել է և՛ **Լահիճ** գավառ, և՛ **Գիրդիման** գավառ[48]: Այս հարցում նա կրկին հենվում է Ղևոնդ պատմիչի տեղեկության վրա և եզրակացնում, թե այդ գավառում էին բնակվում Միհրանյան մեծ իշխանները, որոնք պարսկերեն կոչվում էին մարզպան: Ըստ որում՝ հեղինակը նախապատվություն է տալիս **Մարզպան** գրությանը և մերժում **Մարծպան** ձևը[49]: Այնուհետև նա **Բեխ** գավառը տեղադրում է **Գիրդիման-չայ** և **Կոկիսոն** (**Գյոք-չայ**) գետակների, դաշտաբերանի և **Կովկասյան լեռնաշղթայի** հարավահայաց լանջերի շրջանում: Ըստ հեղինակի՝ **Բեխը** կոչվել է նաև **Բեթ**[50], **Կոկիսոն** ու համապատասխանել է իր ժամանակների **Գյոք-չայ** գավառին[51]: **Կոկիսոն** կամ **Գյոք-չայ** և **Օրաբան** գետակների, **Բոզդաղի** հյուսիսահայաց և Կովկասի հարավահայաց լանջերի միջև, **Ջերգունի դաշտակի** վրա նա տեղադրում է

43 **Ս.Տ.Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 105:
44 Տե՛ս **Մակար եպս. Բարխուդարյանց,** Աղուանից երկիր եւ դրացիք: Տե՛ս «Գանձասար» աստվածաբանական կենտրոն, Եր., 1999, էջ 60:
45 **Անդ:**
46 **Անդ:**
47 **Անդ:**
48 **Անդ, էջ 60-61:**
49 **Անդ, էջ 61:**
50 **Անդ:**
51 **Անդ: Մովսես Կաղանկատուացի,** էջ 90: Քննական բնագրում հեղինակի **Բեթ** անվան փոխարեն գրված է **Բեդ**: Հայոց Արևելից կողմերի պատմիչի աշխատության ձեռագրերում հանդիպում են նաև **Մաթէ, Աղբեդու** տարընթերցումները:

**Գեղաւու, Գեղաուէ** և **Կապաղակ** կոչված գավառը, որն ուշ ժամանակներում կոչվում էր **Ղապալա** (իմա՛ **Ղաբալա, Գաբալա**-Ք.Հ.)[52]: **Օրաբան, Արջկան** և **Կախավան** գետակների, **Կովկասյան լեռնաշղթայի** հարավահայաց լանջերի և **Ջարղունի** (իմա՛ **Ջերգունի**-Ք.Հ.) հարավային դաշտաբերանի միջև հայ մշակույթի երախտավորը տեղադրում է **Շաքէ, Շաքէ Ոստան** կամ **Շաքի** գավառը, որը համապատասխանել է **Նուխիի շրջանին**[53]: **Կախավանի** և **Ջաքաթալայի** արևմտյան կողմի գետակների, **Դարբանդի** պարսպի շարունակության և **Քաղասականի** դաշտաբերանի միջև նա տեղադրում է **Կամբեխճան, Կամբէճան, Կապիճան, Ճար** կամ **Ջար** գավառը, որ նրա օրոք հայտնի էր **Ջաքաթալա** անունով[54]: Հաջորդ՝ **Քաղասական, Քաղասական դաշտ, Ջարո-Քելոկան** անունները կրող գավառը Մ. Բարխուդարյանցը տեղադրում է **Ջարի** սահմանի, պարսպի շարունակության, դաշտաբերանի և **Ալազան** գետի միջև[55], որը հեղինակի օրերում կոչվում էր **Քալաքան** (իմա՛ **Քելական, Քելոկան**-Ք.Հ.): Տասնմեկերորդ գավառը նա տեղորոշում է **Քոզդաղի** հյուսիսային և հարավային շղթաների միջև, **Կոկիսոն (Գյուք-չայ)** գետակից սկսած և մինչև **Արջկան** գետակը ճգվող մի գեղեցիկ դաշտակում, որը կոչվել է **Խաչմաղ, Հողմաղ, Հողի** և **Դաշտակ**: Մ. Բարխուդարյանցի օրերում հիշյալ Դաշտակի միջին մասը կոչվել է **Սարուջա**[56]: Հեղինակի օրերում այն միացված է եղել **Արեշի գավառին**[57]: **Քոզդաղի** վրա, **Արջկան** և **Ալազան** գետակների, **Ջարղունի դաշտակի** (իմա՛ **Ջերգունի դաշտակ**-Ք.Հ.) և **Աղուանից դաշտաբերանի** միջև նա տեղադրում է **Խենի** գավառը[58]:

Անկեղծ ասած, հակառակ այն բանին, որ Մակար Բարխուդարյանցը ոտքով անճամբ շրջել է նշված վայրերում, նրա տեղադրությունները առավել քան կասկածելի են ու վիճահարույց:

Սույն հարցով զբաղվել է ակադ. Ս. Երեմյանը, որի տեղադրությունների մի մասի հետ կարելի է համաձայնել, բայց մյուս մասի հետ՝ ոչ: Հարցի քննության շահեկանությունից ելնելով՝ տալիս ենք վաստակաշատ գիտնականի կողմից տրված տեղադրությունները ևս: Հետազոտողը այսպես կոչված բուն Աղվանքի **Եղնի** (իմա՛ **Եխնի** կամ **Խենի** -Ք.Հ.) գավառը տեղադրում է **Ջաքաթալայի** շրջանում և նրան հատկացնում է 1722 քառ կմ տարածք: Հաջորդ՝ **Քամբեճան** կամ **Կամբեճան** գավառը տեղադրում է ներկայիս **Շիրակի** կիսաանապատային անջուր տափաստանում[59], որի միջով հոսում է հնում **Կամբեճ** և ներկայումս **Իորա** կամ **Իորի** կոչվող գետը: Ուսումնասիրողը բնագրային «առ **Կուրաւ**»-ը սրբագրում է «առ **Իորաւ**»-ի (հեղինակի մոտ՝ « **Իւրաւ**»- Ք.Հ.) և այն նույնացնում **Իորա** կամ **Իորի** գետին: Սակայն «**առ**» նախդիրը չի նշանակում գետի երկու ափին, այլ ընդամենը՝ այս կամ այն տարածքի հարևանությունը այս կամ այն գետին[60]: Եվ

---

52 Տե՛ս **Մակար եպս. Բարխուդարյանց,** նշվ.աշխ., էջ 61:
53 Անդ:
54 Անդ:
55 Անդ:
56 Անդ,էջ 61-62:
57 Անդ, էջ 62:
58 Անդ:
59 Չշփոթել Հայաստանի Հանրապետության Շիրակի հետ:
60 **Ս.Երեմյանը նույն սխալը թույլ է տվել նաև Փայտակարան աշխարհի տեղադրությունը որոշելիս:** «Աշխարհացոյց»-ի տեղադրությունը, թե Փայտակարանը գտնվել է «**առ Երասխաւ**», նրան հիմք է ծառայել, որ **Փայտակարան** աշխարհը տեղադրի Երասխի երկու ափերին, իսկ **Փայտակարան քաղաքը** տեղորոշի **Երասխի** ձախափնյակում: Տե՛ս «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», էջ 88: Տե՛ս նաև քարտեզը:

## ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ԱՂՎԱՆՔԻ ԳԱՎԱՌԱԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ Ս. ԵՐԵՄՅԱՆԻ




Քարտեզն ըստ հեղինակի «Մեծ Հայքը ըստ «Աշխարհացույց»-ի» քարտեզի
Քարտեզագիր՝ Վ. Գ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

վերջապես՝ չգիտես ինչու, հեղինակի տեղադրությունից դուրս է մնում մի այնպիսի իրողություն, թե ինչպես գետը կարող է **Իորի** կոչվել, երբ գոնե այսպես կոչված **Աղվանքի** տարածքում այն պետք է կոչվեր **Կամբեճ**[61]: Ս.Երեմյանը **Քեխ** գավառի անունը սրբագրում է **Քեղ** և տեղադրում **Մուղա** ու **Կարաչայ** գետերի միջև, ներկայիս **Կախի** շրջանում՝ գավառին հատկացնելով 1000 քառ. կմ տարածք: Հեղինակի կարծիքով՝ գավառանունը պետք է առնչություն ունենա «Քեղ» բառի հետ: Հետազոտողը միանգամայն հասկանալի պատճառով, հաջորդ՝ **Շաքէ** գավառը տեղադրում է **Նուխիի** շրջանում՝ վերջինիս հատկացնելով 800 քառ կմ տարածք[62]: **Գեգառու** կամ **Դեգառու** գավառանունը հեղինակը սրբագրում է **Գետառու**՝ հենվելով Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ հանդիպող Γαιταρά անվան վրա: Գավառը նա տեղադրում է այժմյան **Աջինոուրի-Էլդարի** տափարակ տարածքում **Աղրի-չայ (Ագրի-չայ), Ալազան, Ալջիրան-չայ** և **Կուր** գետերի միջև՝ 1575 քառ. կմ տարածքով: Նրա կարծիքով՝ **Դեգառուն** և **Գեգառուն** գրչագրի մեջ տեղ գտած աղավաղումն է **Գետառուի**[63]: Ս. Երեմյանը **Հողմազ** կամ **Հողմաղ** գավառը դնում է սրանից հետո, սակայն, չգիտես ինչու, չի տալիս դրա բացատրությունը: Հետազոտողի սրբագրած տեքստում, բացի **Գեգառուից** և **Դեգառուից,** հանդիպում է նաև **Գեղաւու** ձևը, որը, սակայն, չի արտացոլված տեքստում: Հեղինակի համաձայն՝ հաջորդ գավառը **Համբասին** է, որը, նրա կարծիքով, հավանաբար, նույնանում է **Հաբանդին**[64]: Նա հակված է կարծելու, որ **Համբասին** գտնվել է **Գարդման (Գիրդիման-չայ**-Ք.Հ.) և **Կոկիսոն** (**Գյոք-չայ**) գետերի վերին հոսանքի շրջանում և վերջինիս հատկացնում է 700 քառ. կմ տարածք[65]: Գավառը, հեղինակի համաձայն, հիշատակվում է **Հաբանդ** անունով միայն Վարդան պատմիչի մոտ[66]: **Շամախիի** մոտ գտնվող **Մարագի** գյուղը, ըստ ուսումնասիրողի, առաջացել է **Ամարաս** անունից: Դրան հետևում է այն ենթադրությունը, թե այստեղ էր **Սաղքաս** կրոնական կենտրոնը, որ հետագայում հայտնի էր **Սաղիանու վանք** անունով: Վերջնական եզրակացությունն այն է, որ **Հաբանդ** գավառը մտել է **Բազկան** կամ **Բազկանք** երկրամասի մեջ[67]: Ս. Երեմյանը գտնում է, որ **Հաբանդ** անունը թյուրիմացաբար է հայտնվել **Ուստանի** և **Մարզպանանի** միջև, որը նա սրբագրում է **Մարզպան**: Այնուհետև նա **Ուստան-ի-Մարզպան** գավառը համարում է **Կապաղակ քաղաքի** մերձքաղաքային տարածքը: Նրա կարծիքով՝ 387 թվականից հետո այս վայրը դառնում է Սասանյան փոխարքայի աթոռանիստը, իսկ Փայտակարան քաղաքում շարունակում են թագավորել Աղվանքի Արշակունի թագավորները[68]: Գավառին նա հատկացնում է 1550 քառ. կմ. տարածք[69]: Հաջորդ գավառանունը նա տալիս է **Քաղադաշտ (Քալածոր)** ձևով և գավառը տեղադրում **Տուրիան-չայ** և **Ալջիրան-չայ** գետերի ստորին հոսանքների տափարակային տարածքում՝ վերջինիս հատկացնելով 1270 քառ. կմ. տարածք ներկայիս **Աղդաշի** և **Մինգեչաուրի** շրջաններում:

---

61 Անդ, էջ 57:
62 Անդ, էջ 44:
63 Անդ., 47:
64 Անդ, էջ105:
65 Անդ, էջ 62:
66 Ստորև կտեսնենք, որ հեղինակն այդ հարցում պարզապես սխալվում է:
67 Տե՛ս **Ս.Տ. Երեմյան,** նշվ.աշխ., էջ 62:
68 Իհարկե, Փայտակարան քաղաքում աղվանից Արշակունի թագավորների իշխելը ոչնչով հիմնավորված չէ, իսկ Կապաղակը ոչ մի դեպքում չէր կարող դառնալ Աղվանքի պարսից մարզպանի նստատեղի:
69 Տե՛ս **Ս.Տ. Երեմյան,** նշվ.աշխ., էջ 75:

Հեղինակը ենթադրում է, որ գավառի կենտրոնը պետք է գտնվեր **Քաղբերդ** ամրոցում, որն իբր հետագայում հայտնի էր **Աղբերդ** անունով, որը վերածվել էր **Աղդաշի**[70]: Շարունակելով զարգացնել իր միտքը՝ հեղինակը նշում է, որ **Քաղբերդը** կամ **Քաղաբերդը** վարչական տարեգրություններում կոչվում էր **Քաղաձոր**: Եվ վերջապես՝ Ս. Երեմյանը գտնում է, որ **Քաղաձորը** միաժամանակ պետք է **Տուրիան-չայ** գետի անունը լիներ[71]: Հեղինակը այսպես կոչված բուն Աղվանքի գավառների ցանկը եզրափակում է **Բազկանք** կամ **Բազկան** ազգագավառով, որը, նրա կարծիքով, նույնական է **Հեջարիին**: Նա հայտնում է, որ **Բազկանք** կամ **Բազկան** ազգագավառի անվանումը ձեռագրերում հիշատակվում է **Բաբանք, Բայգանք, Բայկանք, Դաշտի-ի-Բազկան** ձևերով, և ճիշտը վերջինն է: Հետազոտողը գտնում է, որ Բազկանը համապատասխանում է Ջաքարիա Հռետորի Bazgun երկրին, որը բանասիրության մեջ համարվում է անբացատրելի: Այս անունը, ըստ հեղինակի, հավանաբար, նույնացնում են **Բալասագուն-Բաղասական**ի (Balasagun-Balasakan) անվան հետ՝ այն համարելով վերջինիս աղճատված ձևը: Շարունակելով հարցը զարգացնել, նա գրում է, որ **Բազկան** երկրի արևմտյան մասն իբրև առանձին գավառ՝ «**Դաշտի Բազկան**» անունով, հիշատակվում է բուն Աղվանքի գավառների շարքում: Նրա կարծիքով՝ այդ ճիշտ ձևը պահպանվել է միայն Երևանի Մատենադարանի թիվ 582 ձեռագրում, իսկ մնացած ձեռագրերում տեղ է գտել շփոթ **Բաղասական** անվան հետ, և առաջացել են **Դաշտ-ի-Բաղասական, Դաշտ-ի-Բաղական, Իբալական, Իբաղական**ն տարընթերցումները: Իսկ վերջինն առաջացել է այն բանից, որ **Դաշտ-ի-Բազկան** գավառին նախորդել է **Քաղադաշտը**: Տարընթերցումների աղավաղումը թողնելով հետագա քննությանը, լոկ նշենք, որ, հեղինակի կարծիքով, **Բազկան** երկիրը համապատասխանում է արաբապարսկական աղբյուրների ElIran երկրին, որի անունը կարդացվում է նաև Liran: Այդ երկիրը հեղինակը տեղադրում է Ապշերոնի թերակղզուց մինչև **Շամախի քաղաքը** և **Աղ-սու** գետն ընկած դաշտավայրում՝ շուրջ 9980 քառ.կմ. տարածքով: Նա հակված է կարծելու, որ այս երկրանունը, հավանաբար, համապատասխանում է Եղիշեի հիշատակած **Հերան**-ին: Սակայն, Ս. Երեմյանի կարծիքով, ճիշտ պետք է լիներ **Բազկան** անունը: Տեղադրությունն էլ ավելի ճշգրտելով՝ նա գրում է, որ հիշյալ գավառը հյուսիսից եզերվում է Կովկասյան լեռնաշղթայով, որտեղից (ներկայիս **Վել-Վելիչայ** գետի ակունքների շրջանից) սկսվում էր **Ապզուտ-Կավատ** պարիսպը[72]:

## 4. Գավառների մեր տեղադրությունը

Սկսենք գավառների տեղադրությունն ըստ Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ի նկարագրության հերթականության: Առաջին՝ **Եխնի** գավառը, որի անունը «Աշխարհացոյց»-ի և ոչ մի ձեռագիր՝ հակառակ Ս. Երեմյանի, չի տալիս **Եղնի** գրությամբ, գտնվել է Իբերիայի կամ Վրաց աշխարհի սահմանակցության վրա և, ինչպես վերը տեսանք, Ս. Երեմյանը տեղադրում է **Ջաքաբալայի** շրջանում: Սակայն դատելով ինչ-ինչ հանգամանքներից, գավառը պետք է գտնվեր ավելի արևմուտք: Ս. Մուրավյովը կարծում է, որ **Ταγοδά**-ն համապատասխանում է

70 Անդ, էջ 89:
71 Անդ: Հեղինակը **Տուրիան-չայը** որպես կանոն տալիս է **Դուրիան-չայ** ձևով:
72 Անդ, էջ 42-43:

ներկայիս **Լագոդեխի** բնակավայրին[73]: Հեղինակը, սակայն, չի էլ փորձում բացատրել, թե **Ταγοδά**-ն ինչպես է վերածվել **Լագոդեխի**: Գրչական հիմքի վրա դա հնարավոր չէ, քանի որ **Τ**-ն կարող էր արտագրողների կողմից առաջանալ **Γ**-ից կամ **Ι**-ից, բայց ոչ մի դեպքում **Λαγοδά** -ից, որն աղավաղվելու դեպքում կարող էր ծնել միայն **Δαγοδά**: Մեր կարծիքով՝ անվան ծագումը հնդեվրոպական է, իսկ հնդեվրոպական լեզուներում **Τ**-ն կարող է վերածվել **Λ**-ի: Ներկայիս **Լագոդեխի** անունը կարծես հուշում է, որ այն իր վերջնամասում ունի **ն**-ի անկումով **Եխնի**: Այսինքն՝ կարծես թե նշվում է ոչ միայն բնակավայրը, այլև գավառը, որոնց անունները միանալով տվել են **Լագոդեխի** անվանումը: Հիմք ունենալով այս ամենը՝ մենք **Եխնի** գավառը տեղադրում ենք **Լագոդեխիին** շրջապատող տարածքներում: Անշուշտ, կարելի է վիճարկել գավառի արևելյան ու արևմտյան սահմանների հստակությունը, սակայն կասկածից վեր է, որ այն հյուսիսում դուրս է եկել **Կովկասյան լեռներ**, իսկ հարավում՝ **Ալազան գետ**: Պայմանականորեն գավառի արևմտյան սահմանն անցկացնում ենք **Ղվարելիի** արևմտակողմով հոսող **Ալազանի** վտակով, իսկ արևելյանը՝ Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև ներկա սահմանի **Կովկասյան լեռներից** դեպի **Ալազան գետ** ձգվող հատվածով: Հաջորդ տեղորոշումը, կարծում ենք, լիովին հիմնավոր է դարձնում նման տեղադրությունը:

Հաջորդ՝ **Քեխ** գավառը, որը Ս. Երեմյանը սրբագրում է «**Քեղ**»-ի, ինչը մենք կիսում ենք, չնայած «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում երբեք «**Քէղ**» կամ «**Քեղ**» տարընթերցում չի հանդիպում, անտարակույս պետք է տեղադրել ներկայիս **Քելոկան** կամ **Քելական** բնակավայրին հարակից տարածքներում: Դժվար չէ տեսնել, որ **Քելոկանը** կամ **Քելականը** անմիջականորեն ծագում է **Քեղ** կամ **Քել** գավառի անունից և նշանակում է **Քեղ** գավառի բնակավայր: Հասկանալի է, որ գավառի հյուսիսային սահմանն անցել է **Կովկասյան լեռներով**, իսկ հարավայինը՝ **Ալազան** գետով: Ինչ վերաբերում է գավառի արևմտյան և արևելյան սահմաններին, ապա արևմուտքում այն պետք է անցկացնել Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների՝ **Կովկասյան լեռներից** դեպի **Ալազան գետ** ձգվող հատվածով, իսկ արևմուտքում՝ **Ալազանի Թալա-չայ** վտակով:

Հաջորդ՝ **Քամբեճան** կամ **Կամբեճան** գավառը տեղադրվում է **Ալազան** գետից մինչև **Կուր գետն** ընկած կիսաանապատային և անապատային շրջանում՝ ընդգրկելով **Կամբեճ (Կամբյուսես)** կամ ներկայումս **Իորի** կոչվող գետի ավազանի ստորին շրջանը: Ամեն ինչից դատելով՝ **Կամբեճը** եղել է ցեղանուն (հմմտ. **Քաղասիճ, Լահիճ** և այլն-Ռ.Հ.), իսկ **Կամբեճանը** պարզապես նշանակել է **Կամբեճներ** (=Կամբեճ+իրանական հոգնակիակերտ-**ան**-Ռ.Հ.): Հայերը **Կամբեճը** դարձրել են **Կամբէճք** և **Կամբէճս**, ինչն արտացոլված է Մովսես Կաղանկատվացու աշխատության մեջ[74]: Հայոց Արևելից կողմերի պատմիչը գավառը հիշում է նաև **Կապիճան**[75], և **Կամբիճան**[76] ձևով ևս: «Աշխարհացոյց»-ում ասված է, որ գավառը գտնվում է «առ **Կուրաւ**», որը ոչ մի դեպքում չի կարելի սրբագրել «առ **Իւրաւ**», ինչպես կարծում է Ս. Երեմյանը, և դրա տակ հասկանում ներկայիս Իորի անունը:

Եթե գետի անունը **Կամբեճ** էր, ապա ավելի քան զարմանալի կլիներ, որ գետը ալբանական հատվածում կոչվեր **Իորի**: Գավառը հյուսիսում և արևելքում սահման

73 Տե՛ս **Ñ. Í. Ì óðàâüââ,** Ï òîëåìåéà êàðòà Êàâêàçñêîé Àëáàíèè è óðâåíü Êàñïèÿ, c.135:
74 Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 50:
75 Անդ, էջ 178:
76 Անդ, էջ 305:

ուներ **Ալազան** գետը, որը «Աշխարհացոյց»-ում հանդես է գալիս **Աղուան** անունով, իսկ հարավում՝ **Կուր** գետը: Արևմտյան սահմանը հստակեցնելու համար հարկ է հստակեցնել **Վարազմանավառ բերդի** և **Կուդրաթ** գյուղաքաղաքի տեղադրությունը: Սենք կիսում ենք Ս. Երեմյանի տեսակետը **Վարազմանավառ** բերդը **Մանավի** գյուղի մոտ տեղադրելու հարցում[77]: Կարծում ենք, որ ընդունելի է ճանաչված հայագետի տեսակետը նաև **Կուդրաթի** տեղադրության խնդրում, երբ նա գյուղաքաղաքը տեղադրում է այժմյան **Կաճրեթ** գյուղի տեղում՝ **Կախեթիայի** տարածքում[78]: **Ալազան** կամ **Աղուան** գետի արևելյան կողմում՝ Կուրի ջրախառնուրդի շրջանում, ըստ «Աշխարհացոյց»-ի, գտնվել է **Գուգաւ** քաղաքը, որը, մեր կարծիքով, թերևս համապատասխանում է Ալբանիայի պտղոմեոսյան նկարագրության մեջ հանդիպող **Τογά** բնակավայրին: **Τ**-ն, ամենայն հավանականությամբ, աղավաղումն է **Γ**-ի, իսկ «**-աւ**»-ը, որ ավելի ուշ վերածվել է «**-ը**»-ի Պտղոմեոսի ժամանակներում ընկալվել է որպես «**ο**»: Այս բացատրության դեպքում Toga-ն սկզբնապես ունեցել է Gauga տեսքը, որն իրականում պետք է լիներ Gaugau, որի վերջին «**u**»-ն ինչ-ինչ պատճառով արտագրողի կողմից բաց է թողնվել:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ **Քեխ** գավառին հաջորդում է արևելքից՝ **Շաքեն**, իսկ համառոտ խմբագրության մեջ՝ **Հողմաղը** և այնուհետև **Շաքեն**, ինչը մտածել է տալիս, որ **Հողմաղը** կամ ըստ այլ ձեռագրերի՝ **Հողմազը** կամ **Խողմազը** սկզբնապես մաս է կազմել **Շաքեի**:

**Շաքեն**, որ համապատասխանել է **Նուխի** քաղաքին և վերջերս կրկին վերականգնել է իր անունը, տեղադրվում է **Ալազանի** արևելյան վտակ **Ագրի-չայ** կամ **Աղրի-չայ** վտակի վերին հոսանքի շրջանում: **Շաքեի** հյուսիսային սահմանը կազմել են **Կովկասյան լեռները**, արևելյան սահմանը՝ **Ագրի-չայի** արևելյան ջրբաժանը, իսկ հարավային սահման է հանդիսացել **Ագրի-չայ** գետը: Հասկանալի է, որ **Շաքիից** արևմուտք տարածվել է **Հողմաղ** կամ **Հողմազ** գավառը, որը զբաղեցրել է մինչև **Ալազան գետն** ու նրա վտակ **Ագրի-չայի** ստորին հոսանքի շրջանը: **Ագրի-չայը** կամ **Աղրի-չայը** «Աշխարհացոյց»-ում անվանվում է **Դեգաւու** կամ **Գեգաւու** և Ս. Երեմյանի կողմից սրբագրված է **Գետառու**, սակայն ճանաչված հայագետի սրբագրումը քննություն չի բռնում, քանի որ Γαιταρά-ի նման տեղադրության համար հիմք ծառայած Γαγγαρά քաղաքանվան տարընթերցում Γαιταρά-ն վերաբերում է մի բնակավայրի, որը գտնվել է մոտավորապես **Սումգայիթի** կողմերում: Ուստի **Ալազանի** վտակը ոչ թե կրել է հայերեն **Գետառու** ձևը, այլ ունեցել է **Դեգաւու** կամ **Գեգաւու** հնչումը:

Դժվար չէ տեսնել, որ նման տեղադրությունից հետո **Դեգաւու** կամ **Գեգաւու** գավառը պետք է գտնվեր **Գեգառու (Գեգաւու)** կամ **Գեգառու (Դեգաւու)** գետի երկայնքով մինչև **Կուր գետը**՝ արևելքում սահման ունենալով **Սանի գետը**, որն անվերապահորեն կարող է նույնանալ միայն ու միայն ներկայիս **Ալիջան-չայ** գետակին:

Սրանից հետո Ալբանիայի կամ Աղվանքի գավառացանկը ենթարկվել է աղավաղման: **Դեգաւուից** կամ **Գեգաւուից** հետո հիշատակվում է **Ոստան** գավառը, որը կարող է տեղադրվել **Կապաղակ** կամ Cabalaca մայրաքաղաքին շրջակա տարածքներում: **Ոստան** կամ հին արտասանությամբ՝ **Օստան** գավառը եղել է արքունական, և նրա արքունական տիրույթ լինելը արտացոլվել է անվան մեջ:

77 Տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82:
78 Անդ, էջ 61:

## ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ՍՈՒՅՆԻՑ ԳԱՎԱՌԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Գավառիս հյուսիսային սահման են հանդիսացել **Կովկասյան լեռները**, արևելքում՝ **Տուրիան-չայ** կամ Ստրաբոնյան **Սանդոբանես** (իրականում՝ **Սարդոբոնես** կամ **Զարդոբանես**) գետի արևելյան ջրբաժանը: Արևմուտքում **Ոստան** գավառը տարածվել է մինչև **Դեգառու** կամ **Ագրի-չայ** գետի արևելյան ջրբաժանը, իսկ հարավում՝ մինչև Կուր-Արաքսյան դաշտավայրը հյուսիսից եզերող բլրաշարքը:

**Ոստան** գավառից կամ **Կապաղակի** արքունական տիրույթներից արևելք տարածվում էր **Հաբանդ** գավառը, որը «Աշխարհացոյց»-ի որոշ ձեռագրերում հանդիպում է նաև **Համբասի** տարընթերցումով: Ուշադրություն է գրավում մի օրինաչափություն ևս: Եթե գավառանունը ձեռագրերում հանդիպում է **Հաբանդի** կամ **Համբասի** գրությամբ, ապա հաջորդ գավառանունը գրվում է ոչ թե **Իմարծպանաև** կամ **Իմարծ, Պանաև,** այլ **Մարծպանաև,** այսինքն՝ «**ի**» նախդիրը արտագրությունների ժամանակ կցվել է **Հաբանդ** անվանը: Ինչ վերաբերում է **Համբասի** անվանը, ապա այստեղ ևս «**ի**» նախդիրը նրան է անցել **Իմարծպանաևից** կամ **Ի Մարծից**, այսինքն՝ անունը կարծես թե եղել է **Համբաս**: Սակայն այս անվանաձևը հուշում է, որ ձեռագրերում եղել է նաև **Հաբանդք** ձևը, որը հայցականում վերածվել է **Հաբանդս**-ի և հայցականի «**ս**»-ի ազդեցությամբ կորցրել է «**նդ**»-ն և վերածվել **Համբաս**-ի, իսկ այնուհետև՝ «**ի**» նախդիրի կցումով՝ **Համբասի**-ի: Հասկանալի է, որ գավառը հյուսիսում սահման է ունեցել **Կովկասյան լեռները**, արևմուտքում՝ **Ոստան** գավառը, արևելքում՝ **Փիրսահաք** և **Աղ-սու** գետերի ջրբաժանը, իսկ հարավում՝ **Կուր-Արաքսյան** դաշտավայրը հյուսիսից եզերող բլրաշարքը:

Կուզենայինք կանգ առնել ձեռագրերում տեղ գտած մի հետաքրքիր փաստի վրա ևս: Սովորաբար ձեռագրերում հերթականությունը տրվում է «**Ոստան, Համբանդի** (կամ **Համբասի**), **Մարծպանաև** (կամ **Մարզպանաև**)» ձևով, սակայն Մատենադարանի թիվ 2370, 4284 ձեռագրերում՝ «**Հաբանդ, Ոստան, ի Մարձպանաև**» ձևով: Սա իր մեջ իրականում մեծ գաղտնիք է պարունակում: «Աշխարհացոյց»-ը արտագրող գրիչները, հանդիպելով երկու անգամ **Ոստան** գավառանվանմանը, ենթադրել են, որ դրանցից մեկն ավելորդ է: Հիշյալ և դրան նախորդած ձեռագրերում դեն են նետվել **Ոստան** գավառանունը, որով փաստորեն ցուցակից անհետացել է **Կապաղակի Ոստանը**, իսկ մյուս ձեռագրերում պահպանվել է **Կապաղակի Ոստանը**, սակայն ցուցակից «**Ոստան ի Մարզպանաև կամ Մարծպանաև**» գավառանվան **Ոստան** կապակցությունը համարվել է սխալ և դեն է նետվել: Այլ խոսքով, սկզբնական բնագրում եղել է «…**Ոստան, Հաբանդ, Ոստան ի Մարծպանաև** (կամ **Մարզպանաև**)»: Հետևաբար հաջորդ վարչական շրջանը, որ, ինչպես ստորև կտեսնենք, կոչվում է նաև **Ճորա** կամ **Չողա**, եղել է պարսից մարզպանների **Ոստանը** և այդ պատճառով էլ կոչվել է «**Ոստան ի-Մարծպանաև** (կամ **Մարզպանաև**)»: Այս գավառի սահմաններն էին հյուսիսում **Սամուր** գետի հարավ-արևելյան ջրբաժանը՝ իր մեջ առնելով **Ճորա պահակի** կամ **Դերբենդի** ամրությունների շրջանը, հարավում՝ **Կովկասյան լեռների** դեպի **Կասպից ծով** ձգվող բազուկը, որի վրա գտնվում էր **Ալբանական** կամ **Աղվանից դրունք** լեռնանցքը, իսկ արևելքում՝ **Կասպից ծովը**:

Մյուս գավառներն էին **Քաղաղաշտը** կամ **Քաղաց դաշտը** և **Դաշտ-ի-Բաղասական** կամ **Դաշտ-ի-Բազկանը**, ըստ որում՝ «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում զարմանալիորեն **Դաշտ-ի-Բազկան** ձևը չի հանդիպում: **Քաղաղաշտ** կամ **Քաղաց դաշտ** անունը կապվում է այստեղ հանդիպող քաղ կոչված եղջերուների

հոտերի գոյության հետ: Ըստ որում, այստեղ ևս սկզբնապես գրված է եղել «… **Քաղադաշտ** (**Քաղաց դաշտ**), **Դաշտ-ի-Քաղասական**»: Արտագրողներին կրկին թվացել է, թե դրանցից մեկը՝ նկատի ունենք **դաշտ** բառը, ավելորդ է, ուստի այն բաց են թողել արտագրությունների ժամանակ: **Քաղադաշտը** կամ **Քաղաց դաշտը** հարավում սահմանակցել է **Կուր գետին**, արևելքում՝ **Աղ-սու** գետի արևելյան ջրբաժանին և **Աղ-սու գետին**, իսկ հյուսիսում տարածվել է մինչև **Կուր-Արաքսյան** դաշտավայրը եզերող բլրաշարքը: **Հաբանդ** և **Քաղադաշտ** կամ **Քաղաց դաշտ** գավառներից ու **Կուր գետից** արևելք, **Կովկասյան լեռներից** հարավ մինչև **Ապշերոնյան** թերակղզին ու **Կասպից ծով** տարածվել է **Դաշտ-ի-Քաղասական** կամ ըստ Ս. Երեմյանի՝ **Դաշտ-ի-Բազկան** գավառը: Սրանով ավարտվում է այսպես կոչված **Ալբանիայի** կամ **Աղվանքի** գավառների ցանկը:

Մենք փորձեցինք տեղադրել այսպես կոչված Ալբանիայի կամ Աղվանքի գավառները մարզպանության շրջանում, որն, անշուշտ, պարսից արքունիքի կողմից իրականացված վարչական բաժանում է: Հասկանալի է, որ անկախության շրջանում չէր լինի **Ուտան-ի-Մարծպանան** կամ **Մարզպանան** անունով վարչական միավոր: Ուստի հարցն ամբողջացնելու առումով հարկ ենք համարում անդրադառնալ ևս մի քանի հաղորդումների:

## 5. Այսպես կոչված Աղվանքի ցեղային կազմը որպես վարչական բաժանման սկզբնաղբյուր

Մի փոքր տարօրինակ և զարմանալի է «Աշխարհացոյց»-ի **Ասիական Սարմատիայի** նկարագրությունը, որտեղ **Կովկասյան լեռների** և **Կուր գետի** միջև ընկած տարածքների մասին ասված է.«…Էէկք, ապա Տապոտարանք, ապա Յաղուտականք, ապա Խենաւք, ապա Շիղպք, ապա Ճիղբք, ապա Փիք: Եւ ապա Կաւկաս բաժանի յերկուս բազուկս, մինն՝ գնայ դէպ ուղիղս կոյս, յորում Շրւան եւ Խսրվան ազգ՝ մինչև ցԽորսվէմ. եւ միւս բազուկն արձակէ նախ վտակ մի զԱրմ գետ, որ է դէպ ուղեղ ի հիւսիսի՝ յԱթլ գետ, եւ ապա նոյն բազուկն հիւսիսոյ Թաւասպարք, Հեճմատակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փիքանակք, Բագանք: Ուստի առնու պարիսպն երկայն, որ կոչի Ապզուտկաւատ, մինչև ցԱլղմինոն մօրս (ձեռ. Մուրս) եւ ցծով: Որոյ ըստ հիւսիսոյ՝ Մասքութան ազգն բնակեալ են, ի Վարդանեան դաշտին, մինչեւ ցԿասբից ծովն, յոր բազուկն Կաւկասայ հպի, յորմէ ածեալ է զպարիսպն Դարբանդայ, այսինքն Կապ եւ դուռն. քաղաք պահակին Ճորայ. աշտարակ ահագին ի ներքս ի ծովուն կացուցեալ: Իսկ ի հիւսիսոյ նորա՝ թագաւորութիւն Հոնաց հուպ ի ծով. եւ ի մտից նորա առ Կաւկասով Վարաչան քաղաք նոցին Հոնաց եւ Չունդարս եւ Մսընդռ: Եւ յարեւելից բնակեն Սաւիրք ցԹալդ գետ, որ մեկնէ ընդ Ասիական Սարմատ եւ ընդ Սկիւթիա աշխարհք, որ են Ապախթարք, այսինքն Թուրքաստանք եւ Խաքան թագաւոր նոցա, եւ խաթունն՝ դշխոյ նոցա կին Խաքանայ»[79]:

Ասիական Սարմատիայի տվյալ բաժնի նկարագրությունը «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ ունի հետևյալ տեսքը. «…Ղեկք, Տապաստաւանք, Աղուտականք, Խենաւկք, Շիպղք, Ճիղաք, Խեղայք, Կասբք, Փուխք, Շրուանք, Խարանք, Թաւասպարոտք, Հեճմատակք, Իժմախք, Փասխս, Քոսխ, Փոքռնակ,

79 «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 27:

Բաքանք, Մազքութք, մինչեւ ցԿասբից ծովն՝ յորս բազուկն Կովկասու հպի, ուր ածեալ զպարիսպն Դարբանդայ՝ աշտարակ ահագին՝ ի ծովուն կացուցեալ: Իսկ ի հիւսիսոյ նորա՝ Հոնք. եւ քաղաք նոցա Վառաչան, և այլք ընդ նմա. եւ թագաւորն հիւսիսոյ է Հականն՝ որ է տէր Խազրաց. և դշխոյն թագուհի է, Խաթունն, որ է կին Հականայ ի Բարսղաց ազգէն»[80]:

Ավելորդ չենք համարում մեջբերել սույն բաժինը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխահագրության» Ասիական Սարմատիայի նկարագրությունից: «Այնուհետև սահմանը Ալբանիայի երկայնությամբ մինչև Հյուրկանյան ծովը, որտեղ Սոանաս գետի գետաբերանն է $86^0$- $47^0$-ի տակ:

…Արևելքում [Ասիական Սարմատիան սահմանափակվում է] այստեղ սկսվող Հյուրկանյան (իմա՛ Վրկանից ծով-Բ.Հ.) ծովի [ափի] մի մասով, որտեղ Սոանաս գետի գետաբերանից այն կողմ գտնվում են.

Ալոնտ գետի գետաբերանը $86^0$ 31′ $47^0$ 40′,

Ուդոն գետի գետաբերանը $87^0$ $48^o$ 20′

Ռա գետի գետաբերանը $87^0$ 30′ $48^o$50′:

…Կասպից ծովի ափին բնակվում են Ուդերը, Օլոնդները, Իսոնդները և Գերրերը.

….Ալբանիայից այն կողմ Սանարները»[81]:

Արդ, ի՞նչ եզրակացությունների կարելի է գալ բերված տեղեկություններից: Փորձենք տալ ցեղանունների համադրական ցանկերը[82]:

| **Կլավդիոս Պտղոմեոս** | **Մովսես Խորենացու Ընդարձակ խմբագր.** | **«Աշխարհացոյց» Համառոտ խմբագր.** |
|---|---|---|
| Տուսկեր | Դուրծկք | Դուրցուկք |
| Դիդուրներ | Դիդո[յ]ք | Դիդոյք |
| Ուդեր | | |
| Օլոնդներ | | |
| Իսոնդներ | | |
| Գերրեր | | |
| | Լեկք | Ղեկք |
| | Տապոտաւանք | Տապաստաւանք |
| | Յաղուտականք | Աղուտականք |
| | Խենաւք | Խենաւկք |
| | Շիղքք | Շիպղք |
| | Ճիղքք | Ճիղաք (Ճիղպք) |
| | | Խեղայք |
| | Փիք | Կասպք |
| | | Փախք |

80 **Ա.Գ. Աբրահամյան,** Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 347-348:

81 **Claudii Ptolemaei** Geographia,V,8. 5,6,13.

82 **Ցեղանունները տրվում են առանց փոփոխության՝ ձեռագրերում պահպանված տարընթերցումներով,** որոնց մի մասը, անշուշտ, գրիչների կողմից աղավաղված է:

| | |
|---|---|
| Շրուան | Շրուանք |
| Խսրուան | Խարանք |
| Թաւասպարք | Թաւասպարոտք |
| Հեճմատակք | Հեճմատակք |
| Իժմախք | Իժմախք |
| Փասխք | Փասխս |
| Փուսխք | Քոսխ |
| Փւքանակք | Փոքոնակ |
| Բագանք | Բաքանք |
| Մասքութան ազգ | Մազքութք |
| Հոնաց թագաւորութիւն | Հոնք |

Նախ՝ դժվար չէ տեսնել, որ Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ հիշատակված **Տուսկերը Դուրծուկներն** են, որոնց անունը «Աշխարհացոյց»-ը պահպանել է **Դուրծք** և **Դուրցուկք** աղավաղված ձևերով: **Դիդուրները,** անտարակույս, **դիդոյներն** են: Պտղոմեոսի կողմից **Ուղերի** հիշատակությունը **Ասիական Սարմատիայում** թերևս հավաստում է, որ նրանք դեռ չէին մուտք գործել **Այսրկովկաս**, ինչն առավել քան տարօրինակ է, կամ էլ հիշյալ **Ուղերը** չեն նույնանում **Ուդիներին** և բոլորովին այլ ցեղեր են, ինչը, իհարկե, բացառվում է: **Օլոնդները** և **Իսոնդները** գտնվել են **Հյուսիսային Կովկասում**, իսկ **գերրերի** (թերևս **գելեր**-Ք.Հ.) մասին հիշողությունը, հավանաբար, խոսում է այն մասին, որ նրանց մի մասը շարունակել է բնակվել **Սոանաս** գետից դեպի հյուսիս ընկած շրջանում:

«Աշխարհացոյց»-ի **Տապոտարանքը** կամ **Տապաստաւանքը**, անտարակույս, նույնական է փոքր անց հիշատակվող **Թաւասպարքին** կամ **Թաւասպարոտքին**: **Աղուտականքը**, **Խենավքը**, **Շիղպը**, **Ճիղբը** գտնվել են **Թավասպարանի** մերձակայքում կամ նրանից հարավ: Ս. Երեմյանը **Փւքը** սրբագրում է **Լփնիք**[83], որը միանգամայն ընդունելի է՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ **Լփինքը** հյուսիսում սահմանակցել է **Ճիղպքին**[84]: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ ինչ-ինչ պատճառներով արտագրողների կողմից դուրս են մնացել **Խեղայք**, **Կասպք, Փախք** ցեղերը: Սրանցից հյուսիս և արևելք գտնվել են **Շրվանը** և **Խսրվանը**:

**Տապոտարանքի** հիշատակությունը երկրորդ անգամ **Թավասպարք** գրությամբ մտածել է տալիս, որ սկզբնապես **Թավասպարքից** մինչև **Բագանք** կամ **Բաքանք** ցեղանունները ավելի ուշ են մտել տեքստերի մեջ, կամ էլ հեղինակը սխալ է տեղադրել դրանք, որովհետև **Մազքութան** ազգը իրոք գտնվել է **Շրվանից** ու **Խսրվանից** հյուսիս, բայց ոչ՝ **Թավասպարանից**: Վերջապես՝ **մազքութներից** հյուսիս հիշատակվում են **հոները**:

Այսուհանդերձ, անհասկանալի է մնում մի իրողություն. ինչո՞ւ այսպես կոչված **Ալբանիայի** կամ **Աղվանքի** արևելյան մասը հայտնվել է **Ասիական Սարմատիայի** նկարագրության մեջ: Հնարավոր է, որ դա շատ հին իրողություն է՝ կապված

83 Տե՛ս **Ս.Տ. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 54: Սակայն անընդունելի է հեղինակի կողմից Լփինքի տեղադրությունը, որը պարզապես հնարավոր չէ:
84 Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի,** էջ 239:

մազքութների Այսրկովկաս ներխուժելու հետ, երբ վերջիններս դեռ չէին ստեղծել իրենց թագավորությունը, և նրանց նվաճած երկրամասերն այդ պատճառով համարվում էին **Ասիական Սարմատիայի** մաս: Մովսես Խորենացին «Աշխարհացոյց»-ը գրելիս, հավանաբար, իր ձեռքի տակ է ունեցել մի շատ հին փաստաթուղթ, որն իր ժամանակներին փաստորեն չէր համապատասխանում, սակայն մտցվել է «Աշխարհացոյց»-ի մեջ որպես **Ասիական Սարմատիայի** նկարագրություն:

Ընդհանրական քննություն կատարելու համար հարկ ենք համարում մեջբերել նաև Փավստոս Բուզանդի հաղորդումը մազքթաց Սանեսան թագավորի դեպի Մեծ Հայք կատարած արշավանքի և Եղիշեի տեղեկությունը՝ **Արևելյան Այսրկովկասի** ցեղերի վերաբերյալ:

Փավստոս Բուզանդը գրում է.«Յայնմ ժամանակի թագաւորն մազքթաց Սանէսան անհնարին նիւթեաց զտրտմութիւն ոխութեան ընդ իւրում ազգակցին Խոսրովու արքային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Իժմախաց, Գաթաց և Գղուարաց, Գուգարաց (իմա՛ Գարգարաց-Ք.Հ.), Շչբաց և Ճղբաց և Բաղասճաց և Եգերսուանացն և այլոց խառնաղանճ բազմութեամբ անթիւ անբնակն վաչկատուն զօրութեանց, որում միանգամ ինքն իշխէր զօրացն բազմաց»[85]: Փավստոս Բուզանդի հաղորդումը լավ հասկանալու համար միանգամայն տեղին է մեջբերել Եղիշեի հաղորդումներից մեկը՝ գործնականում նույն ցեղերի մասին. «Քանզի ոչ տայր դադար ամենևին թագաւորին Պարսից, այլ յղէր և կոչէր զգունդս բազումս ի Պահական Ճորայ, և զՎրաց աշխարհին բովանդակ անդ գումարէր, զզօրսն Լփնաց և զՃղբաց, և զՎատն, զԳաւն և զԳղուարն և զԽրսանն և զՀեճմատակն, զՓասխան և զՓոսխն և զամենայն զօրսն Թաւասպարանն, զլեռնայինն և զդաշտայինն և զամենայն ամրակողմն լերանցն»[86]:

Այժմ, եթե հիշատակված այս ցեղանունները դասավորենք, կստանանք հետևյալ պատկերը.

| **Ըստ Փավստոս Բուզանդի** | **ըստ Եղիշեի** |
|---|---|
| Հոնք | ------- |
| Փոխք | 8.Փասխն 9.Փոսխն |
| Թաւասպարք | Թաւասպարան[87] |
| Հեճմատակք | 7. Հեճմատակք |
| Իժմախք | |
| Գաթք | 3 Վատն, 4. Գաւն? |
| Գղուարք | 5 Գղուար |
| Գուգարք (իմա՛ Գարգարք) | |
| Շիչբք | |
| Ճիղբք | 2.Ճիղբք |
| Բաղասիճք | ~1.Լփինք |
| Եգերսուանք | 6.Խրսանք (?)[88] |

85 **«Փավստոսի Բուզանդացւոյ** Պատմութիւն Հայոց», ի չորս դպրութիւնս, Վենետիկ, 1832, դպր Գ., գլ. է:
86 Եղիշե, էջ 94:
87 Փավստոս Բուզանդը Թաւասպարք ցեղանունը տալիս է «ք»- հոգնակիակերտով, իսկ Եղիշեն՝ պարսկական «ան» հոգնակիակերտով:
88 Քանի որ ցեղանունների հերթականությունը Եղիշեի ցանկում չի համապատասխանում Փավստոս Բուզանդի տված հերթականությանը, ապա, ըստ Եղիշեի ցեղանունների դիմաց՝ նշում ենք նրանց զբաղեցրած համարը թվարկման ցանկում:

Երկու ցուցակների համադրությունը ցույց է տալիս, որ Սանեսանի արշավանքի ժամանակ (331 թ.) ցեղերը հիշատակվում են ընդհանուր առմամբ հյուսիսից հարավ հերթականությամբ, իսկ Եղիշեի ցանկում՝ կրկին ընդհանուր առմամբ հարավից հյուսիս հերթականությամբ: Ըստ երևույթին, հոները հրավիրվել են Սանեսանի կողմից, սակայն նրանք Վարդան Մամիկոնյանի դաշնակիցներն էին, ուստի տեղ չեն գտել Եղիշեի ցեղացանկում:

**Փասխերը**, որոնց անունը աղավաղված է Փավստոս Բուզանդի երկում և վերածվել է **Փախքի, Փախքերի, Թավասպարները, Հեճմատակները, Իժմախները,** ամենայն հավանականությամբ, եղել են կովկասյան ցեղեր, **գաթերը**, որոնց անունը, շատ հնարավոր է, եղել է **Վատն, Գավերը և Գղուարները** եղել են մազքթաց ցեղեր, **Գուգարների** կամ ավելի ճիշտ՝ **Գարգարների** անվան տակ հանդես են գալիս ոչ միայն **Գարգարները**, այլ նաև **Ուդիները** և այլ կովկասյան ցեղեր, որոնք մազքութների ճնշման տակ շարժվել են Ալբանիայի արևմտյան շրջանները: **Շիչբերը** և **Ճիղբերը**, ամեն ինչից դատելով, կովկասյան ցեղեր են, **Քաղասիճները**՝ իրանական, **Եգերսվանները**՝ թերևս նույնպես իրանական: Ըստ որում չի բացառվում, որ **Սվանների** անունը հայտնվել է Եղիշեի ցուցակում **Խրսան** անունով (**=Խր?+ս[ու]ան**-Ք.Հ.) մի փոքր աղճատված գրությամբ: Ավելին, շատ հնարավոր է, որ **Խրսանի** առաջնամաս «**Խր**»-ն աղավաղումն է **Եգերի**: **Քաղասիճները**, դատելով այլ սկզբնաղբյուրների տեղեկություններից, ներկայացնում են «Աշխարհացոյց»-ի նկարագրության **Դաշտ-ի-Քաղասականը** կամ **Դաշտ-ի-Բազկանը: Լփինները**, անտարակույս, նույնպես ներկայացնում են **Դաշտ-ի-Քաղասականը,** սակայն Սանեսանի արշավանքներին չմասնակցելու հետևանքով տեղ չեն գտել Փավստոսի ցեղացուցակում: **Ճիղբերը**, որոնց տարածքում գտնվում էր **Ցռի** քաղաքը, որ, հավանաբար, նույնական է ներկայիս **Շամախի** քաղաքին կամ մի ինչ-որ վայրի՝ վերջինիս շրջակայքում, նույնպես պետք է գտնվեին **Դաշտ-ի-Քաղասականի** հյուսիսային լեռնային հատվածում, **Շիղբերը** կամ **Շիչբերը** գտնվում էին **Ճիղբերից** հյուսիս՝ Կովկասյան լեռների հյուսիսահայաց լանջերին: **Գարգարական** ցեղերը, ինչպես և պետք է ենթադրել, իրենց ազգակից մյուս ցեղերի՝ **Ուդիների** և այլոց, ինչպես նաև իրանական **Կամբեճների** հետ զբաղեցրել են **Եխնի** կամ **Խենի, Քեխ** կամ **Քեղ, Հողմաղ, Շաքի, Ոստան, Հաբանդ, Կամբեճան, Գեգառու և Քաղաղաշտ** կամ **Քաղաց դաշտ** գավառների տարածքը, թվով 9 հատ: **Գաթերը** կամ թերևս՝ **Վատները**, **Գղուարները**, **Իժմախները**, **Հեճմատակները, Թավասպարները** և **Քոսխերը** կամ **Փասխերն** ու **Փոսխերը** գտնվել են **Ոստան-ի-Մարծպանան** կամ **Մարզպանան** գավառում, որն այդ հեռավոր ժամանակներում պետք է կոչվեր **Ճորա, Չորա** կամ **Չողա:** Այլ խոսքով, **Ալբանական** թագավորության շրջանում գավառների թիվը, անկասկած, ավելի շատ է եղել, և պարսից արքունիքը շատ գավառներ վերացրել է՝ միավորելով դրանք **Ոստան-ի-Մարծպանան** և **Դաշտ-ի-Քաղասական** գավառներին:

Հենվելով Փավստոս Բուզանդի և Եղիշեի հաղորդումների վրա՝ կարելի է ենթադրել, որ թագավորության շրջանում գավառների թիվը կազմել է արևմտյան 9 գավառների հետ 23: Այսինքն՝ պարսից արքունիքը ցեղային 14 գավառներից ձևավորել է ընդամենը 2 գավառ՝ **Ոստան-ի-Մարծպանականը** կամ **Մարզպանականը** և **Դաշտ-ի-Քաղասականը**: Սակայն արևմտյան 9 գավառների թիվը թերևս կարող է պակասել մեկով, որովհետև դատելով «Աշխարհացոյց»-ի ընդարձակ և համառոտ խմբագրությունների համեմատությունից, **Հողմաղ** կամ **Հողմազ** գավառը ստեղծվել

է ավելի ուշ: Վարչական այդ վերափոխություններին մեծապես նպաստեց այն իրողությունը, որ երկրի արևելյան շրջանները հիմնականում բնակեցված էին իրանական ցեղերով, որոնք մեծ մասամբ հիշատակվում են ընդհանրական **մազքութներ** անունով:

## 6. Մովսես Կաղանկատվացու տեղեկությունները գավառների վերաբերյալ

Այժմ փորձենք անդրադառնալ **Կուրի** ձախափնյակի գավառների վերաբերյալ Մովսես Կաղանկատվացու տվյալներին և դրանով ավարտենք մեր քննությունը, չնայած վերջինս ավելի ուշ ժամանակների հեղինակ է և ըստ այդմ էլ՝ տուրք է տվել իր ժամանակաշրջանի իրողություններին: Հայոց Արևելից կողմերի պատմիչն իր տեսադաշտում ունեցել է ամենից առաջ **Կուրի** աջափնյակը: Ավելին, նա իր առջև աշխարհագրական նկարագրության խնդիրներ չի դրել, բայց, եթե **Կուրի** աջափնյակում հիշում է 13 կամ 14 գավառ **Արցախի** և **Ուտիքի** 20 (սկզբում 19 - Ք.Հ.) գավառներից, ապա **Կուրի** ձախափնյակում հիշում է ընդամենը 4(9) գավառ և դրանք էլ՝ կապված ինչ-ինչ իրադարձությունների հետ[89]: Մովսես Կաղանկատվացին **Կուրի** ձախափնյակում հիշատակում է **Կամբեճանը** կամ **Քամբեճանը, Կամբեճան, Կամբեճք և Կապիճան** գրությամբ[90]: Հավանաբար այս գավառանվան հետ կապ ունեն **Կամիճիկ** (հավանաբար՝ **Կամբիճիկ**-Ք.Հ.) հեփթաղները և ժամանակի ընթացքում **Կամբեճիկ Հեփթաղքը** արտագրությունների հետևանքով վերածվել է **Կամիճիկ Հեփթաղք**-ի[91]: Դրա օգտին է վկայում այն փաստը, որ Կաղանկատվացու երկի որոշ ձեռագրերում հանդիպում են **զԳամբեճիկ** և **զԿամբիճիկ** և **Կամիջիկ** տարընթերցումները[92]: Հաճախակի են հիշվում **Լփինքը, Շաքին** և **Չողը** կամ **Չորը**:

Շատ հետաքրքիր է Հայոց Արևելից կողմերի պատմիչի վերը բերված հաղորդումը՝ կապված Մեսրոպ Մաշտոցի գործունեության հետ **Կուրի** աջափնյակում և ձախափնյակում[93]: Այս տեղեկությունը հստակ ցույց է տալիս, որ մինչև 428 թիվը պետական առումով **Ուտիական աշխարհը** Մեծ Հայքի արևելյան հատվածի թագավորության, իսկ 388-408 թթ. Մեծ Հայքի վերամիավորված թագավորության մաս է կազմել: Իսկ դրանից այն կողմ ընկած է եղել **Աղվանքը** կամ **Աղվանից** թագավորությունը, որից էլ այն կողմ՝ **Լփինքը**, **Կասպքը** և **Չորա դուռը**, որը ոչ այլ ինչ է, բայց եթե **Ճորա դուռը** կամ **Ճորա պահակը**: Առաջին տպավորությունն այն է, որ Աղվանքից արևելք ընկած **Լփինքը, Կասպքը և Չողը** կամ **Չորը** Աղվանից թագավորությունից անջատված երկրամասեր էին, որոնք պարսիկներն արդեն 387 թվին վերածել էին **Առանի** մարզպանության երեք վարչական շրջանների, որոնք թագավորության մեջ չէին մտնում: Հարցիս քննության մեջ հստակություն է մտցնում Կորյունի հաղորդումներից մեկը. «Եւ ապա յետ այնորիկ (Մեսրոպ Մաշտոցը-Ք.Հ.) հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իջանէր յաշխարհն և հասեալ ի թագաւորական տեղիսն տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից,

89 Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, նշված ամբողջ աշխատությունը:
90 Անդ էջ 50,178, 305:
91 Անդ:
92 Անդ, էջ 95:
93 Անդ:

որում անուն Երեմիա կոչէին և զնոցին թագաւոր, որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատօք հանդերձ… Եւ նոցա երկոցունց զուգակցելոց եպիսկոպոսին և թագաւորին, յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ. տային ևս հրաման ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել և ռոճիկս կարգել ի դարմանս… Եւ յորժամ զայն արարեալ հաւասարութեամբ և լցեալ զպիտոյն իւրեանց և զկամացն յօժարութիւն, ձեռնատու ևս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ի Բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին, որում անուն Մուշեղ կոչէին, և յամենայն եկեղեցւոյն Աղուանից»[94]:

Այս տեղեկությունը, որի հեղինակը ժամանակագրորեն ավելի մոտ է կանգնած կամ ավելի ճիշտ՝ ժամանակակիցն է այդ իրադարձության, ցույց է տալիս, որ **Բաղասականի** շրջանը, որի մեջ պետք է գտնվեին նաև **Լփինքը** և **Ճիղբքը**, ամենայն հավանականությամբ, շարունակում էին գտնվել Աղվանից թագավորության մեջ, սակայն թերևս ինչ-ինչ ներքին ինքնուրույնությամբ: **Բաղասականը** մեկ վարչական շրջան չէ, քանի որ պատմիչը այն կոչում է **Բաղասականի** կողմեր: Ուշադրություն է գրավում մի հանգամանք ևս: Կորյունը հիշատակում է Աղուանից թագավորությունը, նրա մաս կազմող **Բալասականի** կողմերը, սակայն ոչինչ չի ասում **Չողա** կամ **Ճորա** երկրամասի մասին, ինչը մեզ բերում է այն եզրակացության, որ արդեն 387 թվին պարսից արքունիքն այն անջատել էր Աղուանից թագավորությունից՝ վերածելով պարսից մարզպանին ենթակա տարածքի **Ուստան-ի-Մարծպանական** կամ **Մարզպանական** անունով, ինչը պայմանավորված էր առաջին հերթին երկրամասի ռազմավարական դերով՝ որպես պատվարի հյուսիսային **Կովկասի** լեռնականների դեմ:

«Աշխարհացոյց»-ը **Առանի** մարզպանության արևելյան կողմերում հիշում է երկու վարչական շրջան՝ **Ուստան-ի-Մարծպանականը** կամ **Մարզպանականը** և **Դաշտ-ի-Բաղասականը**, սակայն Մովսես Կաղանկատվացին հիշում է երեք շրջան՝ **Լփինքը, Կասպքը** և **Չորան**: Թերևս պետք է ենթադրել, որ պարսից արքունիքն առավել ուշ **Դաշտ-ի-Բաղասականը** բաժանել է երկու վարչական շրջանի՝ **Լփինքի**, որի բնակիչները կովկասալեզու էին, և **Կասպքի**, որի բնակիչները պատկանում էին **Կասպերի** ցեղախմբին, որոնց մեջ, թերևս, առանձնանում էին **Բաղասիճները**: Մաշտոցը գիր է ստեղծել կոկորդախոս **գարգարների** համար, հետևաբար՝ այն պետք չէր լինի **Բաղասականի** բնակիչներին, որոնք գերազանցապես իրանախոսներ էին: Կարծում ենք, որ Մաշտոցի գործունեությունը ծավալվել է **Բաղասականի** կողմերի մեջ մտնող **Լփինքում** և **Ճիղբքում**, որոնց բնակիչները կովկասալեզու էին: Եթե Մաշտոցը զուտ հետաքրքրության համար է գնացել **Չորա դուռն**, ինչպես հավաստում է Հայոց Արևելից կողմերի պատմիչը, թերևս հնարավոր է, սակայն գրերի հետ կապված նա անելիք չուներ իրանախոս այդ տարածքում: Առավել հավանական է, որ նա **Բաղասական** կողմերից այն կողմ չի էլ գնացել: Լփինք անունն ավելի երկարակյաց եղավ, և դրա պատճառը վերջինիս՝ եկեղեցական առանձին վիճակ լինելն էր:

Չնայած Մովսես Կաղանկատվացին այս հաղորդման մեջ խոսում է միայն **Չորա դռան** կամ պահակի մասին, ըստ էության դա **Չորան** է, **Չողան** կամ **Ճորան**, ինչպես այդ կարելի է տեսնել նրա մյուս հաղորդումներից և այլ պատմիչների տեղեկություններից: 387 թվից սկսած այն **Ճորա** մարզպանների տիրույթն էր:

---

94 **Կորյուն,** Վարք Մաշտոցի, Եր., 1981, էջ 118-120:

**Շաքիի** մասին Մովսես Կաղանկատվացու տեղեկությունները առանձնապես աչքի չեն ընկնում մանրամասներով: **Շաքին** եպիսկոպոսանիստ է [95], հետևաբար և՝ թեմական շրջան:

Նույնը կարելի է ասել **Կապաղակի**՝ որպես եպիսկոպոսանիստ գավառի մասին: Ինչպես տեսանք, ըստ «Աշխարհացոյց»-ի՝ այն կոչվել է **Ոստան**: Հետագայում գավառը կոչվել է **Կապաղակ,** թե ոչ, հայտնի չէ: Քանի որ եպիսկոպոսի նստավայրը **Կապաղակ** քաղաքն էր[96], ապա, անկախ գավառի անունից, եպիսկոպոսը կարող էր կոչվել **Կապաղակի**:

Եթե չհաշվենք **Մազքթաց** և **Ճղրաց** աշխարհների բավականին անորոշ հիշատակությունները[97], **Կասպքի** և **Լփինքի** բազմաթիվ հիշատակությունները[98], վերջին գավառը **Հեջերին** է, որի անունը կարող էր ծնունդ առնել միայն արաբական նվաճումներից հետո՝ **Եգերների** անունից: Կաղանկատվացին հիշում է **Հեջերվաց** տունը[99], որը և հավաստում է գավառի գոյության մասին:

Ֆ. Մամեդովան կարծում է, որ Մովսես Կաղանկատվացին Կուրի ձախափնյակում հիշատակում է 4 գավառ[100], սակայն, ինչպես դժվար չէ համոզվել, իրականում ներկայացվում է 9 վարչական միավոր, միայն թե դրանք տարբեր ժամանակաշրջանների արդյունք են:

## Եզրակացություն

Սրանով, կարծում ենք, ավարտվում է այսպես կոչված Ալբանիայի կամ Աղվանքի գավառների տեղադրությունը: Քննությունը ցույց է տալիս, որ թագավորության շրջանում այդ երկիրը բաժանված է եղել 23 գավառների՝ **Եխնի (Խենի), Քեխ (Քեղ), Քամբեճան (Կամբեճան), Հողմաղ,** որը հավանաբար, հետո է ստեղծվել, **Շաքե (Շաքի), Դեգաւու(Գեգաւու), Ոստան, Հաբանդ (Համբասի), Քաղադաշտ** կամ **Քաղաց դաշտ, Մազքութք** (ամենայն հավանականությամբ՝ վերջինիս մեջ են մտել նաև **Ճորը**, **Փախերը, Փոսխերը և Գղուարներն ու Վատերը (Գատք))**, **Ղեկք**, **Թավասպարք, Հեճմատակք, Աղուտականք, Խենավք, Իժմախք, Շիղպք, Շրուան, Ճիղրք, Քաբանք (հավանաբար Փվքանակքի հետ), Խսրուան, Լփինք և Բաղասիճք** (**Կասպք**), իսկ **Քաղադաշտը** կամ **Քաղաց դաշտը** ավելի ուշ կոչվել է **Հեջերի**:

95 Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի,** էջ 122, 213, 344, 345:
96 Անդ, էջ 89, 122 և այլք:
97 Անդ, էջ 10, 16, 38, 56, 64, 119, 238:
98 Անդ, էջ 95, 115, 161, 166, 232, 238, 342, 343, 351:
99 Անդ, էջ 212:
100 Տե՛ս **Ф.Мамедова**, նշվ. աշխ., էջ 89:

Summary

## ON THE BOUNDARIES, TERRITORY AND DISTRICT-DIVISION OF SO-CALLED ALBANIA

Babken H. Harutyunyan

The so-call Albanian or Aghvan Kingdom was formed at the end of the second century B.C. or beginning of the first century. It was a confederation of 26 tribes and undoubtedly was composed of 26 administrative units in the beginning.

According to the dates of **Strabo**, **Plinius Secundus**, **Claudius Ptolemaeus** and as well as of "**Ashkharatsuyts**" (Armenian geography) by **Movses Khorenatsi**, the borders and territory of the latter are illustrated and an attempt is made to clarify the names of rivers and ascertain their current names. For example, Strabo's mentioned **Sandobanes** is corrected to become **Sardobanes** or **Zardobanes** and is identified with Turyan-chay; **Roitakes** is corrected to become **Rostakes** and identified with **Gyok-chay** and **Xanes** with **Gardman** or **Girdiman-chay**. The river name **Albanos** and the city **Albana** are not connected to the name **Alban**, these emerged from the name, **Lpnats River** or **Lpnats City**, and from the influence of the country name **Albania,** which was accepted in the Greco-Roman world.

The district-division of so-called Albania or Aghvank, which has reached us through the "Ashkharatsuyts", refers to the period of **Aran's** or **Ran's** marzpanate, when the Persian court merged the 19(20) districts Great Armenia's Artsakh and Utik into the latter.

Archbishop M. Barkhudaryants and academician S. Yeremyan were engaged with the issue of the district- division of the **Left Bank of Kura** in so-called Aghvank, using the dates provided in the "Ashkharatsuyts", in the work of the historiograph of the Eastern lands of Armenia Movses Kaghankatvatsi, reports by historiograph Ghevond (Levond) and other sources. M. Barkhudaryan's locations are discussable, mainly incorrect, while S. Yeramyan's locations are notably acceptable.

The district-divisions of so-called **Aghvank** or **Albania** are presented using the materials of public sources on the subject and the results of former researchers' studies. The district **Ekhni** is located in the territory adjacent to the present-day settlement of **Lagodekh**; **Bekh** in the area of present-day **Belokan** or **Belakan**; **Kambejan** in the lower part of the basin of present-day river **Iori** all the way to the River Kura; **Shake**, currently **Shaki** in the area surrounding the city **Shaki**, which incorporated at different times the province of **Hoghmagh** to the west of the district **Shaki**; **Vostan** in the area surrounding the capital city of **Kapaghak**; **Haband**, whose name in different manuscripts was known as **Hambasi** (distorted version); to the east of **Kapaghak**, and **Vostan-i-Martspanan** is identified with **Jora Pahak** and the territories south of it. **Kaghadasht** or **Kaghats Dasht** (field) and **Dasht-i-Baghasakan**, were located near the river **Kura** and fields north of the **Caucasus** mountain range all the way to the **Caspian Sea.**

It is necessary to note that due to the incorrect annotations made by transcribers in the "Ashkharatsuyts", in one case the name of the district of Vostan is omitted and in another case the word vostan in **Vostan-i-Martspanan** or **Marzpanan** is omitted,

which has caused a misunderstanding. In this same vein, transcribers have omitted the word **dasht** from **Kagha** (**Kaghats**) **dasht** (field) or **Dasht-i-Baghasakan**, thinking that it was a repetition. Because of this, the number of provinces on the left bank of **Kura** number 11.

Nonetheless, the number of districts in so-called **Albania** or **Aghvank** during the reign of the **Mazkut** kingdom was much numerous and later reduced by the Persian court during the marzpanate when tribal districts were united in the districts of **Vostan-i-Marzpanan**, **Kaghats Dasht** and **Dasht-i-Baghasakan**. Using the description by Asian Sarmatia of "Ashkharatsuyts", it is possible to disclose that until the establishment of Persian rule, **Shighpk, Jighpk, Kaspk, Pakhk, Paskhk, Khsrvank** and **Mazkutk** and other districts existed. The research reveals that the number of provinces during the kingdom's reign numbered 20/21 and even 21/22. They were **Ekhni, Bekh, Kambejan,** and **Hoghmagh**, which was most probably created later, **Shake, Geghavu, Vostan, Haband, Kaghadasht** or **Kaghats Dasht, Jor, Pakhk** (probably **Paskhk** – B.H.), **Tavaspark, Hejmatakk, Izhmakhk, Gatk** (probably **Vatn** – B.H.), **Gghuark, Shighpk, Jighpk, Lpink, Baghasjik** (also **Kaspk** – B.H.) and **Kaghadasht** or **Kaghats Dasht** , later called **Hejeri**.

Б. А. АРУТЮНЯН

## К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ СТРАНЫ ЛПИНК

Согласно сообщению Страбона, на заре своей истории Албанское царство объединяло 26 племен, которые говорили на разных языках. К сожалению, названия большинства этих племен не сохранились в письменных источниках и, по всей вероятности, навсегда утрачены для истории. О некоторых племенах первоисточники донесли кое-какие сведения, которые дают возможность в какой-то степени составить представление об этническом составе Албанского царства. Одним из наиболее известных племен, проживавших на территории Агванка-Албании, были лпины, границы расселения которых по сей день вызывают споры. Исследователи, исходя из одних и тех же данных, локализовали и локализуют их совершенно по-разному.

Еще во второй половине XIX в. кавказовед И. Шопен высказал убеждение, что в названии «Лпинк-Лбния» нельзя не усмотреть искаженное силлабическое слоговое «Алпани», «Албания» или «Алания»[1]. В 30-е годы нашего столетия, будучи незнакомым с точкой зрения И. Шопена, подобную же мысль высказал С. Юшков. По поводу Лпинка и его локализации он пишет: «... рассказ о посольстве (князя Вараз-Трдата—Б. А.) содержит чрезвычайно ценное для решения вопроса об Албании сообщение о том, что Агвания в это время непосредственно примыкала к Лбнии, стране лбинов или лпнийцев. Вопрос о Лбнии, кажется, никем не был поставлен в исторической литературе, но можно полагать, что Лбния есть один из осколков древней Албании, а название Лбния есть модификация слова Албания. Лбния или страна лбинов находилась севернее Агвании. Столица Лбнии находилась в глубине страны, примерно в 12 днях пути, т. е. она была расположена в верховьях Самура или в цент-

[1] И. Шопен, Новые заметки на древние истории Кавказа и его обитателей, СПб., 1866, с. 373.

ральном его течении»[2]. По мнению видного деятеля армянской культуры М. Бархударяна, племя лпинов проживало в междуречье Сугаита и Давачи на северных склонах Кавказского хребта[3]. Что касается столицы лпинов, то М. Бархударян помещает ее к северу от Шемахи—в Кыз-мейдане[4]. Немецкий ученый Германн попытался поместить лпинов в устье Куры[5], что, по мнению К. Алиева, противоречит данным первоисточников[6]. По мнению акад. С. Т. Еремяна, Лпинк упоминается в «Ашхарацуйце» в искаженной форме «Пвик»[7] и является сокращенным вариантом названия Alb-n или Alowan[8]. Согласно С. Еремяну, «...страну лоинов (Лпник) следует искать к северо-востоку от Марзпанской Картли, у подножия Главного Кавказского хребта, именно в верхнем течении реки Алазань, в районе с. Албани, Аранта и Шилда, т. е. в левобережной части Кахетии, нераздельной частью которой она становится позже»[9]. Локализуя Лпинк в Потусторонней или Гахма (*Գաղմա*) Кахети, С. Т. Еремян отождествляет Лпнийский город с Λον΄βιον κώμες (Ptol. V, 10, 2), располагая его на месте нынешней деревни Лапанеби, возле устья притока речки Лопота. Автор склонен полагать, что название лпинов сохранилось в третьем наименовании реки Агуан-Алазань—Либань[10–11]. Указанная точка зрения С. Т. Еремяна нашла отражение в опубликованных им многочисленных исторических картах[12]. К. В. Тревер, высоко оценивая историко-географические исследования С. Т. Еремяна, все же не соглашается с отождествлением названии «албан» и «лпин», находя, что

[2] **С. В. Юшков,** К вопросу о границах древней Албании.—Исторические записки, т. I, изд. Института истории АН СССР, 1937, с. 138—139.

[3] **Մ. Բարխուտարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, с. 76, 145; См. также: **Մ. Բարխուտարեանց,** Պատմութիւն Աղուանից, հատ. 1, Վաղարշապատ, 1902, с. 26:

[4] **Մ. Բարխուտարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք..., с. 147.

[5] Hermann, Lupenii, RE, 1927, с. 1815.

[6] **К. Алиев,** Кавказская Албания, Баку, 1974, с. 104.

[7] **Ս. Տ. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, с. 54, 105.

[8] **С. Т. Еремян,** Мосей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Али-Илитверу.—Записки Института востоковедения АН СССР, т. VII, 1939, с. 149.

[9] **С. Т. Еремян,** Торговые пути Закавказья в эпоху Сасанидов. По Tabula Peutingeriana.—ВДИ, 1939, № 1, с. 86.

[10] См.: «Книга Большому чертежу», М.—Л., 1950, с. 89.

с. 54—55. См. также карту.

[11] **Ս. Տ. Երեմյան,** Հայաստանը ըստ Աշխարհացոյց-ի, с. 54—55. См. также карту.

[12] **С. Т. Еремян,** Атлас к книге «История армянского народа, часть первая (изд. 1951 г.), 7 карт, Ереван, 1952; «Атлас Армянской ССР», Ереван-Москва, 1961, карты №№ 103, 104. «Արշակունիների թագավորությունը 298—387 թթ.», см. Армянскую Советскую энциклопедию, т. 3 и т. д.

«...этой точке зрения противоречат как указания Плиния, который... различает территориально эти два племени, так и титулатура албанского католикоса, которая, начиная с VI в., гласит: «католикос Албании, Лпинии и Чора». Здесь, несомненно, упомянуты три основных различных албанских области, поэтому едва ли может быть речь о тождестве Албании и области лбинов»[13]. Вместе с тем удивительно, что ее мнение совпадает с мнением С. Т. Еремяна в вопросе локализации Лпинка в Алазанской долине[14]. Подробно рассмотрев вопрос топонимов «Албания», «Агванк» и «Аран», интересную гипотезу выдвинул Б. Улубабян, согласно которой «те наши летописцы, которые под Агванком подразумевали правобережье Куры, для левобережья часто использовали названия Лпинк и Страна мазкутов (или Чол). Например, в Истории Каланкатуаци вместо «Албании» употребляется «Лпинк», «Лпнийская страна», которая охватывает западную часть страны Албании за Курой и на юге граничит с Агванком вдоль реки Куры. Враги Агванка, переправившись через Куру и вступив в Утик, «возвратились и расположились лагерем в долине у пределов Лпинка» (Мовсэс Каланкатуаци. История страны Алуанк. Ереван, 1984, с. 121). Посланцы из Агванка «перешли великую реку Куру» (с. 123), «пересекли границу своей страны и шли двенадцать дней, через страну Лпинк, пока не достигли их столицы»[15].

Рассмотрим, что сообщают о лпинах первоисточники, и на основании их данных попытаемся локализовать Лпинк. Наиболее древним, по-видимому, является сообщение о лпинах Плиния: «...С другой стороны, начиная от границ Албании, по всему челу гор (живут) дикие племена сильвов, а ниже лупении (лубиении) —затем дидуры и соды (... ruzsus ab Albaniae confinio tota monfium fronte gentes Silvorum ferae et infra Lupeniorum (Lubienorum) mox Diduri et Sodi). На основании данного краткого сообщения, разумеется, можно составить приблизительное представление о месте проживания лпинов, поскольку Silvorum соответствует «Ծիղբք»-у армянских источников, Lupeniorum — «Լփինք»-у, Diduri — «Դիդոյք»-у[17].

Дидуры или дидойцы существуют и доныне и проживают в вер-

---

[13] К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании (IV в. до н. э.—VII в. н. э.), М.—Л., 1959, с. 48.

[14] Там же, с. 48.

[15] Ф. Ա. Ղազարյան, «Աղուանիս», «Աղվանք» և «Առան» տեղանունները,— Историко-филологический журнал, 1971, № 3, с. 123.

[15] Plinii Naturalis Historia, Liber VI, KI, London, 1969.—"The Loeb Classical Library",

[17] Других сведений о содах не имеется, поэтому судить о месте их прожнвания трудно.

ховьях Андийского Койсу, следовательно, исходя из внутренней логики приведенного сообщения, лпинов и чилбов следует искать к востоку от дидойцев, вероятно, на северных склонах Кавказских гор.

Более полными являются сведения о Лпинке в армянских источниках. В «Истории» Агафангела, в рассказе о падении царства парфянских Аршакидов и убийстве Артавана Аршакуни сообщается; «Итак, в начале следующего года царь Хосров стал составлять армянскую дружину и собирать войско, присоединив к нему албанские и грузинские войска и открыл Аланские ворота и ворота Чора, вывел войско гуннов, неся разорение в персидскую страну и двинулся в сирийские края до ворот—Тизбона. Разграбив всю страну, разрушил богатые города и благоустроенные села, всю плодородную страну оставил опустошенной и разоренной [стремясь] совсем стереть, уничтожить, разрушить до основания и погубить персидское государство. Тогда же дал он обет великой местью отплатить за лишение его рода власти. Старался отомстить за все, потому что питал великую злобу и горел желанием исполнить обет. Серьезно грозил, опираясь на многочисленность своего войска и рассчитывая на его храбрость. Скоро на помощь подоспели албанцы, лпины, чилбы и каспы с многочисленной резвой и храброй конницей и сильным снаряжением, а также из иных краев, чтобы отомстить за кровь Артавана»[18]. Сокращенное начало и конец приведенного отрывка соединены в «Истории Армении» Ухтанэса: «А в начале года, после убийства Артавана и воцарения сына Сасана—Арташира, армянский царь Хосров начал собирать войско. И собрал войска—алуанское и грузинское, и лпинское, и чилбов,и касбов, и весьма сильное войско гуннов, а также многочисленное войско из других племен, и получил известие от римского императора Филиппа, что и он поможет ему, послав войско»[19].

Сокращая и комбинируя данные Агафангела, Ухтанэс, как будет показано ниже, перечисляет страны, пославшие войско, с запада на восток. Исключение составляет Албания, которая, являясь, по-видимому, более могущественной и военном отношении. находится перед Грузией. Поменяв местами Агванк и Вирк

[18] Ագաթանգեղայ, Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, с. 16—17:

[19] Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, гл. 50, с. 70. Отрывок,касающийся императора Филиппа, Ухтанэс позаимствовал у Хоренаци (см. История Армении Моисея Хоренского, М., 1893, кн. II, гл. 71, с 118: «... (царь Хосров) немедленно извещает о том римского императора Филиппа, прося его помощи». Ошибается К. В. Тревер, полагая, что Ухтанэс в данном случае использовал не дошедшие до нас материалы (см. К. В. Тревер, Очерки..., с. 132).

(Албанию и Грузию) получим следующий список: Вирк—Агванк—Лпинк—Чилбк—Каспк—Хонк (Онк). Крайней на северо-востоке оказывается страна гуннов (Хонк), южнее ее—Каспк на побережье Каспийского моря, на западе расположена Грузия, а восточнее ее—Албания, следовательно, логично предположить, что Лпинк и Чилбк находились восточнее Албании и западнее Каспка.

То, что в приведенном отрывке из Агафангела упоминаются дважды албанские войска, на наш взгляд, следует считать результатом смешения топонимов «Агванк» и «Аланк». Агванк, упоминаемый в начале отрывка, соответствует Албании, а в конце—Алании (Аланку).

Нам представляется, что локализации Лпинка к востоку от Албании свидетельствует и следующее сообщение Фавстоса Бузанда: «В то время маскутский царь Санесан, сильно разгневавшись, проникся враждой к сородичу своему, армянскому царю Хосрову, и собрал он все войска,—гуннов, похов, таваспаров, хечматаков, ижмахов, гатов и глуаров, гугаров, шичбов и чилбов, и баласичев, и егерсванов, и несметное множество других разношерстных кочевых племен, все множество войск, которым он повелевал»[20]. Несмотря на отсутствие в перечне племён лпинов, место в нем чилбов—рядом с баласичами—косвенно свидетельствует о том, что лпины располагались к востоку от собственно Албании, поскольку баласичи населяли район побережья Каспийского моря и низовья Куры. Отсутствие упоминания лпинов можно объяснить либо упущением историка, что маловероятно, либо тем, что они не подчинялись власти маскутов. Рассмотрение этой проблемы, однако, выходит за рамки нашего исследования.

Значительный интерес для определения местонахождения Лпинка представляют сведения Елишэ. Выясняется, что в середине V в. Лпинк являлся царством[21], подвластным Сасанидской Персии, где, как и в Армении, в Грузии и в Албании, был получен приказ персидского царя Азкерта прислать войско в страну Ачар. «Такого образца послание получено было в стране Армян, стране Иверов и стране Албанов, и стране Лбинов, и стране Цавдеев, и стране Кордуев, и стране Алдзник, и во многих других отдаленных местностях, которым в прежнее время не было положено следовать по этому пути. Рать составлялась в Великой Армении из азатов и сыновей азатов и остаников из царского удела; по этому же примеру (набрали) из Иверии и Албании и из страны Лбинов, а также из различных краев юга, близ границы

---

